

2441

243

L-24

1896





ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԵԱՆ
ԵՂԵՆՅՐՈՒԹԻՒՆ

▲ 2001


2010

243

229

41326 - ահ.

243
L-24
50

Մեր
քարոզացուք
գ խ ա ճ ե լ ե ա լ ն
Քրիստոս:
Ա. Կորնթ. Ա. 25:

Հոգևոր
աշխատասիրոյթ իւնք
18.

Լ Ա Ի Ր Ե Տ Ե Ա Ն
ԼԻՏԱՆԻԱՅԻ ՎՐԱՅ
Մ Տ Ա Ժ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍՏԵՓԱՆ Վ. ՄԵԼՔԻՍԵՒԵԿԵԱՆ
ԱՐԷԵՂԻՍՊՈՂՈՍ ՏԵԼԳՐՈՅ
ՀԻՔՏԵՐԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԵՐՈՑ



Վ Ի Ե Ն Ն Ը
Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն
1896.



24746-61

Մարդկան Բարոյիցը նկատմամբ գրգռե-
րուն ունեցած մեծ ազդեցութեան
վրայ:

Մարդուս նուիրական պարտք է՝
չէ թէ մինակ եղբօրը շարիք չընել,
հապա միանգամայն ձեռքէն եկա-
ծին չափ բարիք ալ ընել:

Ամէն հաւատացեալ ուղղափառ
քրիստոնեայ մատաղ հասակէն սոր-
ված է, որ առաջին կարգի բարե-
գործութեանց մէկն ալ՝ ազէաները
սորվեցընելն է. եւ զլիաւորաբար
ան ազէաները՝ որոնք հաւատքի եւ
անոր գործնական հրահանգներուն
նկատմամբ սորվելու կարօտ են:

Ստոյգ է, ամէն եռանդնոտ հաւ-
ատացեալ քրիստոնեայ՝ իր կարո-

զութեանը համեմատ՝ բարի օրինա-
կաւ եւ խրատով զամէնքը բարե-
պաշտութեան եւ Աստուծոյ ծա-
ռայութեան յորդորելով՝ կրնայ աս
կերպ ազնուական բարեգործու-
թեան ետեւէ ըլլալ: Սակայն մար-
դուս բնութեան հարկն է, որ թէ
կեանքը տեսողութեամբ չափաւո-
րած ըլլայ, եւ թէ իր ներկայու-
թիւնը շատ տեղ չտարածուի: Աս-
կէ ալ զատ չի կրնար ըլլալ որ ամէն
եռանդնոտ հաւատացեալ քրիս-
տոնեայ այնչափ ձիւք եւ ուսում
ունենայ՝ որչափ որ ուրիշները սոր-
վեցընելու եւ բարեպաշտութեան
բերելու համար հարկաւոր է:

Սակայն աստուածային տեսչու-
թիւնը՝ զարմանալի միջոց մը մար-
դիկներու տուած է, որ իրենց կար-
ձատեւ կեանքէն ետքն ալ իրենց
բարեգործութիւնը կերպով մը յա-
ռաջ տանին: Աւասիկ աս միջոցը
դիւր կամ դժբերն են: Անոնցմով
մարդ դարերով կ'ապրի ու կը
գործէ, առանց երկիրներ պար-

Յառաջարան:

Լիտանիա քաղը յունական Լիդանէ՝
ես կ'աղաչեմ՝ քառէն ծագած, ըստ
մեր լեզուին՝ հրապարակական աղօթք
կը նշանակէ: Մենք Եկեղեցիէն պաշ-
տօնապէս հաւանեալ եւ հաստատեալ
ուրիշ Լիտանիա չենք ծանօնար, եթէ
ոչ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Անուան,
Ամենասուրբ Կուսին եւ ամենայն
Սրբոցը:

Ամենասուրբ Կուսին Լիտանիան
կ'ըսուի նաեւ Լաւարեոտեան Լիտանիա,
քայց ստոյգ չէ թէ նոյն իսկ Մաքեմայ
Անձին՝ հետ յարաբերութիւն ունեցող
յիշատակներով նուիրուած երկրի մէջ
չինուած ըլլայ. վասն զի չի գիտցուիր
ոչ ո՛ր եւ ոչ ալ յորմէ՞ կարգադրուած
ըլլայ այս՝ ի պատիւ Աստուածային
Յիսուսին Սօր սուրբ եւ խիստ սրտա-
շարժ պաղատանաց կարգը. սակայն
ըստ յարգելի աւանդութեան մը բուն
Լաւրեոտն քաղաքին մէջ սկսաւ այս

Լիտանիային հանդիսաւոր երգը, եւ անկեց տարածուեցաւ բոլոր Եկեղեցւոյ մէջ անհամար ուխտաւորներու մեջոցաւ, որոնք շարունակ այցելութեան կ'երթային այն հռչակաւոր Տաճարին:

Ինչպիսիք ըլլայ ժամանակն եւ սկիզբը, միշտ յայտնապէս կը ծանցցուի յարգը, այնու որ միշտ պահեց կաթողիկէ քարակաշտութիւնն այս այնպէս կուսնուագին օշոնութիւններով սուտ, այնպիսի քաղցր օծութեամբ լեցուն, անանկ զարմանալի նմանութիւններով եւ յայտարարութիւններով շքեղ աղօթքը: Ասոնք իրենց ներդաշնակաւոր կապակցութեամբը մեզ կը ներկայացընեն գրեթէ հարուստ բովանդակութիւն մ'ամենաեռանդուն, ամենաարժանաւոր եւ ամենավսեմ՝ ըստածրներուն ի փառ Ամենասուրբ Կուսին, յորմէ հետէ նա այս աշխարհը թողլով՝ գնաց իւր երկրպագելի Որդւոյն հետ երկինքը թագաւորելու եւ հոն մարդկան կողմանէ ընդունելու այն ամէն մեծարանքը, որ արարածի մը կրնայ նուիրուի:

Այս մասնաւոր պաշտօնը, որով մենք կը պատուենք գեոյսն, իրօք կը

տելու՝ աշխարհքիս այլեւայլ կողմերը քարոզութիւններ կ'ընէ, եւ հոգւոց փրկութեան ու Աստուծոյ փառաւորութեան գործակից կ'ըլլայ:

Հաւատացեալք՝ որոնք իբրեւ ճշմարտութեան եւ բարոյականութեան հետեւողներ, լուսոյ որդիք են, կրնան եւս աւելի «յորդւոյ աշխարհիս այսորիկ», սորվել, թէ դիր աւնուած խօսքերը, այսինքն գրքերը, ինչ մեծ զօրութիւն ունին մարդկան բարոյիցը վըայ մանաւանդ ա մեր ատենները: Իրացընէ՝ չկայ մեր օրերը՝ ապականութեան այնչափ առատ աղբիւր՝ ինչչափ դէշ գրքերը, որոնք մարդկային ազգին ծաղիկն ածելու ատեն՝ յանկարծ կը թռուսեցընեն. եւ դէշ սերմ մըն են, որոնք շէն կրնար ուրիշ բան յառաջ բերել՝ բայց եթէ մեզք, հայհոյութիւն, հոգւոյ փրկութեան անհոգութիւն, քրիստոնէական պարտուցողութիւն, անկրօնութիւն եւ ամէն աստուած-

ային ու գերբնական բաներու ան-
տարբերութիւն:

Աս ցաւալի վիճակին ապացոյց-
ներն ամէնուն աչքին առջեւն են:
Հարիւր տարի կայ, որ Ալլթէր եւ
անոր ամպարշտութեան բնկերները
մեռած վացած են. սակայն իրենց
գրուածներովը դեռ երկրիս վրայ
կ'ապրին. եւ իրենց՝ մարդկան հետ
ունեցած սուրեւառը՝ գրեթէ ա-
նանկ կենդանի է՝ ինչպէս երբ որ
ան Աստուծոյ թշնամի սուտ փիլի-
սոփաները դեռ հողագնդիս վրայ
կը պտըտէին եւ բազմութիւ հաւա-
տացեալ սրտեր Աստուծոյ կը հե-
ռացընէին:

Ասոնցմէ յայտնի է, որ ան մի-
ջոյր՝ զոր չարերը չարաչար կը
գործածեն աշխարհք ապականելու
համար, նոյնը բարիններուն ձեռքը
շատ զօրաւոր միջոց մըն է՝ ժողո-
վուրդը հաւատոյ եւ բարոյականու-
թեան բերելու եւ հրահանգելու:

Ուստի նոյն նուիրական միջոցը
տեւողական կերպով մեր ազգին

օգտին գործածելու համար, Ալի-
եննայի Մխիթարեան Միաբանու-
թիւնը յամին 1866 բարերարական
Եղբայրութիւն մը հաստատած է
Անարաթ Յոյ-թիւն անուամբ:

Տես սոյն Եղբայրութեան կանո-
նագրութիւնը:

Հրատարակութիւնք

Եղբայրութեան

Անարատ Յղութեան II. Կրտսիկ:

1. Մէզհէպէ գարշը սեօղէրէ ճէփապէր. Տէրփիլէան Հ. Մանուէլ Վ.ին թեր-ճիմէսի. 1866: Թղթիզմ. 1.50, կիսլթ. 1.75, կլշէ. 2.50:
2. Թէօփէքէար Մարիամ Մազգաղէնացիին կէճէլէրի. իթալիան լիսանընաան Վ. Վ.ին թէրճիմէսի 1862: Թղթիզմ. 1.—, կիսլթ. 1.25:
3. Հինն Աստուած. Գոնրատ Պոլանտէնի Քամանակից յէպ. 1872: Թղթիզմ. —.35, կիսլթ. —.50:
- 3^ա. Ալլաշը գատիմ. Գոնրատ Պոլանտէնի սիր Հիքէպէսի. 1872: Թղթա-կազմ. —.50, կիսլթ. —.75, լթիզմ. —.90:
4. Յիսուսէֆէնտիմիդին միւպարէք եիւրէյինի եթթոսունա սօզուզ կիւն-լիւք հազըրըգ. Առաքելեան Վ. Վ.ին թէրճիմէսի. 1874: Թղթիզմ. 1.—, կիսլթ. 2.25, լթիզմ. 2.50, կլշէ. 2.80: կլզմ. 3.—, սսկեղ. 5.—:
5. Քրիսթիան թէֆէքքիւրլէրի. Տէր-փիլէան Հ. Մանուէլ Վ.ին թէրճի-մէսի. 1875: Թղթիզմ. —.75, կիսլթ. 1.—:

6. Աղօթք Պատրաստութեան եւ Գո-հութեան սրբոյ պատարագի, վանն իւրաքանչիւր աւուր շարաթու-թարգմ. ի Հ. Թագէէ Վ. Թոռնեան. 1880: Թղթիզմ. 1.—, կիսլթ. 1.25, լթիզմ. 1.50, կլշէ. 2.—:
7. Եննի սուս քիթապը. 1839: Թղթա-կազմ. 2.—, կիսլթ. 2.25, լթիզմ. 2.45, կլշէ. 2.90, կլզմ. 4.50, կլզմ. սսկ. 6.—:
8. Լէյալի Օղոստինոս (Գիւլէրը Ս. Օ-ղոստինոսի): Էնդարէ եպիսկոպոսու Առաքելեան Կարապետ Վ.ին թէր-ճիմէսի. 1881: Թղթիզմ. 2.—, կիսլթ. 2.30, լթիզմ. 2.60, կլշէ. 2.90:
9. Լուրա միւճիզաթլարը: Էնդարէ ե-պիսկոպոսու Առաքելեան Կարապետ Վ.ին թէրճիմէսի. 1881: Թղթիզմ. 1.50, կիսլթ. 1.75, կլշէ. 2.50:
10. Աղօթագիրք պաշտոնասիրաց սրբոյն Յովսէփայ ԱստուածաՏօրի Հ.Պէտոնգ Վ. Յովնանեան 1883: Թղթիզմ. 2.—, լթիզմ. 2.50, կլշէ. 2.80, կլզմ. 4.20, կլզմ. սսկ. 4.50:
11. Ֆիբիլը սուսարն միւթէլլըք հապգ մաստէլէր Թ. Վ. Տէրփիլէան Մա-նուէլ Վ.ին թէրճիմէսի 1884: Թղթիզմ. —.50, կիսլթ. —.75, լթիզմ. 1.—, կլշէ. 1.25:
12. Տուս քիթապը աղեղ Պիքիլին յէ Ս. Յովսէփին իպատէթիլիւզար-լարը իչին: Էնդարէ եպիսկոպոսու Առաքելեան Կարապետ Վ.ին թէր-ճիմէսի. 1884: Թղթիզմ. 2.—, կիսլթ. 2.25, լթիզմ. 2.50, կլշէ. 2.85, կլզմ. 4.50, կլզմ. սսկ. 6.—:

13. Կեկնուլթիւն (Համառօտ) նկարագրաց ճշմարիտ կրօնի, գրեալ է ճէրտիւ կարգ. թրգմ. Ի Հ. Սամուէլէ վ. Գաթրճեան. 1885: Թղթկզմ. —.50, կիսլթ. —.75:
14. Մարկեղինոս կամ Եկեղեցի առ Կոստանդնուսի, թրգմ. Հ. Ն. վ. Աւգերեան. 1886: Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25:
15. Քեօյտէ Մայիս սյը, եախօտ Կէվլթարզ Մահի Մէրիէմ, 1888: Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25, լթկզմ. 1.50:
16. Նմանուլթիւն Յիսուսի Քրիստոսի. Թովմաս Գեմբացի: Թրգմ. Հ. Թարէնս վ. Թոռնեան. 1894: Թղթկզմ. 3.50, կիսլթ. 3.75, լթկզմ. 4.—, կկշի. 4.35, կշկզմ. ոսկ. 5.20:
17. Հոգի կրօնաւորական, 1894: Թղթաւկզմ. 1.50, կիսլթ. 1.75, լթկզմ. 2.—, կկշի. 2.35, կշկզմ. ոսկ. 3.20:
18. Լաւրեան Լիտանիայի վրայ Մասճականներ: Թարգմ. Ստեփան վ. Մէլքիսեղեկեան, Արքեպիսկոպոս Տինգիայ (Հրժրլ. Եպկ. Կարնոյ): 1896: Թղթկզմ. 3.—, կիսլթ. 3.35, լթկզմ. 3.50, կկշի. 3.90, կշկզմ. ոսկ. 4.80:

(Դիմերն Փրանքով են:)

ԼԵՐԻՏՏԵՆ ԼԻՏԱՆԻՏՅԻ ՎՐԵՑ

ՄՏԵՃԱԿԱՆՆԵՐ

Թողիկէ ջերմեանդուծեան այսպիսի
հին յիշատակարանը չափէն աւելի կը
հաւատտէ որ այն ժամանակէն ի վեր՝
յորում՝ Եկեղեցին հալածանաց մէջ
իւր աթոռը հաստատեց աշխարհիս
վրայ՝ զանուեցան քրիստոնեայ արու-
եստաւորը, որոնք իրենց վրօնը նուի-
րեցին Ամնասուրբ Կուսին:

Չորրորդ դարուն մէջ քանի մը շի-
րիմներու կամ՝ քրիստոնեայ դամբան-
ներու վրայ կը զանենք Սրբուհոյ Կու-
սին եւ Մանուկ Յիսուսի խմբական
պատկերը, որոնց մէջ յոմանս Մարե-
մայ ղէմքը պայծառ երիտասարդու-
թեամբ եւ գերմարդկային մաքու-
թեամբ զարդարուած է: Այս՝ մեզի
ժամանակակից հմուտ անձի մը՝ Ռատւ-
րօշէթի, առիթ տուաւ արուեստից եւ
յիշատակարանաց ծանօթութեան վրայ
կատարելապէս հիմուած՝ հետեւեալ
կարեւոր դիտողութիւնն ընելու թէ
“ամենեւին ծիշդ չէ ըսելը. ինչպէս կը
սնդէ Պագնստ բողոքական պատմա-
գիրը թէ, Ամնասուրբ Կուսին պատ-
կերին նկարումն Եփեսոսի ժողովքէն
վերջը միայն սկսած ըլլայ. վասն զի,
կը յաւելու, Վատիկանի քրիստոնեայ
շիրմաց մէջ, որոնց վրայ Ամնասուրբ

Կոյսը նկարուած է, ստուգիւ մէկէ մ'աւելին կը գտնուի, որ այդ ժամանակէն յտաջ նկարուած ըլլայ,»:

Հինգերորդ դարն Անատոսս յոյն Կայսեր իշխանութեան ստինը մեզ կը ներկայացընէ կայսերական դրամներ, որուն հակահողմս ունի աստղներով շրջապատած Մարեմայ փակագիրը. եւ այս մեծարմնքը շարունակուեցաւ անոր շատ մը յաջորդներու իշխանութեան ատենն ալ, որոնց մէջ նաև Թէոփանէ Կայսրուհին իւր դրամներուն վրայ դրոշմել տուաւ Մարեմայ պատկերը, գլխուն բոլորփիքը լուսապսակով եւ Թեոդորոս Մայր Աստուծոյ վերնագրով: Հինգերորդ դարէն մինչև ցմեզ շատ յայտնի է թէ արուեստք որչափ բազմապատկեցին առ Ամենասուրբ Կոյմն ջերմեանդութեան վկայութիւնները: Այս ալ ստոյգ է, որ ժամանակ մ'արուեստն եզական վրիպմանց ենթարկուեցաւ, զոր օրինակ սեւագոյն նկարելով Աստուածային Մօր պատկերը, քայց իրենց վատ ծաշակին գործերն անգամ աւելի կը

1 Ծանօ՛ ի վերայ բրիտոննէական արուեստի 34. ծան. 1:

հաստատեն այն տգիտութեան կոշուած դարերու ժամանակներուն հաւատքն ու քարեպաշտութիւնը. եւ թէ այսու ամենայնիւ իրենց ամնման ազակեգործ պատուհաններովն, եւ Մարեմայ անուամբ Աստուծոյ նուիրուած մեծագործ տաճարներովս այնպիսի գործեր յտաջ քերին, զորս մեր արդի քաղաքակրթութիւնը հրաշալեաց կարգը դասելով եւ ոչ իսկ ձեռք զարնելու կը համարձակի:

Դիւրաւ ալ չենք համարձակիր ենթադրելու որ Մարեմայ նուիրուած Եկեղեցիք հազիւ մեջին դարուն մէջ յերեւան ելած ըլլան. զոր գտնելու համար հարկ է յտաջել մինչև Կալիստոս Ա. Սրբազան Բահանայապետը, որ հռովմայ բազմաքնակ թաղին մէջ յայնկոյս Տիբերիս գետին, մատուռ մը կանգնել տուաւ — Տիրուհին մեր — տիրոսով, յամին 224: Եւ հարկ է աւելի յտաջ երթալ, վասն զի վերոյիշեալ թուականէն յտաջ Սուսնիոյ Սարակոսս քաղաքին մէջ կը գտնենք Եկեղեցի մը յանուն Տիրուհոյս մերոյ Պիլիէրի: Ինչպէս նաև յԱտրիս ալ ուրիշ շատ եկեղեցիներ նմանապէս յանուն Երանելոյ Կուսին նուիրուած:

Այսպէս քրիստոնէութեան առաջին ժամանակներէն մինչև ցլեզ ընդհատուած յիշատակարանաց շարքով յԱտուածպաշտութենէ եւ հաւատքէ ազդեալ ճարտարապետութիւնը միացուցած է իւր վաւերական եւ զօրաւոր ձայնը մեզ արուեստից ձայնին՝ աշխարհիս Փրկչին Օգոստափառ Մօրն անունը փառաւորելու համար:

Ո՛հ, ի՞նչ գեղեցիկ տեսարան, ստուգիւ շքեղ տեսարան, թէ որ կարենայինք մէկ նայուածքով գննել իմնեւտան դարէ ի վեր ընդհանուր կաթողիկէականութեան մէջ արուեստներէ Աստուծոյ նուիրուած քարերու եւ մարմարիններու, թանկագին փայտերու եւ մետաղներու, ոսկիներու եւ գոճագիններու հարստութիւնը, որպէս զի զիսքն օրհնէինք եւ փառաւորէինք այն շնորհաց, առաքինութեանց եւ իշխանութեան համար, որով ճոխացուց զԿոյսն յօգուտ մարդկան...: Ո՞ր բարեբախտ աչք չէր ապշեր, ո՞ր սիրտ սաստիկապէս չէր շարժեր: Ո՞ր բերան աշխուժով չէր աղաղակեր, փանր Աստուծոյ, որ բոլոր դարերն իւր Աստուածային Մօրը կամխագուշակումը հաստատելու գործածեց. «ա-

հաւասիկ բոլոր ազգերը զիս պիտի կրանեն»:

Բայց արուեստից ձայնէն աւելի բարձրագոյն ձայն մը կայ՝ ինչպէս որ նիւթական կարգէ վիշնագոյն է բարոյական կարգը. եւ այս է խօսքի եւ գրչի միջոցաւ գիտութեան, ճարտարախօսութեան եւ հանճարոյ ձայնը: Եւ իրօք այս ձայնն ալ երբեք չպակսեցաւ Ամենասուրբ Կուսին մարգարէութիւնը ձշգրտելու: Առաջին երկու քրիստոնեայ դարերէն շատ քիչ գրութիւն ունինք. սակայն երկրորդ դարուն մէջ Լիոնի Եպիսկոպոս Ս. Իրենէոսի գրուածոց մէջ Ամենասուրբ Կուսին վրայ անոր մէկ ներքողը կը կարդանք, որ իւր կարծառօտութեամբն հանդերձ շատ ազդեցիկ է: «Եւս, կըսէ այս սուրբ Եպիսկոպոսը, փորձիչ հրեշտակին խօսքերէն թիւրքած՝ Աստուծոյ դէմ՝ ըմբոստեցաւ, եւ ջանաց խոյս տալ անոր ներկայութենէն: Իսկ Սրբունի Կոյսն Մարբամ՝ Գաբրիէլ հրեշտակին խօսքերուն տեղի տալով եւ Աստուծոյ կամաց հազարանգամ հաւանեցաւ գրիստոս իւր արգանդին մէջ կրելու, որպէս զի այսպիսի հաւատակութեան միջոցաւ Եւայի պաշտպան հան-

դիսանար 17: Անկից վերջ Ս. Աթանաս, Ս. Կիրիղ, Ս. Եփրեմ, Ս. Գրիգոր Նազիանզացի, Ս. Յերոնիմոս, Ս. Ռուկեբերան, Ս. Ամբրոսիոս, Ս. Օգոստինոս, Ս. Կիրիղ, Ս. Եպիփան, Ս. Յովհաննէս Դամասկացի, յետոյ Ս. Բենեդիկտոս, Ս. Անսելմոս, եւ այն մեծ համծարը, որ եկեղեցւոյ Հարց վերջինը կոչուեցաւ, անմահ Պօսիւէ, մէկ խօսքով՝ քրիստոնեայ Արեւելքին եւ Արեւմուտքին գերզանաց համծարները հետզհետէ հռչակեցին զՄարիամ, եւ մինչեւ երկինք բարձրացուցին Անոր արժանապատուութիւնը, Անոր առաքինութիւնները, Անոր առաւելութիւններն եւ Անոր բարեխօսութեան զարմանալի արդիւնքը:

Լաւրեոտեան Լիտանիան, ինչպէս ըսինք, մեծարանաց, սիրոյ, ջերմանախոյնութեան եւ վստահութեան քովանդակ հաւատանաց գրեթէ մէկ հարուստ եւ բարեբաստիկ համայնօրութիւնը կը կազմէ: Ասիկայ է ուրեմն այն ամենաչքնառ յարգանաց մին, զոր կրնանք նուիրել Աստուածային Օրօր: Որուն համար Կղեմէս Ը.՝ յամին

1 Ընդդէմ հերետ. Գիրք Ե. Գլ. ԺԹ.:

1601 արգիւցց որ Անոր պատուոյն համար ասիկից զատ ուրիշ Լիտանիա չերգեցուի հանդիսաւոր աղօթքներու մէջ: Իսկ Պօղոս Ե. 1606ին, վաթսուն աւուր ներողութիւն շնորհեց անոնց, որոնք Դոմինիկեանց Եկեղեցիներու մէջ այս սուրբ պաղատանաց երգին ներկայ գանուէին: Սեքստոս Բ. եւ Բենեդիկտոս ԺԳ. 200 օրուան ներողութիւն շնորհեցին ամէն հաւատացեալոց, որոնք ջերմանախոյնութեամբ ըսէին զայն: Եւ Պիոս Է. այս վերջին ներողութիւնը 300 օրուան ընդարձակեց:

Ասիկց յայտնի կ'երեւայ որ Լիտանիան առաւելագոյն սիրոյ առարկայ մ'եղած ըլլայ կաթողիկէ բարեպաշտութեան, որ իրեն հաճոյք մ'ըբած է այս աղօթքին կրկնումը տարածելու, երզը փոփոխելու, երաժշտութեան եւ ամենաբարոյց ներդաշնակութեանց հիացմամբ գեղեցկացնելու:

Քանդակագործութեան արուեստն ալ, որ աչքին այնպէս կը խօսի, ինչպէս երգն ականջին, չէր կրնար պակասել իւր թանկագին մեջոցներն աւելցնելու երաժշտական արուեստին կրօնական հարկին:

Իրօք ութեւտամեներդդ դարուն վերջերը քանի մը համբաւաւոր Գերմանացի քանդակիչներ հանձարեղ եւ ազդեցիկ նկարներու եւ խորհրդաւոր պատկերներու քանակութիւն մը հրատարակեցին, որոնք որոշուած էին ննագնետէ աչքի առջևը պարզելու այն ամէն տիտղոսները, զորս Եկեղեցին Մարեմայ կը նուիրէ Լաւրետեան Լիտանիային մէջ. եւ զանոնք ծնկացքներով Աստուածաշունչ Գրոց վկայութիւններով, որոնք կրնան յատկացուիլ Անոր քաւական հոգեւոր եւ յարմարական իմաստով: Բայց այս հոչակաւոր արուեստագիտաց ծեռքէն ելած այս զուլն գործոցը թէ շատ ցանցաւ է եւ թէ շատերուն անձանօթ: Արդ՝ ի պատիւ Մարեմայ եղած այս շքեղ յիշատակարանը տարածելու դիտումմը, արդի արուեստին նրբութեամբ գեղեցկացած, եւ ամէն մէկ պատկերին համապատասխանող մտածականով ընկերացած ընդօրինակութեան ձեռնամուկն եղանք 1:

1 Դժբախտաբար անկարելի ըլլալով չկրցանք այս սքանչելի գործը պատկերներովն հանդերձ հրատարակել: — Թարգմանիչն:

Այս մտածականներու հեղինակն, ի՞նչ Մարիամ՝ կարող ըլլար չպակսիլ իւր առաքելութեան, զոր քանի մը պարագաներու պատճառաւ ըստ իմիք բարձր նախահիմամութեան արդիւնք կը ծանչնայ: Աստարակոյս ինձ քաղցր եւ շատ քաղցր պիտի գայ իմ հոգիս և՛ու առջևդ եւ և՛ու պատուոյդ համար պարգել եւ ջանաւ աւելի եւս ծանօթացնել այն՝ ինչ որ մեծ, սուրբ, բարի, սիրելի ու փառաւոր է իմ Փրկչիս Աստուծային Մօրը: Բայց ինչպէս ըստ արժանոյն ծառել և՛ու վրադ այնչափներէ ետքը, որ անսնկ գեղեցիկ եւ սրտատուչ էջեր գրեցին: Ի՞նչպէս յանդգնիլ սոսկաւէս փորձ մը մեայն ընելու, երբ Ս. Բեռնարդոս ըսած է թէ, «քան մ՛ալ գինքն այնպէս էք անաքեկեր, ինչպէս և՛ու մեծութեանդ եւ փառացդ վրայ կօսիւք 1»:

Այսու ամենայնիւ պէտք է որ յանդգնիմ, ի՞նչ Մարիամ. ի՞նչ Դուն, զոր հաճելի է ինձ կոչել ամենաբարի եւ ամենասիրելի Մայր իմ: Ես կը համարձակիմ ի սէր և՛ու Աստուծային Որդւոյդ, որ իւր փառքը և՛ու փառացդ մէջ կը

զանէ: Կ'իշխեմ' Բու սիրոյն համար,
 ո՞վ Ամենակարողին Հրաշակերո՞ւն եւ
 Անոր երկրպագելի կատարելութեանց
 ամենակենդանի պատկերը: Կը յան-
 դըզնիմ' որդւոյ մը վստահութեամբ, որ
 իւր Մօրը համար եւ Անոր աչքին առ-
 ջնւը կ'աշխատի, եւ Որոն զօրովա-
 գթութենէն ալէտը է յուսոյ օգնու-
 թիւն եւ նպաստ: Բեզ ուրեմն կը
 յանձնեմ' իմ' միտքս, սիրտս եւ գրիչս,
 ինչպէս որ նաեւ Բեզ կը նուիրեմ' իմ'
 յարգանացս, հիացմանս, վստահու-
 թեանս, սիրոյս եւ որդիական մեծա-
 րամնացս սոյն տկար վկայութիւնը:

Նախերգանք Թարգմանչիւն:

Ո՞վ Տիրութի տիեզերաց, մարդ-
 կային սեռին անհամեմատ արար-
 ծանքը, Արարչին եւ արարածոց մէջ
 գթալից կասկը, մանաւանդ նոյն իսկ
 Աստուածոր.թեան ազգակիսն Ամե-
 նասուրք Երրորդոր.թեան Դուստր,
 Մայր եւ Հարսն: Հողեղէն ըլլա-
 րոյդ աղ. երկնայնոց մէջ նմանդ
 չկայ. երկինք իւր երանելի բնակ-
 ջօք Բեզդե շատ ստորին եւ: Դուն
 ճնաշխարհիկ սրբոր.թեամբդ Փրկա-
 գործոր.թեան կենասրեր խորհրդոյն
 սոյնթ տորիս, աւելին ըսեմ', գործ-
 ակից տղար: Աստուծոյ երեսն ին-
 կամ եւ արքայոր.թեան փառքին
 գրկուած մարդկիսն Դուն հաշտարար
 միջնորդ տղար, արքայոր.թեան
 դուները Դուն բացիր: Մարդիկ Բեզ-
 մով կրցան իրենց բնակիսն հոյն-
 զունէն վեր դեպ ի Աստուած բարձրու-
 նաղ: Ինկամ մարդք Բեզմով կանգ-

անցան, անոր Խանգարեալ բնու-
թիւնը Բեզմով վերանորոգեցան,
Բեզմով տէր եղան այն Խրատանց
արքայութեան ժառանգութեան,
յարձէ գլխուսւած էին: Բեզմով գտան
իրենց Խրատուսւած շնորհքը: Բեզմով
դարաւոր անիծից շանթերը օրնեռու-
թեան արգաստուոր ցօղոյ փոխար-
կեցան:

Ասոր համար ալ բարոյ Մտքը Հարք
եւ ուարդապետք եւ Բուռ ճշմարիտ
ճերմոռանդներոյ երախտագետ սրտէ
բխած գերխմաստ ներքողներով Բուռ
անգութակում մեծութիւնս եղջակե-
ցին, Բուռ մեծիւայելչութիւնդ պա-
տուռեցին, բովանդակ ազգաց եւ ու-
զանց եւ շեգուսաց ծանուցին գեղգ,
Աստուածային առնակարող գօրու-
թեան անթիւ հրաշարեաց մէջ միակ
Հրաշակերտոյ, զոր ըստ արժանեոյն
մեծարեալ համար երկինք եւ եր-
կիր, երկնայինք եւ երկրաւորք
միացան. բայց Գուռ միշտ աննց ա-
մենուռ բորոք գովեստներէն գեր ի
վերոյ, բովանդակ ներքողներէն շատ
աւելի գերագանց եւ: Գուռ Բուռ ար-
ժանապատուութեամբ արարած-
ակամ բնութեանդ ասմեանն անցար,

հասնի մինչեւ Ասոր փառաւոր վերա-
փոխման ժամանակը: Մինչդեռ Եւայի
այդ խոնարհ դուստրը տակաւին իւր
սուրբ արգանդին մէջ կրելով Հօգոյն
Սրբոյ Օրհնեալ պտուղը՝ Ս. Եղիսա-
բէթին այցելութեան գացած ատնն,
(մայր էր Աստուածային կարողութեան՝
թէ եւ տարբեր արդեամբ՝ հրաշարի
տղու մը,) իւր երակտագիտութեան
հիացմանէն իրեն ազդուած անմահ
երգին մէջ ըսած էր թէ, «բովանդակ
սպագայ ազգերն իրեն երանի պիտի
կարդային»: Չարմանալն վճիռ, վճիռ
մը, զոր մահկանացուի մը շրթանց
վրայ յիմարահան կարծելու փորձու-
թեան պիտի հանդիպէնք...: Բայց
պարզ կին մը չէր ետսողք, այլ Մարդ-
Աստուծոյ Մայրը, շնորհօք շին՝ 2, հարս-
նացեալն այն Աստուածային Հօգոյն,
որ ատենօք Խրայէլի Մարգարէները
լուսաւորած էր, եւ Եփրոնի լեռանց
բարձրութենէն իւր նայուածքը մինչեւ
սպագային ամենածածուկ գաղտնեաց
մէջ մղելով կրնար հաստատապէս
ըսել ինչ որ իւր մարդկան մէջ սպա-

1 Դուկ. Ա. 48: — 2 Անդ, Ա. 28
(ըստ լատ. թարգմ.):

զայ փառաց նկատմամբ Աստուած
իրնն ցոյց կու տար:

Եւ զհետեցէ՛ր թէ ինչպէս բոլոր ազ-
գերք հաւատարմարար ճշմարտեցին
այսպիսի կամեազուշակում՝ մը: Դսե-
ցէր թէ ինչպէս իննեւտասն դարերու
ամբողջ կաթողիկէ պատմութիւնը Մա-
րեմայ անգրագական Անուան արձա-
գանքը կու տայ, եւ «աւագափողոյ
դրոզիչ շտաշմանց», նման հնչող
ձայնով կը կրկնէ Աստուածային Մօր
մեծութիւնն, արդիւնքն եւ գորութիւնը:

Եկեղեցւոյ նախնական օրերն ելլե-
լով՝ Մարեմայ փառքը նախ եւ յառաջ
արուեստէ հռչակուած կը գանննք: Ա-
ռանց հոս վիճելու Սքրոյն Դուկասու
Աւետարանչին կարծուած նկարին
վրայ. նկար մը որ ասին մը մեծ
յարգ գտած էր յԱրեւելս, եւ որուն
փաւերականութիւնը գիտնականապէս
ալ ապացոյցէ բոլորովին գուրկ չէ:
Երկրորդ կամ՝ գէթ երրորդ դարէն
նկար մ՝ունինը Մարեմայ պատկերը
ներկայացընող, զոր հնախուզին
աչքը դեռ եւս կրնայ զիտել Հոովմայ
գեանադամբաններուն մէջ: Սոյն կա-

որով մարդկեղէն տկար մտաց ան-
հասանելի, անբոլորնելի եղած եւ.
այն աստիճան բարձրացած, որ
առելի Աստուածոր.Թեան մերն եւ
քան յէ մարդկոր.Թեան, որուն հու-
մար բարոյ արարածք ապշած եւ
հիացած՝ միայն վրայ կը սքանչու-
նան:

Թե որ սրտապս Բեզ նկատմամբ
Սրբոց բաժաներուն եւ գրածներուն
վրայ կէտ մ՝անգամ՝ առեղցըներու
անկարող եւ անբառակիւն եմ՝ գոնե
կեանցս երեկոյացեալ պահուռն իմ՝
ի բազում՝ գլխոց առ Բեզ ունեցած
պարտաւորոր.Թեանցս հարկը վճա-
րեալ համար, այս մտածակիւննե-
րուս մէջ Եկեղեցւոյ եւ Սրբոց Հարց
Բեզ տուած գովեստից փռունջը մայ-
րենի շեգուսս իմ Ազգայնացս ծա-
նոր.ցանէրու ձեռնամուր.Ե կըրչում:

Դոյզն ինչ է, Եսնկարագորով Մայ-
րիկ, Բեզ ընծայածս, բայց Դուն
պոյխ գ.Բեզ պատուէրու ջերմացի
բարձանացնակնարկ մը տարով հաճե-
լնդորնիդ այս չնչին աշխատու-
թեանս, զոր որդիակիւն սիրով եւ
յարգարից մեծարանք Բուն պա-
տուոյդ եւ փառաց կը նոր.իրեմ՝ ի

Վախարեան միայն այս մեկ հատիկ շնորհքը խնդրեալ, որ Բոս. շահնագոր բարեխօսութեամբդ արքայութեան մեջ գ.Քեզ կատարեցայեսն մանչնայրս եւ Ըոս. շահնամեհատ սուսնանաշնորհութեաներդ բոլորներս մեռնեսս ըլլարո՛ւ ըստ այնմ այ գ.Քեզ վերապատուող Ամենասուրբ Երրորդութեանն ի յարտեան գովերոս եւ օրններոս արժանի ըլլանք:

ԼԼԻՐԵՏԵԱՆ ԼԻՏԱՆԻԱՅԻ ՎՐԱՅ

ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐ

ՄՏԱԾԱԿԱՆ Ա.

Տեք ողորմեսց:

Ինչու համար Եկեղեցին առ Մարիամ ուղղուած պաղատանքներէ յառաջ աղօթից խոնարհ հառաչանքն առ Աստուած ուղղելու կը ստիպէ զմեզ...: Միայն Արքայն Պօղոսի ազգեցիկ կերպով յայտնած հաւատոյ ճշմարտութիւնը մեզ իշխելնելու համար: «Ամենայն ինչ Աստուծոյ կը պատկանի, ամենայն ինչ Անկից է, եւ ամենայն ինչ Անոր համար է, Անոր փառք ի յաւիտեան»։ Այս, հաստատապէս՝ ամենափառաւոր առաքինութիւններով՝ ամենազարդարուն, շքեղութեամբ իշխանութեամբ ամենափայլուն արարածն անգամ ոչինչ է Անոր առջեւը, ոչինչ է առանց Անոր.

ոչինչ՝ որ Անկից յառաջ եկած չճանչցուի: Արդ եթէ Ամենասուրբ Կոյնիւր պաշտպանութեամբը որքանչեւ պէտք կրնայ մեզ օգնել՝ Անոր պարտական ենք այս անկշիւ բախտաւորութիւնը, Անկից միայն յառաջ կու գայ այսպիսի կարողութիւն մը, Անկից միայն կը բխեն մեր վրայ անձրեւող բոլոր շնորհքները:

Եկեղեցին կը դիտէ նաեւ ազգել մեզ Աստուծոյ գերագոյն մեծութեան բարձր գաղափար մը, յարգանաց, բարեպաշտ երկիւղածութեան եւ բոլոր մեր կարողութեանց սուրբ նուաստութեան զգացմունք մը՝ առաջի «Անոր որ է՝»: Ինք միայն ոչինչ պարտական է ումեք, ամենայն ինչ որ մտածելու եւ ուղեւու կարողութիւն ունի, ամէն բան որ կը շնչէ, կ'ազդի եւ կայ, Անոր միայն պարտական է իւր մտածմունքը, կամբքը, շունչը, կեանքը, էութիւնն եւ էութեան պահպանութիւնը: Ինք միայն ինքբերմէ կայ. «միայն երանելի եւ միայն հօրը»¹, միայն անմահ իւր «Էրհայն»², միայն անմահ սրանչելեաց մի միայն հեղինակը³ մի միայն մեծ, մի միայն յաւիտենական⁵: Մի միայն սկիզբն եւ վախճան ամենայնի⁶: Մի

¹ Եւբ. Գ. 14: — ² Ա. Տիմ. 2. 15: — ³ Անդ. 16: — ⁴ Սղմ. 2. 2. 18: — ⁵ Բ. Մակ. 2. 24: — ⁶ Յայտ. Ի. 13:

միայն Աստուած¹: Անոր միայն սրանչելեպէս կը վայելէ Տէր տիտղոսը. եւ այս տիտղոսով Եկեղեցին կ'ուղէ արթնացնել մեր հաւատքն առ Անոր անասման մեծվայելութիւնը. եւ որուն խօսելու անյուզական պատիւը կը տրուի մեզ: Ո՛հ, Անոր առջեւ կը զգանք մեր արարածոցս ծայրայեղ նուաստութիւնն եւ անբացատրելի փոքրիկութիւնն Անոր արարչի անասման մեծութեան առջեւ. եւ Անկից շնորհք ինդրելով Անոր գերագոյն մեծվայելութեան առջեւ ամբթակոր եւ ոչնչացած կը մնանք ի մեծարանս եւ յերկրպագութիւն: Հոգւոյ բոլոր կարողութեամբ կը ճանչնանք որ ոչինչ ենք, եթէ ոչ մոխիր եւ հող² եւ Անոր ներկայութեան առջեւ կը զգանք մեր ոչնչութիւնը³: Եւ թէ սրտերնուս լսիկ երկրպագութեամբ անգամ արժանի չենք Անոր հետ խօսելու:

Ասկից զատ, ինչո՞ւ համար Եկեղեցին այս առ Տէր առաջին պաշտօնաց մէջ մեզ բսել կու տայ, երբութե վշտալից հեծութեամբ արդալակէինք «ուրիշ» Բարի...: Վասն զի իրօք չափէն աւելի կարեկցութեան արժանի ենք, վասն զի մեծ, խոր, եւ զրեթէ անչափ է խեղճութիւննիս: Մարմնոյ

¹ Բ. Օրէնք. ԼԲ. 39: — ² Ծննդ. ժԸ. 27: — ³ Սղմ. ԼԸ. 6:

մէջ տկարութիւն, վատառողջութիւն, ցաւ եւ երբեմն գրեթէ անտանելի վշտեր: Հողւոյ մէջ տաղտուկ, տխրութիւն, զկծեցուցիչ անձկութիւններ, սպառիչ կրքեր, հանձարոյ խաւար: Սրտի մէջ անկարգ ցանկութիւններ, զգայարանաց վտանգներ, ամօթալից հակուսներ, խայտառակ անկարգութիւններ: Մեղովէ ներս եւ դուրս յաւիտենական փրկութիւններնուսանհամար թշնամիներ: Վամբերնուս մէջ տկարութիւն, յողորդութիւն եւ ստէպ ու շատ ստէպ երկչոտութիւն, քնէութիւն, ինչպէս նաեւ մահաբեր թմրութիւն: Ո՛հ, այն, կրկնենք անդամ մ'ալ, մենք չափէն աւելի կարեկցութեան արժանի ենք, մեր խեղճութիւնն անբացատրելի է: Ամէն վայրկեան ամենայն ինչ անդամանելի կերպով կորմնցընելու, եւ անմասն, անչափ եւ անվարձան դժբախտութեան հանդիպելու վտանգին մէջ կը դանուիրք: Իրաւունք ունինք ուրեմն Ս. Թերեզիայի հետ հառաչելու թէ. «Աղէ՛, ո՛վ Տէր, քանի որ այս մահականացու կեանքը կը տեւէ» յաւիտենականը միշտ վտանգի մէջ է: Ո՛վ կեանք, թշնամի իմ երանութեանս, ինչո՞ւ համար օրէն չէ ինձ զքեզ լմնցընել: Ես քու վրայ հոգ ունիմ, վասն զի իմ Աստուածս զքեզ կը պահպանէ: Ես զքեզ կը խնամեմ, վասն զի դուն Անոր

կը պատկանիս: Բայց չըլլայ թէ զիս մատնես, եւ ինձ ապերախտ ըլլաս: Ա՛ղէ, ո՛վ Տէր, սրչափ երկար է իմ աքսորս...: Թէ եւ շատ ստոյգ է որ Քու յաւիտենականութիւնդ շահելու համար ամէն ժամանակ կարճ է: Բայց միայն օր մը, եւ միայն ժամ մը շատ երկար կը թուի անոնց, որոնք զՔեզ վշտացընէին կը վախնան. եւ չեն գիտեր թէ արդօք զՔեզ վշտացուցած են՝»: Իրաւունք ունինք արեւորուած Առաքելոց հետ աղաղակելու. «Տէր ազատէ զմեզ, կորսուելու վտանգի մէջ ենք»¹: Եւ մեր Մօր Լիկեղեցւոյ հետ՝ Տէր «Լուրճ» Գլէ: Մեր պարտքն է այս բառերը միշտ արտաբերել Աստուածային կարեկցութեան եւ Անոր անսահման գթութեան ունեցած անչափ հարկաւորութեան կենդանի զգացմամբ, որ կը գերազանցէ մեր թշուառութեան չափազանց տարածութիւնն եւ անհուն խորութիւնը: Աստուծոյ անսահման մեծվայելչութեան առջեւ ծոռնիկ եկած պաղատինք չքաւորութեան ծայրը հասած աղքատաց պէս, անգութ ցաւակրութեամբ տառապող հիւանդաց պէս, մահն աչաց առջեւն ունեցող նաւաբեկներու պէս:

1 Ժ.Է. Խոկմ. սա. Աստուած: —
2 Մատթ. Ը, 25:

Իսութիւն գերագոյն, էութիւն սքանչելագոյն, էութիւն էութեանց՝ քու բարձրագոյն մեծութեանդ բարձրութեանն հաճէ մեր ձայնին ականջ դնել, խեղճութեան աղաղակն է, հիւանդութեան, ցառոց վտանգին աղաղակն է, սրտի աղաղակն է, որ քու ամենակարողութեանդ եւ անսահման բարութեանդ օգնութիւնը պաղատելով կը խնդրէ: Հաւատոյ աղաղակն է, որ ի քեզ «ողորմութեանց Աստուածք», մեզ նշմարել տայով՝ մեկնոյնատենն ըսել կու տայ Տէր Դուրձե՛: Հաւատոյ աղաղակն է, որ նոյնպէս ցոյց կու տայ մեզ երկինքը Բույաւիտենական փառացոյ Գահայից քով Մայր մը, զոր քու Եկեղեցիդ մեզ «Մայր ողորմութեան»՝ յորջորջել կու տայ: Մայր մը, որուն օրհնութիւններն ուղեցիր որ բովանդակ աշխարհ հռչակէ, ինչպէս որ «Ինք քու կրկններդ կը հռչակէ»՝: Մայր մը առ որ շատ անոյշ է բարձրացընել օրհնութեանց ձայներնիս, որոնք կրկին մեր գլխուն վրայ կը թափեն, իբր շնորհաց եւ «Աստուածային օրհնութեանց» ցող մը: Մայր մը՝ որ մեզի համար կ'աղօթէ, եւ որուն մենք ալ կը միանանք քեզ կրկնելու

Տէր ողորմէ՛ մեզի:

1 Բ. Եղ. Թ. 9: — 2 Ողջ լէր, Թաղ.:
— 3 Ամբակ. Գ. 18: — 4 Թիւր. Ի Գ. 9:

ՄՏԱՆԾԱԿԱՆ Բ.

Քրիստոս ողորմաց:

Հոգին որ՝ ի խոր կը զգայ իւր խեղճութիւնը, եւ որ Աստուծոյ մեծ վայելչութեան կը զիմէ, յորմէ միայն կրնայ սպասել իւր մխիթարութիւնը, ոյժն եւ փրկութիւնը, չի հայցեր զայն եթէ ոչ գողալով, իբրեւ լքեալ կը մնայ այն անսահման մեծութեան առջեւը: Եկեղեցին զհոգին կը բաջալերէ երկրորդ պաղատանքով, յորում ըստ իմիք քօղարկելով այն անսահման հեռաւորութիւնը, որ զԱստուած արարածէն կը բաժնէ, եւ այնպէս կ'ընէ որ արարածը նշմարէ զԱնիկայ, առ որ այս պաղատանքն ուղղուած է, զԱնիկայ մեզ մերձեցընելու համար, եւ որ աւելի եւս կարող է սրտերնուս յոյս աղդել: Իբրք ինչ կ'ըսէ Յե-սուսի Բրիտանիայի անունը կաթողիկէ հաւատոց մէջ ապրող անձի մը ականջին: «Մարմնացեալ Բանը, որ մէջերնիս ընակեցաւ, շնորհք եւ ճշմարտութեամբ լեցուն»: Միջնորդ Աստուծոյ եւ մարդկան մէջ: Աստուծոյ գառնը, որ աշխարհիս մեղքերը կը բառնայ: Որ բաց ի մեղաց, մեզ

1 Յովհ. Ա. 14: — 2 Ա. Տիւ. Բ. 5: —
3 Յովհ. Ա. 29:

նման, մեր ամէն տկարութեան փորձն առաւ¹: Որ յամենայնի մեզ նմանեցաւ, որպէս զի մեր վրայ եղբայրական գուժ զգայ²: Որպէս զի մեր թշուառ վիճակին կարեկից գտնուի, իբրեւ Անիկայ, որ մարդուն դժբախտութեան բնկեր եղած է, Մեծ Քահանայապետ, Աստուծոյ Որդի, որ յերկինս համբարձաւ³: Որ ունի Գաւթին բանալին, որ կը բանայ առանց ուրիշի մը գոցելու կարող ըլլալուն⁴:

Եկեղեցին ուրեմն այս Աստուածային քահանայապետին անունը մեր շրթանց վրայ դնելով ամենայարմար պատճառը մեզ կ'առաջարկէ վախէն ներուած սրտերնիս ընդարձակելու: Եկեղեցին կը հրաւիրէ ամենազգուկերպով քրիստոնէական յուսոյ զգացման վստահելու, որ զհոգին հաւասարապէս հեռու կը պահէ թէ յերկմտութենէ եւ թէ յանձնապատասխանութենէ: Ինչպէս կասկածիլ Աստուծոյ բարութեան վրայ, երբ կը հաւատացուի որ մեր «գատապարտութեան դատակնիքը ջնջելու համար հարկ եղաւ որ Յիսուս Քրիստոս զայն հաշտփայտին բեւեռէր⁵»: Ինչպէս անձնական տկարութեամբ երկմտիլ

¹ Եբբ. Գ. 5: — ² Եբբ. Բ. 17: —
³ Եբբ. Գ. 14: — ⁴ Յայտ. Գ. 7: —
⁵ Կողոս. Բ. 14:

մեր թէեւ ամենածանր յանցանաց թողութեան նկատմամբ, երբ մէկը կը հաւատայ որ «Աստուած այնչափ սիրեց զմարդիկ, որ անոնց համար իւր միածին Որդին տուաւ, որպէս զի Անոր հաւատացողը չկորսուի. այլ յաւիտենական կեանքը ժառանգէ¹»: Ո՛հ, այս ոչ Յիսուս Քրիստոս հաւատքն ըստ բաւականի չենք յարգած եւ շատ քիչ կը պատուենք անոր սքանչելի ոգուտները: Ասիկայ գերբնական շնորհք մ'է, որ ոչ միայն կը գերազանցէ մարգուս ամբողջ կարողութիւնը, այլ նաեւ բոլոր գաղափարն եւ բովանդակ բաղձանքներն ալ, զոր բնութիւննիս կրնայ ունենալ: Պարգեւ մ'է, առանց որոյ անհնար է երկնային երանութեան հասնիլ, ըստ սրում «առանց հաւատոյ անկարելի է Աստուծոյ հաճոյ ըլլալ²»: Եւ ինչպէս կարելի է որ Աստուծոյ հաճոյ չեղող մէկին Անոր մշտնջենաւոր երանութեան հաղորդ ըլլալու արժանի դատուի: Տուրք մ'է որ այնչափ կ'արժէ, որչափ որ կ'արժէ յաւիտենական կեանքը, գերազոյն բարւոյն յաւիտենական ժառանգութիւնը. ըստ սրում Աստուածային վարդապետը մեզ ըսած է թէ, «Այս է յաւիտենական կեանքը՝ զքեզ միայն ճշմարիտ Աստուած ծան-

¹ Յովհ. Գ. 16: — ² Եբբ. ԺԱ. 6:

չնալ. եւ զՅիսուս Քրիստոս, զոր դուն խաւրեցիր¹, . . . : Եղոյն իսկ այս աշխարհիս մէջ ալ միթէ այս չէ՞ միայն ճշմարիտ կեանքը: «Ով որ իմ խօսքերուս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ Անոր որ զիս խաւրեց, կ'ընէ նմանապէս Մարդ - Աստուած, արդէն մահուանէ ի կեանս փոխուած է²»: Մահ է ուրեմն այն անձանց կեանքը, որոնք Յիսուսի Փրկչին չեն հաւատար:

Յիրաւի «խաւարի իշխանին³», դերի ըլլալ, մարդու պարտաւորութեանց եւ անձնական միժճակի նկատմամբ մտաց անգութ վարանման մէջ առանց անսխալ լուսոյ մնալ, ժայռերու մէջ առանց առաջնորդի եւ առանց ուղեցոյցի գտնուիլ, աշխարհի բոլոր տիրուածեանց մէջ մտիծարուած ենէ զուրկ ըլլալ, կրից, դժբախտութեան, ցաւոց յարձակմանց դէմ անզօր մնալ, մարմնացեալ Բանին վարդապետութեանց քաղցր եւ մարուր ճշմարտութենէն, Անոր օրինակներուն անհամեմատ ազդեցութենէն, Անոր արդեանց անսպառ օգնութիւններէն, փառաւոր յոյսերէն, որոնց առհասարակ չեայ է Անոր խօսքը, զրկուիլ: Բարէ, որպիսի՞ աղէտ մ'է: Հազարիցս արտասուելի. . . : Ո՛րչափ ուրեմն պարտական

1 Յովհ. ԺԷ. 3: — 2 Յովհ. Ե. 24
— 3 Իբիս. Զ. 12:

ենք դաւանիլ առ Տէրն մեր, որ պարգեւած է մեզ հաւատոյ անգին դանձր:

Ո՛վ Յիսուս, ով Քահանայ յաւիտենական, պաշտելի Քահանայապետ, երկրպագելի զո՞ճ մեր փրկութեան, դուն ես որ առ Քեզ ունեցած հաւատքնիս մեզի շնորհեցիր: Հազարիցս հազար անգամ՝ օրհնեալ ըլլաս այնչափ, որչափ որ են սրտերնուս բարախմունքը: Որպիսի՞ գոհուածիւնք կրնան երբեք հաւատարիլ «այս բարեաց, զոր մեզ նման չառատաձեռնեցիր ուրիշ ազգերու ալ, որոնք տակաւին խաւարի ու մահուան ստուերի մէջ կը նստին¹»: Ո՛հ շնորհք ըրէ: «Թերի մի թողուր ինչ որ ի մեզ սկսար²»: Հաճէ պաղարբեր ընել Քու անսահման առատաձեռնութենէդ ընդունած շնորհքնիս: «Օգնէ եւ աճեցուր հաւատքնիս³. ըրէ որ սիրոյ համար գործէ⁴»: Ստոյգ է որ մենք չափազանց ապերախտ, չափէն աւելի յանցաւոր ենք: Բայց միթէ մենք «Քու եղբայրներդ չենք»⁵, որոնց համար բովանդակ աւրիւնք թափեցիր: Գիտէ աւելի եւս Քու եւ մեր մէջն Աստուածային Մայրդ, «որուն պաշտպանութեան ներքեւ կ'ապաւինինք⁶», մեր տառապանաց

1 Դուկ. Ա. 79: — 2 Սղմ. ԿԷ. 29:
— 3 Մարկ. Թ. 23: — 4 Գաղ. Ե. 6:
— 5 Յովհ. Ի. 17: — 6 Ինք հովանեալ:

մէջ: Մի՛թէ Մարեմայ ձայնը շատ աւելի ազդու չէ՞ Քու սրտիդ քան թէ ատեն մը Բերսարէիներ Սողոմոն թագաւորին սրտին: Եւ եթէ այն իշխանը կ'ըսէր իւր մօրը. «Խնդրէ, չեմ կրնար երես դարձնել քեզմէ՜»¹, սրչափ աւելի պիտի զիջանի դուն Անոր աղաչանաց, որ ատեննք քանի մը խօսքով կրցաւ ընդունիլ Քեզմէ հրաշքներուդ առաջինը²: Ինք հոս իւր աղաչանքներովը կը միջնորդէ պաշտպանելու զմեզ այն «հրաբորբոք նետերէն»³, զորոնք Քու երկրպագելի Սիրտդ կը բաղձայ զմեզ զզջման բերելու համար Աստուածային սիրով բորբոքուած սլաքներու դարձած տեսնել: Եւ այս կերպարանքով անգամ մ'երեւնայով Ս. Գովմեհիոսի, որ մինչդեռ Ասիզացի Ս. Փրանկիսկոսի հետ Սուրբ նախանձու եռանդեամբ միացած զԱնիկայ Քեզ մատնանիչ կ'ընէր. միեւնոյն ատեն կը ցածուցանէր Քու աշխարհի դէմ՝ զրգուռած արդարութիւնդ: Լի վաստահութեամբ Անոր իրեւ Մայր վայելած իշխանութեան կը համարձակինք ըսել Քեզ «մեր անդնդոյն խորէն»⁴.

Քրիստոս ողորմէ մեզի:

1 Գ. Թագ. Բ. 20: — 2 Յովհ. Բ. 3:
— 3 Յովբ, 2, 4: — 4 Սղմ. ՃԻԹ. 1:

ՄՏԱՆԾԱԿԱՆ Գ.

Տե՛ր ողորմաց:

Եկեղեցին սթափեցընելով մեր հաւատքն առ աստուածային Սիջնորդն, եւ սրտերնիս քրիստոնէական վաստահութեան զգացմամբ թափանցել տալէն վերջը, մեզ կրկնել կու տայ, Տէր «դու՞նք»¹ Քզէ: Եւ ըսել կուզէ որ անգամ մը ջերմեռանդաբար Յիսուսի Քրիստոսի երկրպագելի անունը յօդնութիւն կարդայով. Տէր-՛՛մ անունը, զոր Աստուծոյ կու տանք, մեզի համար այլ ահաւոր բան մ'ըլլալու չէ: Իրօք եթէ Մարդն - Աստուած կը զիջանի իւր անհուն արդեանցը վահանու զմեզ պաշտպանելու, կարելի՛ է որ այնուհետեւ արտաքոյ կարգի դուռն զգանք զերազոյն Մեծվայելչութեան առջևը: Արնանք մենք Ազամայ պէս ընել, որ պատուիրանազանց ըլլալէն վերջը այն աստիճան Աստուծմէ վախցաւ որ տեսակ մը զուանցութեան մէջ ինկաւ Անոր ներկայութենէն խոյս տալու մտաբերելով¹: Իբրու թէ չգիտնար որ «եւ ոչ արարած մ'աներեւոյթ է Անոր աչքին, եւ ամենայն ինչ մերկապարանոց ու յայտնի է Անոր աչաց առջևը»²,

1 Ծննդ. Գ. 8: — 2 Եբբ. Գ. 13:

որ Անոր համար գիշերը քող չունի
 եւ ցերեկուան պէս լուսաւոր է¹...:
 Ո՛հ, մանաւանդ թէ յանուն այսպիսի
 քաղցր Փրկչի մ'ինչպիսի՞ որդիական
 վատահուլ թեամբ պիտի կարենանք
 հօտիլ ինքնիշխան Տիրոջ, մինչդեռ
 Ինքն է որ խաւրեց իւր Միածինը զմեզ
 իրեն որդեգիր ընելու. եւ նոյն այս
 Որդւոյն Հոգին է, որ սրտերնուս
 խորէն կ'աղաղակէ, ո՞վ Հայր, ո՞վ
 Հայր²։ Մեծահարա՛շ պատիւ, մեղաւոր
 մարդու տրուած սքանչելի բարեք։
 Այն Աստուածը որ ուրիշ բան ընելու
 չէր, եթէ ոչ թողուլ զմեզ ի դա-
 տապարտութեան. իւր Միածին Որ-
 դւոյն միջնորդութեամբն զմեզ գնելով
 եւ նախկին վեճակներնուս մէջ հաս-
 տատելով միայն գոհ չեղաւ, այլ ու-
 ղեց նաեւ որ իւր որդւոց անուամբ
 կոչուինք, եւ իրօք ալ նոյնպէս
 ըլլանք³։ Գիտեցէք թէ մինչեւ որ
 աստիճան ցուցուց առ մեզ իւր հայ-
 բենի սէրը⁴։ Տեսէք թէ Յիսուսի
 Քրիստոսի արդիւնքներն ինչ պտուղ
 արդիւնաւորեցին մեզի համար։ Ա-
 ստիք այն աստիճան «ամենայն ինչ սքան-
 չելապէս յարմարեցին⁵» որ Մարդ-
 Աստուծոյ անսասման Սրբութենէն եւ

¹ Սղմ. ՃԼԸ. 12: — ² Գաղ. Գ. 7:
 — ³ Ա. Յովհ. Գ. 4: — ⁴ Անդ. —
⁵ Կողոս. Ա. 20:

արդարութենէն դժոխաց անդունդը
 վռնտուած ըլլալովն ալ այն արդեանց
 միջոցաւ նոյն ինքն Աստուծոյ ամենա-
 սիրելի որդեակը դարձաւ։

Յիրաւի մենք չճանչցանք մկրտու-
 թեամբ մեզի տրուած այս բարձր ար-
 ժանաւորութիւնը. իրաւ է որ մենք
 զանոնք պակօնցուցինք յանցանք
 «որոնք զՏագին չեն մեացըներն»։ Կամ
 մահուցափ մեղօք կորուսինք այն ի-
 րաւունքները, որոնք յարակից էին
 այսպիսի գեղեցիկ տիտղոսի մը։ Բայց
 ինչ ալ ըլլայ չկրցանք կորսնցընել
 փրկչին արդեանց կրթնելու իրաւունք-
 նիս, Անոր գործադրելու որոշած մի-
 ջոցներով ելլելու մինչեւ այն նշանաւոր
 պատուոյն, ուսկից որ գժրախտաբար
 ինկած էինք։ Այո՛, այս իւր անմահ
 կենաց, չարչարանաց եւ Գողգոթա
 կատարած զոհին անհուն զանձը Յի-
 սուս Բրիտանոս աննահանջելի կերպով
 մեր ձեռքը թողուց. ինքը զայն մեզ
 պարգեւեց, կերպով մը զայն մեր
 անտարանալի ստացուածքն ըրաւ. զոր
 մինչեւ վերջին շնչերնիս կրնանք գործ-
 ածել զՏէրն յօգնութիւն կանչելու.
 եւ մեզ հարկաւոր եղած շնորհքները
 խնդրելու. վասն զի նոյն ինքն Յիսուս
 Բրիտանոս ըրաւ. «Եթէ դուք յանուն
 իմ՝ բան մը խնդրէք իմ՝ Հօրմաս, ես

1 Ա. Յովհ. Ե. 16:

պիտի շնորհէ ձեզ¹: Ա՛հ, ինչպիտի
 Հարատու թեամբ, ինչպիտի իշխանու-
 թեամբ հաճեցաւ Աստուած օժտել
 քրիստոնէայ հոգին: Էւ ո՞ր սիրաբ
 Հաւատով սրտապնդած յարմար պի-
 տի չբառէ կրկնել Հոս երանելոյն
 Յովբայ վե՛հ խօսքերը. «Բնչ է մարդը,
 զոր դուռն կը հաճիս այսպէս մեծարել²»:
 Աւտի կրկնելով Աստուծոյ՝ Տէր
 «դարձե՛ Բեզե՛. կ'իյնանք Անոր առջեւը
 հողուով մինչեւ փռչւոյ մեջ ընկղմած,
 ուր զարմանքներէս ամօթակոր եւ
 ապշած կը մնանք. վասն զի կրնանք
 ամէն ժամ խօսիլ առանկ մեծ Աս-
 տուծոյ մը հետ. եւ վասն զի այսպիսի
 մեծ Աստուած մը կը զիջանի ունկն-
 դիւր ըլլալ մեր ողորմելի արարածոցս
 հառաչանայ, որ մեղաց անկարգու-
 թեամբ առաւել եւս անարդ ու վաս
 եղանք: Բայց փեւնոյն ասան ընդարձա-
 կենք սրտերնիս. ընդարձակենք, ինչ-
 պէս որ ընել պէտք է իւր զաւակաց
 վրայ գորովագութ սիրով լեցուած
 հօր մը գիրկն ինկողին նման, ինչու որ
 երբ մենք կը միանանք Յիսուսի, եւ կը
 ներկայանանք Աստուծոյ յերկրագոյնի
 Անձին իւր Արդւոյն, հնար չէ որ
 սրտին այս աղաղակը, որ կը թա-
 խանձէ Անոր գթութիւնը յօգնու-
 թիւն իւր, յարողութեամբ չլսուի:

1 Յովհ. Ժ. 2: 23: 2 Յովբ. Է. 17:

Մեր ձայնն Աստուածային Միջնորդ-
 ներնուս ձայնին միացած, այսպէս բե-
 լու համար, իւր բնութիւնը կը փոխէ,
 եւ իբրեւ մարդկային ձայն կը կորսն-
 ցընէ իւր ունեցած տկարութիւնը,
 անարժանութիւնն եւ արտեղութիւնը,
 որպէս զի հաղորդակից ըլլայ Յիսուսի
 Քրիստոսի ձայնին զօրութեանը, մա-
 քութեանը, Աստուածային Մրբու-
 թեանն եւ Աստուածային աղբեցու-
 թեանը:

Տէր, յԱնուն, եւ Քու անձառելի
 սիրոյդ մեզի պարգեւած Միջնորդին
 անսահման արդեանց համար, յինքն
 եւ Իրմով՝ «կը սփռենք Քու առջեւդ
 մեր աղօթքը. եւ Քու առջեւդ կը
 տարածենք մեր նեղութեան հեծու-
 թիւնը¹»: գործով «դարձե՛ Բեզե՛:
 «Մենք ալ Քու ծառաններդ չենք, այլ
 Քու որդիքդ, եւ Յիսուսիւ Քրիստո-
 սիւ Քու ժառանգներդ², Արուն ա-
 իրւնը մեզ համարձակութիւն կու տայ
 ապահովութեամբ Քու սրբավայրդ
 մտնելու³: Մենք Անոր եղբայրներն
 ենք, Ինք մեր անդրանիկն է⁴. եւ Անոր
 հետ միատեղ ժառանգակից ենք⁵:
 Աւտի եւ վստահութեամբ կը ներ-
 կայանանք շնորհացդ Աթոռոյն առջեւը

1 Սղմ. ճԼԼԸ. 3: 2 Գաղ. Գ. 7:
 - 3 Եբբ. Ժ. ԵԿՅԱԼԱ ԶԻՆՄԱՐԻՆ Է. 29:
 - 5 Անդ. 17: ԳՕՍ. ԵՈՒՈՒՊՕՏԵՂԱ 2

24746-61



ողորմութիւն գտնելու համար¹։ Եւ կ'աղաղակէնք որ ողորմիս մեզի, ինչպէս որ Անոր պիտի ողորմէիր, եթէ՛ որ անհնարին է՝ գտնուէր այն հարկաւորութեան ու վտանգներու մէջ, յորս մենք կը գտնուինք։ Ո՛հ, Տէր, այլ մենք չենք որ Քեզի կ'ըսենք, այլ է նոյն ինքն մեր Աստուածային եղբայրը, որ Քեզ կ'ըսէ մեր սրտով եւ մեր լեզուաւր՝ «Դու՛ք» Քեզի։ Եւ Անոր հետ միատեղ իւր Օգոստափառ Մայրը, այս երկնից ամենասիրելի Դուստրը, մի՞թէ չ'ըսեր ինքն ալ. «որ մեր Քոյրն է², որ բոս մարմնոյ միեւնոյն արիւնն է³ յոր եկաւ նաեւ Յիսուս Քրիստոս⁴ այն Յուզայի ցեղին անյաղթ առիւծը⁵, որ մահուան յաղթեց իւր յարութեամբը, աշխարհի ապականութեան՝ իւր երկրպագելի մաքրութեամբն եւ անսահման Սրբութեամբը, սատանային՝ իւր խաչին փառօք եւ իշխանութեամբը։ Յանուն այս Աստուածային Փրկչին, եւ ի միութիւն Մարեմայ նորէն կը գոչենք՝

Տէր ողորմէ մեզի։

1 Եբբ. Դ. 16: — 2 Ծննդ. ԺԲ. 13:
— 3 Հռովմ. Թ. 3: — 4 Ա. Յովհ. Դ. 2:
— 5 Յայտ. Ե. 5:

ՄՏԱԾԱԿԸ Դ.

Արիստոս ռոռ մեզ:

Որչափ աւելի հոգ տանինք սրտերնիս եւ ձայներնիս Յիսուսի սրտին եւ ձայնին միացնենք՝ Աստուածային բարութիւնն եւ զ[Թ]ութիւնը հայցելու համար, այնչափ ալ աւելի աղօթքնիս կը բարձրանայ դէպ ի Յաւիտենակաւնին աթոռն իրբեւ «անուշահոտութեան նուէր մը¹»։ Սակայն հոս մեր հաւատքն եւ մեր վստահութիւնն աւելի ուժգնութեամբ շարժելու համար դէպ ի «Նոր կտակարանին Միջնորդը²» որ միշտ կրնայ փրկել զանոնք, որ իրմով³ Աստուծոյ կը մօտենան, որպէս զի աւելի եւս սերտութեամբ անցենք Անոր երկրպագելի սրտին հիանալի տարամադրութեանց, որ է-ր «հոսան նախընթաց օրը հանդիսապէս՝ «Դեմք անոնց համար, որոնք լինքն պիտի հաւատային⁴։ Մենք կրկին անգամ Անոր կը դառնանք, աղաչելով որ Քեզ լէի, ոչ թէ վասն զի Անոր ազանջները տակաւին բաց չեն՝ եւ կամ կը մերժեն անոնց ձայնը, զորոնք ինքն իրմէ աւելի սիրած է, այլ որպէս զի

1 Եփես. Ե. 2: — 2 Եբբ. Թ. 15: —
3 Անդ. Ե. 25: — 4 Յովհ. ԺԵ. 20:

մեզի մտիկ ընէ, ինչպէս բարի հայր մը մտիկ կ'ընէ իւր խեղճ որդւոց, իբրեւ բարի մայր մը՝ իւր աղեաց սիրելի պտուղներուն, թէեւ անցելոյն մէջ դժբախտաբար ապերախտ գրտնուեցանք: Մենք յոգուտ մեր կը խնդրենք սրտին այն յատուկ ունինգրու թիւնը որ գորովագու թ հաճութեամբ կը լսէ սիրելի ձայն մը, որ այս ձայնին՝ բարեխրութեան եւ սիրոյ հեղմամբ կը պատասխանէ, որ կը գիտէ հաստատել իւր եւ քրիստոնեայ հոգւոյն մէջ նոյն խոկ հրեշտակաց անդամ հիացման միշտ արժանի զգացմանց անձառելի հաղորդակցութիւն մը: Ո՛հ, հաղարիցս երանի՛ այն հոգւոյն որ վայելելով սրբաբար շնորհաց անդուգական պարզեւր կրնայ խօսիլ Յիսուսի, իբրեւ բարեկամ՝ մ'իւր բարեկամին, մանաւանդ աւելի ճիշդն ըսելու համար՝ Իրգոց հարսին պէս իւր սիրելի փեսային, իւր երկրպագելի փեսային, Հաղարիցս երանի՛ այն հոգւոյն, որ կատարեալ վտահոտութեամբ կրնայ ըսել. «Ինք իմն է. ես ալ Անոր՝»¹: Իւ Յիսուսի հետ մտերիմ՝ յարաբերութեանց մէջ կ'արժանանայ ըսել այս սփոփիչ՝ այս երկնային խօսքերը. «Իւ կը բաղձամ՝ լսել քու ձայնդ, ով սիրելիդ իմ՝»²:

¹ Երգ. Բ. 16: — ² Անդ. 14:

Բայց աւանդ, մեր քիչ հաւատարմութիւնը, մեր քիչ եռանդը, մեր քիչ հաւատքն ու սէրը շտա յաճախ կը զրկեն զմեզ այս մեր Աստուծոյն հետ բերկրալի հաղորդակցութենէն: Մենք Անոր եւ մեր մէջն երրորդական անձինք կը խօսի ենք, ուրիշները կը հրաւիրենք մասնակցելու այն սրտին, որուն Ինք միայն այնչափ պատճառներով է գերազոյն Տէրը: Կը գգուենք այնպիսի հակումներ՝ ցանկութիւններ՝ թէեւ փոքր, սակայն այնպիսի՝ որոնք իրեն անհաճոյ են, այնպիսի՝ որ կը վիրաւորեն այն բացարձակ իրաւունքը, զոր ունի անպահեստ ամէն բանի նախապատուելու, եւ զմեզ ըստ արժանւոյն կը պատժէ զրկելով զմեզ այն շնորհքներէն, որոնց յարգը ոչ մարդ, եւ ոչ հրեշտակ կրնան պատմել, եւ ըստ բաւականի անոնց պանչելի քաղցրութիւնը հաշտել:

Այսու ամենայնիւ չվհատինք, եթէ մեր հիւանդութիւնը թոյլ չի տար յուսալ ցմիշտ պահպանելու Յիսուսի հետ այս անձառելի յարաբերութիւնները, որ սիրելագոյն հոգւոց յատուկ շնորհք մ'է: Վասն զի ինչպիսի ալ ըլլանք, կրնանք եւ պարտաւոր ենք փափաքիլ ամենամտերմաբար միանալու Անոր երկրպագելի սրտին հետ, Անոր բարեկամութիւնը վայելելու, Անոր շնորհաց մէջ յարատուելու, եւ

Անոր սուրբ սիրոյն մէջ ապրելու ու մեռնելու...: Ո՛հ, ամէն ճգերնիս թափենք խոյս տալու այն ամէն բանէ, որ կրնայ ոչ միայն փակել, այլ եւ թուլցընել այն սուրբ հանգոյցը, որ զմեզ կը միաւորէ այս Աստուածային Փրկչին հետ, մանաւանդ թէ բոլոր եռանդնիս դարձած ենք օր ըստ օրէ, ժամէ ժամ՝ զայն աւելի եւս պնդելու եւ ամրացընելու, այնպէս որ արժանի ըլլանք այս սուրբ կրթութեան մէջ մեռնելու, որ սեպչական է ճշմարտապէս քրիստոնէի մը սրտին:

Ո՛վ Յիսուս, ո՛վ Դուռն, որ «քաջ գիտես բարեկամ ըլլալ¹», որ զարմանալի ես սիրոյ հեղմանցդ մէջ այն հոգիներուն՝ զորոնք դատարկ կը գտնես՝ արարածոց եւ առ ինքեանս ցանկութիւններէն, փառաւորուէ երկրիս վրայ, ինչպէս յերկինս յորմէ հետէ սքանչելապէս կը սիրահարիս այնպիսի հոգիներու, որոնք իրենք զիրենք Քեզ անարժան կը ճանչնան: Ի մասնաւորի անոնք, որոնք բարեբախտ գտնուած են «ճաշակելու եւ տեսնելու թէ որչափ քաղցր ես»²» Քու Աստուածային բարերարութեանցդ մէջ, թող միանան եռանդեամբ երգելու իրենց պաշտելի փեսային Անուռն ու

սիրտը...: Իսկ անոնք որ միայն հեռուէն հիանալ կրնան Քու Սրտիդ անձառելի խորհրոց վրայ գոնէ երախտագիտութեան կենդանի զգացմամբ բարձրաձայն գովեն այն անհամեմատ բարութիւնն, որով կը հաճիս ունկնդիր ըլլալ իրենց աղօթից ողորմելի ձայնին:

Ո՛վ անսահմանաբար բարի եւ սիրելի Յիսուս, այնպէս կը թուի մեզ թէ երկնից բարձրութենէն կ'ըսես «յսեցի նոր Խարայէլի օրդուոց հէծութեան ձայնը¹»։ Ես պիտի մտիկ ընեմ եւ քաւիչ ըլլամ անոնց²»։ Ո՛հ, սրտերնուս բոլոր հառաչանքներովը Քեզմէ կը խնդրենք, պահպանէ զմեզ Քեզի տհաճութիւն տալէ, մանաւանդ մինչեւ ցկէտ Քու շնորհք կորսնցընելու: Իւ եթէ այսպիսի չարաբախտութիւն մ'ալ վրայ հասնի, մենք կը համարձակինք խնդրել որ փրկես զմեզ մահաբեր հետեւութիւններէն, որոնք ստէպ աբդիւնք են Քու Աստուածային սէրեդ զրկուելներու: Որչափ մեծ է Քեզմէ խնդրած շնորհքնիս: Բայց Մարիամ մայրերնիս է, որ Քու ողորմութեանցդ գահոյից առջեւ կը բերէ իւր օրդուոցը խոնարհ խնդիրը, զորոնք մեր հրեշտակներն Անոր կը ներկայացընեն իրեւ իրենց թագուհւոյ: Ո՛հ,

¹ Վարբ Ս. Թերեզիայ ԳԼ. ԻԵ: —
2 Սղմ. ԼԳ. 9:

¹ ԵԼԲ Զ. 5: — 2 Մնց. Է. 14:

Անոր համար պահպանե զմեզ ամէն յանցանքէ, պահպանե զմեզ Քու նախատուած ու ապերախտաբար մերժուած սիրողոյ արդար խստութեանէն, պահպանե զմեզ պիղծ ոգիէն, եւ այն ամէն բանէ որ զմարդը գարշելի կ'ընէ Քու առջեւդ, պահպանե զմեզ հոգւոյ ամէն հիւանդութիւններէն եւ մարմնոյ բոլոր ցաւերէն, որոնք կրնան հոգիներնուս վնաս պատճառել, պահպանե զմեզ Քու արդարութեանդ շանթերէն, տարածամ եւ յանկարծական մահուանէ: Հաճէ, հաճէ տալ մեզ «միշտ ի կեանս եւ ի մահու Քու կողքը¹», շնորհքք՝
 Քրիստոս լե՛ մեղի:

ՄՏԱԾԱԿԱՆ Ե .

Քրիստոս անուս մեզ:

Բաւական չէ առ Յիսուս լե՛ Բրէլ բանինս, Եկեղեցին կը կրկնէ Քրիստոսի երկրպագելի Անունը, եւ կը յաւելլու, «նոս Բը», պաղատանքներս ընդունէ: Ինչո՞ւ համար կրկնել անուն մը, որ գրեթէ միեւնոյն վայրկենին մէջ անգամ արտաբերուած էր: Վասն զի այսպիսի քաղցր եւ անգին անուն մը, օգնութեան եւ

¹ Հռոմ. Ժ. Գ. 8:

սփոփանաց անուն մը, օրհնութեան եւ փրկութեան անուն մը կուզուի արտասանել եւ կրկնել առանց ձանձրութեան եւ տհաճութեան վտանգի: Մանաւանդ թէ ընդհակառակն սրչափ աւելի հնչէ ականջին ու սրտին, այնչափ աւելի անձառելի օծութիւն, քաղցրութիւն եւ հաճութիւն հետը կը բերէ: Գարծեալ պատճառ մ'ալ կայ որ, մենք մեր նախահօր յանցանքէն վերջն ինկած եւ ապերջանիկ որդիքս, տարաբախտ քրտորեալքս, ողորմելի նաւորդներս այնչափ մըրիկներու ենթարկուած, ժայռերով այնչափ լեցուն եւ նաւաբեկութեամբ այնչափ առատ ովկիանոսի վրայ գտնուելով՝ ամենայն իրաւամբ կրնանք այսպիսի զօրաւոր անուան մը դիմել: Ո՛հ, երբ կը հաւատացուի, երբ կը գիտցուի որ «միակ այս անունն է մարդկան տրուած, որպէս զի անոր զօրութեամբ փրկուին¹, որ այս անուան կը կրկնուի ամէն ծունր յերկինս, յերկրի եւ ի դժոխս²», որ ատեն մը Առաքեալներն այս անուամբ ամենամեծ հրաշքներ կը գործէին³ եւ տակաւին ամէն օր սուրբ խորհրդոց միջոցաւ, յԱնուն Յիսուսի Քրիստոսի սքանչելի արդիւնքներ յառաջ կու գան, որոնք թէպէտ եւ ա-

¹ Գործ. Գ. 12: — ² Փիլիպ. Բ. 10:
 — ³ Գործ. Գ. 6:

ներեւոյթ, այսու հանդերձ հրաշքներ են. միշտ երջանիկ բախտի կը հանդիպուի ամէն անգամ որ արտասանուի եւ յօգնութիւն կանչուի այսպիսի Աստուածային անուն մը: Այս տեսակ յորջորջմանէ կը բխէ միսթարութեան եւ ցնծութեան խորին զգացմունք մը, քաղցր լոյս մը, որ իբրեւ ապահով առաջնորդ կը ծառայէ ներկայ կենաց ստուերներու մէջ եւ հաստատ քաջաբերութիւն ու յարատեւ զօրութիւն մ'է մեր փրկութեան բոլոր թշնամեաց դէմ: Ըստ որում Երգոց փեսային անունը՝ «Ազնիւ իւղոյ կը նմանի», որ ըստ Սրբոյն Բեռնարգոսի, կը լուսաւորէ, կը սնուցանէ, կը քաղցրացնէ, կը զօրացնէ, եւ զհոգին յուսահատութենէ կը պահպանէ¹:

Բայց ինչու ըսել Յիսուսին անուս Բու: Միթէ Լուս Բու կրկնելը չունէր, ինչպէս որ տեսանք, իւր քաղցրութիւնն ու շնորհքը: Կամ միթէ կը կորսնցնէր զայն կրկին անգամ շրթունքներնուս վրայ հնչելով...: Ստուգիւ ոչ. բայց Եկեղեցին կ'ուղէ զմեզ խելամուտ ընել թէ՛ Յիսուս կերեւայ թէ երբեմն մեզ կը լսէ, մտիկ կ'ընէ, բայց առանց պատասխանել ուղելու մեր պաղատանաց: Իբօք ինչ

¹ Երգ. Ա 3: — 2 Ս. Բեռն. ճառ ԺԵ. Ի վերայ Երգոց:

ինչ պարագաներու մէջ կ'ուշացնէ շնորհել մեզ խնդիրքներնուս կատարումը, որչափ ալ որ խոնարհ եւ եւսուանդուն ըլլայ, որպէս զի աւելի եւս կենդանացնէ հաստաբնիս եւ յարատեւութեան մեծ արդիւնքը շահիլ տայ: Էւ ըստ որում ստեպ այս տեսակ փորձերու մէջ վճատելու փորձութիւնը կը զգանք, անոր համար կ'աղանք զՅիսուս որ աղատէ զմեզ այսպիսի վտանգէ: Ո՛հ, ուրեմն թախանձանօք պաղատիք այս բարեգոյն մարդասիրաբոյն եւ մեր օգտին նուիրուած Միջնորդին. «որպէս զի շտապեցրնէ իւր Աստուածային օգնութիւնը¹»: Իսկ եթէ իւր նախախնամութեան երկրպագելի տեսչութեամբ պատշաճ դատէ յապաղման սուրբ փորձի մ'ենթարիւլ զմեզ, յեւածգելով մեր խնդրուածոց կատարումը, ոչինչ նուազ թախանձանօք դարձեալ հայցենք՝ որ պարգեւէ մեզ աղօթից մէջ յարատեւութեան անգին շնորհքը: Անշուշտ սրտաբեկութիւնը նախատական է Աստուծոյ անհուն բարութեան եւ ողորմութեան, իբրու թէ Անոր խոստմանց ճշմարտութեան եւ Յիսուսի անսպառ արբեանց զօրութեան վրայ կասկածէինք, զաղարելով Աստուծոյ օգնութիւնը խնդրելէն, երբ

¹ Սղմ. ԿԹ. 1:

դժբախտարար ինդիրքնիս պնայէս շուտով չընդունէինք: Ինչպէս որ կ'ուզէինք: Ընդհակառակն աղօթից հաւատարիմ՝ ըլլալու յարատեւութիւննիս, մինչդեռ Աստուած խուլ կ'երեւայ սրտերնուս բոլոր հառաչանայ, գեղեցիկ մեծարանք մ'է, զոր կը նուիրենք Անոր կատարելութեանց: Ինք երկրպագել կու տայ Աստուածային բարութեան, սղորմութեան, անսխալութեան, երբ կարծես թէ ասոնք ծածկուած ըլլան: Հիանալ կու տայ Իւր իմաստութեան եւ նախախնամութեան վրայ՝ երբ անոնց ճանաչարհներն աւելի անմեկնելի են, մեծագոյն հաւատքով՝ իբրու թէ մեզի երեւելի ըլլային ինդիրքներնուս կատարման մէջ: Ինք կ'ընէ նաեւ որ բոլոր յոյսերնիս կը թնցընենք Փրկչին անսահման արդեանց, երբ կարծուի թէ ասոնք մեզի համար անզոր դարձած ըլլան, աւելի հաստատութեամբ իրբեւ թէ զօրւտոր արդեանց փորձն առած ըլլայինք:

Ո՛վ Յիսուս, որ սղորմութեանցդ լրութիւնը մեզ ծանօթացընելու համար, «Հօր քով մեզի համար փաստաբան եղար¹», մի թողուր որ երբեք դադարինք օգնութիւնդ ինդրելէ, թէեւ աղօթքնիս անօգուտ թուին

1 Ա. Յովհ. Բ. 1:

մեզ. մանաւանդ Քու ամենազօր շնորհօքդ, առանց որոյ չպիտի կարենայինք «եւ ոչ Քու անունդ արտասանել²». Ըրէ որ կրկնապատկենք մեր եռանդն ու վստահութիւնը, երբ կ'ուշացընես մեր աղօթից անալը. Գուն սիրդդ գորովովը հաճեցար ինքը զինքդ մեր մտացը ներկայացընել թխասհաւունմանութեամբ՝ «որ իւր ձագերը թեւերուն տակը կը ժողովէ³»: Աստահութիւնը Քու երկրպագելի սրտիդ մէջ թափել կու տայ մեր վշտերը, ցաւերը, չարիքն ու մեր աղերսները: Ո՛հ, յարատեւութիւնը զմեզ միշտ Մտիդ հետ կապած պահէ բարեխօսութեամբ Քու Աստուածային Մօրդ, որուն Սրբազան ձեռօքը կը ներկայացընենք բոլոր մեր ինդիրքները: Անով կը յուսանք ընդունիլ աղօթքէ բնաչդարելու շնորհքը մինչեւ որ ըսէ մեր Հրեշտակներուն «Տէրն ինձ անասաց³ յօգուտ իմ հաւատքի՛մ աւաւստիւննիս»: Գացէք ո՛վ սրաթռիչ Հրեշտակներ⁴, վերադարձուցէք օրհնութիւններս իմ սրբուոցս, կամ անոնց, սրտը չեն դադարի կրկնելէ:

Քրիստոս ընդունէ պաղատանքներս:

1 Ա. Կորնթ. Ժ. Բ. 3: — 2 Մատթ. Բ. Գ. 37: — 3 Բ. Օրէնք Թ. 19: — 4 Եսայի Ժ. Ը. 2:

ՄՏԱԾԱԿԱՆ Զ.

Հայր Երկնաւոր Աստուած, ողոր-
մաց մնայ:

Յիսուսի Քրիստոսի ամենակարող
արդեանց կրթնած եւ Անոր հետ նա-
խընթաց աղօթիւք իբրեւ մեր Աս-
տուածային Միջնորդին սրտանց միա-
ցած, մենք նոր վստահութեամբ կրնանք
եւ պարտաւոր ենք յօգնութիւն կան-
չել Ամենասուրբ եւ Օգոստոսփառ
Երրորդութիւնը:

Սուրբ Եկեղեցին կանչել կու տայ
մեզ հետզհետէ երեք երկրպագելի Ան-
ձինքը, եւ նախ առաջինը, որուն
ըսել կու տայ, Հայր սր Աստուած ես՝
Երբեք բարոյութեան գեա մեր վրայ:

Երբեք բարոյութեան...: Միթէ Աս-
տուածութիւնն ինչպէս երկինքը, այն-
պէս ալ երկրի վրայ չի գտնուիր:
Միթէ Ինք իւր ներկայութեամբ եւ
մեծվայելութեամբ բոլոր տիեզերքը
չի լեցնէր: Մարգարէ թագաւորը
հաւատոյ եւ սիրոյ լծակով սլանա-
լով՝ միթէ նոյնպէս ներկայ եւ նոյն-
պէս երկրպագելի չէր գտներ զԻնք
«Մթնոլորտին բարձրագոյն կարգերուն
մէջ, անդնոց մութ խորքը, ծովերուն
ծայրերը, ցորեկուան լուսոյն մէջ եւ

ամենախաւար գիշերուան քողին տակ»:
Ո՛հ, անտարակոյս Աստուած ամէն
տեղ է: Ի իւր գիտութեամբը, ըստ
որում ամէն բան կը տեսնէ եւ կը
ճանչայ: Ի իւր կարողութեամբը,
որովհետեւ ամէն տեղ ուրիշ բան չի
կրնար ընել, եթէ ոչ ուզել, եւ նոյն
կէտին բոլոր ուզածը կ'երագործուի,
ոչինչն ալ իսկոյն կը հնազանդի: Ի
իւր էութեամբը, վասն զի Ինքն ան-
սահման է, եւ անսահմանը ոչ չափ
կը ճանչայ ոչ հեռաւորութիւն եւ
ոչ ալ սահման: «Ի նմա ունինք
գոյութիւննիս, շարժումնիս եւ կեան-
քերնիս»։ Ինք կը շրջապատէ եւ կը
թափանցէ մեր անձն իւր գիտու-
թեամբը, զօրութեամբն եւ աներեւ-
ոյթ էութեամբը, ինչպէս որ արեւ-
գակը կը պատէ եւ կը թափանձէ ա-
յապին իւր անշոշափելի ճառագայթ-
ներովը: Եղբայ մեզ ուրեմն, եթէ մեր
խելքովը մտաբերէինք կերպով մը զինքն
երկինքը տարազել իբրեւ հեռաւոր
պալատի մը մէջ, ուր ստիպուէինք
հասցընել մեր աղաչանաց հնչիւնը:
Մենք մեծ մնորութեան մէջ պիտի
գտնուէինք եւ զԱստուած այսպէս այս
սղորմելի աշխարհէս կղզիացընելով՝ մեր
Ագամայ որդւոցս ապերջանիկ վիճակն
իրականէն աւելի վատթարագոյն պի-
տի ընէինք:

Ո՛հ, ստուգիւ ոչ, Աստուած մեզմէ
հեռու չէ, Ինքն ի մեզ է եւ մենք ի
՚Նմա: Աշխատանաց կարօտ չենք մեր
աքօրանաց ըզձերն ու հառաչանք-
ները դէպ ի ՚Նս բարձրացընելու: Ինք,
որուն գթութիւնը կը հայցուի, մեզմէ
աւելի մեղ ներկայ է: Այսպէս երանի
թէ երբեք զինքը չմոռնայինք:

Ինչո՞ւ ուրեմն, անգամ մ'ալ հար-
ցընեմ, ինչո՞ւ համար հապա այն երէնից
բարձրութիւնն բառերը: Ո՛հ, որովհետեւ
Աստուած յերկինս պատրաստած է
իւր բնորոշաց համար բերկրալի բնա-
կութիւն մը, հաստատուն հայրենիք
մը, յաւիտենական թագաւորութիւն
մը, ուր ուրիշ տեղերէ աւելի ներկայ
ըլլալով՝ կը յայտնէ իւր երկրպագելի
ներկայութիւնը Հրեշտակաց եւ Սրբոց:
Հոն ինքը զինքը տեսնել կու տայ, ըստ
որում գրուած է. «Մենք պատի տես-
ներք զԻնքը, ինչպէս որ է՛»: Այս-
ինքն իւր գեղեցկութեան, ճշմարտու-
թեան, սրբութեան, բարութեան,
զօրութեան, սիրոյն եւ ամէն կատա-
րելութեանց մէջ: Հոս ոչինչ կրնայ
գոհ ընել մեր բաղձանքները, որչափ որ
կեանքերն իս կուղէ ըստ աշխարհի եր-
ջանիկ ըլլայ, որչափ որ բազմապատիկ
եւ զանազան ըլլան վայելքն իս՝ այսու
ամենայնիւ աքօրանքն իս մէկ կողմանէ

միշտ զգալի է, մանաւանդ թէ մարդ-
կան մեծագոյն մասին համար գրեթէ
բոլոր կեանքերն իս միթէ աշխատանաց,
տաղտութեանց, դառնութեանց, վըշ-
տաց եւ ամէն տեսակ տառապանաց
հիւսուածք մը չէ՞ արգեօք:

Այսպէս քիչ շատ ամէնքն իս ալ
կը հառաչենք, քէ շատէ ամէնքն իս
ալ դառն եւ արցունքներով թըջած
հաց մը կ'ուտենք, եթէ ուրեմն Աս-
տուածային շնորհաբաշխ բարութիւնն
այս կեանքէս վերջը պարզեւէր մեզ
միայն բնական երջանկութիւն մը
ո՛հ, պարտաւոր էինք ամէն վայրկեան
զինքն օրհնել, եւ ամենամեծ խնամքով
պէտք էինք փնտուել այսպիսի երջան-
կութիւն մը: Յաւերժաբար հեռու
գտնուել աշխարհի ամէն շարիքներէ,
ի յաւիտեան ազատ ըլլալ կարօտու-
թենէ, հիւանդութենէ, ցաւէ, ամէն
անձկութենէ, ամէն վշտէ, ամէն
տրտմութենէ, միթէ շատ չէ՞, եւ ամե-
նաշատ՝ սիրովելի, յանցաւոր արարած-
ներու համար... Բայց ո՞վ սքանչե-
լիք բարութեան: Աստուած այնչափ
առատաձեռն է մեզ նկատմամբ որ
մինչեւ գերբնական երջանկութեան կը
հրաւիրէ զմեզ, այնպիսի երջանկու-
թեան, որուն հետ մեր բնութիւնը
յարմարութիւն մը չունի, որ սրտեր-
նուս բոլոր պացներէն եւ երեւակայու-
թիւններնուս բանդագուշանքներէն ան-

իմանալի կերպով բարձր է, եւ է
 “Հաղորդութիւն Աստուածային ընու-
 թեան”¹։ Ինչպէս ուրեմն չյարգել,
 ինչպէս սրտանց եւ չափէն աւելի
 չփափագիլ այսպիսի երջանկութեան
 մը։ Իւր ինչպէս յարգել ու բաղձալ
 առանց վախի պատշաճ հաւատարմու-
 թեամբ ի գործ դրած չըլլալու այն
 թեութիւնները, որոնք մեզ առա-
 ջարկուած են զայն ստանալու համար։
 Ինչպէս ուրեմն չաղաղակել առ Աս-
 տուած հոգիներնուս բոլոր զորու-
 թեամբը թէ Երբեք Բարձր-Իննի-
 ուրիշ Բեղի։ Ո՛վ Հայր որ Զիսուսիւ
 Քրիստոսիւ զմեզ նախասահմանեցիր
 յորդեգրութիւն² եւ զմեզ Բեղ Ժա-
 ռանի Եւ Ասոր Ժառանգակից³, ընելու
 չափ սիրեցիր, հաճէ լուսաւորել
 մտքերնուս աչքը, որպէս զի ճանչնանք
 թէ ինչ է մեր կոչման յոյսը, եւ թէ
 ինչ են Սբոց ժառանգութեան հարբս-
 տութիւն ու փառքը⁴։ Այսպիսի
 ժառանգութեան մը մտածմունքը,
 յորում Գուռնիները կ'արբեցնեն երկ-
 նային հրճուանաց հեղեղով⁵ մեզ ե-
 ոռանդ, քաջալերութիւն եւ պէտք
 եղած ուժն աղղէ “ասպարէզն ընթա-
 նալու, եւ զՔեզ սիրողներուն յաղ-

1 Բ. Պետր. Ա. 4։ — 2 Եփես. Ա. 5։
 — 3 Հռովմ. Ը. 17։ — 4 Եփես. Ա. 18։
 — 5 Սղմ. ԼԵ. 9։

թանակն ու կենաց պատկն առնելու
 համար¹։ Եւ Գուռնի Մարտի Բա-
 պապականութիւնէր ցոյց մեզ թէ որուն
 ամենասիրելի Գուռարն են²։ Ամենա-
 մեծ հաճութեամբ մենք Բեղ կը
 նուիրենք այս հաւատարիմ ջերմե-
 ոռանգներու մեծարանքը։ Ուն լէր
 Գուռար Հօր Ասոր-Յոյ։ Գուռն Եւ այն
 միւս գուռարներէն անսահմանաբար
 աւելի յարգելի տիտղոսով իսկապէս
 Գուռար են Հօր Աստուծոյ։ Ո՛վ Գուռն,
 որ Մայր են “Մարմնացեալ Բանին”³,
 եւ դեռ երկրիս վրայ գտնուած ա-
 տենդ ալ մեր բոլոր իւր որդեգրելոցս
 վստահութենէն մեծագոյն վստահու-
 թեամբ կրնայիր իրեն ըսել։ Միւր Հայր
 որ երբեք էս։ Հաճէ ուրեմն, ո՛վ Սա-
 ռիամ, որ Բու միջնորդութեամբդ ի-
 րեն ուղղեք այս մեր խոնարհ աղա-
 չանքը.

Հայր, որ Աստուած են, երկնից
 բարձրութենէն, Քու փառացդ գահէն,
 ոչորմէ մեզի,

1 Ա. Կորնթ. Թ. 24։ Յակ. Ա. 12։ —
 2 Երանդ. Ի. Գ. 23։ — 3 Յովհ. Ա. 14։ —
 4 Եսայի 40. 1։

ՄՏԱԾԱԿԱՆ Է՛.

Որդիոյ փոխիչ աշխարհի Աստուած,
պարսկացի մեզ.

Այս առ Որդին Աստուած «համա-
գոյակից Հօր ճշմարիտ Աստուծմէն»,
պաղատանքը քրիստոնեայ հոգւոյ մը
կը յիշեցնէ աշխարհիս փրկութեան
անձառելի խորհուրդը, խորհուրդ ան-
ձառ ըստ ինքեան եւ անձառ ի հիւ-
նայի արդիւնս իւր:

Ստոյգ է ուրեմն որ ի Գողգոթա
կատարուած փրկագործութենէն վերջը՝
մարդկան փրկութեան գինը վճարուած
է Աստուծոյ մը մահուան գնովը: Ինք
որ չվախցաւ չափէն աւելի նուատա-
նալ «մարմին ըլլալով²», եւ ոչ ալ
չափազանց զոհ մ'ըրած ըլլալ կար-
ծեց մեզի համար կրելով, եւ ամենա-
անարգ ու ամենաանգութ մահուամբ
մեռնելով: Ո՛հ, «մենք «բէ՛հ ամենա-
սուղ գնով գնուեցանք³» ուստի եւ
պէտք է որ մեծապէս յարգենք մեր
հօգին: Որչափ կարեւորութիւն պէտք
է որ տանք այն ամէն բանի որ անոր
արժանապատուութիւնը կրնայ աւել-
ցնել Աստուծոյ առջեւը, եւ մրցիլ

¹ Հանգ. Նիկիոյ: — ² Յովհ. Ա. 14:
— ³ Ա. Կորնթ. Զ. 19.

գեղեցկացնելու «անոր անթարշամ
պսակը¹». եւ որչափ եռանդեամբ ու
խնամով պէտք ենք խոյս տալ այն
ամէն բանէ, որ կրնայ անուղղակի
կերպով ալ մնասել անոր փրկու-
թեան:

Մենք կորուած էինք եւ ցոլիշտ
կորուած, մեր նախաձօր մեղսալից
անկման արդեամբք ամէնքնիս ալ
յաւիտենական նզովից հարուածին են.
Թարկուելով: Քաւութիւն մը պէտք
էր, բայց անսահման գնոյ քաւու-
թիւն մը մեղքով գայրացած անհուն
մեծվայելչութեան մ'իբրաւանց հատու-
ցում ընելու համար: Բայց ո՞վ կա-
րող էր տալ զայն: Միթէ մարդիկ:
Ստուգիւ ոչ: Միթէ հրեշտակները:
Ասոնք թէեւ մաքուր են, բարձրաս-
տիճան, զերագոյն, այսու ամենայնիւ
ասոնց ու անսահմանին մէջ անհուն
հեռաւորութիւն մը կայ: Գո՛րախ-
տութիւննիս ուրեմն անդարման եւ
անյոյս էր...: Այո՛, ճիշդ այսպէս,
եթէ Աստուծոյ յաւիտենական Որդին
չուզէր «մեզի համար քաւութեան
պատարագ ըլլայն յանձն առնուլ²»:
Ինք մեր բնութիւնը զգեցաւ եւ աշ-
խարհ մտնելով ըսաւ Բարձրելոյն «ա-
հաւաստիկ պատրաստ եմ ի զոհ³»:

¹ Ա. Պետր. Ա. 4: — ² Ա. Յովհ. Բ. 2:
— ³ Եբր. Ժ. 7:

«Ինք իւր անձին վրայ բարձաւ բոլոր մեր անօրէնութիւնները»¹։ Ինքը զինքը նու իրեց մեր անօրէնութեանց համար հարուածուելու եւ պատառ պատառ յօշոտուելու², որպէս զի արդարութիւնն ու ողորմութիւնը յԱնձին նորա խաղաղութեան համբոյրը մէկզմէկու տային³»։ Ինք իւր դիւցադնութիւնը յառաջ մղեց մինչեւ աննման եռանդեամբ բաղձաց մեզի համար չարչարուիլ ու մեռնիլ. եւ Անոր այս եռանդուն բաղձանքն՝ սուրբ չարչարանօրը հատուցում ըրաւ։ Ո՛հ, այո՛, հատուցուեցաւ. եւ ի՛նչ է Փրկչին չարչարանքը, եթէ ոչ անարժան արարածներու, ապերախտ արարածներու համար ի հոգի եւ ի մարմին իւր՝ վշտակրութեան շարունակութիւն մը, չըսուած ցաւոց եւ զոհողութեանց շարք մը։

Ի տես այսպիսի զոհի մը, որ կարող է շարժել մեր բոլոր զգացողութիւնը, եւ վառվռուն երախտագիտութեամբ ու գորովագութ՝ սիրով սրտերնիս լեցընել, նախ եւ յառաջ կը լռենք, եւ մեր հիացման լուծեան մէջ կ'երկրպագենք այնպիսի խորհրդոյ մը, որ հրեշտակներն անգամ կը յափշտակէ։ Յետոյ կը մտածենք «այս մեծ խորհրդ-

դեան վրայ»¹ եւ տկար հանձարներնուս կարողութեան համաձայն կը ջանանք թափանցել մեր Աստուծոյն ողորմութեան եւ սիրոյն խորին անդունդները, կ'ընկզմինք այս անյատակ եւ անեզր սովիանոսին մէջ, եւ թող կու տանք սրտերնիս այն ամէն սուրբ յուզմանց, որով կը հաճի Տէրը զայն ողբորել...։ Եւ ապա պիտի հիանանք «չնորհաց յորդառատ հարստութեանց վրայ»², որոնց աղբիւր է փրկագործութիւնը։

Սրբարար շնորհքը, վաճմ ու դերնական պարգեւը, որ զարմանալի կերպով հոգինիս Աստուծոյ հետ կը միաորէ, կը հաղորդէ հոգւոյ Աստուածային կեանք մը, կեանք, որ է սկիզբն երկնային կենաց, ըստ որում Սուրբն Պօղոս ըսած է թէ «չնորհքը յաւիտենական կեանք է»³. եւ հոգւոյն այս Աստուածային կեանքը զոր խորհուրդները որոշուած են սալու, պահելու եւ աճեցընելու, եւ դժբախտաբար զայն կորուսած ատեննիս վերբուսին ստացընելու, կը հաղորդէ բոլոր մեր գործոց զարմանալի զօրութիւն մ'երկնային վարձատրութեան արժանանալու, շարունակ աւելցընելու փառքերնիս եւ յաւիտենական երանութիւննիս։ Այո՛, սրբարար շնորհք մեր

1 Եսայի ԾԳ. 5: — 2 Եսայի ԾԳ. 4: — 3 Սղմ. 2Գ. 11:

1 Ա. Տղմ. Գ. 16: — 2 Եփես. Բ. 7: — 3 Հատվ. 2. 23:

ամենափոքր գործերն անգամ կրնանք հաշակաւոր եւ մեծագին գործոց փոխարկել, որոնց ամէն մէկն աշխարհիս բոլոր գանձերուն նախադասելի ըլլայ, վայրկեանի մը մէջ կրնանք զԱստուած սիրող կամքերուն գաղանի ներգործութեամբ աւելի ընել, որ բոլոր մարդիկ միահաղոյն բոլոր բնական գործերովը պիտի չկարենային ընել հազարաւոր դարերու մէջ:

Աքանչելք, սքանչելք, այս է բոլոր ըսել կրցածնիս, սլ երկրպագելի Որդի յաւիտենական Հօր, երբ կը մտածուի Քու արեամբդ կատարուած մեր փրկութեան անձառելի գործոյն, եւ անոր պտղոց ազնուութեան վրայ զոր անդադար կը քաղենք: Ո՛հ, որչափ իրաւունք ունէր Սուրբն Պօղոս Առաքեալ մեզ ըսելու թէ, «Դուռն զմեզ չափազանց սիրեցիր»: Եւ մենք ստիպուած ենք բարձրաձայն աղաղակել թէ, «Քու սիրոյդ զիտմունք այնչափ խոր են², որ իւրիւրէն ի իմաց զանոնք շփուել: «Դուռն այնպիսի օրհնութեանց արժանի ես³», զոր լիւրջն իմացն ի բերել: «Դուռն մեր սրտէն աւելի մեծ ես⁴» որ բաւական չէ բոլոր իւր սիր: քն այնպիսի սէր մը փոխարինելու: «Դուռն կ'ապրիս, սլ Աստուածային Փրկիչ,

1 Եփես. Բ. 4: — 2 Սղմ. Գ. Լ. 6: —
3 Սղմ. ՃԻԳ. 3: — 4 Լ. Յ՝ՎՃ. Գ. 20:

մենք գիտենք, եւ այս է մեր յուսոյն հիմք¹, Դուռն կ'ապրիս միշտ մեզի համար բարեխօսելու²: Մի թողուր որ Քու արիւնդ, որուն արդիւնքը շարունակաբար կը սփռուին երկրիս վրայ, մեր յանցանքը մեզի համար ազարդիւն ըլլայ: Այս անգին արեանդ ձայնը կ'աղաղակէ առ Քու Հայրդ թէ «Փրկէ իմ ժողովուրդս³, այն ժողովուրդը, զոր ես ստացայ⁴»: Եւ Մարիամ Քեզի հետ կ'ըսէ Անոր, «Այն ժողովուրդը, որուն համար ես ալ կը բարեխօսեմ⁵»: Ո՛հ, մի ուզեր հանդուրժել որ շնորհացդ չարաչար գործածութեամբ մենք ապարդիւն ընենք Քու Միջնորդութիւնդ եւ Անոր բարեխօսութեան զօրաւոր այդեցութիւնը, զոր բարեխախտաբար կ'ողջունենք Մայր Որդոյդ Աստուծայ...:

Ո՛վ Որդիդ Փրկիչ աշխարհի, որ Աստուած ես, ողորմէ՛ մեզի:

1 Յովբ. Գ. Թ. 25: — 2 Եբր. Լ. 25:
— 3 Եսթեր. Լ. 3: — 4 Լ. Պետր. Բ. 10:
— 5 Եսթ. Լ. 3:

ՄՏԱԾԱԿԱՆ Ը.

Նոզիդ տուրք Աստուած, արդարեայ
մկ:

«Աստուած սեր է¹», կ'ըսէ Սուրբն Յովհաննէս: Հայրն ուրեմն սեր է. սեր է Որդին, սեր է եւ Սուրբ Հոգին: Այսու ամենայնիւ Աստուածային սիրոյն գործքերն եւ հետեւարար շնորհաց թէ՛ մտքերնուս եւ թէ՛ սրտերնուս վրայ գործողութիւննէրը Հոգւոյն Սրբոյ կը վերագրին, թէ եւ ասոնք հաւասարապէս երեք Անձանց ալ պատկանին: Եւ իրաւամբ վասն զի Հոգին Սուրբ ի Հօրէ եւ յՈրդւոյ կը բխի սիրոյ միջոցաւ եւ ըստ այսմ՝ Ինքն է երկուքին ալ էական եւ փոփոխակի սերը:

Որուն համար նաեւ Յիսուս կ'ըսէր իւր աշակերտաց թէ «Ո՛չ որ կրնայ Աստուծոյ արբայութիւնը մտնել առանց ջրով եւ Հոգւով Սրբով վերածնելու²»: Եւ թէ այս Աստուածային Հոգւոյն շնորհքները կը նմանէին «կենդանի ջրերու գետոց, որ պիտի բխէին հաւատացելոյն սրտէն³»: Եւ մեծ Առաքեալը կը սորվեցընէ որ՝

1 Ա. Յովհ. Գ. 16: — 2 Յովհ. Գ. 5:
— 3 Յովհ. Է. 38:

«Աստուծոյ սերը Հոգւով Սրբով սփռուած է սրտերնուս մէջ⁴»: որ Ինքն է իմաստութեան եւ յայտնութեան Հոգին². որ կը նորոգէ զմեզ³ եւ կը կազդուրէ մեր տկարութեան մէջ, եւ որ մեզ անմուռնչ հեծութեամբ աղօթել կու տայ⁵:

Սակայն մենք տգէտ եւ տկարներս ինչպիսի՞ եռանդեամբ պէտք չէ որ ինդրենք ի Հոգւոյն Սրբոյ այնպիսի լոյս մը՝ որ կը լուսաւորէ եւ կը բորբոքէ⁵, որ մտաց խաւարը կը փառատէ, եւ սիրտը կը կենդանացընէ եւ կը վառէ: Ինչպիսի՞ եռանդեամբ ազաշելու չենք որ իրը դատել տայ, ոչ մարմնոյ իմաստութեան համաձայն⁶, այլ ըստ իմաստութեան Աւետարանի, ամէն բանի մէջ առաջնորդէ եւ նեցուկ ըլլայ մեր կամաց, եւ բովանդակ վարմունքնիս գերբնականացընէ: Ըստ որում՝ այս է Աստուծոյ ճշմարիտ Որդւոյն՝ ճշմարիտ քրիստոնէին որոշիչ նշանը, եւ ասիկայ է որ յերկնից յերկիր տարբերութիւն մը կը դնէ ճշմարիտ քրիստոնէին մտածմանց, ցանկութեանց, դիտմանց, բաղձանաց եւ գործոց, եւ այնպիսեւոյն մտածմանց, ցանկութեանց, դիտմանց,

1 Հոովմ. Ե. 5: — 2 Եփես. Ա. 17:
— 3 Տիտ. Գ. 5: — 4 Հոովմ. Բ. 26:
— 5 Յովհ. Ե. 35: — 6 Բ. Կորնթ. Ա. 12:

բաղձանաց եւ գործոց մէջ, որ աշխարհի գերի է:

Իրօք ճշմարիտ քրիստոնեայն իւր մտածմունքն առ Աստուած դարձուցած է իբրեւ իւր կենդրոնին, յերկինս՝ իբրեւ իւր հայրենեաց, փրկութեան՝ իբրեւ «միայնակ հարկաւոր բանին»¹: Եթէ արարածները կը սիրէ՝ յԱստուած եւ Աստուծոյ համար կ'ընէ, միայն Անոր հետ կը կապուի՝ իբրեւ իւր գերագոյն բարւոյն, իբրեւ ապառաժի՝ որ անշարժ կը մնայ ժամանակին կործանիչ ալեաց մէջ: Իսկ ընդհակառակն աշխարհատէրն արարածոց վրայ կը մտածէ, կը մոռնայ երկինքն եւ իւր փրկութիւնը, եւ իւր սիրտը բաժնող ամէն ցանկութեանց մէջ անձնական շահն ու հաճոյքը կը փնտռէ: Ար բաղձայ, եւ սաստկացէս կը ցանկայ այն ամէն բանի, որ ակնթարթի մէջ կ'անցնի եւ կը լմննայ, յիմարաբար կը սիրահարի անցաւոր բարիքներու «զորս ունենալ կը կարծէ, մինչդեռ անոնք իրմէ կը փախչին, ինչպէս սառոյց մը, որուն անարգ ապակին կը հալի զէնքը սխմող ձեռքերուն մէջ միայն զանոնք աղտոտելով»²:

Ճշմարիտ քրիստոնեայն եւ աշխալ-

1 Ղուկ. Ժ. 32: — 2 Պոսիէ՝ դամբանական Աննակիւն Աննայի:

հիս գերին ստէպ միեւնոյն գործքը կ'ընեն, միեւնոյն իրաց կը զբաղին, միեւնոյն արկածից կենթարկուին, բայց այնպիսի տարբեր գիտմամբ եւ սրամազրութեամբ, այնպիսի աննման, եւ մանաւանդ թէ մէկգմէկու հակառակ կերպերով, որ մէկուն ձեռքն ամենայն ինչ ոսկի կը դառնայ յաւիտենականութեան համար, իսկ միւսին ձեռքը անիծեալ կապարի կը փոխուի, որ «երկնից համար գանձ մը կազմել չկարենալէ զատ»³, «միայն ի դատապարտութիւն կ'ընայ զլորել զինքը»²:

Մէկն ի Հոգւոյն Սրբոյ քաջալուծած միեւնոյն հոգւով կ'ընթանայ³ իւր բովանդակ կեանքը տեսակ մը ազնուութիւն, վսեմութիւն, մեծութիւն ունի, եւ երկնից ու Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ է: Միւսը կ'ապրի միայն նուստ ու ապականած բնութեան համաձայն, եւ ի յարաբերութեան չար հրեշտակին, եւ իւր սոսկալի չարաբախտութեան հետ:

Ո՛հ, նորէն աղաչե՛ք ուրեմն զՀոգին Սուրբ որ ամէն բանի մէջ մեզ գերբնականաբար գործել տայ եւ երբեք չթողնու որ Իւր մեր վրայ ունեցած Աստուածային ազդեցութիւնը

1 Մատթ. 2. 20: — 2 Ա. Տիմ. 2. 9: — 3 Գաղ. 1. 25:

մարի¹ և եւ կամ «զկնքը տրտմեցընելու²», դժբախտութեան հանդիպինք: Անկեղծ առաջադրութեամբ խոստանանք իւր ամէն շնորհաց հաւատարմարար համապատասխանել:

Ո՛վ Աստուածային Հոգի «աղբիւր կենաց, հուր սիրոյ, օծութիւն երկնային³», ուղիղ ճամբու մէջ առաջնորդէ մեզ, արդարութեան⁴ համաձայն կեանք վարելու շնորհքը տուր, մշտնջենաւորապէս պահէ ի՛ մեզ այն սէրը, որ մաքուր սրտէ, բարի խրդմամտաբէ եւ անկեղծ հաւատքէ կը ծնանի⁵: Կը համարչանինք Դաւիթի⁶ Իսրայէլի Իսրայէլի եւս աճի ի լոյս եւ ի խոհականութիւն, որպէս զի արդարութեան պտուղներով լեցուինք⁶, առաքինութենէ յառաքինութիւն յառաջ երթալով՝ մինչեւ որ Աստուած Ինքը զինքը ցոյց տայ մեզ յերկնային Սիոն⁷: Հաճէ, հաճէ՛ տալ մեզ այս շնորհքը Մարեմաւ, որուն կը նուիրենք պատիւ եւ յարգութիւն, իբրեւ բու Աստուածային Հարսէր: Ինք ի կատարման մարդեղութեան Օգոստափառ խորհրդոյն կրցաւ ըսել թէ,

¹ Ա. Թեոսաղ. Ե. 19: — ² Եփես. Գ. 30: — ³ Եկ հոգի տուր: — ⁴ Սղմ. ՃԽԲ. 10-11: — ⁵ Ա. Տիմ. Ա. 5: — ⁶ Փիլիպ. Ա. 11: — ⁷ Սղմ. 2Գ. 8:

«Տէրն ինձ ամենափառաւոր պարգեւ մը տուաւ¹»: Եւ Գուն զինքը «շնորհօք լեցուն²», տեսնելով՝ կրցար ըսել Անոր համար թէ: «Մէկ հատիկ է իմ աղանձիս, Ինքն է կատարեալը³»: Ո՛րչափ զարմանալի է Անոր գեղեցկութիւնը⁴ եւ որչափ իրաւամբ կարելի է կոչել զինքը Տէրոջմէ օրհնուած⁵: Յանուն այս կուսին, բու առաւել լազոյն սիրոյդ աւարկային:

Հոգի Սուրբ, որ Աստուած ես, ուղորդէ՛ մեզ:

ՄՏԱԾԱԿԱՆ Թ.

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,
պոյրմեաց մեզ:

Ամենասուրբ «մի եւ անբաժանելի⁶» Երրորդութեան երկրպագելի խորհուրդը մեր կրօնին հիմն եւ միւս բոլոր խորհրդոց եւ բովանդակ Աստուածային ողորմութեանց աղբիւրն է: Անոր համար Սուրբ Եկեղեցին հետզհետէ զ՛այրը, զՈրդին եւ զՀոգին Սուրբ յօգնութիւն կանչել տալէ վերջը,

¹ Երանդ. 1. 20: — ² Գուկ. Ա. 28: — ³ Երգ. 2. 8: — ⁴ Երգ. Գ. 1: — ⁵ Հաուլ. Գ. 10: — ⁶ Ժամակարգութիւն Հատմ.:

ըսել կու տայ, Սուրբ Երրորդութիւն,
որ մէկ Աստուած ես, սղորմէ մեզի:

Պիտի գայ օր մը, եթէ մենք հաւատարիմ գտնուինք, յորում առանց մթութեան պիտի տեսնենք զայն, որուն հիմայ կը հաւատանք, եւ յորում երկրպագելն Երրորդութիւնը պիտի յայտնէ մեզ իւր անձառելի գաղտնիքները: Այն ատեն պիտի խելամուտ ըլլանք թէ ինչպէս Հայրն ի յաւիտենից ինքը զինքը ճանչնալով հարկաւորապէս կը ծնանի՝ իւր պատկերը¹, որ է Որդին, թէ ինչպէս այսպիսի ծանօթութիւն մ'այնչափ բացարձակ եւ անբաժանելի ըլլալով որչափ է իւր էութիւնը, ինքը զայն կը հաղորդէ Որդւոյն անբաժանելի եւ անպահեատ: Մենք պիտի հասկընանք թէ ինչպէս Հօր եւ Որդւոյ յաւիտենական միութենէն հարկաւորապէս յառաջ կու գայ իրենց փոխադարձ սէրը, որ է Հօգին Սուրբ, եւ թէ ինչպէս այսպիսի միութիւն մը նմանապէս բացարձակ եւ անբաժանելի ըլլալով՝ «կը ըսէ Հօգին Սուրբ միեւնոյն կատարելութեամբ, ինչպէս որ Որդին շօրմէն կ'ընդունի²»:

Բայց երկնից պայծառութիւնն աշխարհի համար չէ եղած, արքորանաց

1 Բ. Կորնթ. Գ. 4: — 2 Պօսիւէ ճառ' ի վերայ Ամեն. Երր.:

տեղը հայրենիք չի կրնար գտնուիլ. «սպասելով որ ստուերն անցնի, եւ երանելի յաւիտենականութեան օրը ծագի³». սպասելով որ սուրբ մահ մը վրայ գալով պատուէ հաւատոյ քօղը. եւ ամենք այնպէս ճանչնանք զԱստուած, ինչպէս որ ինք զմեզ կը ճանչնայ⁴. խոնարհութեամբ երկրպագենք ըստ մեր հոգւովն այն խորհրդայն, զոր ինք հաճեցաւ յայտնել մեզ: Բովանդակ սրտով գովենք եւ օրհնենք զինքը զմեզ իւր Աստուածային գիտութեան հաղորդակից ընելուն, եւ մեր խելքն իւր «անմատոյց լուսոյն⁵», յաւիտենական սրբազայր մտքընել հաճելուն համար: Ինչպիսիք անբաւ պատիւ մը չառատաձեռնեց մեզ հաղորդելով մեզ այս փորձոյ վայրը՝ արքորանաց խաւարին մէջ ճշմարտութիւն մը, որ Հրեշտակներն անգամ կ'ապշեցնէ, եւ մեզ առիթ կու տայ «հառաչանօք անձկալու Տիրոջ տանը⁶», ուր պիտի վայելենք այնպիսի գեղեցիկ տեսարան մը⁵: Միութիւն յԵրրորդութեան, Երրորդութիւն ի միութեամբ: Ինչ քրանչիք: Բնութեան միութիւնն Անձանց Երրորդութեան մէջ. եւ Անձանց Երրորդու-

1 Երգ. Գ. 6: — 2 Ա. Կորնթ. Ժ. Գ. 12: — 3 Ա. Տիմ. 2. 16, — 4 Սղմ. 21. Գ. 3: — 5 Պօսիւէ, ճառ' ի վերայ Ամեն. Երր.:

Թիւնը բնութեան միութեան մէջ: Ինչ հիանալի համաձայնութիւն, ինչ մեծաքանակ միաբանութիւն: «Այո՛, կըսէ Սուրբ Օգոստինոս, Մատուած կայ եւ չկայ թիւ. երբ կը համբեւ երեք Անձինք՝ թիւ մը կը գտնես, երբ կը հարցընես թէ ինչ է Ինքը, թիւն անհետ մըլլայ, եւ կը պատասխանուի թէ, է մի միայն Աստուած: Անձանց երեք ըլլալուն համար թիւ կայ, իսկ երբ փնտռես թէ ինչ է Անոց բնութիւնը, թիւը կը փարատի, եւ պարզ միութենէն զատ ուրիշ բան չես գտներ¹»:

Ո՛վ այնպիսի անեղձանելի միութիւն, զոր թիւը չէ կարող բաժնել: Ո՛վ գեղեցկայարմար թիւ, զոր միութիւնը չի կրնար շփոթել: Ո՛րչափ փառաւոր է օր մը գրեց «գէմ՝ յանդիման²» անանելու յոյսը: Եւ որուն սպասելով՝ սրչափ քաղցր է հաւատոյ աստուածային ստուգութեամբ Քեզ կրկրպագել կարենալը. եւ օրհնել զՔեզ այն գերբնական յարաբերութեանց համար, որով զմեզ Քեզ հետ կապած է քրիստոնէութեան մէջ:

Հայրն իւր որդեգրութեամբ զմեզ Աստուծոյ որդւոց գերագոյն պատւոյն կը բարձրացընէ: Որդին մարդեղու-

¹ Ճառ ԼԹ.՝ ի Յովհ. Թիւ 4: — ² Ա. Կորնթ. Ժ. Գ. 12:

Թեան, փրկագործութեան միջոցաւ զմեզ սրանչեյապէս աստուածային բնութեան «հաղորդակից կ'ընէ¹»: Հոգին Սուրբ «սիրոյն հեղմամբն ի մեր հոգին²», Աստուծոյ եւ մեր մէջը զարմանալի հաղորդակցութիւն մը³ կը հաստատէ: Ո՛հ, եթէ կարող ըլլայինք զին զնել, ըստ ճիշդ արժողութեան Աստուծոյ հետ ունեցած այս յարաբերութիւններնուս, եւ արժեցընել զմեզ ըստ աղնութեան եւ մեծութեան մեր արժանապատուութեան: Ո՛հ, եթէ կարենայինք աղէկ հասկընալ թէ, Աստուծոյ զմեզ այսչափ բարձրացընելովն՝ ամենայն՝ ինչ որ Աստուած չէ, մեզմէ ստորին է, եւ թէ «Հօր որդիք⁴», Որդւոյն եղբարք⁵ եւ Հօգւոյն Սրբոյ տաճար⁶ ըլլալու անձաւելի պատիւն ունենալով՝ ամէն բանի մէջ պարտաւոր ենք յարգել զմեզ «իրրեւ ընտիր ազգի թագաւորական եւ սուրբ կարգի սեպհակա՛նուած՝ որպէս զի կարող ըլլանք յայտնել Անոր կատարելութիւնները, որ զմեզ ի խաւարէ կանչեց ի յոյսն սրանչելին⁷»:

Հայր, Որդի եւ Հօգի Սուրբ, որ էք

¹ Ա. Յովհ. Ը. 3: — ² Հոովհ. Ե. 5: — ³ Բ. Կորնթ. Ժ. Գ. 13: — ⁴ Ա. Յովհ. Գ. 1: — ⁵ Յովհ. Ի. 17: — ⁶ Ա. Կորնթ. Զ. 19: — ⁷ Ա. Պետր. Բ. 9:

մի եւ նոյն էութիւն¹: Բեզ մի Աստուած փառք եւ մեծութիւն յաւիտեանս յաւիտենեկց²: Բեզ որ զմեզ պատուեցիր յաւիտենական էութիւնդ մեզ յայտնելով: Բեզ որ զմեզ գերմարդկային արժանապատուութեան մը բարձրացուցիր, որուն լուամբ յերկինս պիտի ըլլայ, այսինքն փոխարկուել Բու Աստուածային նմանութեանդ³: Ո՛հ, Բու «առ մեզ սիրոյդ լայնութեան, երկայնութեան, բարձրութեան եւ խորութեան առջեւն⁴, ի՞նչ կրնանք ընել, եղևիկ մեզ, եթէ ոչ մարգարէին հետ հիացման եւ օրհնութեան ձայներ թոթովել⁵, եւ միանալ Մարմայ, որ Իրեն եղած մեծամեծ սքանչելիքներէն յափշտակուած⁶, եւ ըրախազիտութեան եւ սիրոյն հիացման մէջ Բու վրայ կը մտածէ: Կ'երկրւպագեներ Բեզ իբրեւ «այբ⁷», ամեն բանի յաւիտենական սկիզբը: Կը մեծարենք զինքը իբրեւ Բու արարածոց առաջինը, եւ Իւր կատարելութեանց պատճառաւ, որոնցմով Գուն զինքը ճոխացուցիր Բեզ ամենամերձը. եւ Գասեր, Ս'օր ու Հարսի վսեմ յարաբերութեանց միջոցաւ, որով Գուն

1 Ա. Յովհ. Ե. 9: — 2 Յայտ. Ա. 6: — 3 Բ. Կորնթ. Գ. 18: — 4 Եփես. Գ. 18: — 5 Երեմ. Ա. 6: — 6 Ղուկ. Ա. 49: — 7 Յայտ. Ա. 8:

զինքը պատուեցիր: Հրամայէ որ Անոր մարդը շրթամբք մըս հաւատարիմ մնայնիս Բեզմէ պաղատելով՝ միշտ արժանի Բեզ, եւ մեր փառաւոր քրիստոնէայ տրտղոսին ըսենք,

Սուրբ Էրրորութիւն, որ մէկ Աստուած մ'ես, որըրմէ՛ մեզի:

ՄՏԱԾԱԿԱՆ Ժ.

Սյրոսնի Մարիամ, աղօթես վասն մեր:

Ամենասուրբ Կուսին, զինքն օգնութեան կանչած ատեննիս, տրուած պատուոյ առաջին տիտղոսն է նոյն ինքն Իւր Մարիամ անունը, Անուն որ Յիսուսի անուանէն ետքը ամէն ջերմեռանդն հոգւոյ հրճուանքը կը կազմէ:

Ո՞ր անունն աւելի քաղցը կրնայ ըլլալ քան մ'անունը, գորովազուծ եւ միանգամայն Օգոստոսփառ Մ'օր մը: Մ'այր մը: Արդեօք բնութեան մէջ աւելի մեծարգի առարկայ մը կը գտնուի, որուն ներկայութիւնը սիրտը բերկրեցընէ եւ յիշատակը զայն շարժէ: Մ'այր մը: Ո՛հ, այս աշխարհիս մէջ Աստուած բան մը չտեղծեց, որ Անոր նմանի բարութեան, մարդը եւ անոյշ սիրոյ, անձնանուիրութեան, պարտաւորութեան եւ սրտի վսեմ գիւցազնու-

Թեան մէջ: Ուստի երբ կենդանի հաւատքով մը սրտապնդելու բարեբախտութիւնն ունինք, երբ հաստատապէս կը հաւատանք, որ Յիսուս մեր Աստուածային եղբայրն է, եւ թէ Մարիամ Անոր Աստուածային Մայրը՝ մեր ալ Մայրն է, եւ հարկաւորապէս մեր վրայ ալ կը տարածէ այն անպատու՝ խանդադատանքը զոր ունի «Իւր արգանդին ամէնօրհնեալ պտղոյն վրայ՝», այն Յիսուսին, որ այնչափ զմեզ սիրեց, ինչպիսի՝ եւանդուն յուզմանց, ինչպիսի՝ քաղցր զգացմանց փորձն առնուլ պիտի չտայ այնպիսի Մօր մ'անունը:

Բայց որչափ զարմանք եւ որչափ ինդութիւն պիտի չազդեն մեզ այս ամէնօրհնեալ անուան խորհրդաւոր իմաստները: Այս անունը կրնայ նշանակել Խափուհի, կամ Խափու շահանք, կամ Խափուհի քուսն, ...: Եւ Մարիամին աւելի որուն կրնան յատկացուիլ այսպիսի ազդու յորջորջանք: Թափուհի: Միթէ Անիկայ չէ՞ որ «զԹաղաւորն թագաւորաց եւ զՏէրն տերանց՝ ծնանելու բախտն ունեցաւ, զԱյն՝ որ ինքերմէ ունի մեծվայելութիւն, զորութիւն, պատիւ եւ յաղթութիւն. զԱյն՝ յորմէ յառաջ կու

1 Ղուկ. Ա. 42: — 2 Վէրթիւնաստեր, բառգիրք Ս. Գրոց: — 3 Ա. Տիմ. 2, 15:

զայ՝ ամէն մեծութիւն եւ զորութիւն՝»: Եւ որ ուղեւոր զԻնք յերկինս փառասորել Իւր քովը բարեխոսելու այնպիսի իշխանութիւն մը տուաւ, որ նմանը չունի: Ասոր լուսնաշառն: Միթէ Ինք չէ՞, որ տուաւ աշխարհի զԱյն, որ է մարդկան ճշմարիտ լոյսը՝ արդարութեան արեգակը՝, որուն Աստուածային պայծառութիւնն առանց արշալուսի եւ վերջալուսի, առանց արեւելից եւ արեւմտից, շարունակ կը տարածէ իւր անսպառ ճառագայթներուն լիութիւնը: Միթէ Անիկայ չէ՞, որ ամենասուրբ եւ ամենակատարեալ առաքինութեանց լուսով, զարմանալի կուսութեան պայծառութեամբ, եւ փառաց այնպիսի փայլմամբ կը շողայ, որուն առջեւ կը խաւարի Հրեշտակաց ալ, Սրբոց ալ փառաւորութիւնը: Թափուհի քուսն: Եւ միթէ Ինք չէ՞, որ Իւր հիանալի օրինակներով իբրեւ երկնային ջահ մ'այս կենաց պղտոր ալեաց մէջ կը տիրէ եւ կ'առաջնորդէ դէպ ի բրանելի յաւիտենականութեան նաւահանգիստը դանոնք, որոնք երբեք աչքերնէն չեն հեռացընէր Իւր բարեբար լոյսը: Միթէ Ինք չէ՞, որ այսպէս ըսելու համար, ընդունեցաւ Աստուծմէ ըստ Իւր

1 Ա. Մնաց. ԻԹ. 11—12: — 2 Յովհ. Ա. 9: — 3 Մաղաք. Դ. 2:

հաճայից մրրիկները ցրուելու, եւ ալեկոծութիւնը խաղաղելու իշխանութիւնը, որոնց ուժգնութիւնը ստէպ կը հարուածէ մեր տկար նաւակը, եւ զոր կ'իջեցընէ եւ կը հանդարտեցընէ Իւր Անունը ջերմեռանդաբար կանչելնիս:

Անտարակոյս Մարեմայ Անունը համեմատութեամբ Զիսուսի Անուն «հզոր ու կարող չէ՞», եթէ ոչ այնպիսի ստորին աստիճանաւ՝ որ ի հարկէ կ'որոշէ թէ եւ ամենակատարեալ արարած մ'իւր Արարչէն եւ Աստուծմէն, եւ միանգամայն բոլոր Իւր զօրութիւնը նոյն ինքն Զիսուսէ Քրիստոսէ կ'առնու: Այսու ամենայնիւ Աստուածային Որդին հաճեցաւ Իւր փառքն Օգոստափառ Մօրը միջոցաւ պայծառացընել, եւ Իւր երկրպագելի Անուն զարմանալի զօրութիւնը հազորդել Մարեմայ Անուն: Այս Աստուածային կուսին Անունն ալ Զիսուսի Անուն պէս կը միսիթարէ եւ կը սփոփէ: «Յօգնութիւն կանչեցէք, կ'ըսէ Ս. Բեռնարդոս, ձեր վտանգներու, տարակուսանաց եւ վշտացը մէջ, այս Անունը յարատեւ շրթունքներնուդ վրայ եւ սրտերնուդ մէջ գանուի: Այն ատեն ոչ եւս տեղի կ'ունենան մոլորութիւն. անկում, վախ եւ նեղութիւն, այլ Աւետարանին այն «Ե-

1 Սղմ. Ի. Գ. 8:

Անուն խաչն է: Մաթթ. 1», խօսքերուն խորին իմաստին փորձը պիտի առնուք»: Զիսուսի Անունն պէս այս սրտերու քաղցը Անունն ալ կը փախցընէ խաւարին ողին: «Եթէ փորձութեան հողմը, կը գրէ նոյն Սուրբ վարդապետը, զձեզ կը շարժէ, զՄարիամ ձեզ յօգնութիւն կանչեցէք²», Անոր համար ըսաւ Աստուած զԱդամ ու զԷւա յապտամբութիւն գրգռողին այն աղղու խօսքերը թէ, «Ինք պիտի ջախջախէ քու գլուխդ³»: Եւ այս պատգամը կայծակի հարուածի նման կրկին կ'որոտայ սաղայելին գլխուն ամէն անգամ որ քրիստոնեայ հոգին օգնութեան կանչէ Ամենասուրբ կուսին Անունը:

Ո՛վ Մարիամ, օրհնեալ ըլլայ Աստուած, որ քու Անունդ այնպէս փառաւորեց որ՝ «չովասանբոք երբէք պիտի չպակսի մարդկան շրթունքներէն⁴»: Ո՛հ, ըսէ Տէր Ժոհան Երբէն թէ «Ինչ է այն Անունը զոր Դուն կը կրես⁵»: Ըրէ որ կարող ըլլանք հասկընալ եւ զգալ Անոր արժանապատուութիւնը, քաղցրութիւնն ու զօրութիւնը. ի խոր տպաւորէ հոգիներնուս մէջ մեծարարը, վստահութիւնն ու

1 Ս. Բեռն. ճառ առաքելացի բառին վրայ: — 2 Անդ: — 3 Ծննդ. Գ. 15: — 4 Յուդիթ, Ժ. Գ. 25: — 5 Ծննդ. Լ. Բ. 29:

սէրը, որուն արժանի է: Քրիստոնէական բարեպաշտութեան դայարագեղ եւ պողպղից ձիթենւոյ նման զեղեցիկ կ'երեւայ¹, անգին կը թուի այն անթիւն պէս՝ յորմէ անուշարոյր խնկի հոտ կը բուրէ²: Աստուածասէր հոգին այնպէս զօրաւոր կը կարծէ Անունդ որ, կանչած տեսնը կը համարի տեսնել խաւարին հրեշտակին հազճեպ փախուսար, որ իւր կամաց հակառակ այսպիսի մեծարանք մը բերնէն կը փախցընէ ըսելով թէ՛ «Ահաւոր է այդ կոտին Անունը³»: Ո՛վ Մարիամ մեր բարւոյն համար այս սուրբ Անունը մեր փրկութեան բոլոր թշնամեաց դէմ՝ «պատերազմի կանգնած բանակի նման ահարկու ըլլայ⁴»: Ըրէ որ սրտերնուս մէջ երբեք չբաժնենք Քու Անունդ Աստուածային Որդւոյդ երկրպագելի Անունէն: Իւ Յիսուսի Անունէն վերջը Քու Անունդ ըլլայ մեր ապաստանը, պատասպարանը, զօրութիւնն ու մխիթարութիւնը: Այս շնորհքն ընդունելու վտահոթեամբ Եկեղեցւոյ հետ Քեզ կ'ըսենք:

Սրբուհի Մարիամ, աղօթէ մեզի համար:

¹ Երեմ. Ժ. 16: — ² Երդ. Ա. 3: — ³ Աղմ. ՃԺ. 9: — ⁴ Երդ. Ի. 1:

ՄՏԱԾՈՒԿԱԿԱՆ ԺԱ.

Ստորեւ Աստուածամիկ, աղօթեալ վասն մեր:

Յուգայի ցեղէն պարզ կոյս մը Աստուծոյ Մայր...: Ինչ սքանչելիք, որպիսի մեծութիւն ու մեծվայելչութիւն կը պարունակէ այսպիսի տիադոս մը, որպիսի պատիւ եւ որչափ փառք, ինչպիսի անզուգական շքեղութիւն: Մարդկան ընդհանուր կարծեացը մէջ մեր մ'արժանապատուութիւնը որդւոյն արժանապատուութենէն կը չարեմաց արժանապատուութիւնը, որ կեանք տուաւ Աստուծոյ յաւիտենական Որդւոյն երկրպագելի մարդկութեան...: Եթէ Ինք հնչակաւոր Սուրբ մը ծնած ըլլար, անտարակոյս մեր աչքին ամենպատուաւոր պիտի երեւար: Աւելի եւս՝ եթէ մարմնացած Հրեշտակ մը ծնանէր: Առաւելագոյն եւս՝ եթէ Աստուած վճռած ըլլար որ երկնից «Իշխաններուն» վեհազոյնը «մարմնանար²», Իւր սուրբ արգանդին մէջ: Բայց Ինք Մայր է Աստուծոյ: Իւ ո՞վ կրնայ ըստ բաւականին գնահատել, ըստ բաւականին խելամուտ

¹ Գանիէլ. Ժ. 13: — ² Բովճ. Ա. 14:

բլլալ, եւ ըստ բաւականին մեկնել
Ամենատուրը Կուսին բարձրութիւնը:
Էւ ո՞վ՝ կենդանի հաւատքով թա-
փանցած, յօժարութեամբ սրտի պիտի
չգոչէ դպրոցաց Հրեշտակին հետ թէ
“այս տիտղոսը զԻնքն ըստ իմիք ան-
սահման ըրաւ, այն անսահման Բա-
բելոն համար, որ է Իւր Որդին¹”: Էւ
Սրբոյն Պետրոսի Դամիանոսի հետ
թէ, “Այս խորհրդոյս մէջ կայ այն-
չափ ինչ, որ զմեզ հիացմամբ եւ զար-
մացմամբ կը պապանձեցընէ, եւ աչ-
քերնիս կ'արգելու դէպ ի վեր այսպիսի
արժանապատուութեան պայծառու-
թեան վերցընելու²”:

Աստուած՝ անսահման զօրութիւն
մ'ունի, որչափ որ սքանչելիքներ գոր-
ծէ, կրնայ նորագոյններ եւ մեծա-
դոյններ յանաջ բերել: Այսու ամե-
նայնիւ չենք վախնար ըսելու որ, Իւր
բոլոր ամենակարողութեամբն ալ չէր
կրնար զՄարիամ աւելի ազնիւ եւ
աւելի մեծ ընել քան զոր ըրաւ Աս-
տուծոյ Մօր արժանապատուութեամբ:
Էւ ստուգիւ միթէ կրնա՞ր տալ Անոր
ազնուագոյն եւ մեծագոյն Որդի մը
քան զԱյն՝ որ “առանց իրաւանց
յափշտակութեան Աստուծոյ հաւա-

1 Ս. Թովմ. 3 Մասն. Խնդ. 25. Ա. 6.
առ. 1: — 2 Ճառ ի ծնունդ Ս. Կուսին:

սարեցաւ³, եւ որ ըսաւ, “Հայրս եւ
ես մէկ ենք⁴”: Միթէ կրնա՞ր Իրմէ
աւելի վերնագոյն Որդի մը տալ Ա-
նոր...: Ուրեմն Մարիամ զօրութեամբ
իւր Աստուածային Մայրութեան ու-
նեցաւ մօր մը կարելի եղած բոլոր
արժանապատուութիւնը, եւ ինչպէս
որ Արարիչը Մարդ-Աստուծմէ մե-
ծագոյն Որդի մը չէր կրնար ստեղծել,
այսպէս ալ չէր կրնար աւելի Օգոս-
տափառ եւ աւելի արժանաւոր մայր
մ'ընել քան զԱյն, որ կրնայ նոյն
ինքն Մարդ-Աստուծոյ ըսել⁵, Դուն իմ
որդիս ես⁶”:

Ո՛հ, հիւանանք, գովենք եւ մեծա-
ցընենք Բարձրելոյն երկրպագելի իմաս-
տութեան այն գործոց սքանչելիքը:
Աստուած կրնար մարդեղութեան ան-
ճառելի խորհուրդը կատարել առանց
Իւր Որդւոյն մարդկութեան մայր մը
տալու: Բայց միթէ չէ՞ր պատշաճեր
որ մարդոյն անկման Աստուածային
Նորոգիչը “մարդու որդի ըլլար⁴,
գէթ մօր միջոցաւ, որպէս զի մեզմէ
մէկն ըլլար Այն, որ ամէնուս համար
յաւիտենական արդարութեան պար-
տաւոր եղած անհուն հատուցումը
վճարէր: Ասկից զատ Աղամ ու Էւա
երկուքն ալ ի կործանումն զորած

1 Փիլիպ. Բ. 6: — 2 Յովհ. Ժ. 30: —
3 Երբ, Ա. 5: — 4 Դուգ. ԺԹ. 10:

ըլլալով, եւ իրենց անկմամբ ի մի եւ ի նոյն կորուստ քարշելով բոլոր իրենց սերունդը, միթէ պատշաճապէս չե՞նք կրնար ըսել որ իւրաքանչիւր սեռ իւր կողմանէ գործակցէր ի վերանորոգութիւն եւ ի փրկութիւն մարդկային ցեղին: Ուրբմն Աստուածային իմաստութիւնը սքանչելապէս հոգւոց փրկութեան գործոյն հոգ տարաւ Աստուծոյ Մայր մը ստեղծելով: Մարեմայ միջոցաւ Էւայի սեռն աշխարհիս փրկիչ մը տուաւ, եւ այս փրկչին միջոցաւ Ադամայ սեռը պաշխարհ փրկեց:

Բայց Աստուած այլ աւելին ըրաւ. «Մարդեղութեան խորհրդոյն շարունակ եւ մշտատեւ տարածութեան» շնորհքը տուաւ մեզ: Այսպէս կը խօսին Եկեղեցւոյ Սուրբ Հայրք: Հաղորդութեան խորհրդեամբ որ միւս մնացածները կ'ենթադրէ, այսինքն երկրպագելի մարմնոյ եւ արեան խորհրդեամբ միթէ մենք անպայման պատիւը չունին՞ք Աստուծոյ հետ մտերմագոյն մտութեամբ կապուելու, քան թէ Մարիամ իւր Յիսուս Որդւոյն հետ, քան թէ Բանը իւր մարդկութեան հետ, ըստ որում «մենք անով իրօք մարմնակցած ենք Բրիստոսի Աստուածային Մալ-

1 Պոլ բոսալու, ի վերայ Ս. Հաղորդք:

մնոյն»¹: Մինչդեռ նոյն ինքն Յիսուս ըսաւ «Ով որ իմ մարմինս կ'ուտէ եւ արիւնս կը խմէ, յիս կը բնակի, եւ ես ալ ի նմա»²: Ո՛հ, ամենանք հոս Աստուծոյ առջեւը, որովհետեւ այսպիսի սքանչելի բարեք մը փոխանակ սրտերնիս բորբոքելու եւ նախանձ ու անպայման անձնանուիրութիւն մ'ի մեզ յառաջ բերելու, զմեզ պաղ, գաղջ եւ անտարբեր կը լծողը:

Ով Մարիամ, ուրախ ենք որ կրնանք Եկեղեցւոյ հետ հստակել թէ Գուռն ճշմարտագէտ Աստուծոյ Մայրն է: Բերկրութեամբ սրտի կը ճանչնանք որ Գուռն ես Այն որ «ծնար այսպիսի աղնուականագոյն անդրանիկ մը»³, զոր Պաւղոս Առաքեալը կը կոչէր Աննոց անդրանիկ եղբայրը, որոնք կերպարանակից են իրեն պատկերին»⁴: Գուռն ես եւ միայն Գուռն Այն, որ իրաւամբ Բեղ կը սեպհականես այն որբազան խօսքերը, «զիս ստեղծողն իմ ծոցս հանգչեցաւ»⁵: Եւ թէ ինչպէս յախտենական Հայրք կ'ըսէ իւր Որդւոյն «Ժամանակն արշալուսէն յառաջ ես զբեղ ծնայ»⁶: Այսպէս Գուռն ալ կրնաս ըսել Անոր, «Ես ալ է ժամանակն

1 Ս. Յովհ. Ոսկ. Ճառ ԿԳ. առ Երզնկէ Անտիոք. — 2 Յովհ. Զ. 57: — 3 Մատթ. Ա. 25: — 4 Հովհով. Բ. 29: — 5 Սիրսք, ԻԳ. 12: — 6 Սղմ. ՃԹ. 3:

ծնայ զՔեզ, յի Բենք ուրեմն ըստ մեր կարողութեան կը յարգենք ու կը պատուենք քու Աստուածային Մայրութիւնդ, եւ Քեզ կը նուիրենք այն ամէն մեծարանքը, որուն արժանի է քու անհամամատ արժանապատուութիւնդ: Ընդունէ մեզի համար, ո՞վ Մարիամ, որ յարգենք այն սրանչիյն պարգեւը, զոր քու Աստուածային Որդիդ կը հաճի տալ մեզ ի խորհրդեան իւր սիրոյն, այսինքն հաղորդակից ըլլալու քու եւ իւր երկրպագելի Մարդկութեան փառաց:

Սուրբ Աստուածածին, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԲ.

Մոռոյր կոյս կոռասմաց, աղօթես զսուս մեր:

Կոյս կուսանաց: Ուրիշ ինչ տիրոջ կրնար յարմարիլ Անոր, որ աշխարհիս մէջ առաջինն եղած նուիրագործելու սուրբ կուսութեան սերը մշտատեւ ուխտի կնքով: Աւստ անգին յաչ Մարեմայ այն աստիճան որ, Աստուածային Մայրութեան անձառելի փառաց չհաճեցաւ, եթէ ոչ Հրեշտակին Աստուծոյ կողմանէ գինքը

ապահովելէն վերջը թէ այս փառքն ամենեւին ներշնչէր այն պարտաւորութեան, որով ինքը զինքը պարտանդած էր Բարձրելոյն առջեւը: Կոյս կուսանաց: Ուրիշ ո՞ր տիրոջ կրնար լաւագոյն կերպով բացատրել Եկեղեցւոյ եռանդնակց զարմանքը, հրաշապէս պահուած իրտութեան մը վրայ: Բայց մի եւ նոյն աստե՛ն ո՞ր նմանութիւնը կրնայ աւելի աղէկ նկարագրել Մարեմայ սիրելի առաքինութիւնը, ինչպէս նաեւ Անոր մեծադանչ արտօնութիւնը, եթէ ոչ շուշանին տունկը, որուն եռապատիկ ծաղիկը մեզ շատ լաւ կը ծանուցանէ որ, Ինք կոյս էր նախ քան զճնունդն Յիսուսի, եւ կոյս մնաց Աստուածային Որդին յՅիսուս ծնած ատենը, եւ կոյս մնաց զԱյն ծնանելէն ետքն ալ:

Հուշան. Միթէ կը գտնուի՞ ծաղիկ մ'աւելի անուշաբոյր, աւելի ջինջ պայծառութեամբ եւ աւելի փոփոկ սպիտակութեամբ: Չկայ ուրեմն աւելի կատարեալ օրինակ մ'առաքինութեանց մէջ ամենագեղեցիկին, ամենապնուին, այն հրեշտակային առաքինութեան, որուն յարթանակը կ'արտափայլի ի Կոյսն կուսանաց նոյն իսկ Բանին մարդեղութեան օրը: Մինչդեռ Հրեշտակը զինքը վտահայրնելու համար կ'ըսէ "Հոգին Սուրբ պիտի գայ վրագ, եւ Բարձրելոյն զօրութիւնը

Քեզ հովանի պիտի ըլլայ¹»: Սուրբ Գիորքն ալ նմանապէս «Շուշաններու շրջանակի նմանութեամբ²» կը նկարէ մեզ Երգոց հարսին անարատ պարկեշտութիւնը, եւ երկնաւոր փեսային Անոր կուսական մաքրութեան համար առաւելագոյն սէրը, ըսելով մեզ թէ՛ հովտաց շուշանն է որ կը հովուէ շուշանաց մէջ³»:

Այս բերկրապարար նմանութիւններէն մեզի համար ազդու եւ հաճելի վարդապետութիւն մը յառաջ կու գայ: Եւ է որ Յիսուս Քրիստոս կը սիրէ «սուրբ սրտերու մէջ հանգչիլը⁴», եւ թէ կը սիրէ կենակցիլը՝ յրնկերութեան այն հոգւոց, որոնց մտածմունքները, բաղձանքներն եւ ցանկութիւնները բոլորովին մաքուր ըլլալով՝ Իրեն համար են «բերեւ անուշաբոյր ծաղկանց հոտով լցուած ածու մը⁵»: Եւ հետեւաբար վերահասու կ'ըլլանք թէ Աստուածային Փրկիչը որչափ պէտք էր հաճութիւն զգալ Մարեմայ վրայ, որուն հոգւոյն ստուգիւ կատարեալ մաքրութիւնը, ուրիշ մեծահարաշ մաքրութիւն մ'ալ զգեցաւ, այնպէս որ նոյն իսկ այս կրկին առաքինութեան անունն Իրեն յատուկ անուն մ'եղաւ,

1 Ղուկ. Ա. 35: — 2 Երգ. Է. 2: —
3 Անդ, Բ. 1, 2: — 4 Մատթ. Ե. 8:
— 5 Երգ. 2. 1:

եւ Ինքը միայն սքանչելապէս կը կոչուի Կոյն:

Քայց սրտերնիս քննենք: Մենք արդեօք հաճութեան սուրբ առարկայ ենք Աստուածային Գառնին, որուն ամէն տեղ ետեւէն կ'երթան կոյն հոգիներ...: Վայ ինձ, եւ առանց միութեան տղփն մէջ իյնալու, խոյս կու տանք մենք այն ամէն բանէ որ կը զայրացնէ Անոր յարգելի աչքերը: Որչափ անխոհեմ եւ նաեւ վտանգաւոր նայուածքներ: Որչափ աղատութիւն, որ առանց առաքինութեան խիստ սահմանն անցնելու՝ նախատինք են պարկեշտ փափկութեան մը սուրբ պարկութեան: Որչափ մտածմունքներ, յիշատակներ, բաղձանքներ, ահաճութիւններ, յատկագրեր, ցնորքներ, որոնք հեռու են շուշանին պայծառ սպիտակութիւնն իրենց նշանաբարձ ունենալէ: Որչափ խօսքեր, որոնք «Յիսուսի Քրիստոսի անոյշ հոսք չեն բուրբեր¹», որ Կուսի մը Որդի էր եւ Ինքն ալ Կոյն եւ կաթոզին ու մտերիմ բարեկամ Սրբոյն Յովհաննու, որովհետեւ ըստ վկայութեան Սրբոյ Եկեղեցւոյ՝ ինքն ալ կուսութեան պսակն անաբատ կը պահէր²: Վերջապէս որչափ ցանկութիւններ, որոնց Աստուած ոչ

1 Բ. Կորնթ. Բ. 15: — 2 Ժամակ. Հռովմ.:

սկիզբն է եւ ոչ ալ վախճանը: Ո՛րչափ
հակուսներ աւելի ի մարմնոյ պատճա-
ռած քան թէ ի հոգւոյ, առանց անոնց
իրականութիւնն անձնական խղճեր-
նուս խոստովանելու մտածմանց...:
Ո՛հ, մերժենք, կործութեամբ մերժենք
սրտերնէս ոչ միայն այն ամենայն ինչ,
որ կրնայ վշտացընել Մարեմայ Աս-
տուածային Որդին, այլ նաեւ այն
ամէն բան, որ չի կրնար Անոր հաճելի
բլլալ: Պատուենք «մեր մարմինը, իբրեւ
նոյն իսկ Յիսուսի անդամ», եւ սրբա-
բար գործածենք զայն: Յիշենք որ ուր
որ մարդու աչքը չի հասնիր եւ կամ
պիտի չկարենայ հանդիլ, Աստուծոյ
աչքը կը տեսնէ եւ կը դատէ. ըստ
որում նաեւ «դժոխքն ալ անոր առ-
ջեւն առանց խաւարի է, եւ անդունդն
առանց քօղի»¹: Յիշենք որ Անոր կոյս
հոգիներու համար «աղանւոյ հեղ
աչքերը»²: «կրակի բոցի նման»³, են
անոնց համար, որոնք կը յանգգնին
Արարչին առջեւն ընել, ինչ որ մահ-
կանացուի մը պարզ նայուածքն իբրեւ
եպերելի բան մ'ընելէ խոյս տալու
պիտի ստիպէր զիրենք: Ո՛հ, եթէ լաւ
հասկընայինք, եւ կարող ըլլայինք
երբեք չմոռնալ:

Ո՛վ կոյս կուսանաց, մաքրութեան

1 Ա. կորնթ. Զ. 15: — 2 Յովբ. Ի. Զ. 6:
— 3 Երդ. Ե. 12: — 4 Յայտ. Ա. 14:

կենդանի հրաշք, որ երկրիս վրայ Աս-
տուածային Յիսուսին համար եղար
«Անոր միակ եւ կատարեալ աղանին».
Սիրնի դատերը զՔեզ տեսան եւ երա-
նեցին: Անհամար է այս օրիորդ կու-
սանաց թիւը», որոնց Քու այսպիսի
ղորաւոր օրինակդ աշխարհէ, եւ անոր
հրապուրիչ պատրանքներէն հրժա-
րել տուաւ առանձնութեան մէջ Աս-
տուծոյ նուիրուելու, կամ անպատու
սիրով Յիսուսի ծառայելու յանձին
աղքատաց, եւ կամ Քու շաղիգետեւէն
ընթանալու նոյն իսկ աշխարհի զրադ-
մանց մէջ: Մինչեւ անգամ արքունեաց
չքեղութեան մէջ «թագուհիք զՔեզ
փառաւորեցին»², այն սքանչելի առա-
քինութիւններով, զորս ի գործ գրին՝
Քու հետքերուդ հետեւելով՝ եւ Քու
պաշտպանութեանդ տակ:

Փառք Քեզ, ո՛վ Մարիամ, անհա-
մեմատ օրինակ առաքինութեան, որ
զմարդը շրեշտակի կենօք կ'ապրեցընէ,
իրբու թէ անոր հոգին ապականելի
մարմնոյ հետ կապուած չըլլար: Ո՛հ,
Քու պաշտպանութեամբդ բրէ որ Քեզ
հաւատարիմ նմանող ըլլանք: Ըբէ որ
եռանդնալից սիրահար ըլլանք ամենա-
փափուկ պարկեշտութեան: Քեզի
նմանելու եւ միշտ Աստուածային Որ-
դւոյդ գթալից նայուածքին արժանի

1 Երդ. Զ. 7: — 2 Անդ. 8:

ըլայու բարեբախտութիւնն ունենայու
Համար մենք Քեզ կ'ըսենք

Կուսանաց Սուրբ Կոյս, աղօթէ մեզի
Համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԳ.

Մայր-Քրիստոսի, աղօթեմ զսուսկանս մեր:

Մարեմայ Համար ըսելը թէ Ինքն է
Աստուծոյ Մայրը՝ ահնթարթի մը մեջ
Անոր բոլոր մեծութիւնն ու փառքը
մեզ յայտնել է: Բայց աւելի աղէկ
Հասկընայու Համար, պէտք էր որ
մարդկային խելքը կարող ըլլար ան-
սահման մեծ վայելելութիւնն ըմբռնել:
Ահաւաստիկ ինչու Համար Եկեղեցին
այսպիսի սխաղոսով մը զՄարիամ մեզ
յօգնութիւն կոչել տալէն վերջը,
Հոս ուրիշ կերպարանքով կը ներ-
կայացնէ մեզ, որ աւելի գիւրին է
մեր Հանձարոյն ըմբռնման:

Իրաւ չէ որ մայր մը մեզի այնչափ
աւելի պատուաւոր երեւայ, որչափ
որ անոր որդին բարձր եւ ընտիր Հան-
գամանքներով զինքը ցոյց տայ, եւ
որչափ որ գեղեցկագոյն եւ մեծագոյն
գործեր կատարէ յօգուտ իւր նման-
ներուն...: Արդ որպիսի զարմանա-
լի փառք է ուրեմն Ամենասուրբ
Կուսին Քրիստոսի Մայր ըլլալը: Միթէ

Յիսուս իրրեւ մարդ չունի այն ամէն
կատարելութիւնները, որոնք կրնան
պաշտօնիլ Իւր ընտելեան: «Ինք
ունեցաւ Աստուածութեան օծու-
թիւնը», որ անձնականապէս Իրեն
Հետ միացած է: «Ի նմա կը գտնուին
խնաստութեան եւ գիտութեան բո-
լոր գանձերը»: Ի նմա բարութեան,
քաղցրութեան, խոնարհութեան, Համ-
բերութեան, կարեկցութեան եւ ամե-
նամարտը ու գործունեայ սիրոյն բո-
վանդակ գանձերը: Ի նմա աղնուագոյն,
վսեմագոյն, փափկագոյն եւ մեծանձ-
նագոյն զգացմանց լիութիւնը, որոնք
կարող են գրաւել, շարժել եւ յափշտ-
կել մարդկային սիրտը...: Բայց
սիկ կրնայ պատմել մեզ Անոր ըսածը
յօգուտ անոնց՝ «որոնց նմանիլ ու-
ղեց», Առանց Հոս խօսք մ'ընելու
փրկութեան վրայ, զոր Ինքը շահեցաւ
մեզ Իւր կենաց գնովը: Ինչպիսի ե-
րախտեօք չճիսացոյց զմեզ: Անոր մի-
ջոցաւ ինչպիսի զարմանալի յաւաջա-
գիմութիւն չըրաւ մարդկութիւնը:
Ինչպիսի մտաւոր եւ բարոյական բա-
ւուրութիւն չպատճառեց աշխարհի,
Ինչպիսի Հիանալի կերպարանափոխու-
թիւն չգործեց: Նոյն իսկ այսօր ալ
քրիստոնէութիւնը մէկ աւուր մէջ

1 Գործ. Ժ. 38: — 2 Կողոս. Բ. 3:
— 3 Եբբ. Բ. 17:

աւելի չարիք կ'արդեյու, զորս բո-
յոր մարդկային օրէնքները ձեռնհաս չեն
ջնջելու: Անիկայ մեկ աւուր մէջ աւելի
եւ ստեպ գերազանց առաքինութեանց
ներգործութիւնները յառաջ կը բերէ,
զորս բնաւ կարող չեն բողբոջեցընել
իմաստասիրաց հոչակաւոր սկզբունք-
ները:

Որո՞ւն գործն է կնոջ վերականգումը,
որ ատեն մ'ընտանեաց մէջ յարէ՞ ու-
րի՞իք չափեր: Մի՞թէ Մարեմայ Որ-
դւոյն գործը չէ՞ . . . : Որո՞ւն պար-
տաւոր ենք տղայոց հոգն ու-
ինամքը, հայրական երբեմն միա-
հեծան եւ ստեպ բռնաւորական իշ-
խանութեան ամբոսումը: Մի՞թէ Մա-
րեմայ Որդւոյն չէ՞: Ուսկի՞ց յառաջ
եկաւ գերութեան ջնջումը: Ո՞վ զգե-
ցուց ծառային քրիստոնեայ տիրոջ
աչքին առջեւը փառաւոր եւ նուիրա-
կան կնիքը, եւ ո՞վ սորվեցուց մեզ
բոլոր մարդիկը մեզ եղբայր ծանչնալը:
Մի՞թէ Մարեմայ Որդին չէ՞ . . . : Ուս-
կի՞ց յառաջ կու գան բոլոր նպաստ-
ները, ամէն միխթարութիւնները, բո-
վանդակ բարի եւ զարմանալի գործ-
քերը, որոնց հոգին եւ անսպառ
ազբիւրն է մեր սրբազան Կրօնը: Մա-
րեմայ Որդիէն չէ՞:

Ո՞հ, եթէ Ամենասուրբ Կոյնն Աս-
տուծոյ եւ Քրիստոսի Մայր չըլար,
եւ իւր երկրպագելի Որդին ուրիշ բան

մի չըլար, եթէ ոչ մարդկան մէջ ա-
մենամեծը, եւ մարդկութեան ամենա-
հոչակաւոր բարերարը, Անոր Մայրը
պէտք էր ըլլար մարջ մէջ ամենաազ-
նիւր, ամենափառաւորն եւ ամենա-
պատուաւորը:

Հապա դերբնական տեսակիտով Զի-
սուս Քրիստոս որչափ բարեաց հեղի-
նակ չէ: Առանց Անոր անկեալ մար-
դուն համար չէր կրնար եւ երեք
պիտի չըլլար ոչ սրբարար շնորհք, ոչ
երկնից համար արդիւնք, եւ ոչ ալ
այն ներգործական շնորհաց մեկը, ու-
րոնք այնչափ հարկաւոր են մեր տկա-
րութեան: Առանց Անոր թէ իւր եր-
կրիս վրայ երեւնալէն յառաջ, եւ թէ
ետքը տեղի պիտի չունենար Աստուծոյ
եւ մարդու մէջ սիրոյ եւ շնորհաց յա-
րարերութիւն, ոչ Աստուած պաշտու-
թեան անգին քաղցրութիւն, ոչ հաւ-
ատոյ սփոփիչ լոյս, եւ ոչ ալ յաւի-
տենականութեան համար յուսոյ
նշոյլ մը:

Որչափ ուրեմն մենք կոյր ու ապե-
րախտ ենք, որ այս ամէն բարիքը կը
վայելենք, եւ այնչափ քիչ կը սիրենք
Պարգեւատուն: Քայլերնուս ամէն
մէկը քրիստոնէութեան երախտեօք մը
նշանուած է, եւ մենք ամենեւին չենք
մտածեր: Այսպիսի թանկագին պար-
գեւներ տեսնելով՝ պէտք էր որ ՚ըր-
տերնիս աւելի եւս վառվառն սիրով

բորբորէր առ Մարեմայ Աստուածային Որդին: Էւ գուցէ, քաւ եւ մի լիցի որ ստուգուի ընաւ: Թէ մենք Անոր կը զլանանք ժամանակը, որ այնչափ պատճառներով Իրեն կը պատկանի, որպէս զի Իւր սուրբ Օրէնքները անարգելու, Իրեն Օրինակներուն հակառակելու, եւ կամաւ գինքը զայրացնելու գործածենք: Ինչպիսի՞նք ապերախտութիւն է մերինը...: Ո՛հ, եթէ ասանկ նուազ զգայուն սիրտ մ'ունինք, դարմանենք մեր զգմամբն այդ ապերախտութիւնը. եւ այսուհետեւ եւ ոչ մէկ վայրկեան դադարինք Անոր համար ապրելու, որ ընաւ չի դադարիր Իւր շնորհները վրանիս թափելէ:

Ո՛վ Մարիամ, որ կրցար այդ երկրպագելի Բարերարին ըսել թէ «Դուն իմ Որդիս ես¹, ես եմ որ գֆեղ արգանդիս մէջ կրեցի, ես եմ որ քեզ կաթ աուի, որ իմ էութեամբս զքեզ կերակրեցի²»: Ինչպիսի՞ զգացմամբ լեցուեցար արդեօք այսպիսի աղաւ մը՝ «³ Բարեբախտութեամբս քեզ ծնեցաւ, որովհետեւ քեզ ծնեցաւ, որովհետեւ քեզ ծնեցաւ, որովհետեւ քեզ ծնեցաւ»⁴: Ո՛հ, անտարակոյս սիրտդ սիրոյ եւ հիացման զգացմամբ լեցուեցաւ:

1 Երբ. Ա. 5: — 2 Բ. Մակ. Է. 27: — 3 Մատթ. Ա. 25: — 4 Հոսիմ. Բ. 29:

Դուն հոգ տարիր Անոր մեծարանաց, նուիրման, եւ ի նա ապաւինութեան շարունակեալ ցոյցեր տալու: Երգոց հարսին եռանդնալից եւ սիրավաւստքերը հաղիւ կը բաւէին գֆեղ մաշող սուրբ սիրոյն կրակը յայտնելու, որ քեզ ըսել եւ կրկնել կու տար թէ, «Իմ սիրելիս իմն է, սրտիս մէջ պիտի հանգչի¹»: Ընդունէ ուրեմն մեզի համար, ո՛վ Մարիամ, քու հիացմանդ, երախտագիտութեանդ եւ առ Յիսուս սիրոյդ մասնակցելու շնորհքը, որ զմեզ երախտեօք ճոխացնելէ չի դադարիր: Մի թողու որ ալ երկար ատեն Իրեն ապերախտ գտնուինք, եւ մանաւանդ թէ ոչ երբեք մինչեւ այսպիսի բարերար մը կամաւ զայրացնելու դժբախտութիւնն ունենանք: Այո՞, մենք մեր հոգւոյն բոլոր եռանդեամբ կը պաղատինք եւ Եկեղեցւոյ հետ կը կրկնենք,

Քրիստոսի Մայր, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԴ.

Մայր Աստուածային շնորհաց, սոցոթես յիսմ մեր:

«Էս կ'ողունենամ զքեզ, ո՛վ լի շնորհօք²» ըսաւ Մարեմայ պատգամաբեր

1 Երգ. Ա. 12: — 2 Դուկ. Ա. 28: (Ըստ լատ. թրգմ.)

Հրեշտակը, որ ի Բարձրերդն որոշուած էր մարդեղութեան վեճով խորհուրդն Անոր աւետելու: Այնպիսի խոր իմաստ պարունակող խօսքեր, զոր ոչ մարդկային հանձար մը կրնայ երբեք ըմբռնել, եւ ոչ ալ բերան մը դանձնք բնաւ մեկնել: Հնարհաւ լեզու: Ո՞վ կրնայ ուրեմն այս գանձին առատութիւնը չափել եւ հարստութիւնը գնահատել: Եթէ ստոյգ է որ Հնորհաց աւելին կամ նուազը արդիւնք մ'է առաւել կամ նուազ սիրոյն, զոր Աստուած ունի հոգւոյ մը նկատմամբ, որ հոգին արդեօք կրցաւ ընդունիլ այնչափ՝ որչափ որ ընդունեցաւ Մարիամ՝ ամենէն աւելի Աստուծմէ սիրուածը...: Հնարհաւ լեզու: «Կատարեալ բարբառ մը, կ'ըսէ Սուրբ Սփրոնհիտ, ըստ որում Հնորհքն այլոց մաս մաս կը տրուի, իսկ Մարիմայ լիութեամբ¹»: Իրօք Մարիամ միայն կը կոչուի յեռագատիկ արժանապատուութիւն Հօր Աստուծոյ սիրելի Գոտեր, Որդւոյն սիրելի Մօր, եւ Հոգւոյն Սրբոյ սիրելի Հարսի, եւ այսպիսի անհամեմատ բարձրութեան մը համապատասխանելու էր անզուգական սրբութիւն մը, եւ այնպիսի շնաշխարհիկ սրբութիւն մը յառաջ բերելու համար հարկաւոր էր անմասն

1 Ճառ՝ ի Փոխու մն Ս. Կուսին:

Հնորհաց առատութիւն մը, պէտք էր Հնորհաց լուծութիւնը: Ուստի եւ Հրեշտակն ուղեով բացայայտել այս հիանալի սրբութիւնը, որ զՄարիամ կ'որոշէ բոլոր արարածոց մէջ՝ բնական անուամբ չլուցեց, որ թէեւ՝ ինչպէս տեսանք, զարմանալի իմաստներով հարուստ է, այլ ողջունեց մի եւ նոյն «լի Հնորհք» տիտղոսով, իբրեւ թէ հասկըցնէր թէ այդ տիտղոսն աւելի եւս յատկանիշ կ'ընէ զԱյն Բարձրերդն առջեւը:

Բայց Մարիամ Մայր է նաեւ Անոր, որ է «Աստուած ամէն Հնորհաց»²: Եւ որուն համար Ս. Պօղոս գրեց թէ անոր կերպարանքով³ Աստուծոյ Հնորհքն ինքը զինքը կենդանի ցոյց տուաւ մարդկան²: Ինչպէս ուրեմն, Ինք որ այսպիսի Որդի մը ծնաւ, չկարենայ կոչուիլ Աստուծոյն Հնորհոց Մայր, եւ մասնաւորապէս Ինքը որուն նոյն այս Որդին, այսպէս ըսելու համար, յանձնեց Իւր պարգեւաց բաշխումը: Ըստ որում Յիսուս խաչին բարձրութենէն մեղ տուաւ Իւր Մայրը յանձն Սրբոյն Յովհաննու, որ բոլոր Առաքելոց մէջէն մինակ Իւր քովը մնացած՝ կը ներկայացընէր բոլոր հաւատացեալները³: Եւ ինչ որ ըսաւ

1 Ա. Պետր. Ի. 10: — 2 Տխ. Բ. 11: — 3 Պօսիւէ, Ճառ՝ ի Տօնի Վրդրնի:

մեծ Առաքելայն այն պարգեւին նկատմամբ, զոր Հայրը մեզ տուաւ, այսինքն իւր Որդին, կրնանք մենք ալ պատշաճ համեմատութեամբ ըսել այն պարգեւին նկատմամբ, զոր Որդին մեզ տուաւ, այսինքն իւր Աստուածային Մայրը: «Ինչպէս Ա՛ն՝Վ ամեն բան մեզի շտուաւ՝»: Որուն համար Եկեղեցւոյ Վարդապետները կը պատուեն զՄարիամ՝ ազդու պաղատանքներով: «Յիշէ՛ զմեզ, ո՛վ Ամենասուրբ Այոյ, կը կոչէ Սուրբն Աթանաս, եւ Քեզ նուիրած այս տկար գովասանքներուս փոխարէն Քու շնորհացդ զանձէն առատ պարգեւներ շնորհէ մեզ՞»: «ԻՔեզ, Տիրուհի եւ միջնորդ Քեզով ծնած Աստուծոյ քովը, կ'աղաղակէ Սուրբն Եփրեմ, մարդկային ցեղը կը գնէ իւր ցնձութիւնը, ի Քեզ միայն կը գտնէ իւր ապաստանն եւ իւր ապահովութիւնը՝ յԱստուած կատարեալ վստահութիւն ունեցողը՞»: Եւ ուրիշ արթթի մը մէջ՝ «Ամենասուրբ Երբորդութենէն վերջը, Գուռն ես ամէնուն Տիրուհին, մխիթարիչ Հոգին Սուրբէն ետքն՝ ուրիշ մխիթարիչ մը, Միջնորդէն ետքը՝ ամբողջ աշխարհի միջնորդը՞»: «Ըստ որում Գուռն ես

1 Հոովմ. Ը. 32: — 2 Ճառ՝ յԱւետուածութեան: — 3 Ս. Եփրեմ՝ Ի Գործս: — 4 Անդ,:

մեղաւորաց մի միայն յՅոյր, կը կոչէ Սուրբն Օգոստինոս, Քեզմէ կը յուսանք յանցանքներնուս թողութիւնը, Քեզմէ, ո՛վ Օրհնեալ, կը սպասենք երկնային վարձատրութեան՝»: «Մարիամ բովանդակ շնորհաց ո՛վ կիանոսն է, ինչպէս կ'ըսեն Սուրբն Պետրոս Ոսկեխոսը՞, Սուրբն Յովհանն Գամակացիին՞, եւ Սուրբն Բոնավենտուրա՞:»

Մարիամ է այն ակն, ուսկից բովանդակ աշխարհի վրայ իրբեւ կենդանի ջրոյ աղբերէ կ'անձրեւեն բոլոր շնորհքները: Ինքն է՝ բուրաստաններու աղբիւրը՞, որ որոշուած է՝ «ուռզելու փշերու ձորը՞» (ըստ լատ. թարգմ.) այսինքն սրտերնիս փոխելու, եւ անոնց մէջ բոլոր առաքինութեանց բողբոջել ապրու: «Հնորհքներով այնչափ լեցուն աղբիւր մ'է, կ'ըսէ Հրեշտակային Վարդապետը. այս քաղցրագութ Վոյրը, որ բոլոր մարդկան վրայ սփռելու համար բաւականէն այ աւելին ունի՞»:

Մտտենանք ուրեմն, ինչ ալ ըլլայ ինզճութիւննիս, մտտենանք կատարեալ բաց սրտով առ Աթուռն շնոր-

1 Ճառ՝ յԱւետուածութեան: — 2 Ճառ՝ ձիւջ: — 3 Ճառ՝ Ի Ծնունդ: — 4 Ճառ՝ Ի: — 5 Երգ. Գ. 15: — 6 Յովէլ, Գ. 19: — 7 Մասն Գ. Խնդ. Ի. Ի. Յօդ. 5:

Հայ¹ յ, զոր Յաւիտենականին Որդին
Էշրանելոյ Կուսին արգանդին մէջ
Իրեն Համար ընտրեց: Մինչա Մարեմայ
օգնութիւնը խնդրենք, նոյն իսկ յու-
սարեկ պարագաներու մէջ ալ, որտե-
նուս խորէն խնդրենք, «այսպէս ա-
պահովարար, կ'ըսէ Սուրբն Բեռնար-
գոս, կը կատարենք Անոր դիտմունքը,
որ ուղեց որ ամենայն ինչ մեզ Մա-
րեմայ միջոցաւ գայ² յ»:

Ով Մայր «մարմնացելոյ Բանին, որ
չնորհօք եւ ճշմարտութեամբ լեցուն
մէջերնիս բնակիլ Հաճեցաւ³ յ: Հրեշ-
տակապետին հետ զՔեզ կ'ողջունենք
«Ին շնորհօք⁴ յ: Որուն անսահման եւ
անսպառ ալբերը Բու Աստուածային
Որդիդ է, որ նախ ի Քեզ Հաստատե-
լով մարդկան մէջ բնակութիւնը,
Քեզ իրաւունք տուաւ ըսելու, «Ին
կը բնակի ամէն շնորհօք⁵ յ: Բու օր-
հնէալ ձեռքերդ այն բարեբախտ ա-
ռուակներն են՝ ուսկից այս Աստուած-
ային գանձը կը սփռի բոլոր երկրիս
վրայ, կը կաղդուրէ այն ամենայն ինչ՝ որ
ցամաք է, եւ «անապատներն անգամ
իբրեւ նոր եղեմ՝ կը ծաղկեցընէ⁶ յ:
Առ Քեզ ուրեմն կ'ուզենք զիմել մեր

1 Եբր. Դ. 16: — 2 Ճառ՝ ի Փոխումն
Եր. Կուսին: — 3 Յովհ. Ա. 14: — 4 Ղուկ.
Ա. 28: — 5 Սիրար, Ի. 25: — 6 Եսայի,
ԾԱ. 3:

ամէն կարօտութեանց ատենը: Յիսուսէ
ետքն ի Քեզ կը դնենք ցմիշտ բոլոր
մեր վստահութիւնը: Թէեւ անարժան
Անոր օղորմութեան ու բարութեան՝
սակայն Քեզմով կը յուսանք մեր
անթիւ յանցանաց թողութիւնը,
տկարութիւններուս այնչափ Հար-
կաւոր օղջութիւնը, եւ վերջնական
յարատեւութիւնը:

Աստուածային շնորհաց Մայր, ա-
ջօթէ մեզ Համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԵ.

Մայր մարտիր, աղօթեա զՆախ մեր:

«Պատշաճ էր, կ'ըսէ Սուրբն Ան-
սելմոս, որ Մարեմայ Կուսին սրբու-
թիւնն այնպիսի ըլլար, որ Աստուծոյ
սրբութենէն վերջն անկից մեծագոյնը
չկարենար երեւակայութիւն¹ յ: Ապա թէ
"չ պէտք կ'ըլլար մտածել թէ Աս-
տուած ուզած պիտի չըլլար որ Անի-
կայ, որուն կը վերապահուէր Իւր
Մայրն ըլլալու անսահման առաւելու-
թիւնն ըստ կարի հաւասար ըլլար այն-
պիսի պատուոյ, եւ զԱնիկայ ըստ
բաւականի արժանի ստեղծած չըլլար
այնպիսի աստիճանի մը, որ աշխարհիս

1 Ճառ՝ ի Յղութիւն, ԳԼ. ԺԼ:

վրայ ոչ նմանն ունի, եւ ոչ ալ պիտի ունենայ: Իւ այս կէտն է որ տեղի տուաւ Սրբոյն Թովմայի գրելու հետեւեալ նշանաւոր խօսքերը: «Արնայ ըլլալ այնպիսի մաքուր արարած մը, ուսկից զատ ուրիշ մաքրագոյն մը չկարենայ գտնուիլ Արարչին բոլոր գործոց մէջ, եւ այսպիսի եղաւ Իրանեւոյ Աուսին մաքրութիւնը. Անոր որ երբեք չգիտցաւ ոչ սկզբնական եւ ոչ ալ ներգործական մեղքը¹»:

Աստուած եւ մեղքը անհաշտ են մէկզմէկու, այս երկու սահմանին մէջ եղած հակառակութիւնը բացարձակ եւ անսահման է, ուստի եւ ոչ ոք կրնայ Աստուծոյ մտենալ, եթէ ոչ հեռանալով մեղքէն, ուսկից այնչափ աւելի կը հեռանայ, որչափ որ կը մտենայ «Սրբոց Սրբոյն²»: Բայց ինչպէս երեւակայել արարած մը, որ Աստուծոյ հետ այնպիսի սերտ յաբաբերութիւն ունեցած ըլլայ, ինչպէս որ ունեցաւ Աստուծոյ Մայրը: Ինչպէս մտաց առջեւը բերել այնպիսի մը, որ Իրանեւոյ Աուսին նման հոգւոյ մաքրութեան մը հասած, կամ հասնելու կարող եղած ըլլայ...: Որուն նման զպրոցներու Հրեշտակը կը համար դպրոցներու Հրեշտակը կը

¹ Վճիռ, Ա. Խնդ. ԽԳ. Յօդ. 7 առ Ս. Ժող. Տրիդ. Կիստ Ե—Զ. — ² Դանիէլ Թ. 24:

սորվեցրնէ որ, «Հնորհաց հեղու մն ի Մարիամ այնպէս յորդառատ եւ կատարեալ եղաւ որ Ինք կարելի եղած ամենատեղ միութիւնը վայելեց շնորհաց Աստուածային Հեղինակին հետ, եւ ասանկով արժանի եղաւ Իւր արգանդին մէջ ընդունելու զԱյն որ շնորհաց աղբիւրն է¹»:

Ուրեմն ամենասուրբ արարածոց զատուն մէջ անգամ առաջին տեղին Մարեմայ տայն ալ չի բաւեր: Ինք որ կարելի եղածին չափ Աստուծոյ կը մտենայ, Իւր անհամեմատ արժանապատուութեան բարձրութեամբը կը գերազանցէ զամենքն ալ, անոնցմէ կը զանաղանուի, «Ինչպէս փուշերու մէջ փայլող շուշան մը²»: Անոր սրբութիւնը բոլոր ընտրելոց եւ բոլոր երանելի հոգւոց մէջ գեր ի վերայ կ'իշխէ «Ինչպէս շագու սիւն մը, որ անապատէն կը բարձրանայ զմտոյ, կնդրկի եւ ամէն քաղցրաբոյր ինկերու ա. նուշահատութեամբ³»:

Այս Օգոստոսափառ Մօր վրայ նկատելով եզակի սրբութեան այսպիսի արտօնութիւն մը, որով Աստուած վայելչապէս զինքը ծնխացուց, հետազոտենք այն ատերութիւնը, զոր Աստուած ի հարկէ ունի այն ամէն բանի,

¹ Մասն Գ. Խնդ. ԻԷ. Յօդ. Է, առ Ա. — ² Երգ. Բ. 2: — ³ Անդ, Գ. 6:

որ կը թ շնամանէ Իւր անսահման մեծ-
 վայելչութիւնը: Մեղքը, ինչ ալ
 ըլլայ իւր էութեան եւ պարագաներու
 մէջ, միշտ է քանդուած բարոյական
 կարգին, կատարեալ անկարգութիւն
 մը, զոր պէտք է որ Աստուած միշտ
 Իրմէ հեռու մերժէ. Ինքն ըլլալով ըստ
 էութեան նոյն ինքն կարգը, էական
 հարկաւոր եւ անփոփոխ կարգը: Մեղքն
 ապստամբութիւն մ'է Աստուծոյ
 դէմ, մեծագոյն կարողութիւն, վեր-
 նագոյն կարողութիւն, յաւիտենական
 կարողութիւն, որ մեղքը կ'արգելու,
 եւ չի կրնար առանց Ինքն Իրեն դէմ
 պակսելու անպատիժ թողուլ Իւր
 ընդհանուր Տէրութեան մէջ այսպիսի
 անկարգութեան ո՞ր եւ իցէ գործ մը:
 Մեղքն ապերախտութիւն մ'է բա-
 րերարաց առաջնոյն եւ մեծագունին
 դէմ, ապերախտութիւն այնչափ աւելի
 զուելի, որչափ որ կամաւ կը զայրա-
 ցընենք զԱնիկայ, որ ձեռքերնիս կը պա-
 հէ նոյն իսկ այն վայրկենին մէջ, յու-
 րում զայն չարաչար կը գործածենք
 Անոր դէմ, եւ զՈր չենք կրնար վշտա-
 ցընել առանց Իրեն մեզ ըրած բա-
 րերարութեանց մին Իրեն դէմ գար-
 ձընելու: Արդ կրնայ Աստուած ան-
 սահմանաբար չատել ապերախտու-
 թիւնը, զոր նոյն իսկ մարդիկ ամենա-
 մեծ անարգութեամբ կը նախատեն...:
 Աղէ, այնպէս շուտով չսահինք այս

ճշմարտութեանց վրայէն, որոնք կարող
 են սուրբ սարսափ մ'աղղել մեզ
 Աստուծոյ երկրպագելի կամաց ամե-
 նաթեթեւ անգամ պակասութեանց
 դէմ, որոնք կարող են եռանդնիս,
 արթնութիւննիս եւ ջանքերնիս սթա-
 փել ամենափոքր չարէն անգամ փախ-
 չելու: Ապա թէ ոչ իբրեւ «այն, որ
 չուզէր իւր պարտաւորութիւնները
 ճանչնալ¹», «Աստուծոյ աչքէն իյնա-
 լու, եւ Անկէ մերժուելու²», վտանգին
 մէջ պիտի իյնանք: Ամ իբրեւ «այն
 անմիաներն, որոնք իմաստութիւնը
 կ'ատեն³, արժանի պիտի ըլլանք որ
 Բարձրեալն ալ զմեզ ատէ, եւ թողու
 մեր անարգ զգայութեանց իշխանու-
 թեանը տակ⁴»: Մանաւանդ թէ սրտի
 մտօք մտածենք այս փրկաւէտ ճշմարտ-
 ութեանց վրայ, եւ հոգ տանինք ստա-
 նապու այն «-բէ երկիւղը, որ բան մը
 զանց չ'ըներ⁵ եւ միշտ մտաց առջեւը
 ներկայ ունի Աստուծային Վարդա-
 պետին սկզբունքը թէ «ով որ փոքր
 բաներու մէջ հաւատարիմ է, հաւա-
 տարիմ կ'ըլլայ նաեւ մեծագոյն բանե-
 րու մէջ ալ, եւ ով որ անիրաւ է
 փոքր բաներու մէջ, անիրաւ կ'ըլլայ
 նաեւ մեծագոյն բաներու մէջ ալ⁶»:

1 Սղմ. ԼԵ. 4: — 2 Լնդ, 13: — 3 Լ-
 ոսկ. Ա. 29: — 4 Սիրտք, ԺԻ. 7: —
 5 Ժողովող, Ի. 19: — 6 Ղուկ. ԺԶ. 10:

Ո՛վ Գրուն, որուն զարմանարի սրբութիւնը «գիշերուան գեղեցիկ աստեղ +ուջը եւ մառաբ պայծառութեան կը նմանի¹», սրտանց Քեզ կրտսերք: «Գունն բոլորովին մաքուր ես, «Վ Մութեամբ, եւ ամենաթեթեւ արատ մ'ալ վրագ չի գտնուիր²», «ի Քեզ, տուն Աստուծոյ, որուն միայն սրբութիւն կը վայելէ³»: «Աստուծոյ յարկը, զոր ինքը սրբացուց⁴»: Այո՛, մենք ամէնքս ալ Քու սիրեցեալ որդիքդ, զմեզ բարեբախտ կը համարինք մեր Օգոստոսիա եւ գորովագութ Մօրդ այս հռչակաւոր արտօնութեան վրայ մտածել կարենանուս համար, որուն առջեւը միշտ ի Հոգւոյն Սրբոյ առաջնորդուած Եկեղեցին՝ հանդիսապէս խոնարհած է, ծանուցանելով ընդհանուր կաթողիկէութեան թէ ինքը միշտ զգուշացած է զՔեզ մեղաւորաց կարգը դասելէ⁵: Ընդունել մեզի համար ո՞վ Մարիամ, որ լաւ զգանք թէ ինչպէս Աստուած ի հարկէ կ'ատէ մեզքը, որուն անկարգութիւնը երբեք չապականեց Քու ամենագեղեցիկ հոգիդ, թէ ինչպէս սոսկալու ենք ապրատամբութեան եւ ապերախտութեան գործքերէ, որոնք թէեւ չկարենան

1 Երգ. Ձ. 9: — 2 Անդ. Գ. 7: — 3 Սղմ. զ. 5: — 4 Անդ. Խ. 5: — 5 Ժողով Տրիդ. Նիսա Ե-Չ:

Աստուծոյ եւ մեր մէջը յառաջ բերել մահուան բաժանումը, զոր աւանդ շատ ստեպ կը պատճառէ: Հաճէ Քու բարեխօսութեամբդ զմեզ պահպանել: Հաճէ մոռիկ ընել անոնց, որոնք Քեզ կ'ուղղեն այս ջերմեռանդն պազտանքը:

Մաքուր Մայր, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺՕ.

Մայր Սուրբ, աղօթես վասն մեր:

Միթէ այն առաքինութենէն աւելի այնուադոյն եւ մեծագոյն բան մը կայ՞ որ կը թողու հոգւոյն իւր բոլոր աղատութիւնն առ բարին, մարմնոյ՞, այսպէս ըսելու համար՝ գերութենէն եւ ծանրութենէն կորզելով, զոր մշտապէս պարտաւորութեան օրինաց տակ կը պահէ: Իրօք ամէն ատեն բոլոր ամենակիրթ ժողովրդոց եւ նաեւ հեթանոսութեամբ օտարացածներու քով ալ պարկեշտութիւնը միշտ ի պատուի եղաւ: Կարծես թէ տեսակ մը բնազդմամբ Մեմփոս, Աթէնք, Հռովմ եւ Ամերիկայի վայրերի խղիկներն այս առաքինութիւնը նախա-

1 Տը Մեթթր, ի վերայ Քահանայապետին, Հասոր Բ. ԳԼ. Գ:

դատելու զգացմունքն ունեցան, որ զմարդն իւր բնութենէն վեր, զբեթէ պարզ հոգւոց սահմանը կը բարձրացնէ:

Բայց զննեցէք թէ պարկեշտութիւնը Զիսուսի Աստուածային Մօրը քով ինչպիսի զարմանալի լուսաւորութեամբ կը փայլի: Թէեւ Աբամայ բոյսը որդւոց պէս չարչարելի եւ մահկանացու մարմնոյ մը կապուած՝ Մարիամ, որ սկզբնական մեղքէն պատրաստուած էր, պահպանուեցաւ նաեւ այդ առաջին արատին բոյսը նուաստացուցիչ հետեւանքներէն ալ: Եւ իրօք միթէ կը վայելէր որ Աստուած Եւայի յանցանքին Անոր փոխադրուելէն ազատելով զինքը, թող տար ի Նմա ցանկութեան դժբախտ պատճառը յորմէ Եւա անգամ ազատ էր իւր անմեղութեան վիճակին մէջ...: Ուրեմն Ինքն Սարիամ անմեղութեան մէջ եղած առաջին մարդոյն բնկերէն աւելի ստորին արարած մը պիտի ընէր, եւ Աստուծոյ Մայրը պիտի ստիպուէր դէպ ի երկինք բարձրացընել բովանդակ քրիստոնեայ հոգւոց հասարակ հառաչանքը թէ. «Մէ թշուառութեանս, ո՛վ պիտի ազատէ զիս մահուան այս մարմնէն¹»: Ո՞ր երկիւղած հոգին պիտի չմերժէ այս-

1 Հռովմ. Ի, 24:

պիսի մեծամունքներ, որոնք անարժան են Որդւոյն ալ Մօրն ալ: «Պիտի սոսկայի հաստատելու, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, թէ այն սուրբ մարմինը՝ որ Քրիստոսի կուսական մարմին մը մատակարարեց, մահուանէ վերջը որդանց կերակուր ըլլայ¹»: Եւ թէ Ամենասուրբ պէտք էր ազատ մնալ զերեզմանին ապականութենէն, որ բատ ինքեան անկարգութիւն մը չէ, որչափ աւելի եւս հապա պէտք էր որ Աստուած զինքը պահպանէր ամեն առ բարոյական անկարգութիւն հակամանէ:

Մարիամ ուրեմն ի մարմնի Իւրում եղաւ, որչափ որ կարող է նիւթը հոգւոյ հետ համեմատուիլ, ինչ որ էր ի հոգին, բոլորովին մաքուր եւ բուրբովին սուրբ: Ամենասուրբ Կուսին կրնայ բառ առ բառ յարմարիլ ինչ որ Սուրբն Օգոստինոս կ'ըսէր ի նմանութիւն կուսութեան նկատմամբ թէ «Ինք իւր մարմնոյն մէջ ունեցաւ բան մը, որ բնաւ նոյն մարմնէն չէր²»: Բան մը որ աւելի Հրեշտակային բնութեան կը պատկանէր քան թէ մերինին: Բան մը զերմարդկային, որուն համար «փառաց թագաւորը չգարչե-

1 Ի Փոխուին Ս. Կուսին: — 2 Ի վերայ Կուսութ. Թիւ 12:

ցաւ Իւր բնակութիւնը Հաստատելու մահկանացուի մ'արգանցին մէջ¹»:

Բայց զգուշանալը մտածելէ որ Մարիամ կրեալ պատերազմ չունենալուն պատճառաւ, Իւր պարկեշտութեան փառքը նուազ լուսաւոր եղած ըլլայ: Որչափ ալ որ զեղեցիկ ըլլայ վտանգն որ յաղթանակաւ կը լինայ, ինչ ալ ըլլայ կռուի մը մէջ յաղթանակելուն փառքը, որուն Հանդիսատեան ալ, միջանակն ալ եւ պտակն ալ Աստուած է, այսու ամենայնիւ շատ աւելի պատուաւոր է յարգուիլ այն պիղծ հոգիէն, որուն յարձակումները շատ մը մեծամեծ Սուրբերու արտասուել տուին, եւ ամենաթեթեւ նախատիւք մ'ալ անկից չկրել: Այսպիսի եղաւ ըստ էութեան երկրպագելն Յիսուսին առաւելութիւնը, եւ այսպիսի եղաւ ըստ շնորհաց Իւր Մօրն արտանութիւնը: Որուն նայուածքը փշր կը լինէր — ապահովագէտ նկատել², Իւր Որդւոյն խաչն յաղթուած գոխային իշխանութիւնները³:

Արդ մենք որ շատ ստէպ կը զգանք բնութիւններնուս մէջ Հաստատուած չարի մը յարձակմունքներն ու պատերազմները, «սրանց Ինչն» «իչքն է⁴» որ-

¹ Չքեղ Աստուած գովարանեմք: —
² Սղմ. ԾԳ. 9: — ³ Կորնոս. Բ. 15: —
⁴ Հռոմմ. Է. 21:

գիական վտահուտութեամբ պատուարուինք Մարեմայ մայրենի պաշտպանութեան ներքեւը: Յիշենք որ որչափ ալ տկար ըլլանք, «ամէն բան կրնանք զմեզ զօրացընող Աստուծոյ շնորհիւր¹», եւ թէ Մարեմայ բարեխօսութեամբը պէտք է որ յուսանք որ Անոր շնորհքը մեր վրայէն չպակի: Սակայն չվտահինք Անոր պաշտպանութեան առանց ձեռք առնելու Հաւատոց մեզ ցոյց տուած զգուշութիւններն ու միջոցները: Ապա թէ ոչ կարծես թէ պիտի ուզենք զՄարիամ մեղսակից ընել մեր յանձնապատասխանութեան, եւ մեր մեղանչական անխոհեմութեանց: «Հսկենք եւ աղօթենք²», խստութեամբ հսկենք զգայարանքներնուս, երեւակայութիւններնուս եւ սրտերնուս ազդեցութեանց ըլլայ, վտանգն երեւցածին պէս փախչինք: Մի միայն փախստեամբ կապահովուի պարկեշտութեան յաղթանակը: Աղօթենք, եւ «ամէն ժամ աղօթենք³»: Մանաւանդ վտանգի ատեն «փորձութեան մէջ չկոխալու համար⁴»:

Ո՛վ Մարիամ, կ'օրհնենք զԱստուած, վասն զի Յղութեանդ վայրկենէն «սիրտդ եւ մարմինդ ցնծացին առ Աստուած կենդանի⁵»: Մենք

¹ Փիլիպ. Գ. 13: — ² Մարկ. ԺԳ. 38:
 — ³ Եփես. Չ. 18: — ⁴ Մարկ. ԺԳ. 38:
 — ⁵ Սղմ. ԶԳ. 3:

կօրհնենք զԱնիկայ, վասն զի Քու-
վրաց սրանչեղի կերպով ճշգրտեցան
մեծ Առաքելոյն այն խօսքերը թէ
“Հոգւոյն Սրբոյ պտուղներն են ժուժ-
կայութիւն, պարկեշտութիւն¹”։ Ո՞ր
ժուժկայութիւնը կրնայ բնաւ համե-
մատուիլ Քուկինիդ հետ։ Ո՞ր զգաստ-
ութիւնը չի խաւարիր այն պարկեշտ-
ութեան առջեւը, զոր Աստուած
ցանկութեան ամէն յարձակումներէն
աղատ պահեց, եւ որուն “Յուզայի
ցեղին² անյաղթ առիւծին իշխանու-
թեամբը մշտատեւ յաղթութեան փառ-
քը շնորհուեցաւ³”։ Ո՞հ, շատ տարբեր է
մեր մասը, մեզ եւ մեր յաւիտենա-
կանութեան համար շատ ահաւոր են
մարմնասուր ցանկութեանց⁴ եւ “զմեզ
պաշարող չար ոգւոց հոգիներնուս
դէմ՝ բրած յարձակումները⁵”։ Քու-
փառացի համար, ո՞վ Մարիամ, մի
թողուր որ Քու ոգնութիւնը կոչող-
ներս, եւ Քու խնամակալ իշխանու-
թեանդ հովանւոյն ներքեւ պատերազմ-
ողներս կուռի մէջ յաղթուինք։ Ա-
ղօթէ մեզի համար, որպէս զի “սըր-
տերնուս մէջ խաղաղութիւն բերող
Աստուածը ոտքերնուս տակը յերկիր
կործանէ զպատանան⁶, եւ մենք հոգւով

¹ Գող. Է. 23: — ² Յայտ. Է. 5: —
³ Ա. Կորնթ. Ժ. 57: — ⁴ Ա. Պետր.
Բ. 11: — ⁵ Եփես. Զ. 12: — ⁶ Հռովմ.
Ժ. 20:

մահացրենք մարմնոյ զործքերը¹, եւ
նորէն կրկնենք.

Սուրբ Մայր, աղօթէ՛ մեզի համար:

ՄՏԱՆԾԱԿԱՆ ԺԷ.

Մայրսնարատ, աղօթեա յիսում յնր:

Եսայի մարգարէն, որուն Աստուած
հոգւոյ յափշտակութեան մը մէջ
կոչս - Սօր հրաշքէն եօթը դար յա-
ռաջ կ'ըսէր Մարեմայ նախնեաց,
“Լսեցէք Գաւթի տուն... Ահաւասիկ
կոչս մը պիտի յղանայ ու ծնանի
Որդի մը, որ ընդ Քու Աստուած պիտի
կոչուի²”։ Եւ իրօք ասիկայ այն հրաշք-
ներէն մէկն է, զոր Աստուած Իւր
ամենակարող զօրութեան գանձէն կը
հանէ, երբ կ'ուզէ Իւր գործոց վրայ
նշան մը դրոշմել, որ զմարդիկ զար-
մանքով եւ հիացմամբ ապշեցնէ։ Եւ
ճիշդ ալ ասիկայ է, զոր Եկեղեցին
կ'ուզէ մեզ պատուել ու հուշակել
տալ ներկայ Մայր անուրար մարտ-
րէան՝ աղօթէ Քու համար պաղատանաց
մէջ:

“Ո՞վ սրանչեղք, ո՞վ անճառելի
հրաշք, կը կոչէ Սուրբն Օգոստինոս,
կոչս մը Մայր եղած է: Այո, Ինք

¹ Հռովմ. Բ. 13: — ² Եսայի Է. 14:

Մայր է, բայց միշտ ալ կ'ըստ է: Որդի մ'ունի, բայց ըստ մարմնոյ հայր չի ճանչնար: Ծնաւ, բայց իւր ամբողջութիւնն անեղծ մնաց¹»: Սուրբն Բեռնարդոս Հիպպոնայի անմահ խպիսկոպոսէն ալ աւելի յառաջ կ'երթայ: «Թէ որ ուզեմ ի Մարիամ կուսութիւնը գովել, շատ մը կուսանք մտքիս առջեւը կը ներկայանան, որոնք այս առաքինութեան փառաց արժանի եղան. եթէ՝ իւր խոնարհութեան գովեստը հիւսեմ, հաւատացեալներ կը գտնեմ, որոնք իւր Աստուածային Որդւոյն ձայնին հետեւելով սրտանց հեղ եւ խոնարհ եղան: Եթէ իմ խօսքերովս Անոր ողորմութեան բարութիւնը բարձրացընեմ, միթէ չե՞ն գտնուիր աստուածապաշտ մարդիկ եւ կանայք, որոնք պսպիսի առաքինութեան օրինակ եղան: Բայց հաշաւատիկ կէտ մը, յորում ոչ սք, ոչ իրմէ յառաջ եւ ոչ ալ ետքը կրցաւ երբեք Անոր հետ համեմատուիլ, այսինքն Ս'օր հրճուանաց հետ միաւորել կուսութեան փառքը: Այս, ասիկայ միայն Մարեմայ առանձնաշնորհութիւնն է, եւ ուրիշ արարած մը բնաւ այս պատիւը պիտի չունենայ²»:

¹ Ճառ. Ժ. Գ. ի վերայ ժուժկ. — 2 Ճառ. Գ. ի Փոթ. Ս. Կ.:

Այս սրանչելիքն անտարակոյտ կը գերազանցէ բնութեան բոլոր օրէնքները: Բայց եթէ մեր նախահայրն Աստուծոյ կամաց մէկ պարզ գործողութեամբն աշխարհ եկաւ, միթէ նոյն ամենակարող կամաց դժուարագոյն էր յանձին մահկանացուն մը կուսութեան ծաղիկն վրայ միացընել «Հոգւոյն Սրբոյ Աստուածային պտուղը¹»: Իւր դարձեալ հայելին որ կ'ընդունի եւ կը վերադարձնէ պատկեր մը «առանց իւր պայծառութիւնը կործնընելու²», ըստ բաւականի զմեզ խելամուտ չընեն թէ ինչպէս «Աստուծոյ փառաց ճառագայթը³» կրցաւ գալ եւ յայտնուիլ աշխարհի այնպիսի հիւնայլի կերպով որ մեր խելքն ապշեցընէ...: Ի վերայ այս ամենայնի, կ'երեւայ թէ Աստուած ուզած ըլլալ հեռուէն մարդուն հոգին տրամադրել հաւատալու մեր կրօնին առարկայ եղած այս սրանչելեաց: Ասան զի այն հանգիստ որ մարգարէութիւնը, որ շատ ժամանակ յառաջ Աստուծոյ ժողովրդեան յայտնուած էր, հնութեան գրեթէ բոլոր հեթանոս ժողովրդեան մէջ արձագանգ գտած էր: Անոնց կրօնական աւանդութիւնները կը համայնէին իրրեւ ազատիչ սպասելու

¹ Մատթ. Ը. 20. — 2 Իմաստ. Ի. 26. — 3 Եբբ. Ը. 3:

«Արուսի մը որդւոյն ի», : Բայց կ'երեւայ թէ Մարդ-Աստուծոյ մը խորհուրդն բոտ ինքեան արդէն աննման հրաշք մ'ըլլալով, փառքն ալ պէտք էր լուսաւոր ըլլար թէ ի ծննդեան եւ թէ ի յղուծեան իւրում :

Արդ օրհնենք Հոս զԱստուած Իւր հիանալի սքանչելեաց համար, որով յայտնեց «Իւր ի մարդկային բնութեան ունայնութեան» խորհուրդը, օրհնենք զԻնքն այն փառաւոր պարգեւաց համար, որով ճոխացուց Ամենասուրբ Այոյսը, եւ հեզ տանինք միշտ մեծապէս յարգելու, եւ սրտանց սիրելու այն առաքինութիւնը, զոր Ինքը պատուեց ի Մարիամ այսպիսի սքանչելեօք : Ո՛հ, եթէ գիտնայինք թէ այս առաքինութիւնը որչափ հաճելի է «Աստուծոյ, որ Հոգի է, եւ կ'ուզէ որ մենք յոգւով իրեն երկրպագենք», եւ թէ ինչպէս մարմինն իւր զգայութեան համաձայն կը հաղորդակցի այսպիսի երկրպագութեան մը վսեմութեանը, աշխուռութեանն եւ սրբութեանը... Ինչպէս պիտի չջանայինք շարունակ ի գործ զնելու զգայարանայ այն պարկեշտութիւնը, որ պատշաճ բաներէ անգամ զրկուելու կը պարտաւորի, որպէս զի սահման անցնելու

1 Մ. Տրաք. Նամակ Գ. — 2 Փիլիպ. Բ. 7: — 3 Յովհ. Գ. 23:

վտանգին մէջ չլինայ, այն սրտի պարկեշտութիւնը որ ի բաց կը մերժէ ամէն թէեւ օրինաւոր սաստկագոյն ցանկութիւն, այն երեւակայութեան պարկեշտութիւնը որ անկարգութեան եւ ո՛ր եւ է վտանգաւոր առարկայի վաղանցուկ մտածմունքն անգամ կը հալածէ... : Իւ ինչպէս պիտի աշխատէինք կարգի զնելու բոլոր մեր արտաքինը, այնպէս որ մեր զգաստութեամբ եւ համեստութեամբն ուրիշներու ալ ազդէինք յարգութիւն եւ սէր այնպիսի առաքինութեան մը, որ մի միայն կրնայ արժանաւոր ընել մեր մեծարանքն առ Ամենասուրբ Այոյսը :

Ո՛վ Մայր անարատ մաքրութեան, զոր Յովհաննէս Առաքեայլը «հիանալի հրաշք» կը կոչէ, որուն հետ միատեղ ուրախ ենք զԲեղ սարեգակ հառուած, տասնուերկու աստղերով պսակուած, եւ լուսինն ոտքերուդ տակը¹, տեսնելով : Արեգակը կը պատէ զԲեղ իւր շողողուն պայծառութեամբը, օրինակ Աստուածային «Արգարութեան արեգական»², զոր Գուռն կրեցիր ամենամարու արդանդիզ մէջ, եւ որ Բու մաքրութիւնդ Իւր ամենապայծառ ճառագայթներուն նման անայայտելի բրաւ : Տասնուերկու աստղք Բու թագդ կը կազմեն, որոնք իրենց պայ-

1 Յայտ. Ժ. 1: — 2 Մաղաք. Գ. 2:

ծառ փայլմամբը պատկեր են այն լուսոյն, զոր Բու հրաշալի անարատութիւնդ կը ցոլացընէ: Դուռն զլուսինն ոտքերուդ տակն ունիս, ի նշան Բու կուսութեանդ յաղթանակին ամէն անհաստատութեան եւ թերութեան վրայ, զոր կը նշանակեն այն աստեղ փոփոխական երեւոյթները: Մենք կը միանանք Աբբոյն Ամբրոսիոսի եւանդուռն սլացներուն, որ ի Տօնի Ծնընդեան բոլոր իւր ժողովրդեան երգել կու տար, «բոլոր աշխարհ կը հիանայ կուսին հրաշալի ծննդեան վրայ: Աստուած մ'այսպէս պէտք էր ծնանիլ¹»: Մենք սաստիկ կը բաղձանք ի Քեզ պատուել Տեառն սքանչելիքը, տկարութիւններնուս թոյլ տուածին չափ հաւատարմութեամբ նմանիլ Բու գերմարդկային մաքրութեանդ, եւ այս շնորհքը մեզ ընդունելու համար:

Անարատ մաքրութեան Մայր, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԼ.

Մայր անրիծ, աղօթեա վասն մեր:

Կոյս-Մօր մը հրաշքին պայծառութիւնն Աստուծոյ արժանի ըլլալու հա-

1 Ս. Կեղեցասինոս Բազանայպետ:

մար, պէտք էր որ անայլայլելի ըլլար, եւ մաքուր անգանդն ալ, յորում «Բանն մարմին եղաւ¹» ցմիշտ անպական մնար, իրբեւ «մի միայն Աստուծոյ վերապահուած տաճար մը²»: Ուստի հաւատոյ մաս է որ Մարիամ միշտ կոյս մնաց, որ երբեք բան մը չմնասեց «հրաշքոտեան յիշեան պատուոյ պարոյն հէր փառոտ մտրութեան քաղիւն³»: Իւր թէ նոյն այս ծաղիկը Կոյս-Մօր երկրիս վրայ գտնուած վերջին օրն ալ առաջին աւուր արուսեակին նման հաւատարապէս առողջ էր: Աւելի եւս Իկեղեցին իւր սուրբ պաշտամանց մէջ կըսէ մեզ թէ, Մարեմայ կուսութիւնն իւր կատարելութենէն բան մը չկորսնցընելէն զատ՝ «Փրկչին հրաշալի ծննդամբը գրեթէ Աստուածային նուիրագործութիւն մը ստացաւ⁴»: Ուրեմն Մարիամ «այն աղբիւրն է, որ Կոյս անուր պահէ իւր ջրերուն շնորհալիւնը ընդ պահպանութեամբ անխարդաւանելի կնքոյ⁵»: Ստուգիւ է «փակուած պարտեզը⁶», որ է Աստուածային մեծ վայելչութեան անմատոյց բնակութիւնը, եւ որուն առջեւը կը հսկէ «բոցեղէն սրով զինուած Բերսովէն⁷»:

1 Յովհ. Ա. 14: — 2 Եղեկ. ԽԳ. 2: — 3 Սիրաք. ԻԳ. 23: — 4 Պատարագամատոյց Հուովմ. ի Տօնի Յղութ. Ս. Կ.: — 5 Երգ. Գ. 12: — 6 Անդ. — 7 Ծննդ. Գ. 24: 7*

Իշւ եթէ ասոր վրայ չունենայնք նաեւ այն ստուգութիւնը, զոր մեզ կու տայ Եկեղեցւոյ անսխալ վարդապետութիւնը, ո՞վ է այն հաւատացեալը որ հասկընայ թէ Մարիամ Աստուածային Մայրութեան փառօք՝ յաւիտենական Որդւոյն ճշմարիտ տաճարն եղած էր, թէ Բանն անտեղծ ինն ամիս Անոր Վուսական արգանդին մէջ բնակելով՝ ամենամաքուր եւ ամենափառաւոր սրբավայրի մը դարձուցած էր: Իշւ եթէ այն ամէն տեղուանք, ուր արե՛ն է՝ «Աստուծոյ տապանակը հանգչած էր, հանդիսաւոր մեծարանաց արժանի կը համարուէին՝» միթէ Աստուածութեան այս կենդանի տաճարն անհամեմատաբար շատ աւելի յարգանաց արժանի պիտի չըլլայ...: Բայց միւս կողմանէ ո՞վ պիտի չզարհուրէր ենթադրելէ, թէ Աստուած կարող եղած ըլլայ հանդուրժել այն ատպանակին պղծութեան, զոր Իւր Որդւոյն համար «ընտրած էր»¹ կամ թէ Մարիամ կարող եղած ըլլայ վայրկեան մ'ալ դադարիլ պատուելէ ինչ որ Աստուած այն աստիճան յարգելի բրած էր. կամ թէ կարող եղած ըլլայ բնաւ մուռնալ այն նուիրական պարտաւորութիւնը, որուն նկատմամբ խօսած էր Քաբրիէլ շրջապատական

1 Սղմ. ՃԼԱ. 7: — 2 Անդ. 13:

իրբեւ «Գանձի մը, զոր Ինք երբեք պիտի չզոհէր այն վսեմ Մայրութեան, որ Իրեն կաւետուէր»¹:

Ո՛հ, հեռի մեզմէ, շատ հեռի ըլլան այսպիսի մտածմունքներ, որոնք «հաւատոց դէմ ըլլանէն զատ զՄարիամ ալ յանցաւոր պիտի ընէին Իրեն անարժան սրբապղծութեամբ, եւ նաեւ Յիսուսի Քրիստոսի անվայել պղծութեամբ»²: Մանաւանդ թէ միանանք Սուրբ Վարդապետաց հետ, որոնք հանդիսապէս տօնեցին Վուսին սրանչելի անապականութիւնը: Ըսենք Սրբոյն Յերոնիմոսի հետ, «Մարիամ միշտ սուրբ մնաց հոգւով եւ մարմնով, յաւերժաբար Վրդոյն»³: Ըսենք Սրբոյն Ամբրոսիոսի հետ, «Մարիամ է վարդապետ կուսութեան, որուն փառք ոչ երբեք կրեց ո՛ր եւ իցէ նսեմութիւն»⁴: Իւ Սրբոյն Պետրոսի Ոսկեխօսի հետ, «Մարդ-Աստուծոյ ծննդեամբ՝ Անոր անբժութիւնն անեցաւ, Անոր մաքրութիւնը նոր փայլ մ'առաւ, Անոր կուսութիւնն աւելի անեղծ դարձաւ»⁵:

Բայց այս ճշմարտութենէն մեր հոգւոյն համար օգտուէտ դաս մ'առ-

1 Ս. Գրիգ. Նիսւ., Ճառ. Ի Ծնունդն Քրիստոսի: — 2 Պօսիէ, Ճառ. Ի վերայ Խորհրդոց: — 3 Նամակ ժ. առ Եւստաք. յԵզեկ. Գիրք ժ. Գ: — 4 Ի վերայ հաստատութեան կուսւ.: — 5 Ճառ. ՃԽԲ:

նունք: Ամենասուրբ եւ երկրպագելի
 Հաղորդութեան խորհուրդը, ինչպէս
 որ տեսանք, զմեզ այնպիսի խիստ եւ
 պատուաւոր յարարութեամբ կը
 կապէ Յիսուսի Քրիստոսի հետ, որոնք
 զարմանալի նմանութիւն մ'ունին ա-
 նոնց հետ, զորոնք Աստուածային
 Մայրութիւնը յառաջ բերաւ Մարե-
 մայ եւ Բարձրելոյն՝ յաւիտենական
 Որդւոյն մէջ: Ինչու համար ուրեմն
 այս անձառելի միութենէն, այս ան-
 հուն պատուէն չենք օգտիր աւելի եւս
 հաստատուելու առաքինութեան սի-
 րոյն մէջ, անյաղթելի կերպով զօրա-
 նայու զգայարանաց հրապոյրներու
 դէմ...: Ո՛հ, վասն զի Ամենասուրբ
 Հաղորդութենէն յառաջ ըստ բաւա-
 կանի չենք յարգեր Աստուծոյ մեղի
 ըրած շնորհաց վե՛մ արժէքը վասն
 զի հաղորդուելէ վերջը շուտով կը
 մոռնանք ընդունած անհամեմատ շնոր-
 հաց միջատակը: Ի՛չքը սրտանց կը
 հաւատացուի¹», ի՛նչպէս, սուրբ սե-
 ղանին հաղորդակից ըլլալէ յառաջ՝
 առանց ներքին յուզման կրնայ բուսիլ.
 «ո՛չ լի մարդու մը, ո՛չ ու Հրէ-
 րակութիւն մը, այլ նոյն ինքն Աստուծոյ
 բնակութիւն կը պատրաստեմ որտիս
 մէջ²»: Իւ ներքին կերպով Մարդ-

¹ Հոսով՝ Ժ. 10: — ² Ա. Մնաց. Ի. Թ. 1:

Աստուծոյ հետ միանալնս վերջը,
 «ինչպէս Աստուածային զգացմամբ լե-
 ցուելով Աստուած չապրիլ¹»: «Կուսէ
 մը յղացած, Կուսէ մը ծնած կուսա-
 կան մարմնով կերակրուիներնէս վերջը,
 ինչպէս հաւանիլ վայրկեան մ'ալ
 դադարելու մարդը եւ անարատ
 ըլլալէ, առանց կորսնցնելու այսպիսի
 շնորհքի մը յիշատակութիւնը²»:

Ո՛վ Մարիամ, «նոր եղեմ՝ յո-
 րում մաքրութիւնն ամենագեղեցիկ
 ծաղկանց բողբոջէլ կու տայ³»: Որ-
 պիտի ներթողներ կրնանք հիւսել Բու-
 մշտնջենաւոր եւ անբիծ Կուսութեանդ
 փառաց...: «Չյուած հրաշք, ըսենք
 Սրբոյն Եփրեմի հետ, հրաշք անպա-
 տում, անըրցակէզ մարենի, ոսկեղէն
 բուբուսա, յորմէ քաղցրաբոյր խնկոց
 անուշահոտութիւն կը բուրէ, մի միայն
 ամենամաքուր հոգւով եւ մարմնով,
 մի միայն բարձրագոյն ի վեր քան զա-
 մենայն անարատութիւն, ամէն անմե-
 ղութիւն եւ ամէն կուսութիւն⁴»,
 Ո՛հ, շնորհուի մեզ Բու պաշտպանու-
 թեանդ միջնորդութեամբն՝ ապագային
 մէջ բոլոր բերկրութիւննիս հաստա-
 տել յայն առաքինութեան, «որ միշտ
 Բու բերկրութիւնդ կազմեց, եւ որ

¹ Գոսիւ: Մտածական ի վերայ աւտար-
 րանի: — ² Անդ: — ³ Ս. Բարսեղ, Ճառ՝ Լ: — ⁴ Ս. Եփրեմ, ի Ճառս: —

դՔեզ էլ ի յաւիտեան օրհնել պիտի տայ¹»: Ինչպէս որ «ճարաւի եղջերու մը կը վազէ դէպ ի զովարար ջրերը²», մենք ալ բախտաւորքս կընանք հաւաչել այն երկրպագելի խորհրդեան, յորում կը ճաշակուի «ընտրելոց ցորենին հետ, կոյսեր բողբոջեցընող գինին³»: Մանաւանդ թէ անսահման պատիւը, անպատում բախտն ընդունած ատեննիր, մեզ շնորհուի անոր յիշատակութիւնը միշտ ներկայ պահել մտքերնուս առջեւը, եւ «սուրբ ու անստգտանելի⁴» կեանք մը վարել ընդ պաշտպանութեամբ Անոր, սրուն, ո՛հ, ամենատկար սրտով կ'ուղբենք այս աղօթքը,

Անբիծ Մայր, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԺԹ.

Մայր սիրելի, աղօթես մասն մեր:

Սրբզան Էրգոց Էրգը, յորում Հոգին Սուրբ Բանին մարմնալուին Իւր Եկեղեցւոյ Հետ միաւորումը կը ցուցնէ, է միանգամայն փառաւոր նկար մ'այն ամեն յատկութեանց, որոնք ի Մարիամ կը հաստատեն Մօր «Իբ-

1 Յուգիթ, Ժ. Գ. 23: — 2 Սղմ. ԽԱ. 2:
— 3 Չար. Թ. 17: — 4 Կողոս. Ա. 22:

Լ») տխորոք: Այս Աստուածային նկարին մը էրկնաւոր Փեսայն զԱնիկայ մեզ կը ներկայացընէ պէսպէս գոյներով, եւ ամենաընտիր ու պայծառ պատկերներով, զոր օրինակ ծաղկանց, պտղոց, եւ ամենաշքեղ տնկոց: Արուեստով պատրաստուած, եւ կամ ընութենէ գոյացած թանկագին խնկոց, շնորհօք եւ քաղցրութեամբ լեցուն համեմատութեանց, չքնադուլութեամբ պայծառութեամբ եւ գեղեցկութեամբ ապշեցուցիչ հիանալի զարդարանաց: Բայց ինչ որ հոյեղէն է, շատ ստորին է այս սքանչելիպէս սիրելի Մօր. եւ ահաւասիկ Էրուսաղէմի դատերաց բերնովն այնպիսի զարմացման աղաղակով կ'ողջունուի թէ. «ով է ուրեմն ատիկայ, որ արշալուսոյ պէս կը ծագի, լուսնի նման գեղեցիկ, արեւու նման շացուցիչ¹»: Այո, Իւր սիրելութիւնը կարծես թէ օրուան արշալուսին շողողուն գոյները, լուսնին անոյշ պայծառութիւնն եւ աստեղաց թագաւորին յորդառատ լուսաւորութիւնն ունենայ: Ուստի եւ իրաւամբ Սուրբն Եպիփան եռանդուն աշխուժով կ'ըսէ Անոր, «Աստուծոմէ ետքը Դուսն ես առաջին գեղեցկութիւնը, Բերովբէից, Սերովբէից եւ Հրեշտակաց բոլոր դասերուն գեղեցկութիւնը քու-

կինիդ քովը կը նսեմանայ¹։ Որչափ
աւելի հապա կը խաւարին Հռեփեկայ
եւ Հռաքելի գեղեցկութիւնները։
Եսթերայ քաղցրատես յանկուցումը,
եւ Յուդիթայ շքեղ վայելչութիւնը,
գործը մեծ պատուով կը յիշատակէ
Սուրբ Գիրքը²։

Բայց զգայարանաց հաղորդած եր-
կնային գաղափարներու վրայ կանկ
չառնունք։ Թագաւորաց թագաւորին
ամենասիրելի Գատեր այս գեղեցկու-
թիւնը, այս անձառելի սիրելութիւնն
«ամբողջապէս Անոր Հոգիէն յառաջ
կու գայ³», եւ այն ամէն անգին պա-
րագաներէն, որոնցմով Աստուած
Չինքը զարդարեց։ Եթէ մարդիկ կա-
րող ըլլային տեսնել թէ ինչ է սրբ-
բարար շնորհօք զարդարուած հոգին,
այնչափ գեղեցիկ պիտի գտնէին զանի-
կայ, որ անտարբեր աչքերն անդամ
լինքն գրաւէր։ Եւ եթէ ըսածնիս
ճիշդ է ամէն այս անգին գանձը վայ-
ելի հոգւոց նկատմամբ, հապա ինչ-
պիսի պիտի ըլլայ անոնց գեղեցկու-
թիւնը, որոնք իրենց հաւատարմու-
թեամբ, նախանձայուզութեամբ եւ
եռանդեամբն ամէն օր, եւ այսպէս
ըսելու համար, ամէն վայրկեան ար-

¹ Ճառ՝ ի դովեստ Ե. կու սին։ — ² Ծննդ.
Ի. Գ. 16։ Անդ. ի Թ. 17։ Եսթ. Բ. 7։
Յուդիթ, Ը. 7։ — ³ Սղմ. Խ. Գ. 14։

ժանի են այս երկնային սքանչելի
պարգեւին ամման, եւ քրիստոնեայ
հոգւոյն այս փառաւոր եւ Աստուած-
ային պաճուճանաց։ Հապա ինչ գա-
ղափար ունենալ պէտք է Մարեմայ
ներքին գեղեցկութեան եւ գերբնական
սիրելութեան վրայ։ Իւր Հղութենէն
ի վեր, Ինք շնորհաց հեղուժը բոլոր
արարածներուն վայելածէն շատ աւելի
գերազայն աստիճանի մէջ ընդունած
էր։ Իրօք Աստուած Իւր յաւիտենա-
կան խորհրդովք բոլոր արարածոց մէջ
չԱնիկայ Իրեն Մայր ըլլալու նախը-
տրած ըլլալով, Ի հարկէ պէտք էր որ
Իւր սկիզբէն ամէնէն աւելի Աստուծոյ
հաճելի ըլլար, եւ Իրեն որոշուած ան-
զուգական արժանապատուութենէն
ստորին չգտնուելու համար, մեզմէ
շատ աւելի պէտք էր մտքով եւ սրտով
Աստուծոյ հետ կապուած միացած եւ
փութաջան ըլլար Աստուածային սիրոյ
նորանոր ներգործութիւններով Իւր
գանձը շարունակաբար աւելցնելու։
Ոչ որ ուրեմն կրցաւ Անոր չափ հա-
րստանալ ամէն վայրկեան գերբնա-
կան գեղեցկութեան նոր յաւելմամբ։
Ոչ որ կրցաւ Անոր չափ ստանալ
շնորհաց այսպիսի առատութենէ ան-
բաժանելի առաքինութիւնները։ Եր-
բեք ուրեմն չգտնուեցաւ սիրտ մ'այս-
պէս խոնարհ, համբերող, գորովա-
լից, կարեկից, մարդասէր։ Բնաւ

չտեսնուեցաւ սիրտ մ'ասանկ ազնիւ,
եռանդուն, մաքուր, ազնուականաբար
բարձրացած, մեծ եւ իւր Աստուած-
ային Որդւոյն երկրպագելի սրտին այն-
պէս մտեցած:

Սորվինք ուրեմն Մարեմայ պէս ամէն
բանէ յառաջ սիրել ինչ որ ճշմար-
տապէս է միայն սիրելի Աստուած, եւ
Անոր հաճելի ըլլալու եւ հետը միա-
նալու միջոցները: Սորվինք Անոր պէս
անարգել արտաքին գեղեցկութիւնը,
որ կը թարշամի, կը գունատի, կը
ցամքի, եւ վերջապէս մահուան հա-
րուածին տակը կ'իյնայ, ուրիշի տեղի
տալու համար, որ չափէն աւելի տհա-
ճոյ ու սոսկալի է: Սրտերնիս ամէն
ջանքով փակցընենք ներքին գեղեց-
կութեան, հոգւոյ գեղեցկութեան, որ
զմեզ շատ սիրելի կ'ընէ Աստուծոյ
առջեւը, անանկ որ շնորհաց վիճակի
մէջ ամէն մեռնող հաւատացեալ
ընդունուած է Անկից ի փառս եւ
յերանութիւն իւր: Աւերջապէս յի-
շէնք որ հոգինիս երկնից արքայու-
թեան արժանացընելով՝ մարմիննիս ալ
անոր կ'արժանացընենք, եւ թէ հե-
տեւաբար ինչ որ կ'ընենք ի ժամանա-
կին հոգիներնուս գերբնական գեղեց-
կութեան համար, կ'ընենք ոչ միայն
յօգուտ իւր յաւիտենական երանու-
թեան, այլ նաեւ յօգուտ մարմիններ-
նուս յաւիտենական փառաւորութեան:

Ո՛վ Մարիամ, Ամենակարողն հրա-
շակեալ, սրչափ հիանալի է Քու գե-
ղեցկութիւնդ յայս հաւատոյ: Այո՛,
Դուն արժանի ես սքանչելապէս կու-
չուելու «սիրելի Տեառնն»: Վասն զի
չարդարուած ես այն ամէն ա-
ւաքինութիւններով եւ կատարե-
լութիւններով, «որոնք կրնան ա-
րարած մը սիրելի ընել»²: Որչափ
անուշ կու զայ մեզ, ո՞վ սիրեցեալ
Մայր՝ Քեզ ջերմեռանդն ծառաներուդ
մէկուն հետ հռչակելը թէ. «Դուն կը
յափշտակես Քու վրադ մտածող հո-
գիները»³: Որչափ քաղցր է մեզ՝
յարատեւաբար՝ ըստ Քու արժանեացդ
զՔեզ սիրելու անկեղծ բաղձանքնիս,
Քեզ հաւաստելը, եւ Քեզ նման ամէն
բանէ աւելի նախամեծար համարելու
հոգւոյն գեղեցկութիւնը, եւ անդու-
կերպով աշխատելու որ զայն աճե-
ցընենք սիրոյ եռանդեամբ: Օրհնէ այս
բաղձանքնիս, ո՞վ Աստուածային Մայր
եւ գործադրութիւնն ընդունելու հա-
մար,

Սիրելի Մայր, աղօթէ մեզի համար:

1 Բ. Թագ. Ժ. Բ. 25: — 2 Փիլիպ. Դ. 8:
— 3 Ս. Բեռն. ի Մասած. ի վերայ Ողջ լեր:

ՄՏԱԾԱԿԱՆ Ի

Մայր սքանչելի, աղօթես լիսան մեր:

Մարդ ի գործ գրաւ ինչ որ Աստուած յանձնեց անոր համբերատար ճարտարութեան, ուստի եւ սքանչելի բաներ արդիւնացուցած է: Իւր հանճարոյն յաջող ջանքովն ամենաբմբոստ տարրներ, մինչեւ անդամ լոյսն իւր հանճարեղ գործանէութեան հպատակեցուցեր է: Խնք զբմբանալի գործեր բրած է, որոնք արժանի են արուեստի մէջ գեղեցիկն եւ գերազանցին զգացումն ունեցողներուն հիացումը գլուխէն: Բայց ինչ են մարդկան հրաշակերտները համեմատութեամբ անոնց, զոր Աստուած իւր ամենակարող կամաց միայն մէկ հատիկ ներգործութեամբ յառաջ բերած է: Եւ նոյն իսկ արարչագործութեան հրաշակերտներն ինչ են համեմատութեամբ սքանչելի Մօր:

Աստուած, իրաւքննէ իւր զբոլորութեան անսահման դանձէն հանած է աւելի հիանալի եւ տեսակ տեսակ հրաշալիք: Զասոնք ցանած է անջըրպետին մէջ, ինչպէս հողը դաշտերուն մէջ: Երկիրը զարդարած է այնպիսի արարածներով, յորս փափկութիւնն ու զօրեղութիւնը կը նշմարուին բար-

ձրագոյն աստիճանի մէջ: Երկինքը պաճուճեց կապոյտ արծաթեայ եւ ոսկեայ գոյներով: Ի տիեզերս հակառակ տարերաց մէջ ամենատերտ յարմարութիւնը հաստատեց, եւ անոնց տարբերութեան մէջ միութիւն, եւ յարատեւութեան մէջ զեմօ օրինաց ամենիմաստուն միաւորութիւնը յօրինեց: Մարդն ստեղծեց, որ բնութեան թագաւորն է, աշխարհիս հրաշալեաց կենդանի համաւոտութիւնը: Այսու ամենայնիւ ալ աւելին ըրաւ ստեղծելով զՄարիամ սքանչելի Մայրը, սքանչելի ի մեծութեան եւ յառանձնաշնորհութիւնս իւր, սքանչելի իւր Աստուածային Մայրութեան միակ հրաշքովը, սքանչելի ինչպէս այն մեծաշուք եւ անհամեմատ աղքեցութեամբը որ իրեն տրուեցաւ մարդկային սերնդեան բախտին վրայ, եւ որ կը շարունակէ իւր գործակցութիւնը մեր փրկութեան համար, այսպէս նաեւ իւր միջնորդութեան անանկ տարածուած իշխանութեամբ, ըստ որում կարծես թէ բոլոր տարերք իրեն հպատակ են: Անոր աղօթքովը ժանտացած օդը կը կորսնցրնէ իւր վնասակարութիւնը, հրդեհն առ կախ կը թողու իւր աւարտութիւնը, բարձրացած արկերնը կը ցածնան եւ ամուլ երկիրը իւր արգաւանդութիւնը կը ստանայ: Մարիամ է միանգամայն Աղոյս եւ

Մայր, շնորհօք պերճացած բնութեան հրաշալիքը, է արարած եւ Բարձրելոյն Մայրը: «աղախին եւ Մայր Աստուծոյ¹»: Անկեալ Եւային դուստրն է եւ ճշգրիտն Եւա, «ճշմարիտ մայր կենդանեաց²»: Մարիամ է Արարչին բարութեան, սիրոյն, ողորմութեան եւ զօրութեան զանգուածը «Անոր անհմայի կատարելութեանց համաօտութիւնը³»: Կ'ըսէ Անդրէաս Կրետացին, Աստուծմէ ետքը Ինքն է կաթողիկէ տիեզերաց բաղձանաց եւ դովութեանց նպատակը: Ինքն է ըստ հաւատոյ սքանչելապէս Սուրբը, անբաժանելի Մարգ-Աստուծմէ: Անոնց անուններն ամէն օր կրկնուած են ամէն շրթունքներէ: Ի պատիւ Եոզաարեւելք եւ արեւմուտք միշտ միացուցած են եւ միշտ ալ պիտի միացընեն իրենց երգերն ու մեծարանքները:

«Ամենակարոյն ուրիշ չափանոց մեծ բաներ բրած է⁴» այս անհամեմատ Կուսին համար: Աստուած զԱնիկայ այնպիսի հրաշալի կերպով փառաւորած է յերկինս եւ յերկրի, որ, ըստ Սրբոյն Կիւրղի եւ Բեռնարդոսի «ամենաճարտարախօս լեզուներն ան-

¹ Գուկ. Ա. 43: — ² Ծննդ. Գ. 20: —
³ Ճառ. Բ. Ի Փոխ. Ս. Կ.: — ⁴ Գուկ. Ա. 49:

գամ Անոր նախամեծարութեան վրայ խօսած ատենին, թոթովելէ զատ ուրիշ բան չեն կրնար ընել¹»: Բայց միթէ մենք հոս Աստուծոյ այս կատարեալ գործոյն համար միայն սքանչանաց խոր զգացմամբ պիտի շատանանք...: Նայուածքնիս նոյն իսկ մեր վրայ դարձընենք: Հաւատոյ աչքերով լաւ մ'ինք զինքնիս զննենք, միթէ ի մեզ ալ սքանչելիք մը չի գտնուիր: Միթէ զմեզ ալ Աստուած ճշմարտապէս սքանչելի չըբաւ: «Մենք մեր ծննդեամբը բարկութեան որդի էինք²», եւ «սիրոյ որդի դարձանք³»: Երկնային Հօր սիրոյն եւ գորովազութիւնամոյն առարկայ: Աւելի եւս: Մենք ամենափոքր եւ ամենանարգ մահկանացուներն շնորհաց եւ Ամենասուրբ Հաղորդութեան միջոցաւ բարձրացանք մինչեւ ցգերագոյն կեանս Հրեշտակաց երկնից Աստուածային կենաց: Որոշուած ենք ի յաւիտեան վայելելու ամենալուսեմ փառք մը, նոյն ինքն Աստուծոյ փառքը, ըստ որում գրուած է թէ «Անոր նման պիտի ըլլանք⁴», եւ թէ «Անոր հետ պիտի թաղաւորենք յաւիտեանս յաւիտենից⁵»: Ո՛հ,

¹ Ս. Կիւրղի, Ճառ. ընդդէմ Նեստորի:
 Ս. Բեռն. Ի Պաղատանս առ Ս. Կ.: —
² Եփես. Բ. 3: — ³ Եփես. Ե. 1: —
⁴ Ա. Յովհ. Գ. 2: — ⁵ Յայտ. Ի. Բ. 5:

ե թէ հաւատոյ այս փառաւոր վարդապետութիւնները սրտերնուս խորը թափանցած ըլլային, սրչափ մեծ եւ առատ պիտի ըլլային մեր առ Աստուած զգացմունքը: Որչափ աւելի վարքերնիս պիտի համապատասխանէր Անոր մեզ ըրած էրախտեաց, եւ մեր յուսոյն բարձրութեան:

Գուեն, ո՞վ Մարիամ, ես եւ պիտի ըլլաս միշտ սքանչանց արժանի, ոչ միայն Քու մշտնջենաւոր եւ հրաշափառ Կուսութեանդ համար, որուն օրինակն յայտնուեցաւ Մովսէսի՝ «Աստուծոյ լեռան գլուխը՝» ալլ նաեւ Քու արտօնութեանցդ եւ շնորհացդ առաւելութեան պատճառաւ, որոնցմով Աստուած զՔեզ ճոխացուց, այն մասնաւոր փառաց համար, որով զՔեզ փառաւորեց. «քանչէրի՞»: Այո՞, ասիկայ է այն յատուկ անունը, որով ուզեց երկնաւոր Հայրը, որ կուչուի Իւր Աստուածային Որդին: Այո է այն անունը, զոր Քեզ կու տայ Եկեղեցին իբրեւ Անոր, որ աւելի եւս կը մօտենայ Մարդ-Աստուծոյ զարմանալի մեծութեանց, եւ որ լաւագոյն եղանակաւ Անոր փառքը կ'արտափայլէ: Օգոստոսփառ առարկայ աշխարհի մեծամեծաց եւ իշխանաց

1 Եւբ, Գ. 1: — 2 Իսայի, Թ. 6:

զարմացման: «Ո՞վ Գուեն, որուն զեւրազանցութեան վրայ ոչ որ կրնայ ըստ բաւականին հիանալ՞»: Ո՞հ, զգայուն ըրէ սրտերնիս այն մեծութեան հրաշալեաց, ուր հաճեցաւ Աստուած բարձրացընել զմեզ նաեւ այս աքսորանաց ու փորձութեան վայրը. նոյն իսկ մեր ջանքին եւ աշխատութեանց խոստանալ հաճած երկնային փառաւորութենէն շատ աւելի զարմանալի հրաշալեաց: Քու միջնորդութեամբ ըրէ որ արժանի ըլլանք այսպիսի վեժմ եւ փառաւոր նպատակի մը հասնելու:

Աքանչելի Մայր, աղօթէ՛ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԻՒ.

Մայր Աշխարհիս, աղօթես յստն մեր:

Արարչութեան Աստուածային գործը մեր իմացականութեան աչքին ամէնէն մեծ եւ ամէնէն զարմանալին է: Պարագ տեղ կ'աշխատի քննել եւ իմանալ ոչնչին առ գոյութիւն անցքը. ասիկայ գաղտնիք մ'է, զոր Աստուած Իրեն վերապահած է. եւ որ միշտ մարդկային հանձարոյն հետազօտութենէն պիտի խուսափէ: Աստուած ուրեմն, որ ուրիշ տեսակէտներով այնչափ մեծ է, սակայն տիեզերաց ա-

1 Իմաստ. Ը. 11: — 2 Սիրաք, ԻԳ. 20:
8*

րարչութեան տնտրոսով իւր ամենա-
կարող զօրութեանը լլուծեամբ ինք
զինքը կը ցուցնէ մեզ: Եկեղեցին ալ
այս ճշմարտութեան խորը թափանցե-
լով հոս մեզ զՄարիամ Աւուրչեան Մօր
անուամբ կոչել կու տայ, որպէս զի
հոգինիս Անոր վրայ ունենալիք ամե-
նավեմ գաղափարին կարող ըլլայ
բարձրացնել:

Մայր Աւուրչեան: Անմիջապէս հակա-
սութիւն մը չ'երեւար արդեօք այս
երկու բառերուն մէջ: Ի՞նչպէս, միթէ
առուակը կրնայ ծնանել իւր աղբ,
գործքն իւր հեղինակը: Ո՞վ երբեք
տեսաւ, ո՞վ բնաւ լսեց այսպիսի բա-
ներ...: Անտարակոյս եթէ ի Յիսուս
Քրիստոս միայն Աստուածային բնու-
թիւն գտնուէր, այս տնտրոսը չէր
կրնար յարմարիլ Ամենասուրբ կու-
սին: Աստուածութիւնն ըստ ինքեան
կայ ի յաւիտենից, ինք իրմէ զատ
ուրիշ սկիզբ չունի. բայց «Բանն
մարմն եղեւ», եւ Մարիամ անմասն
հրաշքով Մայր եղաւ Անոր մարգ-
կային բնութեան: Արդ Բանն ալ Ա-
րարիչ է Հօր եւ Հոգւոյն Սրբոյ պէս,
վասն զի այս երեք երկրպագելի Անձինքը
փաստեղ կ'արդիւնացնեն արարածներն
իբրեւց կամաց անբաժանելի ներգործու-
թեամբը:

1 Յովհ. Ա. 14:

Գոչենք ուրեմն Սրբոյն Պետրոսի
Ոսկեխօսի հետ. «այս, ասուգիւ Մա-
րիամ՝ ծնաւ զԱնիկայ, որ զնոյն ինքը
ստեղծեց եւ աշխարհի մէջ գրաւ»,¹:
Ուղղենք Անոր մեր ջերմագին խնդա-
կցութիւնները մի եւ նոյն Սուրբ Վար-
դապետին հետ ըսելով. «Ի յաւիտեան
օրհնեալ ըլլաս. Բու Արարիչդ բա-
րեհաճեցաւ ամենամաքուր արգանդիդ
մէջ յղանալ: Բու առաջին սկիզբդ
ուզեց իւր ծնունդը քեզ պարտական
ըլլալ: Բու Աստուածային Հայրդ
զիջաւ Բու Որդիդ ըլլալու: Բու Աս-
տուածդ հաճեցաւ մարմն առնուլ
Բու իսկ մարմնեդ»²: Սակայն որուն
համար Արարիչն ամենայնի զՄարիամ
այսպիսի մեծ փառաց բարձրացուց...:
Սեղ ամեննուս համար: Անոր միջոցաւ
աշխարհ եկաւ ամեննուս սրտին մէջ
արարչագործութենէն գուցէ շատ աւելի
մեծահրաշ փոփոխութիւն մը գործե-
լու համար: Ի սկզբանէ «Աստուած
ըսաւ, եւ ամենայն ինչ եղաւ»³: Ո՞վ
կրնար դէմ կենալ Անոր խօսքին ամե-
նակարող զօրութեանը: Բայց Յի-
սուսի Քրիստոսի արդեամբը մեզի
տրուած շնորհաց զարմանալի գործու-
ղութեան մէջ Աստուած թող կու
տայ որ աղատութիւննիս կարող ըլլայ

1 Ճառ՝ ճխԳ: — 2 Ճառ՝ ճխԲ: —

3 Սղմ. ճխԸ. 5:

արգելք դնել, որպէս զի արդիւնք շահելու կարող ըլլանք, եւ ասանկով շնորհքը յազմանակելով մեր ազատութեան վրայ, եւ միանգամայն յարգելով զայն, եւ արդիւնաւոր կերպով գործելու թողլ տալով բան մը յառաջ բերէ, որ ինչ ինչ տեսակէտներով նախնական արարչութեան գործէն մեծագոյն կրնայ բուռիլ:

Գուցէ ասիկայ է, զոր Սուրբ Պողոս Առաքեալը կ'ուզէ մեզ հասկըցընել երբ նոր արարած բառերը կը գործածէ քրիստոնէութեան շնորհք մարդուս փոփոխակերպութիւնը մեկնելու համար: «Եթէ կայ մէկ մը ի Յիսուս Քրիստոս, կը գրէ առ Կորնթացիս, է նոր արարած¹»: Եւ առ Գաղատացիս, «ինչ որ պէտք է ի Յիսուս Քրիստոս, է նոր ըլլալ, զոր Ինքն ի մեզ կը ստեղծէ²»: Աւաղ, մենք չենք տեսներ այս նոր երբեք. եւ ասոր համար է որ նորութիւնն յառաջ բերող Աստուածային զօրութեան հրաշալի գործքն այնպէս քիչ կ'ազդէ վրանիս: Եւ դարձեալ, ըստ որում, յորրանէ ի վեր վարժած ենք ուրիշ կերպով չճանչնալ մարդկային բնութիւնը, եթէ ոչ մկրտութեամբ ըստ իմիք պլակերպուած, անոր համար ալ քիչ կը յարգենք երախտիքը: Որովհետեւ փորձով

1 Բ. Կորնթ. Ե. 17: — 2 Գաղ. 2, 16:

չենք գիտեր թէ ինչ ըսել է սկզբնական նուաստութեան տխուր ազդեցութեան տակը մեծնալ եւ յառաջանալ ի կեանս առանց դարմանի, եւ առանց գերբնական օգնականութեանց: Ո՛հ, շատ լաւ կը ճանչնային այն նորագարծ հեթանոսները, որոնց կ'ըսէր մեծ Առաքեալը, խանգարեալ բնութեան նուաստացողիչ արդեանց նկարագրութիւնն ընելէն ետքը, «ասաւասիկ ինչ էինք ատեն մը. բայց դուք լուացուեցաք, սրբուեցաք, արդարացաք յանուն Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի¹»:

Ստեպ ուրեմն, ստեպ մտածենք թէ ինչ պիտի ըլլայինք առանց մկրտութեան, եւ առանց այն այսպէս զարմանալի օգնականութեանց, որոնց արդիւնք ինքը բացաւ: Անհաւատներու հետ ինք զինքնիս համեմատենք. «որոնց Աստուած մեզի տուած մի եւ նոյն շնորհքը չըրաւ²»: Եւ սրտերնիս անպահեստ թող տանք այն ամէն զգացմանց, զոր կրնայ ազդել ամենասրտագին երախտագիտութիւնը:

Հաճէ՛ մեզ հասկըցընել ո՞վ Մարիամ, թէ որպիսի երախտագիտութիւն եւ սէր կը պահանջէ մեզմէ այն դարմանալի փոփոխութիւնը, զոր Բուստուածային Որդւոյդ շնորհքը կը

1 Ա. Կորնթ. 2, 11: — 2 Սղմ. Ճիւղ. 20:

գործէ ի մեզ: Անճառելի երախտիք մը, որ մեզ մեր բնութեան սահմանէն անցնել կու տայ բարոյական զեղեցկագոյն կարգէն անհամեմատաբար շատ աւելի զերազանց գերմարդկային կարգ մը: Ի տես «մկրտութեամբ նորոգութեան»¹, եւ անոր երջանիկ հետեւութեանց, որուն յարգն անուն չունի, «սրտերունս պէտք էր որ բորբոքէր. եւ մենք ալ զարմանքով լեցուէինք»²: Ո՛հ, այսու ամենայնիւ մենք սառած, ապերախ եւ կամաւ մեղաւոր ենք: Մի թողուր, ո՛վ Մարիամ, որ աւելի երկար դանդաղինք «Աստուծոյ ապու ինչ որ Աստուծոյ կը պատկանի»³. Արարչին նուիրելու, որուն մեծվայելութիւնը քու արգանդիդ մէջ հանգչեցաւ⁴ այն զգացմունքնիս, զոր այնչափ պատճառներով Անոր պարտական ենք, եւ որպէս զի այսուհետեւ իրեն երախտագէտ եւ միշտ հաւատարիմ՝ ըլլանք,

Ստեղծողին Մայր, աղօթէ մեզի համար:

¹ Տիւ. Գ. 5: — ² Սղմ. ՀԲ. 21: —
³ Ղուկ. Ի. 25: — ⁴ Սիրաբ. ԻԳ. 12:

ՄՏԱԾԱԿԱՆ ԻԲ.

Մայր Փրկչին, աղօթես զսան մեր:

Ահաւասիկ Մարեմայ, իբրեւ Մայր մտածելով աւելի սրտաշարժ տիտղոսը, սահաւասիկ քրիստոնէական բարեպաշտութեան առ ՚հա նուիրած սիրելագոյն տիտղոսը: Մայր Փրկչն, այսինքն, ո՛վ Գուեն, որ Աստուածային մարդեղութեան գործակցութեամբ մեզ տուիր զԱնիկայ, որուն Յիսուս անունն արդէն Գարրիէլ Հրեշտակապետը կանխաւ յայտնած էր Սուրբ Փետայիդ. «Ինք որ պիտի փրկէր ժողովուրդն իրենց մեղքերէն»¹: Մայր Փրկչն: Ո՛վ Գուեն, որուն պարտական ենք զԱնիկայ, որուն երկրպագելի անունն անգագար պէտք էր կրկնել սրտերնուս ամէն մէկ բարախումբ՝ եթէ ի խոր զգայինք առ քու Աստուածային Որդիդ ունեցած պարտաւորութիւննիս: Ուրեմն որպէս զի աղէկ մը կարենանք հասկընալ թէ ինչ է Մարիամ մեզի համար. ջանանք լաւ յարգել ինչ որ է մեզի համար այս քաղցր Փրկչիք. զոր ինք աշխարհի տուաւ:

Երկու բան ս եւ է ծառայութեան արժէք կու տան, նիւթին կարեւա-

¹ Մատթ. Ա. 21:

բութիւնն եւ զայն ընելու յօժարա-
մտութիւնը: Ո՞վ ուրեմն, սրչափ ան-
գին, սրչափ մեծարգի է այն ինչն որ
մենք Մարեմայ երկրպագելի Որդւոյն
պարտական ենք:

Առանց այս Աստուածային Փըրկ-
չին, ինչ պիտի ըլլար յաւիտենական
վիճակնիս: Հոգին Սուրբ զմեզ խեղա-
մուտ ընելու համար, «յաւիտենական
մահ՛» կ'անուանէ, ըսել կ'ուզէ ան-
վերջանալի վիճակ մը, եւ յորում
մահուան սարսափներն ամէն վայր-
կեան կը նորոգուին, ուստի եւ ա-
նանց կեանք մը, բայց զուրկ ի գերա-
գոյն բարւոյ, զԱստուած վայելելու
անդադար եւ անսահման բաղձանքով.
բայց երբեք ձեռք չբերելու ստուգու-
թեամբ, յաւիտենական տանջանք-
ներու դատապարտուած յաւերժա-
կան կեանք մը²...: Բայց իբրու թէ
այսպիսի աղետալի վիճակէ մը զմեզ
ազատելու չբաւէր, Յիսուս շահեցաւ
մեզի համար «որ մ'իբեն ճետ երկինքը
նստելու³», Իւր փառքը վայելելու⁴,
իբեն ճետ՝ ի յաւիտեան ապրելու եւ
թագաւորելու⁵ եւ ի յաւիտեան իբեն
նմանելու⁶ անգին օգուտը: Այսինքն
մշտ երջանիկ ըլլալ, մարդկային
խօսքէ, մտածմունքէ եւ բաղձանքէ

¹ Բ. Թեոաղ. Ա. 9: — ² Աղ. 1: —
³ Եփես. Բ. 6: — ⁴ Հուով. Ը. 17: —
⁵ Բ. Տեմ. Բ. 12: — ⁶ Ա. Յովհ. Գ. 2:

շատ վեր երջանկութեամբ: Եւ այս
կրկին ծառայութիւնը մեզ ըրաւ
անձնանուերութեան անշահախնդիր եւ
աղնուական զոհողութեամբ:

Ինչ էինք մենք Յիսուսի նկատ-
մամբ, որուն սիրան ազդէր Իրեն
փրկութիւննիս Իւր արեան միջոցաւ
հոգալու: Միթէ պատուական եղբայր-
ներն էինք, որոնց համար անսոյշ կու
գայ զոհողութիւն մ'ընելու: Ո՞չ,
ստուգիւ ոչ...: Միթէ սիրելի բա-
րեկամներն էինք, որոնց բարեբախտու-
թիւնը սրտագին շահ մ'ազդէր: Եւ
ոչ...: Գոնէ իբրեւ օտար իրենց ա-
ռաքինութեան կամ դժբախտութեան
համար կարեկցութեան արժանի ըլլալ-
ինք: Բարէ, եւ ոչ ստիկայ: Մենք
պարզապէս եւ միայն ողորմելի եւ մե-
ղաւոր արարածներ էինք, Անոր մէկ
նայուածքին անգամ անարժան. եւ
որոնցմէ որ ինք եւ ոչ հասարակ եւ
բախտագիտութեան մը կընար սպա-
սել: Ինչ կ'ըսեմ: Ինք անտեղեակ
չէր, որ Իւր ընդունելիք բոլոր փոխա-
րինութիւնը շատ անգամ պիտի ըլլար
ողբալի պաղութիւն մը, եւ կամ
թշնամանաց, ո՞չ, չափազանց կամաւոր
յաճախութիւն մը: Այսու ամենայնիւ
ինք զմեզ «մինչեւ ցմահ եւ ցիւալի
մահ սիրեց՛»: Սիրել եւ գիւցաղնա-

բար սիրել զանհկայ, որ երբեք չի սիրեր, եւ բնաւ օրինաւոր երախտագիտութեան ցոյց մը պիտի չտայ: Ինչպիսի՞ սէր...: Բայց զո՞հուիլ այնպիսւոյ մը համար. յորում թշուառութիւն եւ անզգայութիւն միայն կը գտնուի, եւ յորմէ միայն սեւ ու խտտասիրտ սպերախտութիւն կը յուսացուի, ասկից աւելի մաքուր, զօրաւոր եւ մեծանձն սէր կարելի՞ է երեւակայել:

Ե՛րբ ուրեմն պիտի հատուցանենք ինչ որ պարտական ենք մեր Փրկչին սիրոյն: Մենք որ սպերախտներէ կը զարչինք, ե՛րբ պիտի դադարինք սպերախտ ըլլալէ: Ստուգիւ պիտի սիրէինք այն մարդը, որ իւր օրերուն վտանգոյն ազատէր մարմնաւոր կեանքերնիս, ասանկ տկար, ողորմելի, դառնութեամբ եւ արցունքով լեցուն կեանքերնիս, որուն երախտադէտ ըլլալնիս զմեզ պիտի զայրացընէր. իսկ զանհկայ նախատելը զմեզ պիտի սարսափեցընէր: Ո՛հ, որչափ ուրեմն յանցաւոր ենք Մարեմայ երկրպագելի Որդւոյն դէմ, որ ամենամանարգ եւ ամենադժնդակ մահուամբն զմեզ ազատեց յաւիտենական ամենաթշուառ դժբախտութենէ, եւ ամենաներջանիկ յաւիտենական վիճակի արժանացուց: Բայց որչափ աւելի յանցաւոր պիտի ըլլայինք, եթէ սրտերնիս չարժեւոր

այսչափ յարմար ճշմարտութեանց վրայ մտածելէ վերջը, զանայինք նաեւ այնչափ պատճառներով նուիրական եղած պարտաւորութիւննիս կատարել: Չըլլանք ուրեմն, այսուհետեւ ըլլանք մեզի. որովհետեւ «մենք մեր չենք՝ ու այլ Անոր, «որ այնպիսի ծանր գնով գնեց»² մեր սէրը, մեր հաւատարմութիւնն ու մեր մեծարանքը:

Ո՛վ Մարիամ, Քու Փրկչին Մայր ըլլալու յատկութիւնդ, չարչարանք կատարուած մարդկային փրկութեան դործոյն ընկերակից կընէ զՔեզ, որուն ցաւալի գործիքները, որոնք կը յիշեցընեն Անոր եւ Քու կրած վտերնից, ճարտարախօս լեզուաւ կը խօսին ամէն զգայուն սրտի: Սէր, ո՛հ, արժարծուն սէր, անբեծ եւ յաւիտենական սէր առ Յիսուս, Յիսուսէ ետք Քեզ, Ամենասուրբ Կոյս, վառվառն եւ հաւատարիմ սէր մինչեւ կեանքերնուս վերջին շունչը: Օգոստափառ եւ սիրեցեալ Մայր այն Աստուածային Որդւոյն, որուն Հրեշտակ մը «Փրկել»³ անունը յայտնեց հովիւներու, զորոնք հրաւիրեց այցելելու Անոր խանձարոյն, եւ ծննդեան երկրպագութիւն ընելու: Ո՛րչափ աւելի Անոր պատշաճ է այս Փրկել աշխարհի տիրոջս, որչափ

1 Ա. Կորնթ. 9, 19: — 2 Անդ, 20:
— 3 Դուկ. Բ. 11:

աւելի իրաւամբ Անոր կը պատկանի քան թէ «գեղեցիկ Յովսէփին Եգիպտոսի՝ Փրկչին»¹։ Յովսէփ Փարաւանի ժողովրդեան ըրած մէկ ծառայութեանը համար, եւ առանց անձնական մէկ զըհողութիւն մ'ընելու այս տիրադրսին արժանացած էր։ Մինչդեռ Յիսուս սոյն անունն Իւր երկրպագելի ճակատին վրայ Իւր արեամբը գրուած կը կրէ։ Ըրէ, ո՞վ Մարիամ, որ սըրտերնիս Անոր վերագարձընէ եթէ արեան փոխարէն աբիւն ոչ, դոնէ սիրոյ փոխարէն սէր, որ Իրեն «փոխարինէ ճշմարիտ սէր մը, որ գործքերով կը յայտնուի»²։

Փրկչին Մայր, աղօթէ մեզի համար։

ՄՏԱԾԱԿԱՆ ԻԳ՝

Կոյս իմաստուն, աղօթեալիսսն մեր։

Եկեղեցին մեզ ի Մարիամ, Անոր Մայրութեան բոլոր մեծութիւնները պատուել տայէ վերջը, իբրեւ Արյս գովել կու տայ զԻնք, եւ ամէն բանէ յառաջ մեր յարգանաց կը ներկայացընէ Անոր խոհեմութիւնը, որ զԻնքը մատնանիշ կընէ բոլոր Եւայի ամենակատարեալ անդամ գտերացը մէջ։

¹ Ծննդ. ԽԱ. 45: — ² Բ. Յովհ. Ա. 6:

Իւր մատաղ հասակէն ի վեր կը փախչի աշխարհի ապականած մթնոլորտէն՝ երթալու եւ Տաճարին մարուր օգը ծծելու համար։ Ամենաղուշաւոր խոհեմութեան պահպանութեան տակը կը դնէ սիրտ մը, որ եւ ոչ կերպով մ'աշխարհի հրապոյրներէն վախնալու բան մ'ունէր, վասն զի Տէրը կը տիրէր Անոր Իւր Յղուէնէն ի վեր, եւ ոչ այլ թոյլ կու տար որ ճանչնայ յանկութեան վտանգները եւ ոչ ալ յարձակումները։

Երկնային իշխանի մ'ամենափառաւոր պատգամը բերած ատենը, Մարիամ կը խռովի։ Այնպիսի առանձնական կենաց եւ զգաստութեան վարժած է որ՝ «մահականացուի մը կերպարանքն առած Հրեշտակի մը ներկայութիւնը, կըսէ Սուրբն Ամբոսիոս, բաւական եղաւ Անոր երկիւղած վախ մ'աղղելու»¹։ Եւ այս երկիւղը կը կրկնապատկի երբ Անոր բերնէն կը լսէ պնպիսի արժանապատուութեան աւտիք մը, որ բնականապէս անյարմար էր Իւր ըրած եւ սրտին ամենսիրելի եղած ուխտին։ Ան ատենը, (ո՞վ էրօք զարմանալի խոհեմութիւն), Մարիամ Իւր մտածմունքն Ատուածային Մայրութեան փառաց վրայ հանդէսցընելէ

¹ Ծառ. ի վերայ պաշտօն. Գիրք Ա. ԳԼ. Ը։

հեռու, կը մտածէ միայն նախ քան հաւանութիւն տարն իւր խիղճը լուսաւորել: Ինք պարկեշտ անկեղծութեամբ իւր վարանմունքը կը յայտնէ Հրեշտակին: Էրկնային պատգամներն իրեն մեկնութիւն տալով զինքը կ'ապահովէ, եւ իսկոյն առանց աւելորդ հետազոտութեան կը հաւանի խոնարհաբար, եւ ճշմարիտ Աստուած վեհանձն ապաւինութեամբ կ'ըսէ, «ահաւասիկ Տիրոջ աղախինը, յիսթող կատարուի Քու խօսքդ¹»:

Այնուհետեւ ինչ կը գիտէ ընել: Արդեօք պիտի չաճապարէ ինքնին աւետելու իւր արժանաւոր Փետային այս մեծ խորհուրդը: Ո՛չ, գերմարդկային խոհեմութեամբ առաջնորդուած կը լռէ: Բայց գոնէ, «արդար Յովսեփայ²» անազորոյն տաղնապնդու ենթարկուելէ վերջը, որոնք արտաքուստ ալ պէտք էր որ յայտնուէին, Մարիամ անշուշտ պիտի խօսի: Միթէ պարտաւորութիւն մը չի սեպուիր այս կերպով իւր պատիւը պաշտպանելու...: Ո՛չ, հոս աւելի եւս զարմանանք Աւստին սքանչելի խոհեմութեան վրայ: Ար հասկընայ որ իւր Փետայն ապահովելու համար մահկանացուի մը խօսքէն շատ աւելի բան կ'ուզէ, մանաւանդ այնպիսի մահկանացուէ մը:

¹ Դուկ. Ա. 38: — ² Մատթ. Ա. 19:

որ կարծես թէ ուրիշ բանէ ստիպուած չըլլայ, եթէ ոչ անձնական շահէն, եւ միւս կողմանէ գիտէ որ, «ոչ երբեք կ'ամչնայ Աստուծոյ բարութեան վրայ վտահացողը¹»: Ուրեմն կը լռէ, եւ Աստուածային նախախնամութենէն որոշուած վայրկենին կը սպասէ, որ իրօք շուտով կ'արգարացընէ իւր վտահութիւնը: Աւելի ետքը, երբ զարմանալի բաներ կը լռէ իւր մատաղ Որդւոյն վրայ, իւր ահանջին հասած խօսքերուն իրեններն ալ աւելցընելէ հեռու, բռնութիւն կ'ընէ իւր անպատու սիրոյն, վրայ եւ բոլորն ալ «գաղտուկ կը պահէ իւր Սրտին մէջ²»: Գիտնալով որ դեպէտք չէ որ Յիսուս յայտնուի աշխարհի: Սրբութեան օրը հասածին պէս, հաւատարմաբար կը կատարէ Մովսիսական օրէնքը: «Թէպէտ եւ բան մը չունէր, որ սուրբ չըլլար կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, ծնանելով զԱնիկայ, որ աղբււր է ամենայն սրբութեան³»: Յայտմ' Ինք անտաւորկոյս կ'ուզէ պարտաւորութենէն աւելի հնազանդութեան օրինակ մը տալ. բայց կ'ուզէ նաեւ հրաշքի մ'անձանօթ մնալը, որուն յայտնուիլը կ'արգելու խոհեմութիւնը: Մի

¹ Ա. Պետր. Բ. 6: — ² Գուկ. Բ. 19:
— ³ Ճստ. Ի վերայ մարտութեան:

եւ նոյն պատճառաւ երբ Ինքը կը
զանկ գՅիսուս ի Տաճարին Վարդա-
պետաց մէջ՝ այնպիսի խօսքերով կը
խօսի որ, ոչ Որդւոյն Աստուածուն-
թեան եւ ոչ ալ Մօրը կուսուծեան
վրայ կարող են կասկած մը ձգել:

Բայց ո՞վ չի գիտեր որ, Մարիամ
ուրիշ տեսակետով ալ անհամեմատ
խոհեմութեամբ միշտ օժտած եղաւ:
Ո՞վ չի գիտեր որ անընդհատ կատա-
րեալ օրինակ եղած է այն իմաստուն
կուսանաց, որոնց վրայ կը խօսի
Աւետարանը, որոնք միշտ պատրաստ
են ընդունուելու «Վասն Տարանեաց
կոչուեալքն»¹, լապտերներնուն մէջ միշտ
պահելով Աստուծոյ սիրոյն եւ բարի
գործոց մեծագին իւղը²: «Այն,
կ'ընէ Սուրբն Բեռնարգոս, այս կու-
սին լապտերը ոչ երբեք կործնուց
իւր պայծառութիւնը, եւ անոր լոյսն
այնպէս շողորուն եղաւ, որ նոյն իսկ
Հրեշտակներն ալ իրրեւ հրաշքի մը
վրայ զարմացան»³:

Մենք ալ այս երկնային հարստ-
նեաց կուսած ենք, եւ այն ժամուն՝
որուն վրայ չենք մտածեր, ականջներնուս
պիտի հնչէ այն յանկարծակի ձայնը,
«աստուածիկ փեսան, հարկ է Անոր

¹ Յայտ. ԺԹ. 9: — ² Մատթ. ԻԵ. 4:
— ³ Ճառ՝ Ի Փոխու մն Ս. կուսին:

ընդ յառաջ երթալ»⁴: Ա՛ղէ, կը տա-
րած ենք արդեօք մեր կանխատեսու-
թիւնն այս անտոյգ ժամուն վրայ:
Կրնանք կուսիլ «Երեկոյին, կէս
գիշերին, հաւախօսին»⁵, ամէն վայր-
կեան արդեօք պատրաստ ենք...:

Ա՛ղէ, ով Մարիամ, մենք «լուսոյ
որդիքս մինչեւ ցայսօր աշխարհի որ-
դւոցմէ նուազ խոհեմ զանուեցանք»⁶:
Աւելի եւս, Աստուած արթնուած իւն⁷
տուաւ այն հաւուն, որուն երգը կը
կանխէ արշալոյսը, հեռատեսութիւն
այն աշխարհոր ճշգրտ, որ ամառը կը
պատրաստէ իւր պարէնը⁸, խոհեմու-
թիւնն օձին⁶, եւ մեզ ալ տուաւ այս
սրատես հանձարը, որ կրնայ գիտել,
կընել, գիտէ շարեաց առջեւն առ-
նուլ, բարեբախտ գէպը մը պատրաս-
տել, եւ մենք ամենամեծ եռանդով
զայն առժամանակեայ բաներու կը
գործածենք, մինչդեռ յաւիտենական
շահերնուս նկատմամբ կուրօրէն կը
վարուինք, «իրրեւ թշնամի մեր հո-
գոց»⁷: Հաճէ ընդունիլ մեզի հերոջմէ
փրկութիւննիս ամէն բանի նախապա-
սելու շնորհքը, ով Գուն, յորում կը
հիանանք Սուրբ Գրոց զոված Արի-

¹ Մատթ. ԻԵ. 6: — ² Մարկ. ԺԳ. 35:
— ³ Գուկ. ԺԶ. 8: — ⁴ Առակ. ԻԳ. 31:
— ⁵ Առակ. Զ. 8: — ⁶ Մատթ. Ժ. 16:
— ⁷ Տովբ. ԺԻ. 10:

դեպի խոհեմութենէն մեմագոյն խոհեմութեան մը վրայ, իրաւամբ զպարացած սրտի մը բարեգթութիւնը զուարթ ամիս զհոգութեամբ շահիլ զխնայուն համար¹։ Հաճէ ընդունիլ մեզ որ ամենախոհեմ գգուշութիւններ գործածենք այն ամէն բանի մէջ, որ մեր հոգւոյն եւ յաւիտեական կենաց կը պատկանի.

Ամենախոհեմ Այոյս, աղօթէ մեզի համար։

ՄՏԱԾԱԿԱՆ ԻՊ.

Այոյս յարգոյ, աղօթես զսամ մեր։

Այն ամենայն ինչն որ ազնիւ եւ մեծ է՝ գիտութիւն, առաքինութիւն, գեղեցիկ բնաւորութիւն, քիչ շատ աղբու ապաւորութիւն մը կ'ընէ վրանիս, որ կը ստիպէ զմեզ զլուխ ծռելու եւ յարգելու. եւ երբ այս գիտութիւնը, այս առաքինութիւնը, այս բնաւորութիւնը միացած գանուին բարձրաստիճան անձի մը վրայ մեր յարգութիւնն աւելի խորին կ'ըլլայ։

Չննէք զՄարիամ հաւատոյ աչօք։ Վրցաւ երեք մարդկային գիտութիւնը համեմատութեան մէջ մանեւ այն

¹ Ա. Թագ. ԻԵ. 31։

վեհ հազարդակցութեանց հետ, զորս հաճեցաւ Աստուած Անոր շնորհել։ Ո՛հ, ուղիղ դատելու համար, հարկ չէ հոս յիշել որ, ի հազարէթ Յիսուսի հետ մտերիմ կենակցութեամբն Ինք մեծ գիւրութեամբ, այսպէս ըսելու համար, «Աստուածային գիտութեան եւ իմաստութեան գանձերուն կը մտնենար¹», այլ բաւական է յիշել Անոր հոգւոյն գերբնական նայուածքը, որով փրկչին ծննդենէն ալ յառաջ, յընթացս դարուց կը տեսնէր Իւր Աստուածը յինքն փառաւորուած մշտատեւ յարգութեամբ. «զոր Ինքը պիտի ընդունէր երկրիս բովանդակ ազդերէն²»։

Ասկից զատ բոյսը արարածոյ մէջ մեր դանեւ այնպիսի բարձր, մաքուր, քաղցր եւ գիւցազնական առաքինութիւն մը։ Օրինակի համար մէկ քանի հատը միայն յիշենք։ Ի՛նչ սքանչելի օրբութիւն, որ մատղաշ հասակին մէջ այնպիսի ուխտիւ Ինքը գինքը կը պարտաւորէր, որուն կապը բնականապէս Իրեն կ'արգելուր Մեսիայի կեանք տարու պատիւը. այնպիսի ցանկալի պատիւ Հրէից մէջ, որ ամբութիւնն իրբեւ նախատինք կը համարէին։ «Ի՛նչ վսեմ խոնարհութիւն, կը կոչէ Սուրբն Բեռնարդոս, որ մեծութեանց

¹ Կորնթ. Բ. 3։ — ² Ղուկ. Ա. 48։

գագաթին վրայ ալ հաստատուն կը կենայ, եւ ամենամեծ փառաց ծանրութեան տակն ալ չընկճիր: Մարիամ Մայր է իւր Աստուծոյն, եւ Ինքը զինքը Անոր աղակերպը կը կոչէ՞: Եւ ինչպէս շնորհալից ու ազնիւ է իւր սէրը, երբ կ'աղաչէ իւր Որդւոյն հրաշք մը գործելու, որպէս զի կանայի հարսնոտերն ազատէ Իրենց մասնակից եղած պարկէշտ խնջոյքին մէջ պատահած դժբախտութեան մ'ամութենէ: Զեռ այնորիկ ինչ անհամեմատ հոգւոյ արիւթիւն՝ ի Գողգոթա կատարուած զոհին ներկայ գտնուած ատենը: «Աշակերտները փախած են, կ'ըսէ Սուրբն Ամբոստիոս, իսկ Մարիամ խաչին տակը կանգուն կեցած է, Ինք անպատու՝ արգահատութեամբ, բայց գերմարդկային քաջութեամբ կը զննէ իւր սիրելի Որդւոյն արիւնալից վէրքերը, կը մտածէ չէթէ Անոր մահուան, այլ մահուամբ զաշխարհ փրկելուն վրայ»¹:

Վերջապէս ինչ բռնէր Անոր գրեթէ Աստուծային արժանապատուութեան նկատմամբ, յերկին պսակուած՝ միայն Աստուծոյ ստորին փառօր: «Երկրիս վրայ ամենէն աւելի յարգե-

¹ Ճառ՝ Գ. ի վերայ աստուծոյն բուն: — ² Յովհ. Բ. 3: — ³ Մեկն. Աւետ. Ղուկ.:

լին, կը կոչէ Սուրբն Բենեարդոս, է այն կուսական արգանդը, յարու՛ Աստուծոյ Որդին մարմնացաւ. եւ յերկինս ալ Յիսուոսի ակունէն ետքը ամենաբարձրն է իւր Ամենասուրբ Մօրն ակունքը, որուն փառքը համաձայն է այն շնորհաց, որով ամենաբարձրն է վեր լեցուեցաւ աշխարհիս մէջ ալ»¹:

Ամենասուրբ Այսին ուրեմն շատ արժանի է մեր խոնարհ յարգանաց, իրաւունքը ունի մեր խորին մեծարանաց առ իւր Օգոստոսփառ Անունը, առ իւր Տօները, առ իւր խորանները, առ իւր պատուոյն համար կանգնուած Եկեղեցիները, եւ առ այն ամէն բան, որ կը պարունակէ Անոր վերաբերեալ պատուոյն սեպհական պաշտօնը: Ո՛հ, հաւատարմաբար կատարենք այս առ Մարիամ նուիրական պարտաւորութիւններս, պարտաւորութիւն՝ որուն գործածութիւնը հիմնուած է մեր առ Աստուած պարտաւոր եղած անսահման յարգութեան վրայ, եւ որ բոտ ինքեան բարեբախտաբար այդ եցեցելի է: Ղաւն, զի եթէ ստոյգ է որ կաթողիկէ Եկեղեցին աշխարհիս երեսը գտնուած ամենամեծ զպրօնն է յարգութեան, նախ առ Աստուած, եւ ապա առ այն ամեն

¹ Ճառ՝ ի Փոսթ. Ս. կուսին:

նայն, որ քիչ շատ Անոր պատկերն է, կրնայ նաեւ բուռիլ որ սուրբ Արօնքներնու մէջ Ամենասուրբ Աուսին ջերմեանցու թիւնն Աստուածային մեծ վայելչութեան նկատմամբ սփոփիչ քաղցրութիւն մը կը հաղորդէ այս զգացման: Երբ բարեպաշտ մայր մը կուգէ իւր տղուն սրտին առ Ամենասուրբ Արօն յարգութիւն ու սէր ազգել, անոր Մայր Աստուծոյ քաղցր անուշիկ կու տայ, անուն մը որ Եւայի մեղ ընու թենակից դատեր մը վրայ կը ցուցնէ զայն, որով այս մեծ Աստուածը հաճեցաւ մինչեւ մեղ խոնարհիլ զմեզ փրկելու համար, մի թէ ասով այն տղայական սրտին մէջ Բարձրելոյն նկատմամբ չի դրոշմեր յարգալից վստահութիւն մը, որ միջին ծամբայ մը կը բռնէ ճշդօրէն ըսուած երկիւղին եւ յանդուգն ընտանութեան մէջ, եւ որ լեցուն է նաեւ ընտիր անուշութեամբ:

Ատեն մը, ո՞վ Մարիամ, Սողոմոն թագաւորն ուղերով պատուելլ իւր մայրը, էլաւ իւր գահէն, եւ անոր ընդ առաջ գնաց, եւ մեծարանօք զանիկայ ողջունելէն վերջը, իւր աջակողմը ուրիշ գահի մը վրայ բաղմեցուց: Ասիկայ, ո՞վ Ամենասուրբ եւ Օգոստոսիա Արօս, տկար պատկեր

1 Գ. Թագ. Բ. 19:

մ'է այն մեծարանաց, որով Յիսուս Բրիտոս Իւր մահկանացու կենաց մէջ գրեց յարգեց, ինչպէս նաեւ այն փառաց, որով գրեց պատկեց Բու ի յերկինս վերափոխմանդ ատենը: Մենք ցնծալեցք ի յարգել զԱնիկայ, զոր Աստուածային Փրկիչը այնչափ յարգեց. «ի խորոց սրտի եւ յարգական սիրով կը նուիրենք Բեզ մեր մեծարանաց հարկը¹», որ մարդկեղէն բարբառով պատուելու ամենաբարձր նշանակն է: Մի թողուր որ մենք «ամենեւին կէտի մը մէջ բնաւ մոռնանք ինչ որ Անոր պարտական ենք²»: Եւ որպէս զն կարող ըլլանք խոյ տալ այսպիսի չարարխտութենէ, ընդունէ մեզի համար առ Աստուած անպայման յարգանք թափանցած սիրտ մը, եւ միանգամայն յարգել ըստ Անոր կամաց այն ամենայն որ յարգելն է յերկինս եւ յերկրի:

Յարգելլ Արօս, աղօթէ մեղի համար:

1 Ս. Բեռն. ճառ' ի Ծնունդ Ս. Աուսին:
— 2 Բ. Օրէնք, Ի. Թ. 18:

ՄՏԱՎՈՒԿԱՆ ԻՆ՝

Կոյս քարոզելի, աղօթեալ վասն մկր:

Յատկապէս խօսելու համար, Աստուած միայն է արժանի գովութեան, այսու ամենայնիւ արժանաւորութիւնն ալ իրաւունք ունի մեր գովեստից, միայն թէ ան ալ ուղղուած ըլլայ Անոր, «ուսկից յառաջ կու գայ ամէն բնօր, պարգեւ¹»։ Եւ միանգամայն ճշմարտութեանս հմանին մէջ գտնուի: Բայց երկրիս վրայ ո՞ր կը գտնուի այն արժանիքը, որ կարող ըլլայ անսխալապէս եւ առանց չափազանցութեան գովուիլ: Բարէ, «միայն Աստուած կը ճանչնայ սրտերուն խորը, եւ ոտէջ մարդկան աչքին բարեք եղածը պիղծ է Աստուծոյ առջեւը²»:

ՉՄարիամ գովելով, եւ զինքն մեր ամենամեծ գովեստից արժանի հռչակելով, ստուգել չենք վախնար ոչ զմեզ խաբելէ, եւ ոչ ալ զԱնիկայ չափազանց բարձրացընելէ, որովհետեւ նոյն ինքն Աստուած «կըռած է Անոր արժանիքն անսխալ կշիռքով³»։ Եւ Անոր տալ աստուած է յԱնուն Իւր անհամեմատ ներբողներ: Աղէկ խելա-

¹ Յակ. Ա. 17: — ² Դուկ. ժ. 2. 15:
— ³ Յովէ, ԼԱ. 6:

մուս եղած ենք արդեօք Մարեմայ համար այն բովանդակ հանգիսաւոր եւ փառաւոր կէտերուն, որոնք կը պարունակին Գաբրիել շրեշտակապետին ողջունին մէջ: Մենք Սուրբ Գրոց մէջ կը տեսնենք Հրեշտակի մ'այցելութիւնն ընդունող արտօնացած անձնաւորութիւններ, բայց եւ ոչ մէկը կը նշմարենք, որ այնպիսի պերճաշուք եւ փառաւոր խօսքերով ողջունուած ըլլայ երկնային պտուղամաւորէ մը: «Ես կ'ողջունեմ զՔեզ, սոյ շնորհօք լեցուն, Տէրը Քեզի հետ է, Դուն օրհնեալ ես բոլոր կանանց մէջ¹»։ Ասկից աւելի շքեղագոյն բան կրնայ բուսիլ մարդիկէն արարածի մը: Էւ միթէ ասիկայ, ըստ մտաց Սրբոյն Ամբոստոսի եւ Սրբոյն Պետրոսի Ոսկեխօսի, «չսուած ողջոյն մը չէ՛ արդեօք, որուն երբեք հնար չէ՛ օրինակը գտնել²»: Այսու ամենայնիւ այսպիսի ողջոյն մ'ամենեւին վեր չէ Անոր արժանիքներէն, որուն որ ուղղուած են այս սքանչելի խօսքերը: Հրեշտակ մ'է գանոնք արտասանողը, հաւատարիմ միջնորդ է «ճշմարտութեան Աստուծոյն³», որ անմիջապէս ետքը նոյնպիսի գովեստներ տալ կու տայ Մա-

¹ Դուկ. Ա. 28: — ² Ս. Ամբոս. Բ. Դուկ. Գ. 2: Ս. Պետրոս. Ոսկեխօս ճառ. ՃԽ: — ³ Սղմ. Լ. 6:

րեմայ Յովհաննու Մկրտչի սուրբ մօրը
բերնով:

Իրօք Աւետարանը կ'ըսէ մեզ թէ,
Եղիսարէթ չէ թէ ինք իրմէ, այլ
«Հողով Սրբով լեցուելէ վերջը
ձայնը բարձրացրնելով կրկնեց Հրեշ-
տակին խօսքերը. Գուռ օրհնեալ ես
Քուր կանանց մէջ, եւ աւելցուց
«օրհնեալ է Բու արգանդիդ պտուղը»:
Խօսքեր որ սքանչելապէս կը ցուցրնեն
Մարեմայ մեծութիւնը, միջոցաւ Անոր
անձառելի մեծութեան, որուն որ հա
Ինք Մայր է: Եղիսարէթ Ամենասուրբ
Կուսին համար կ'ըսէ թէ. «օրհնուած
է բոլոր կանանց մէջ, իսկ Անոր պտղոյն
նկատմամբ, բացարձակապէս կ'ըսէ թէ,
«օրհնեալ է»: «Ո՛վ Մարիամ, ըստ
պատշաճի կը կոչէ Սուրբն Բեռ-
նարդոս. Բու արգանդիդ այս անգին
պտուղը չէ թէ օրհնեալ է, Բու ալ
նոյն իսկ Եւայի բոլոր գոտերաց մէջ
օրհնեալ ըլլալուդ համար, հապա Գուռ
ի մասնաւորի օրհնեալ ես, ըստ որում
նոյն ինքը կանխեց Իւր օրհնութիւն-
ներովը: Մինչդեռ Գուռ կանանց մէջ
օրհնեալ ես, Ինք ո՛չ մարդկան եւ ո՛չ
ալ Հրեշտակաց մէջ օրհնեալ է, այլ
Առաքելոյն² ըսածին համաձայն՝ Աս-
տուած է ամէն բանէ վեր օրհնեալ
յաւիտեանս յաւիտենից³»:

¹ Դուկ. Ա. 41—42: — ² Հուովմ.
թ. 5: — ³ Ճառ. ի Փոխ. Ս. Կուսին:

Բայց արդեօք Յիսուս ալ բան
մ'ըսաւ ի գովեաա Իւր Աստուածային
Մօր...: Փրկիչը մարդկան Իրեն պէս
«որտով խոնարհ¹, ըլլալ սորվեցընե-
լու համար եկած ըլլալով զգուշացաւ
անոնց առջեւը մեծարելու զԱնիկայ,
որուն որ Ինքը Որդին էր: Այսու ա-
մենայնիւ երբ երբայեցի կին մ'Իրեն
խօսքերուն վրայ հիացած՝ բազմու-
թեան մէջէն կոչեց. «Երանի՛ այն
արգանդին, որ զՔեզ կրեց. եւ
ստեանց, որ զՔեզ կերակրեցին: Մա-
նաւանդ, ըսաւ Յիսուս, շատ աւելի
երանի՛ անոնց, որ Աստուծոյ խօսքը
մտիկ կ'ընեն եւ ի գործ կը դնեն²»:
Ուստի ըստ մտաց Երանելոյն Պետայ՝
«Ինք ընտիր ճարտարութեամբ Իւր
Աստուածային հաւանութեամբը կնքեց
այն Իւր Օգոստոսիաա Մօրը ներբողը:
Հասկըցընել ուղելով որ եթէ Մա-
րիամ չափազանց երանելի էր մար-
մնացեալ Իմաստութեան Մայրն ըլլա-
լով՝ աւելի եւս երանելի էր անխախտ
կերպով պահելով Աստուծոյ երկըր-
պագելի գոտերը³»:

Մենք ալ Ամենասուրբ Կուսին ամէն
տեսակ գովեաաներ կու տանք, եւ ի
փառս Անոր կ'ըսենք Սէլեւկիացի
Սրբոյն Բարդի ճեա թէ. «ինչ գո-

¹ Մատթ. ժ.Ա. 29: — ² Դուկ. ժ.Ա.
27—28: — ³ Գրեք Գ. Գլ. Խ. Ի Դուկ. ժ.Ա.:

վեստ ալ Անոր տրուի, երբեք ճշմարտութեան դէմ անիրաւելու՝ երկիւղ չկայ, վասն զի խօսքերը բնաւ չեն կարող Անոր մեծութեան հաւասարել¹։ Եռանդեամբ լեցընենք զԱնիկայ պաշտելու ունեցած անկարութիւննիս, մեծ խնամքով առնէ առթէ օգուտ քաղենք Անոր վրայ խանդակաթ յարզանօք խօսելու, եւ այլոց ալ առ Անոր պաշտպանութիւնը որդիական վտաահութիւն մ'ազդելու։ Գլխաւորապէս պատուենք զԻնքն Իւր առաքինութեանց նմանելով, այնպէս որ տեսնուած ու լսուած ատեննիս պատճառ տրուի փառաւորելու Աստուածային Մայրն յորդիս Իւր։

Ո՛վ Մարիամ, բնչպէս կարելի է արժանապէս մեծարել զՔեզ, որ արզանդիդ մէջ պարփակեցիր զԱնիկայ, «որուն երկինք կարող չէին անչափութիւնը տանիլ²»։ «Մեծ վայելութեան Աստուածը³» միայն արժանի է անբաւ զովութեանց. ըայց Աստուծմէ ետքը, Դուն միայն ամէն զովասանքէ գերի վերայ ես⁴։ Ո՛վ Դուն, զոր Առաքեալները զովեստիւք ճոխացուցին, զորս յետոյ բովանդակաշխարհ կրկնեց⁵։

¹ Ճառ՝ ի Մարդեգութիւն Բանին։ —
² Թամակարդ. Հռօմիմ։ — ³ Սղմ. Իբ. 3։ —
⁴ Սիր. ԽԳ. 20։ — ⁵ Ս. Կերեղ Աղեք. Ճառ՝ ի վերայ Կուս. Ընդդէմ Նեստորի։

Դուն, զոր բոլոր Աստուածային Բանին քարոզիչները, եւ ճշմարիտ հաւատացելոց բոլոր լեզուներն ամենամեծ հաճութեամբ միշտ «երանելի հրօշակեցին¹»։ Դուն, որուն անունը «միշտ պիտի համբաւուի մարդկան մէջ²»։ Ո՛հ, որովհետեւ կարող չենք հոգ տանելու որ մեր զովեստները Քուարժանեացք հաւասարին, ըրէ որ զոնէ ջանանք առ Քեզ ունեցած պարտաւորութիւննիս թեթեւցընելու Քուփառացի եռանդուն նախանձայուզութեամբ, եւ Քուստըր հետոցդ վրայ քայելու հաւատարմութեամբ։

Գովելի Կոյս, ազօթէ մեզի համար։

ՄՏԱԾԱԿԱՆ ԻԶ.

Կոյս հօգոր, աղօթեմ վասն մեր։

Եթէ Յիսուս Քրիստոս իրրեւ Աստուած ի ընտելութենէ ունէր ամենակարողութիւնը, եթէ իրրեւ մարդ Ինքն ունէր զայն Աստուածութեան հետ անձնական միաւորութենէն Իւր մարդեգութեան առաջին վայրկենէն ի վեր՝ Իւր յարութենէն վերջն աշխարհի եղած մեծապայծառ յայտնութիւնն Իւր չարչարանաց եւ մահուան

¹ Առակ. ԼԱ. 28—29։ — ² Յուդիթ. ԺԿ. 25։

պարզեւն եղաւ : Իւր այս է, զոր կ'ախնարկէր աշակերտաց՝ անոնց ըսած ատենը թէ, «ամէն իշխանութիւն ինձ տրուած է յերկինս եւ յերկրի» : Այս արբուհի իշխանութիւնը Մարեմայ Աստուածային Որդիէն իւր Օգոստոսիա Մօրն հաղորդուեցաւ հրաշարի առատութեամբ : Մարեմայ գործակցութիւնը Մարդ-Աստուծոյ խորհրդոց եւ Անոր ցաւոց ու Գողգոթայի զոհին ներքին մասնակցութիւնը միթէ պիտի չարժանացընէին Յիսուսի բովանդակ արարածոց վրայ ունեցած իշխանութեան ընկերակից ըլլալու արտօնութեան : Բաց աստի, միթէ չէր վայելէր որ Ինք, որ երկրիս վրայ երկար ժամանակ Յիսուսի վրայ մայրութեան իրաւունք գործածած էր, յերկինս ալ պահէր այն աղքեցութիւնը, զոր ամէն կատարեալ մայր ընպանապէս պէտք է ունենալ որդւոց ամենազորովին սրտին վրայ, այնպէս որ Անկից լուսիլ ու իսկոյն խնդրոյն կատարուիլը մէկ բան ըլլայ : Վերջապէս յարմար չէր որ բարեխօսութեան այն անհամեմատ իշխանութիւնն այսպիսի Մօր մը վրայ ունենար մեծութեան եւ համաշխարհայնութեան ամենապայծառ նշաններն արժանի Անոր, զոր Ինք ծնաւ :

Գարծկալ ամենահիանալի զէպքեր Ամենասուրբ Կուսին այս իշխանութիւնը կը յայտնեն կաթողիկէ աշխարհի մէջ : Խօսքը թագաւորաց եւ ազգաց շահերուն վրայ կը դառնայ, դուք Լեփանթոյի ամենափառաւոր յիշատակներ, դուք վկայեցէք բովանդակ ազանց այն մեծաբանէ յաղթութիւնը, որ իւր թռիչն առաւ Մարեմայ գահոյից պատուանդանէն երթալու եւ իւր սոսկայի ու կործանիչ հանդէրու այլազգիներու ահագին նաւատորմին վրայ, եւ քրիստոնէութեան հետ միատեղ Լաբուրիոյ քաղաքակրթութիւնը փրկելու համար : Իւր գուն աղնիւ գիւցազն, որ հաւատարից սրացմամբ քուկիններու դրուին անցած կը գոչէր «յաւաջ երթանք, Աստուծոյ Մայրը մեզ առաջնորդ ունինք», որով բաւական յայտնի չէիր բտեր մեզ, ով հոչակաւոր Սոպիետի թէ որուն պարտական եղար այն թշնամաց ստուար բանակին վրայ կանգնած յաղթութիւնը, որ այնպէս մօտէն սեղմեր էր Վիեննայի պարիսպները :

Գուք ալ կաթողիկէ ճմարտութեան բուռն թնամիք, միթէ հզոր Կուսին փառաց իբրեւ այնչափ յաղթութեան աւար ծառայելու չստիպուեցաք... : Եկեղեցին հանդիսապէս Անոր կ'ընծայէ «բարբ աշխարհի հերե-

տիկոսութիւնները ջնջած ըլլալու գովեստը¹ : Իւ Աստուած համեցաւ մանաւանդ երկոտասաներորդ դարուն մէջ Մարեմայ զօրութեան մեծաւորանջ փայլը տալ : Այս ատեններն ահաւոր հերետիկոսութիւն մը կը տարածուէր Գաղղիոյ բոլոր հարաւակողմը, տաճարներն եւ խորանները կը քանդէր, Աստուծոյ պաշտօնեաները խեղդամահ կ'ընէր, ամենայն ինչ կրակի եւ արեան կը մատնէր : Այս ամբարիշտ եւ կործանիչ աղանդին դէմ կ'ելլէ խոնարհ Սուրբն Գովինիկոս : Ո՞ր սրով պիտի զինուի այս նոր Գաւիթը : Գոնէ հովուին պարաստիկովը . . . : Ո՞չ : Չեքքը բռնածը վարդաւրան մ'է, որով կ'արգելու, կը զսպէ, եւ կը յաղթէ Եկեղեցւոյ աւելի կոյր եւ աւելի մոլեգին թշնամեաց :

Իւ ո՞վ կրնայ Մարեմայ զօրութեան համբաւաւոր դէպքերը թուել յօգուտ եռանդագին սրտիւ Անոր պաշտօնանութիւնը խնդրողներուն : Ո՞չ, սրջափ տրտմութիւններ սփոփած է, քանի՛ դժբախտ մահներու առաջն առած է, սրջափ ուժգին փորձութեանց յաղթել տուած է, սրջափ բազմատեսակ շնորհքներ ընդունած է անոնց, որոնք իրեն օգնութիւնը հայցեր են ցամաքի եւ ջրոյ վրայ : Չայն բարձր եւ անգիմա-

¹ Դամակարգ. Հոսով. ի Տօնս Ս. Կ. :

գրելի ձայնիւ կը հռչակեն Բու փառացդ կանգնուած յիշատակարանները, այն հիանալի յիշատակութեանց երեւելի կոթողները, զոր հաւատքն ու երախտագիտութիւնը կանգնած եւ Բեզ նուիրած են :

Բայց սրջափ հիանալի դորձեր ալ ծածուկ մնացած են, եւ միշտ պիտի մնան հոգեոց դաղանեաց մէջ : Ո՞վ սիրելի եւ Սուրբ Եպիսկոպոսդ Ժենեւոյայի, մենք քաջ գիտենք որ Մարեմայ պարտական ես յուսահատութեան սարսափելի մտածմունքի մը վրայ ունեցած յաղթութիւնդ : Իւ դուն Սուրբ Անդրէաս Բորսինի, Անոր պարտական ես քու դարձդ եւ մեծ առաքինութիւններդ : Իւ դուն խոստովանութեան կնքոյն աղնիւ մարտիրոս, անմահդ Կեփոմուկ, քաջութիւնդ եւ արիութիւնդ, որ քեզ այսչափ փառք շահեցան : Բայց միայն երկինքը պիտի կարենանք տեսնել եւ հիանալ այս սքանչելի զօրութեան անթիւ արդեանցը վրայ, զոր Աստուած Մարեմայ տուաւ յուսարեւելու, առաջնորդելու, օգնելու եւ բժշկելու Իւր Աստուածային Որդւոյն արեամբը փրկուած հոգիները, եւ միանգամայն կործանելու այն դժոխային օձին իշխանութիւնը, "որուն գլուխն ինք որուչուեցաւ ճղմելու¹ :

¹ Ծանդ. Գ. 15 :

Ամենասուբը Կուսին գիմներ ուրեմն մեր ամէն նեղութեանց, ամէն փտանգներու եւ ամէն կարօտութեանց մէջ, եւ նուիրական պարտք սեպենք մեզ ամէն ատեն Անոր զօրութիւնը փառաւորելու:

Այո՛, մենք սիրով պիտի ջանանք միշտ հռչակելու, ո՞վ տիեզերաց Օգոստոսփառ Տիրուհի որ «Աստուծոյ բազումն ի Բեզ փայլեցուց Իւր կարողութիւնը՝» որ Բու ձեռքդ է Անոր զօրութիւնն ու իշխանութիւնը՝² որ «Անով ամէն բան Բեզ հնարաւոր է՝»³: Որ Աստուծոյ ժողովրդեան թշնամեաց վրայ յաղթանակող Յայելի եւ Յուզթայ⁴ փառքն եւ ոչ ստուեր մ'է, համեմատութեամբ ի Բեզ շողացած փառաց: Ո՛հ, հաճէ շարունակաբար Բու պաշտպանութեանդ տակ՝ պահպանել զանոնք, որ չեն դադարիր զԲեզ յօգնութիւն կողէլէ: Մանաւանդ երբ հասնի որոշուած վայրկեանը, երբ մեր դողդօջուն հոգին պիտի մտենայ իւր դատաւորին առջեւը ներկայանալու, հաճէ՛ պաշտպանել զանիկայ իւր թշնամիներէն, քաջալերել, զօրացնել, եւ անոր ի յաւիտենականութիւն մտնելու ատենը

1 Գուկ. Ա. 51: — 2 Ա. Մնաց. Իթ. 12: — 3 Փիլիպ. Գ. 13: — 4 Դսա. Գ. 17-21: — Յուզթ, Ժ. 10:

Բու Մայրենի բարկացդ մէջ ընդունելով Աստուածային Որդւոյդ ներկայացընել:

Հղօր Կոյս, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԻԻ.

Աոյս գլխած, աղօթեմ վասն մեր:

Ինչո՞ւ համար Եկեղեցին աւելի Մարեմայ գթութիւնը մեզ հայցել կուտայ քան թէ բարութիւնը: Բարութիւնը լինքեան կը պարունակէ մեծ քաղցրութիւն, եւ որտեքինս շարժելու չափ յաջողակութիւն: Եւ ի Մարիամ այս անգին հանգամանքը մեզի համար շատ սիրելի ու կատարեալ է: Մի՞թէ Իւր անարատ սրտին մէջ չի՞ միաւորեր խանդակաթ մօր մ'ամբողջ բարեսրտութիւնը, բովանդակ կարեկցութիւնը, եւ բոլոր սէրն առ այն հոգիները, որոնք աւելի մեծանձնարար հակեալ են բարիք ընելու լացողներու, տառապեալներու եւ թշուառութեան ծանրութեան տակ հեծողներու...: Ո՛հ, անտարակոյս Մարիամ բարի է, եւ չափազանց բարի, այնպիսի զգայուն սիրտ մ'ունի, զոր Իւր Աստուածային Որդւոյն սրտէն զատ, ուրիշ ոչ մէկը կը գերազանցէ: Բայց Եկեղեցին Անոր գթութիւնը

Հայցել տալով՝ մեզ հասկընթել կ'ուզէ թէ ինչպէս մեղաւոր արարածներու յետին խեղճութիւնը, եւ Աստուծոյ դէմ գանեղի պերբխտութիւննիս բնականապէս զմզմանարժան կ'ընեն այս Օգոստափառ Մօր բարեւէր պաշտպանութեան: Ինքը Յիսուսի հետ մի եւ նոյն ըլլալով, որուն նկատմամբ այնչափ յանցաւոր ենք, արդեօք վրանիս հոգ ունենալու համար մեզ ներելու շատ բան չունի: Ասկից զատ Իւր վրայ հիացած առաքինութեանց նմանելու քիչ փոյթերնիս միթէ բաւական պիտի չըլլայ արգելք ըլլալու, որպէս զի չափուէ վրանիս մեր Իրմէ սպասած բարիքները, եթէ Ինքը չըլլար այն ողորմութեամբ եւ անուշ կարեկցութեամբ առատ Կոյսը, զթուութեամբ լեցուն Կոյսը:

Այո, մեծանձն սրտերու այս աղնիւ հանգամանքը զարմանալի կերպով կը փայլի Մարեմայ սրտին վրայ: «ՉԻնքը կ'ակնարկէ, կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, առենօք Պատմոսի Մարգարեկն տեսած արեգակ հագուած կնոջ մը փառաւոր պատկերը, ըստ որում՝ ճշդիւ, ինչպէս որ օրուան աստղն իւր լուսոյն ճառագայթները անխտր կը տարածէ բարիներու ու շարերու վրայ, այսպէս ալ Մարիամ չի նայիր թէ Իրմէ շնորհք հայցողը անցելոյն մէջ

քիչ շատ յանցաւոր եղած ըլլայ, այլ Ինքը զԻնքը քաղցր ողորմած եւ զթած ցոյց կու տայ ամէն իրեն օգնութիւնը խնդրողներուն: Գրեթէ կ'ընդգրկէ ծայրայեղ սիրոյ հանգոյցներով աննոց բոլոր կարծօտութիւններն եւ խեղճութիւնները¹: Եւ ինչպէս կրնանք մտածել որ այսպէս չըլլայ: «Միթէ Ինք չէ՞, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, որ Իւր սիրովն Սքոյլ Եկեղեցւոյ ծնաւ²: Եւ այս անձաւելի սէրը շարունակ պիտի չազդէ՞ իրեն առ մեզ Մօր մը զգացմունքն. եւ այնպիսի Մօր մը, «բնա սիրտն, այսպէս բեւուր համար, կը հալի՝ է Խրեկոյն-Ին-առ մեզ, կրակի առջեւը գտնուած մտքի մը պէս³: Ճիշդ այսպէս կը կրկնէ այս կէտիս նկատմամբ Մոյլ անմահ Եպիսկոպոսը: Ինք միշտ մի եւ նոյն է մեզի համար, միշտ բարի, միշտ Մայր է: Մեր փրկութեան սէրը միշտ կենդանի է ի նմա ոչ նուազ արգասաւոր եւ ոչ ալ նուազ գործօնեայ քան զայն, զոր ունէր Մարգերութեան Օգոստափառ խորհրդոյն հաճութիւն տուած ատենը⁴»:

Ուրեմն առանց հիման չէ որ, բարեպաշտութիւնը զՄարիամ, ինչպէս

¹ Ճառ՝ ի Փոթի. Ս. Կուսին: — ² Ի վերոյ կուտութեան. — ³ Սղմ. Ի.Լ. 15: — ⁴ Ճառ՝ Ա. Ետու մն:

նաեւ զՅիսուս հաւարուսին նմանութեամբը կը հաճի ներկայացընել մեզ, որ իւր ձագերուն անօթութիւնը փարատելու համար, ըստ իմիք իւր գոյութենէն կը կերակրէ զանոնք, կամ թխսամոր առակովը, որ իւր ձագերուն վախի աղաղակներուն սիրալիր խանդաղատանօր կը ծածկէ զանոնք իւր մայրենի թեւերուն տակ: Իւր Որդին մեզ Փրկիչ տալով, միթէ Իւր սեպհական արիւնը չտուաւ մեզ ամեննուս, զորս Յիսուս «եղբարց¹» տխրոտով կը պատուէ, եւ զորոնք Ինքն ալ սիրեց իրրեւ «այս Աստուածային Որդւոյն մարմնոյն անդամները²»: Եւ այն մօր նման որ իւր տղոց աղաղակը լսելով՝ սիրով կը վազէ զանոնք ամէն վտանգէ պահպանելու: Մարիամ հեծութիւննիս եւ հռուանքնիս լսածին պէս Իւր պաշտպանութեան ներքեւը չի՞ պահպաններ զմեզ՝ աղատելու համար այն ամէն բանէ, որ կրնայ մեզ մահառիթըլլալ...: Այնպէս որ, ինչ տեսակ օպերախտութեամբ ալ Յիսուսի դէմ՝ յանցաւ որ ըլլանք, երբեք Մօրը գթութեանէն յուսահատելու չենք, այլ վրտահալութիւնն ապաշխարութեան հետ միացընելով՝ աներկիւղ եւ չմերժուելու ապահովութեամբ նետենք զմեզ

¹ Յովհ. Ի. 17: — ² եփես. Ե. 30:

Անոր գիրկը: Այս մի եւ նոյն գթութեան քաղցր արգենաց փորձն ուրիշ անգամներ առնենէն ետքը, յերաւելաւ երջանիկ ենք տակաւին հաւատարիմ ըլլալնուս համար: Հապա որչափ աւելի պէտք է յուսանք ամէն առթի մէջ Անոր օգնութիւնը, որ կաթոցին սիրով կը սիրէ «Հօր Աստուծո՞վ սիրուած, եւ Յիսուսի Քրիստոսի շնորհօք պահպանուածները¹»:

«Գթութեամբ, քաղցրութեամբ եւ սիրով լեցուն Նոյն²»: Ո՛հ, որչափ կը պատշաճին Քեզ Աստուծոյ վրայ ըսուած խօսքերը թէ «որչափ որ հզօր այնչափ ալ գթասիրտ ես³»: Եթէ երկրիս վրայ Ռեփեկային առ Եղևազար⁴ ցոյց տուած մարգասիրութենէն անսահմանարար աւելի գերազանց եւ աղնիւ բարեսրտութեամբ մ'ի՛նք Իրմէզ խնդրեցիր Աստուածային Որդիէդ ջրոյ ի գինի փոխուելուն հրաշք⁵, հապա ի յերկինս որչափ աւելի պէտք է ըլլալ այդպիսի բարութեան մը զարմանալի տարածութիւնը մեր վրայ՝ երբ «այս արտասուաց վայրին խորեկն⁶» խոնարհաբար կը թախանձենք յօգնութիւն փութալու Յիսուսի երկրպագելի աւրեամբը փրկուած դժբախտներու: Ո վ

1 Յուդա, Ա. 1: — 2 Ողջ լէր թագ.: — 3 Սղմ. ԿԱ. 12: — 4 Ծննդ. Ի. 9. 19: — 5 Յովհ. Բ. 3: — 6 Ողջ լէր թագ.:

Գրուն, որուն «...բէ շրթունքն անդճա-
բար կը պահեն գթութեան օրէնքը¹»,
Գուն, յորում այս պատուական ա-
ռաքինութիւնը մեզի համար նման է
աշնան վերջերն եղած ցօղին², որ կու-
գայ երկիրը զովացնելու, Գուն որ
«օգնելու հակեալ ես անոնց ամէնուն,
որոնք զԳեղ իրենց օգութեան կը
կոչեն³», մեղ օգնական եղիր, առանց
մեր անարժանութեանց նայելու, մինչեւ
մեր կենաց վերջին շունչը:

Գթած Աղյս, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԻԸ:

Կոյս հարաւարդիմ, արօրձեւ վաւն
մկր:

Ո՛հ, այս կոյս հաւարարի՞ տիտղոսն
ինչպէս աղէկ կը յայտնէ Անոր յատ-
կանիչը, որ միշտ անանկ հաւատարիմ
մնաց Աստուծոյ, այնպէս հաւատա-
րիմ ամէն պարտաւորութեանց, ա-
նանկ հաւատարիմ շնորհաց, այնպէս
հաւատարիմ երկնից կամաց, մինչեւ
անգամ այն տեսակ պարագաներու
մէջ, յորս բնականապէս հօդ կը տա-
րուի ինչայելու մօր մը որ սիրտը ցաւոց
չենթարկուի:

1 Առակ. ԼԱ. 25: — 2 Առակ. ԺԹ. 12:
— 3 Սղմ. ՃԽԳ. 18:

Հաւատարմութիւն Աստուծոյ առ-
ջեւը գեղեցիկ եւ աղնիւ բան մ'ըլլա-
լու է, որովհետեւ նոյն Ինքն կա-
նուանի «հաւատարիմ եւ ճշմարիտ¹,
եւ մարգարէ թագաւորին բերնով
«երկրի հաւատարիմներու²» անունը
իրբեւ պատուոյ եւ մեծութեան տի-
տղոս կու տայ արդարոց, որոնց վրայ
Իւր աչքերը հաճութեամբ կը հանդ-
չին³: Բայց եթէ այսպէս է բոլոր
արդարոց նկատմամբ, ինչպիսի՞ հա-
ճութեամբ հապա Աստուծոյ նայ-
ուածքը պիտի չհանգչի այս Կուսին
վրայ, յորում հաւատարմութիւնն
ամենաթեթեւ յարձակում մը չկրելէն
դատ, ընդհակառակն օրէ օր աճեցաւ
«առաքինութենէ յառաքինութիւն
բարձրանալով⁴», մինչեւ այն փառաւոր
վայրկեանը, յորում «արդար դա-
տաւորը պսակեց Անոր գլուխն Իւր
արդեանցն արժանաւոր թագով⁵»:
«Ինք ոչ թէ ի մեղ⁶» ինչպէս բո-
լոր մարդիկ, այլ «յարդարութեան եւ
ի սրբութեան յղացած⁷», եղական եւ
մեծարգի առաձնաշնորհութեամբ Աս-
տուծոյ սեպհականուեցաւ առաջին
վայրկեանէն ի վեր, եւ ոչ միայն ամե-

1 Յայտ. ԺԹ. 11: — 2 Սղմ. Ճ. 6: —
3 Սղմ. ԼԳ. 16: — 4 Սղմ. ՅԳ. 8: —
5 Բ. Տիմ. Գ. 8: — 6 Սղմ. Ծ. 7: —
7 Գուկ. Ա. 75:

նափօրր սխարմամբ ալ չլծուլցուց բնաւ Դինքն Աստուծոյ Հետ միացընող կապը. այլ աւելի եւս զայն սեղմելէ ալ երբեք չդադարեցաւ, մինչեւ այն օրն յորում արքորանքէն երկնային Հայրենիքը գնաց: Որուն համար Սուրբ Ընտելին հիացած կը կոչէ, “երբ ի Բեղ եղած շնորհաց անսահմանութեան վրայ կը մտածեմ, ո՞վ բարեբաստիկ Այոս, հոգիս ապշած կը շփոթի, եւ լեզուս մանջ կը լլայ: Ո՛հ, որչափ գեղեցիկ եղան Բու քայլերդ, կրնանք մենք ալ կրկնել Երգոց փեսային հետ: Ո՛հ, որչափ վսեմ եղան շնորհաց ճանապարհն Գը, ամենասիրելի Գուտար թագաւորաց Թագաւորին: Այո՛ս Գըս հաւատարիմ, յամենայնի հաւատարիմ՝ յաչս Աստուծոյ: Այս քիչն ալ, զոր Աստուած հաճեցաւ մեզ յայտնել, որանչելի է, հապա որչափ աւելի պիտի ըլլայ ինչ որ ծածուկ անց ներքին սրբապայրին մէջ. “— Գըս Աստուծոյ հետ միացընող Բեղ նկատմամբ մեզ կը սորվեցընէ, ո՞վ Մարիամ, որ պարտաւորութեանդ սէրն այն աստիճան հասուցիր որ շնորհու-

1 Գիւրբ ի վերայ աչն. կուսութ.: —
 2 Երգ. Ե. 1: — 3 Ողմ. ԽԳ. 11, 12: —
 4 Սիրաբ. ԽԸ. 25: — 5 Երգ. Գ. 1:

նեցար Աստուածային մայրութեան ամենափառաւոր պատիւը, մինչեւ որ Բարձրելոյն պատգամաբեղէն չապահովցար թէ այս քրանչելի փառքը կը համաձայնի զԲեղ ցմիշտ Աստուծոյ նուիրող ուխտին հետ: Գարձեալ կը սորվեցընէ թէ, Գուն այնչափ հաւատարիմ էիր օրինաց որ մինչեւ անդամ սրբութեան նուաստացուցիչ արարողութեան ենթարկուեցար սիրով: Գուն որ այնչափ պատճառներով այս ուրիշ մարց պարտաւորութենէն աղատ էիր: Եւ մենք կը իմանանք ու կ'օրհնենք զԱստուած, որ ի Բեղ սասնկ գեղեցիկ եւ ընտիր օրինակներ ցոյց կու տայ մեզ: Բայց երբ զԲեղ ի Գողգոթա մտքերնիս կը բերենք, երբ հոն ալ զԲեղ հաւատարիմ կը տեսնենք Կախախնամութեան երկրպագելի խորհրդոցը, մինչեւ գիւցադնաբար յաղթեցիր Մարենի բնութեանդ Փրկչին խաչին տակը, ո՛հ, սրտերնիս ի խոր կը յուզուի, որանչացած Բու առ Աստուածային կամս վսեմ համակերպութեանդ եւ գերմարդկային զոհողութեանդ վրայ: Ինչպիսի՞ն Որդի էր Յիսուս, ինչպիսի՞ն Մայր էր Գուն, ո՞վ Մարիամ, երկու կողմէն ալ ինչ անճառելի արգահասութիւն: Ուրեմն շատ պատշաճ կերպով Բու վրայդ կը ստուգուի բառին բոլոր զօրութեամբ թէ “մինչեւ ցմահ հաւա-

տարիմ եղար 1: Այս, մինչեւ հան-
դիսատես ըլլալու, մինչեւ կամացդ
բոլոր զօրութեամբք միանալու ամենա-
սիրելի եւ կաթողին սիրով սիրուած
Միածին Որդւոյդ ամենամանարդ եւ
ամենացաւալի մահուան:

Ամենատուրք կուսին մարդկան հա-
մար Աստուծոյ բրած անման անձ-
նանուիրութեան գործոյն կատարմանէն
ետքը միթէ վարմանալու տեղի կայ,
որ բոլոր դարերու մէջ իբր նոր բան
մ'ըլլայ, որ ինք երբեք երես դարձու-
ցած չըլլայ իւր օգնութիւնը խնդրող-
ներուն հառաչանքներէն²...: Ո՛հ,
միթէ Անոր զինքը յօգնութիւն կու-
չողներուն ամէնուն ալ ցոյց տուած
գթալից բարութեան այս սքանչելի
յարատեւութիւնն ըստ բաւականի չի
բացատրուիր այն զոհողութեամբք, զոր
իւր մեծանձն սիրտը մեր օգտին հա-
մար ընելու հիանալի քաջութիւնն
ունեցաւ: Եւ եթէ այսպիսի է Անոր
բարութիւնը «Եւային ամէն մէկ
զաւակին համար, որ իւր պոսորանաց
վայրէն կ'աղաղակէ առ այս ողորմու-
թեան Մայրը³», հապա ինչպիսի՞ եւ
ուանդ պիտի չունենայ անոնց շահուն,
որոնք մասնաւորապէս իրեն ջերմե-
ւանդ են, եւ «Իւր բարի ու հաւա-

1 Յայտ. Բ. 10: — 2 Յիւլեա ո՛վ
կոյս: — 3 Ողջ Լըր թագ.:

տարիմ ծառաներն են¹: Ո՛հ, կարե-
նայինք մենք ալ այս երջանիկ թուոյն
բաժանորդ ըլլալ, հաւատարապէս հա-
ճելի ըլլալով Որդւոյն ալ Մօրն ալ:

Ո՛վ Մարիամ, Գուռն երկրիս վրայ
միշտ առ Աստուած ցոյց տուիր «կա-
տարեալ հաւատարմութեամբ օժտած
սիրտ մը²»: Գուռն երկնից բարձրու-
թեանէն միշտ զայն ցոյց տուիր նաեւ
առ մարդիկ, որոնք տասնեւութ դարէ
աւելի՝ միշտ ի Բեզ գտան Աստուծու
եւոքն ամենաքաղցր եւ ամենապահով
ապաստանարանը: Այս, Գուռն մարդ-
կային ամէն ազնուութենէ եւ մարդ-
կեղէն ամէն բարեսիրութենէ անհա-
մեմատաբար շատ աւելի գերազանց
կերպով հաւատարիմ ես անոնց: Հա-
զիւ թէ կարելի է Բու առջեւդ յի-
շել կամ Ռախարին հաւատարմու-
թիւնը, որ Խորայէլացոյց լլտեսները
փրկեց³, եւ կամ Մեղքողինը, որ իւր
ամուսինն աղատելու համար չվարա-
նեցաւ հօրը բարիութիւնն իւր վրայ
գրգռելու⁴: Ո՛հ, հաճէ՛ ընդունիլ
մեզի համար որ, մենք ալ միշտ հաւա-
տարիմ մնանք Յիսուսի Գրիստոսի
եւ Բեզ, որպէս զի արժանի ըլլանք
Բու մասնաւոր պաշտպանութեանդ

1 Մատթ. Ի. 21: — 2 Ծննդ. Լ. 20:
— 3 Յեսու Ես. Բ. 1: — 4 Ա. Թագ.
Յ. 12:

բազըր արդեանց փորձը շարունակաբար առնելու,

Հաւատարիմ՝ Կոյս, աղօթէ՛ մեզի համար:

ՄՏԼԾՆԿԼՆ ԻԹ.

Հայկոյն արդարութեան, աղօթեմս վրաս մեր:

Եկեղեցին կերպով մը սպառելով այն ամէն տիտղոսները, որոնք կրնային ծառայել ի պատուել զՄարիամ՝ զՄայրն եւ զԿոյսը, ուրիշ գաղափարներու կարգի մը կ'անցնի, նոր գովեստներ Անոր նուիրելու համար:

Եւ ամէնէն յառաջ Հայեւոյ մը պատկերովը յօգնութիւն կը կոչէ, որ զարմանալի կերպով կը ցրտացնէ «Աստուածային մեծփայելութեան լուսացնուղ ճառագայթը¹»: Իրօք եթէ Աստուածային Բանին նկատմամբ ճշմարիտ է որ «Ինքն է պատկեր եւ լոյս փառաց Հօր²», միթէ Մարիամ չէ՞ որ յինքն կ'արտափայլէ հնարաւոր եղած մեծագոյն հաւատարմութեամբ՝ «մարմնացեալ Բանին³», պաշտելի ստորոգելիքը: Միթէ Ինքը չէ՞ որ բոլոր

1 Իմաստ. Ի. 26: — 2 Երբ. Ա. 3: — 3 Յովհ. Ա. 14:

բանական արարածներէն աւելի Անոր կը նմանի, Աստուած որոշած էր Իւր ձեռաց բոլոր գործոց մէջ «առաջին տեղն Անոր բռնել տայու¹», «գեր ի վերոյ բլալու, ըստ բանից Սրբոյն Անսելմոսի, այն ամէն բանի, որ Աստուած չէ²», եւ միթէ կրնա՞ր չճոխացրնել զինք Իւր անսահման կատարելութիւններէն յառաջ եկած պարզեւօք եւ արդեամբք: Եւ ճիշդ այս է, որ Սըրբոյն Պետրոսի Ոսկեխօսին բսել տուած թէ. «ով որ Մարիամայ վրայ առանց հիանալու եւ յափշտակուելու կը մտածէ չի ճանչնար զԱստուած, որ զԱյն Իրեն ամենակատարեալ պատկերն ստեղծեց³»:

Բայց ինչու՞ համար Եկեղեցին զինք հոյեի՞ն արարութեան կ'անուանէ: Կ'ասեւ եւ յառաջ, վասն զի Մարիամ հաւատարիմ հայելի է Անոր, որ «Արեղակն արդարութեան⁴», կը կոչուի, որուն Աստուածային ճառագայթները կը տաքցընեն, կը բեղմնաւորեն հօգիները, եւ բոլոր քրիստոնէական առաքինութեանց բողոքիլ ու ծաղիկիլ կու տան: Արդ նոյն Ինքն Յիսուս մատնանիչ կ'ընէ այս առաքինութեանց ամբողջութիւնը յատուկ

1 Սղմ. ՃԼԷ. 8: — 2 Գիրք զսկզբանէ մարդկային կենաց, ԳԼ. Ի: — 3 Ճառ. ՃԴ: — 4 Մաղաք. Գ. 2:

բացատրութեամբ երբ կ'ըսէ. «երանի անոնց որ քաղցած ու ծարաւի են արդարութեան¹», անոնց որ ջերման² գին բաղձանքով կը փափագին կատարելութեան, եւ իրօք ըլլալու ալ եւս անպեամբ եւ յարատեւութեամբ կաշխատին:

Յետ այնորիկ Եկեղեցիէն Հոս գործածուած այս բառն ուրիշ իմաստ մ'ալ ունի, արժանի ամէն բարեպաշտ Հոգւոց ուշագրութիւնը գրաւելու: Սուրբ Պօղոս Առաքեալն «արդարութիւն³», կ'անուանէ սրբարար շնորհաց վիճակը, որ իրաւունք կու տայ յաւիտենական երանութեան: Այսպիսի գերբնական, պատուաւոր, մեծարգի վիճակ մը մեր Նախահայրը կորսնցուց իւր անհնազանդութեամբը՝ թէ իրեն եւ թէ բոլոր իւր սերնդոց համար: Բայց իւր անկմանէն անփոխապէս վերջը, Աստուած կը ծանուցանէ անոր թէ «կին մը պիտի ջախջախէ իւր անկման պատճառ եղողին գլուխը³»: Այն ատենէն ի վեր կրցաւ գննել յանձին այս դատեր Եւայի իրրեւ ի հայելւոջ թէ իւր թշուառութեան խորութիւնը յորմէ աղատելու համար կարօտ էր Փրկչի մը, որ անփոք պ Մարգ-Աս-

¹ Մատթ. Ե. 6: — ² Հուովմ. Ա. 17: Փիլիպ. Գ. 9: Տիա. Գ. 7: — ³ Ծննդ. Գ. 5:

տուած ըլլալու էր, եւ թէ ապաշխարութեան հարկաւորութիւնը, առանց որոյ չէր կրնար օգուտ քաղել Մարեմայ Որդւոյն ընեյիք փրկագործութեան բարիքէն: Իսկ հաւատարիմ Ֆնացող Հրեշտակն իւր կողմանէ կը նշմարէ այս արտօնացեալ արարածին մէջ Անոր Մայրը, որ է սկիզբն եւ աղբիւր իւր ի շնորհս յարատեւութեան եւ հաստատութեան ըստ որում՝ Սրբոյն Պօղոսի! եւ Եկեղեցւոյ շատ մը Սուրբ Արդարպետաց² վկայութեամբը կրնայ ըսուիլ որ բարի Հրեշտակները Յիսուսի Քրիստոսի պարտական են իրենց հաւատարմութեան արգիւնքն ու փառքը: Արեւմտական անարգեայ, դատապարտուած հրեշտակն ալ տեսնելու չէ² շնորհաց մէջ յղացած եւ «Իւր ամենախորին խոնարհութեան համար³», Աստուածային Մայրութեան փառաց բարձրացած Մարեմայ վրայ իւր ամբարտաւանութեան յիմարութիւնը, եւ իւր գերբնական գեղեցկութիւնը կորսնցրնելու անսահման չարաբարտութիւնը,

¹ Եփես. Ա. 10: Կորնթ. Ա. 17—20: — ² Ս. Յերոն. ԳԼ. Ա. առ Եփես.: Ս. Գրիգ. Գիւրբ Ա. ԳԼ. Բ. ի Գիրս Ա. Թագ.: Ս. Բեռն. Ճառ Ի. Ի վերայ Երկոց: Ս. Թովմ. Ընթերց. Ժ. ի վերայ Ա. Գլխոյ Յովհ. եւ Խնդ. Ի. Յօդ. 9: — ³ Ղուկ. Ա. 48:

եւ միանգամայն զինքը զայրացընող սոսկալի գարշութիւնը: Միթէ մի եւնայն ատենը չի տեսներ իւր մեղաց անհնարին ծանրութիւնը, որուն պատճառաւ Քրիզէ զուրկ մնաց իւր կամքը՝ մարդուն վայելած բարիէն զերագոյն բարիքէ մը զրկուելով, եւ սոսկ պարզ չարութեան համար, առանց զգայարանաց հրապուրանաց ենթարկուած ըլլալու: Եւ միթէ ստիպուած չէ՞ իւր ձայնն ալ միացնելու երկնի եւ երկրի ձայնին, որ կը հռչակէ «արգար է Աստուած¹», եւ ամէն մէկուն ըստ գործոց կը հատուցանէ²:

Խոկալով յԱմենասուրբ Կոյսն «մեր մեղքէ ազատութեան»³, մեծարգի բարիքին վրայ, ո՛հ, զգուշանանք այնպիսոյն նմանելու, որ «հայելւոյ մէջ ինքը զինքը բնականապէս զննելով կը հեռանայ եւ անսկզպէս զինքը կը մոռնայ⁴»: Մանաւանդ թէ հոգ տանինք որ սրտերնու խորը թափանցէ «ի մեղաց ազատութիւններնուս զմեզ արդարութեան էրջանէ՛ք՝ գերի ըրած ըլլալուն»⁵ մտածմունքը: Եւ թէ «որչափ որ հոգիներնուս խորունկն էրբ չարութեան ծառայեցուցինք, այնչափ

ալ աւելի պարտաւոր ենք այսուհետեւ սրբութեան ծառայեցընել¹»:

Ո՛վ Գուռն, յորում «մենք իբրեւ ի հայելւոյ կը նկատենք»² Բարձրելոյն երկրպագելի կատարելութիւնը, ո՛հ, արձակէ հոգիներնուս վրայ Քու վսեմ առաքինութեանցը շացուցելու սոյն մէկ փրկարար ծառագայթը: Հաճէ՛քու հեղութեամբ ուղղել մեր զայրացկոտութիւններն ու անհամբերութիւնները, Քու խոնարհութեամբ մեր սնտոի պահանջմունքն ու ամբարտաւանութիւնը, Քու մաքրութեամբ մեր զգայական հեշտութեան տեսչա՛քը, Քու սիրովդ մեր առ Աստուած պաշտութիւնը, եւ առ ընկերն ճշմարիտ եղբայրսիրութեան պակասութիւնը: Մանաւանդ հաճէ՛քու սուրբ միջնորդութեամբ ընդունիլ մեզ Աստուծոյ շնորհքը վերստին ստանալու եթէ զայն կորսնցուցած ըլլալու անհամեմատ թշուառութիւնն ունինք, եւ անոր մէջ յարատուելու բարիքը, եթէ Անոր անսահմանաբար անգին եւ պատուաւոր բարեկամութիւնը վայելելու մեծ երջանկութիւնն ունինք, հաճէ՛ օգնել մեզ մշտ աւելի եւս «Քու Աստուածային Որդւոյդ կերպարանակից ըլլալու»³ և

1 Յայտ. յ. 2. 5: — 2 Մատթ. յ. 2. 27: Հոովմ. Բ. 6: Յայտ. ի. Բ. 12: — 3 Հոովմ. 2. 18: — 4 Յակ. Ա. 24: — 5 Հոովմ. 2. 18:

1 Հոովմ. 2. 19: — 2 Ա. Կորնթ. յ. Գ. 12: — 3 Հոովմ. Բ. 29:

Քեզի նմանելով՝ ով Գուռն, որ Ա-
նոր կենդանի պատկերն էս¹»:

Արդարութեան հայե՛րի, աղօթե՛
մեղի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ Լ.

Աթոռ Խմաստուրթեան, աղօթեալ
յսամ մեր:

Յաւիտենական Հօր Որդի, Բան
երկրպագելի՝ «Աստուծոյ ներքին խօսք,
խորհուրդ, միտք անստեղծ եւ համա-
զոյակից հանձար Աստուծոյ²», Գուռն
ես «Իմաստութեան աղբիւրը³»: Այ՛ր,
Գուռն ես այն Իմաստութիւնը, որ բո-
ւանդակ արարածներէ յառաջ ծնար
Բարձրելոյն ծոցը⁴: Այն Իմաստու-
թիւնը, որ լուսոյ նման կը սփռէ գի-
տութիւնը, որուն մտածութիւնները
ծովէն աւելի ընդարձակ են եւ խոր-
հուրդները քան զանդուռնս խորագոյն⁵:
Այն Իմաստութիւնը, որ «ի ծագաց ի
ծագս կը տարածի զորութեամբ, եւ
ամէն բան կը հոգայ քաղցրութեամբ⁶»:
Գուռն ես այն անսահման Իմաստու-

1 Ս. Յովհան. Դամասկ. Ճառ՝ ի
Ծուռնոզն Ս. Կուսին: — 2 Պօսի. Է, Խօկմ.
Ի վերայ խորհրդ. Ժ. Բ. շարած: — 3 Սիրար,
Ա. 5: — 4 Անդ, Ի. Գ. 5: — 5 Անդ, 39:
— 6 Իմաստ. Բ. 1:

թիւնը, «որ իրբեւ՝ ի խորանի հանգչե-
ցաւ յարգանդի Ափնասուրբ Կուսին¹»,
եւ զոր քրիստոնեայ հաւատքը հա-
ճութեամբ կը զննէ Աստուածային
Մօր ծունկերուն վրայ կերպարանօք
ամենասիրելոյ յորդիս մարդկան²:
Իսկ Գուռն, ով Մարիամ, այս Մար-
մնացեալ Իմաստութեան համար ա-
մենափառւոր արթութեամբ ես, շատ աւել-
ի յարգելի եւ արժանաւորագոյն քան
ամէն ամենազեղեցիկ, ամենաճոխ եւ
ամենապայծառ բան, զոր մենք կրնանք
ճանչնալ, եւ կամ երեւակայել արա-
րածոց մէջ: Սուրբ Պատմութիւնն
ուզելով ցուցնել մեզ թէ ո՞րչափ
զարմանալի էր Սոլոմոն թագաւորին
փղոսկրեայ աթոռը կըսէ որ, «աշ-
խարհիս բոլոր թագաւորութեանց մէջ
նմոր նման գործք մը չինուած չէր³»:
Ո՛հ, չենք վարանիր մենք ալ ըսելու
որ, Աստուած Իւր ամենակարողու-
թեամբ բան մը ստեղծած չէ նման
Անոր, զոր գրեթէ կենդանի աթոռ
բրաւ Իւր Աստուածային Որդւոյն:
«Աթոռ սքանչելապէս անզուգական,
յորում» ըստ մտաց Սրբոյն Պետրոսի
Դամիանոսի, մեր մեծ Աստուածը
հաճեցաւ հանգչիլ⁴»: Մեծաշուք ա-
թոռ տիեզերաց գերագոյն թագաւ-

1 Սիրար, Ի. Գ. 12: — 2 Սղմ. Խ. Գ. 3: —
3 Գ. Թագ. Ժ. 20: — 4 Ճառ՝ յԱ. Էտու. մն:

որին, կ'ըսէ Սուրբն Պետրոս Ոսկեխօս: Եւ իրական տուն, զոր Իրեն համար շինեց Իմաստութիւնը, ընտիր եւ ամենափառաւոր տաճար, զոր եօթը սիւներով¹ զարդարեց, որոնք նշան են Մարեմայ հողւոյն վրայ զարմանալի առատութեամբ սփռուած եօթը պարգեւաց²:

Իրօք, որ սիրտն երբեք այնպէս խոր թափանցեց այն սուրբ երկիւղը, որ շարունակաբար խոյս կու տայ իւր Տիրոջ անհաճոյ ըլլալէ, եւ որ փոյթեւումսն է իւր կենաց ամենափոքր գործքերն անգամ՝ կընելու: Ո՞ր սիրտն աւանկ կատարելապէս օժտուած է այն գորովալից Աստուածպաշտութեամբ, որով հոգին Աստուծոյ հետ կը կապուի անպայման զոհողութեամբ, եւ «սրտին մէջ ծայրագոյն փափագ մը կը յղանայ Անոր պատուիրանները կատարելու»³: Ո՞ր մարդկային արարածն ընդունեցաւ երբեք այնպիսի ճոխ հեղու՞մ մ'այն «Սրբոց գիտութեանէն»⁴, որ միտքը կը լուստուորէ իւր ամեն պարտաւորութեանցը վրայ, եւ իւր վախճանին հասնելու համար ընտելեք ճամբան ցոյց կու տայ: Մարեմայ՝ դեռ եւս մատղաշ տղայ, ի Տաճարն

¹ Առակ. Թ. 1: — ² Ճառ. ՃԽ. յԱւետուան: — ³ Սղմ. ՃԹԱ. 1: — ⁴ Առակ. Թ. 10:

առանձնանալը, իւր առ Աստուած կատարեալ նուիրումը, Աւետման խորհրդոյն ատենն իւր առ Հրեշտակն ուղղած խօսքերը, իւր Եւպղարէթ յԱստուած միայն ծածուկ կենանք¹ մեզ ըստ բաւականի կ'ըսեն թէ այսպիսի արտօնացեալ հոգի մը սրբափ զարդարուած ըլլայ այս անգին պարգեւներով: Իւ որուն վրայ այնչափ փայլեցաւ, ինչպէս ի Գողգոթա Մարեմայ վրայ այն զօրութեան պարգեւը, որ ամենածանր փորձերու վրայ ալ յաղթանակել կու տայ: Որուն վրայ երբեք շողաց, ինչպէս «ամենախոհեմ Կուսին վրայ»², խորհրդոյ պարգեւը, որ ամենադժուարին պարագաներու մէջ ալ ուղիղ կ'առաջնորդէ, եւ կամ հանձարոյ պարգեւը, որ շնորհաց վսեմագոյն գիտմանց մէջ կը թափանցէ, ինչպէս Անոր վրայ «որուն հանգիստն անգամ, կ'ըսեն Սուրբ Արարդապետները թէ, չէր ընդհատեր Անոր բարձր խոկմանը»³: Վերջապէս ուրիշ ո՞վ ունեցաւ երբեք այնպիսի բարձր աստիճանաւ գիտութեան պարգեւը, որ ըսլոր միւսները կը

¹ Կողոս. Գ. 3: — ² Լիթանիա: — ³ Ս. Ամբր. Գիւրբ' ի վերայ կուսութ.: Ս. Անտոնիոս, Ճառ Ի. 80դ. 1. ԳԼ. Բ: Ս. Բեռնարդոս՝ Ճառ Ծ՛Ա. Մասն Գ. Տիւղ. ԺԵ. ԳԼ. Բ:

պսակէ, եւ կը կայանայ ամէն բանի
հեղինակն ու վախճանը ճանչնալու,
եւ Աստուծակէ զատ ուրիշի համար
չգործելու, չպարելու եւ չնշխելու վրայ:
Մարիամ միշտ Աստուծոյ համար չա-
պրեցաւ եւ իւր քաղցր ու փառաւոր
անցքն առ հանդերձեալ կեանս միթէ
«Աստուածային սիրոյն ծայրայեղ
սլացման արդիւնք մը չեղաւ¹»:

Հոս բոլոր մեր մեծարանքը նուիր-
ւենք այս արքունի Աթոռոյն², յաւի-
տենական Իմաստութեան «այս Աս-
տուածային աթոռոյն³», եւ աղաչենք
ՂԱնիկայ, որ այսպիսի շքեղ պատուոյ
վերացաւ, իւր գեղեցիկ հոգւոյն զար-
դարանքը կազմող թանկագին պար-
գեւաց առատ մասնակցութեանը հետ
ընդունի նաեւ մեզի համար իւր պաշ-
տելի Որդւոյն մեզ սորվեցուցած քրիս-
տոնէական գիտութեան վրայ մեծա-
զոյն յարգ մ⁴ ունենալու, եւ զանիկայ
մեր վարուց ու բարուց յատուկ կա-
նոն մը ընելու շնորհքը: «Ամէն բանէ
յառաջ աւելի Աստուծոյ արքայու-
թիւնն եւ Անոր արդարութիւնը
փնտելով⁴», եւ բարեգործութիւն-

1 Գոսիէ, Շատ Ա. Ի փոխու. մն Ս. Կու-
սին: — 2 Ս. Գրիգ. Սքանչ. Շառ. յԱ. Ե-
տու. մն Ս. Կուսին: — 3 Ս. Եփրեմ, Ի
գովեստս Աստուածածոր: — 4 Մատթ.
Չ. 33:

ներնուս միջոցաւ պաշտովելով «գանձ
մը, զոր ոչ ցեցը կ'ուտէ, եւ ոչ ալ
գողերը կրնան գողնալ¹»:

Ո՛վ Մարիամ, մի թողուր որ մենք
«Աստուծոյ թշնամի եղած մարմնոյ
մնլար գիտութենէն², կամ Աստուծոյ
առջևը յիմարութիւն սեպուած աշ-
խարհի սուտ գիտութենէն³», խա-
բուիրք: Մանաւանդ քու հօր բա-
րեխօսութեամբդ ըրէ որ հլու աշա-
կերտ ըլլանք «այն գիտութեան, որ
ի վերուստ կու գայ, որ բարեբարոյ է,
խաղաղութեան բարեկամ, պարկէշտ,
եւ առաքինութեան պտուղներով լե-
ցուն⁴»: Որ զհոգին աւետարանական
խաղաղութեան ու չափաւորութեան
մէջ կը պահէ, որ կը զսպէ կրից ան-
կարդ շարժումները, որ կարծեաց
մէջ զգուշութիւն եւ շրջալայեցու-
թիւն կ'ազդէ, որ այլոց ներող, եւ
իւր անձին վրայ խստութեամբ հսկել
կը սորվեցնէ: Ո՛վ Գուն, որ առաքել
Իմաստութեան Խնդրանէ Աթոռն⁵ ե-
ղար, այն Աստուածային Յիսուսին,
որով «կը յայտնուի իւր պարզեւաց
հիանալի զանազանութիւնը⁶», մեր
հոգւոյն համար առատ հեղուժ մ'ըն-
դունէ:

1 Մատթ. Չ. 20: — 2 Հուովմ. Ա. 28:
— 3 Ա. Կորնթ. Գ. 19: — 4 Յակ. Գ. 18:
— 5 Իմաստ. Է. 28: — 6 Եփես. Գ. 10:

Իմաստութեան ամօրն, աշօթէ մեզի համար:

ՄՏԱԾԵԿԱՆ ԼԱ.

Պատմատ մերոյ Եւրոպական, աղօթեալ մեզի համար:

Երբ տիեզերքն ամենաթանձր խաւարի մէջ թաղուած էր, երբ այն քրիստոնէական ամենաքաղցր եւ հաստատուն յուսոյն եւ ոչ մէկ նշոյլ գերեզմանէն անգին մարդու լոյս կուտար, երբ Ագամայ թշուառ որդիք ենթարկուած էին զգայարանաց սրտի եւ մտաց եռապատիկ խանգարման, ճշմարիտ ուրախութիւնն անձանօթ էր երկրի: Մարիամ աշխարհ կու գայ, Աստուած կ'ուզէ որ Ինք մեր փրկութեան գործակից ըլլայ: Ար ծնանի ֓րկիչը, յանկարծ ամէն բան կերպարանափոխ կ'ըլլայ, նորոգուած մարդը կ'ընդունի ամենաազատիչ եւ ամենասփոփիչ լոյսերն իւր բնութեան ազնուութեան, իւր վախճանին փառաւորութեան, եւ անոր համեմու միջոցներուն վրայ, եւ միանգամայն իւր բարոյական վէրքերուն առօրջութեան եւ կենաց բոլոր խեղճութեանց քաղցրացուցման համար ամենաաւատ օգնութիւններ: Արնայ այնուհետեւ հոս

վայելել մաքուր եւ քաղցր բերկրանք, որոնք են առհաւատչեայ եւ ճաշակ Աստուածային յարազուարճ ուրախութեանց, զոր Աստուած իրեն կը խոստանայ հանդերձեալ կենաց մէջ:

Ո՛ր էիք դուք նախ քան այն՝ Մարեմայ միջոցաւ մեզ արուած «բարի եւ քաղցր Փրկչին» գալուտար. ո՞նք էիք դուք սիրոյ, ամօթխածութեան, պարկեշտութեան, խոնարհութեան սուրբ հրճուանք, ի հաւատոց ազդուած զոհողութեան հաճոյք, կաթողիկէ Աստուածպաշտութեան սուրբ եւ քաղցր բերկրանք, երկրպագելի շաղորդութեան անձառելի զուարճութիւնք...: Այո՛, Աստուծմէ ետքը Մարեմայ պարտական ենք այն ամենայն՝ ինչ որ Յիսուսի Բրիտոսի Կրօնին մէջ կը շարժէ, կ'ընդարձակէ եւ կը սփոփէ սրտերնիս: Ինքն է որ մեզ շահեցաւ այնչափ անգին բարիք, եւ նաեւ երկրիս վրայ այնչափ երջանկութիւն, իւր Հրեշտակին խօսքերուն հաւանութեամբը «զոր Բարձրեալը խաւրած էր Մարեմայ միջոցաւ Ինքը զԻնքը մեզի տալէն յառաջ Անոր հաւանութիւնը հարցնելու համար»²;

Ուստի հռչակաւոր մարտիրոս Սուրբն

1 Տիա. Գ. 4: — 2 Պօսիւէ, Ճառ Բ. Եւեոտմն:

Իրենէսոս գրեթէ Առաքելոց ժամանակակից, Ամենասուրբ Կուսին այս հաւանութիւնն անուանեց «պատճառ փրկութեան բոլոր մարդկային ցեղին»¹ : Անկեց վերջը կ'ըսէ Սուրբն Օգոստինոս . «Ինք մարդուն փրկագործութիւնը հոգաց, որ ինքն իրեն ձգուած անդարմանելի կերպով կորսուած էր»² : Կը յաւելլու Սուրբն Պետրոս Գաւթիանոս . «Մարեմայ համար, ի Մարիամ եւ Մարեմաւ ուղեց Աստուծոյ Որդին մարդկութիւնը վերածնանել, առանց մէկուն ամենեւին բան մը չեղաւ»³, իսկ առանց միւսին ալ բան մը չվերանորոգեցաւ»⁴ :

Ուստի մեր երախտագիտութեան եւ սիրոյն ցմբշտ արժանի այս Կուսին վրայ կը գտնեն Էկեղեցւոյ բոլոր անդամք իրենց ուրախութիւնն ու երջանկութիւնը : Ինք եղած էր Հին արդարոց ջերմագին փափագանաց առարկան, որոնք հեռուէն ողջունած էին յԱնձին Կորա զՄայրն Աստուածային Արարչին եւ լիմպոսին մէջ սպասած էին Անոր ծննդեան իրրեւ այն իրենց յարբայութիւնն Աստուծոյ յաղթական մտից փառաւոր աւուր արուսեկի : Ինք Յիսուսի Համբարձմանէն ետքն

1 Գիրք Ե ընդդէմ Հերիսոփոտաց ԳԼ ԺԹ : — 2 Ճառ ԾԵ Ի վերայ Սրբոց : — 3 Յովհ. Ա. 3 : — 4 Ճառ յԱւետուածն :

երկրիս վրայ եղաւ նեցուկ եւ սմբխութարութիւն բոլոր հաւատացելոց»¹ : Յանանց հայրենիս ընտրելոց ցնծութիւնն է, որուն աղնուական գերդաստանին աւելի շքեղութիւն մը կուտայ, ըստ որում «երկիրք վերափոխուելով, կ'ըսէ Սիենացի Սուրբն Բեռնարդինոս, աւելցուց անոր փառաւոր ընակաց ցնծութիւնը»² : Եւ «Անոնց մեծագոյն փառքը, կը գրէ Ս. Բոնաւ վենաուրա, Աստուծոյ տեսութենէն ետքը զԱնիկայ տեսնէն է»³ : Ինքն է նաեւ, ըստ ջերմեանդն կարծեաց Էկեղեցւոյ՝ քաւարանին մէջ արգելուած հոգւոց մխիթարութիւնն ու ցնծութիւնը, ուր անոնք յերանելի կեանս մտնելէն յառաջ պէտք է որ մաքրուին : «Գունն ես, Ամենասուրբ Կուսին դարձած կը կոչէր Անդրեաս Կրեաացին, Գունն ես անոնց գորովագութ ազատարարը»⁴ : «Ես եմ անոնց մայրը, կ'ըսէր նոյն Ինքն Ամենասուրբ Վայրը Սրբուհի Բրիգիտային, եւ իմ բարեխօսութեամբս չեմ դադարիր զանոնք սփոփելէ»⁵ : Ինք է վերջապէս այս աշխարհիս վրայ բոլոր քրիստոնէից ցնծութիւնը : Ամէն դարերու եւ ամէն վի-

1 Պոսիւէ, Ճառ Բ. Ի Փոս. Ս. Կ. : —

2 Ճառ Ի Փոս. Ս. Կ. : — 3 Ի Հայեկոյն, ընթերց. : — 4 Ճառ Ա. Ի Նիջուածն Ս. Կ. : — 5 Յայան, Գիրք Գ. ԳԼ ԸԼԸ :

ճակի մէջ Բու սուրբ Անունդ, սիլ Մարիամ, միթէ անոնց համար անուշ շուծեամբ եւ հիացմամբ, քաջալերութեամբ եւ զօրութեամբ լեցուն չէ՞ արդեօք:

Օրհներբ ՂԱստուած մեզի ի Մաւրիամ այսպիսի մարութիւնով, ասանկ քաղցր, այս տեսակ անկեղծ եւ այսպէս տեսական ուրախութեան առարկայ մը տուած ըլլալուն համար: Օրհներբ նոյնպէս ՂՄարիամ մեզ անոր սկիզբն ու աղբիւրը տալուն համար: Ո՛հ, եթէ աստն մը Հրեայք իրենց երախտագիտութիւնը կը խոստովանէին առ Յուդիթ եւ առ Էսթէր հրապարակական ուրախութիւններով եւ գրուածօք¹, ինչէր պէտք չէ որ ընենք մենք այս Աստուածային Այսր պատուերու համար, որուն պարտական մնացած ենք անհամեմատաբար աւելի մեծագոյն պարտաւորութիւններով: Ինչպիսի պիտի չըլլայ արդեօք մեր մեծաբանքն առ Իւր Օգոստոսփառ Անձը, մեր փոյթեւանդութիւնն Անոր Տօները հաշակելու թէ որդիական ցնծութեամբ եւ թէ եռանդուն բարեպաշտութեամբ:

Ո՛վ բարի եւ սիրելի Մարիամ, որուն ողջոյնը միայն բաւական եղաւ որ մը սուրբ Արարպետն իւր մօրն արդանդին մէջ ցնծութեամբ խայտաղընե-

¹ Յուդիթ, Ժ. 14-15: Էսթէր, Թ. 18:

լու¹»: Դուն՝ որ գիտես շնորհք հոգեւորական արտաութիւններն յուրախութիւն փոխարկել, Դուն՝ որ Յիսուսն վերջը «մեր յոյսն ես²», ս՛հ, մինչդեռ կը սպասենք Հոնշտակաց եւ Սրբոց հետ Բու վրագ սքանչանալու վայելքն ունենալու, անընդհատ կ'ուղենք յիշել Բու զարմանալի առաքինութիւնները եւ կրկնել Բու սուրբ գովեստները: Այո, մենք երջանիկ ենք երախտագիտութեամբ եւ խանդաղատանօք յուզուած սրտերնուս խորէն կու՛ն կարենալնուս համար. «մոռացման մէջ թաղուի մեր աջը, եթէ երբեք մոռնանք ո՛վ անստիճար Սոյս այն նախնայն երախտանքը, զոր Դունն ունի մեր սրտերուն վրայ: Յամբի այս մեր լեզուն, եթէ Դուն Բո՞ւ պաշտել Որդեղ երբ մեր ջերմեանդն երգերուն սկիզբը գրուած չըլլա՞ս³»: Ըրէ որ Բու բարեբարութեանց շարունակ յիշատակութեամբը կարող ըլլանք միշտ նորագոյն եռանդեամբ կրկնել:

Պատճառ մեր ուրախութեանց, աւղօթէ մեզի համար:

1 Գուկ. Ա. 44: — 2 Ողջ լեր Թաւուհի: — 3 Սղմ. ՃԼԳ. 5-6:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԻՒ.

Անօթ հոգեւորական, ադօթեա ղխակ
մեր:

Որչափ որ հոգին գեր ի վերոյ է նիւթէն՝ այնչափ ալ մարմինը կ'աղանուանայ իւր գործոց մաքրութեան եւ ուղղութեան զօրութեամբ բարձրանալով հոգւոյն բնական արժանապատուութեան եւ գերազանցութեան: Նոյնպէս եւ որչափ որ շնորհաց կարգը կը գերազանցէ ընտրութեան կարգին մէջ եղած ամէն բարձրագոյն բաները, այնչափ ալ քրիստոնէին մարմինը, որ գերբնական պատճառներով կը ջանայ որբացրնել իւր բովանդակ կարողութեանց գործածութիւնը, մեծութեան եւ հիանալի աղնութեան գործը կ'առնու: Արդ ճշգիւ ի Մարիամ այս աղնութիւնն եւ մեծութիւնը պատուելու համար Եկեղեցին հոս Անոր Սուրբ Գրոց մէջ յաճախ գործածուած¹ մեծայարգ անօթի նմանութեամբ կը պաղատի, եւ ոչն այս մեծութեան ամենավսեմ աստիճանը մեզ հասկըցընելու համար զԱնիկայ Հոգի-որ անօթ կը կոչէ:

¹ Առակ. Ի. 15: Գործ. Թ. 15: Հոռով. Թ. 23: Ա. Թեսաղ. Գ. 4: Բ. Տիմ. Բ. 21:

Իրօք ասիկայ ըսել չէ՞ արդեօք որ այս կուսանաց կոյսը ժամանակէ յառաջ կը վայելէր, այսպէս ըսելու համար տեսակ մը կերպարանափոխութիւն, անոր նման որ պիտի հանդիպի ընտրելոց ընգհանուր յարութեան օրը, որ մինչդեռ իւր սուրբ մարմինն ըստ իմիք կանխաւ ունէր «հոգւոյն հանգամանքը»¹, հոգին չէր զգար անոր բեռը կամ ծանրութիւնն իւր Աստուծոյ հետ յարաբերութեանց մէջ, այլ ազատօրէն կրնար սլանալ դէպ ի իւր Արարիչը, եւ անանիւ Անոր երկըրպագելի ներկայութեամբը, իրբեւթէ իրեն շնորհուած ըլլար բնաւ ենթարկուած չըլլալ զգայարանաց աղեցութեան:

Մարիամ կանխաւ պահպանուած էր սկզբնական մեղքէ, եւ անոր տխուր արգիւնքէն՝ ցանկութենէն²: Ուրեմն, ինչպէս կ'ըսէ Լուի տը Պլուա, մեր նախահարց Եղեմական դրախտին մէջ վայելած առանձնաշնորհութիւններն ունեցաւ, ուր մինչեւ որ տեսեց իրենց անմեղութիւնը, հոգիներնու կարողութիւններն Աստուծոյ հետ միացած էին, եւ իրենց զգայարանները կատարելագոյն հպատակ էին հոգիներնուն³: Արդ միթէ չէր պատշաճեր

¹ Ա. Կորնթ. Ժ. 44: — ² Լիթանիա, Մտած. Ժ. 2. — ³ Հոգ. Կրթ. Յաւել. Ա. ԳԼ. Բ:

որ մարմին մը, որ ըստ բանից Սրբոյն Օգոստինոսի պէտք էր դառնայ՝ «Յիսուսի Աստուածային մարմին՝ աբժանի եղած ըլլար այս անհուն պատուոյն՝ Անոր հոգին յօրինող գեղեցկութեան համաձայն հանգամանաց միջոցաւ: Ինք բարբառովին Աստուծոյ էր եւ «գրեթէ յԱստուած փոխարկեալ»² կը յաւելու նոյն Սուրբ Հայրը՝ Սրբոյն Գիտնեսիոսի հետ³. Եւ ի՞նչպէս ենթադրել որ Անոր Մարմնացեալ Բանին խորհրդոյն ներքին մասնակցութիւն մ'ունենալու համար Աստուծու գիտմամբ ստեղծուած մարմինը կարող ըլլար բանի մը մէջ արգելուլ այսպիսի գեղեցիկ հոգւոյ մը թռիչք. եւ կամ Իւր բարձրագոյն վախճանին հետ կատարեալ համաձայն չդտնուէր:

Եռանդնալից հրճուածք ընդունինք ինչ որ Եկեղեցւոյ շատ մը Սուրբ Վարդապետներէն վերջը մեզ հասուցած է Ռիքարդոս Ս. Վիկտորեան թէ «Իւր արտաքինը ներքնոյն պէս բոլորովին հրեշտակային էր»⁴. Եւ զարմանալի կերպով յինքեան կ'ար-

1 Ճառ Ը. Ի Փոխ. Ս. Կոստին: —

2 Ճառ ԼԵ. Ի վերայ Սրբոց: — 3 Ի Թուղթն առ Ս. Պօղոս: — 4 Ի վերայ Երգոց, ԳԼ. Ի Զ: Ս. Ըմբ. Ի վերայ Հաստ. կոստ. թ. ԳԼ. Է: Ս. Թովմ. ՎՃիռ. զանազանութիւն Յ. Խնդ. 1, Յօդ. 2 առ 4: Ս. Բոնալ. զանազան Յ. Մասն 1, Յօդ. 2:

տափայլէր Իւր հոգւոյն Աստուծոյ հետ ունեցած երկնային հաղորդակցութիւնները: Յիրաւի եթէ «Վարապետին աչքերը միւս Մարդարէներէն գուշակուած Բրիտանոյ տեսնելու որու շուած ըլլալով արժանի չգատուեցան ուրիշ արարածներու վրայ նայուածք մը ձգելու»¹, ամենեւին տարագոյս չկայ որ Մարիամ յԻւր Որդին կենդրոնացուցած չլլայ բոլոր Իւր զգայարանաց գործածութիւնը, եւ թէ ամենայն ինչ ի Նմա չձանուցանէր մանաւանդ պարզ իմացականութիւն քան թէ մարդկային արարածի մը կեանքը:

Ո՛հ, որչափ հեռու ենք այսպիսի օրինակէ մը, մենք որ ամբապինդ կ'զգած ենք սնտոի կուոյ, զորոնք ժամանակը կը տգեղացընէ եւ բոլորովին կը քանդէ: Մենք որ մեր անյագ նայուածքովը կը լափենք աշխարհիս անցաւոր բարիքներն եւ բոլոր գործունէութիւննիս դժբախտաբար կը գործածենք պատրիչ վայելքներու հետաւուտ ըլլալու. մենք որ «յառիտնալկան աներեւոյթ բարեաց»², յողողդ հաւատք մ'ունենալնիս կը ցուցընենք. մենք որ շատ յաճախ կը թողունք որ վրանիս ծանրանայ այս մարմինը, որուն տաղտկալի բռնա աղօթքի ատեն Աս-

1 Ս. Յերոն. Թուղթ Գ: — 2 Բ. Կորնթի, Գ. 18:

տուծոյ հետ հայրը դակցու թիւննիս կը դժուարացընէ, եւ արգելք կ'ըլլայ մեզ զուարթագին քայլերով ընթանալու մեր երկրպագելի Տիրոջ ծառայութեան մէջ. ո՛հ, այսուհետեւ զօրեղ ջանքով աշխատինք «Հոգեւոր մարդ՝» դառնալու, յիշելով որ «Հոգւոյն մէջ սերմանողը յաւիտենական կեանք պիտի հնձէ՝»¹։ Թէ որ հեռուէն անգամ չենք կրնար Աստուծապէս արտօնացած Մարեմայ նմանիլ՝ գոնէ «ջերմաջերմ եռանդեամբ»², ուղղենք «մարմնոյ փնասարեր ազդեցութիւնը, որ հոգին ամօթակոր կ'ընէ, եւ կը վայրաբերէ անոր բարձր թռիչքը, զոր կը գիտէ ընել դէպ ի իւր յատուկ Արարիչը»³։ Ո՛վ Մարիամ, Տէրն զՔեզ սկզբէն ի վեր «հիանալի սրբութեան անօթ մը»⁴, ըրած էր, բայց երբ «Հոգին Սուրբ վրագ իջաւ»⁵, ամենամաքուր արգանդիդ մէջ կատարելու գթութեան մեծ խորհուրդը, այսինքն «Աստուծոյ, որ մարմնով երեցաւ»⁶, եւ մի եւ նոյն ատենն զՔեզ բարձրացընելու բովանդակ արարածոց մէջ ամենաշքեղ արժանապատուութեան, զՔեզ աւելի եւս մաքուր եւ սուրբ

1 Ա. Կորնթ. Գ. 1: — 2 Գաղատ. Զ. 8: — 3 Հուովմ. Ժ. 1: 2: — 4 Իմաստ. Թ. 15: — 5 Առակ. Ի. 4: — 6 Ղուկ. Ա. 35: — 7 Ա. Տիմ. Գ. 16:

ըրաւ: Աստուած առաւել եւս լեցուց ի Քեզ նաեւ «այն գերբնական Հոգին», որ զմարդ կ'ապրեցընէ Աստուծոյ եւ յաւիտենականութեան բարեաց համար: Կը մեծարենք ի Քեզ այդ ամենակատարեալ եւ գերմարդկային կեանքը, եւ այն ամէն արտօնութիւնները, որոնցմով հաճեցաւ Քարձրեալը գեղեցկացընել զՔեզ: Ո՛հ, ըրէ որ Քեզ նմանինք որչափ որ կը ներէ տկարութիւննիս, յամենայնի ազատելով զմեզ զգայարանաց գերութենէն, «յառաջանալով դէպ ի հոն»¹։ Իբրեւ զըզդիս լուսոյ, ձեռնամուխ ըլլալով արդարութեան եւ ճշմարտութեան գործոց, եւ այն ամէն բանի, որ Աստուծոյ հաճոյ է², Ա՛ղէ, մի զանար այս շնորհքը մեզի համար ինդրելը:

Հոգեւոր Անօթ, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԳ.

Անօթ պատուելի, աղօթես դասս մեր:

Մարմնոյ մը համար մեծ պատիւ է այնպիսի հոգւոյ մը հետ միացած

1 Սղմ. Ծ. 14: — 2 Եփես. Ե. 8—10:

ըլլալն, որ է կ'պատկեր Աստուծոյ¹, եւ որչափ որ հոգին աւելի դեղեցիկ ու աւելի հարուստ է երկնային պարգեւներով, այնչափ աւելի մեծագոյն է այն արժանապատուութիւնը, առ որ այս այնքան սերտ կապը կը բարձրացնէ հմարմինը: Եւ որ այնչափ աւելի պատուաւոր անօթ մը կը գառնայ, որչափ որ շնաշխարհիկ եւ պատուական է յայտ հաւատոյ յինքեան պարուհակած անուշատութիւնը: Ինչպիսի պատիւ է ուրեմն Մարեմայ մարմնոյն համար այնպիսի հոգւոյ մը հետ միացած ըլլալն որ Յիսուսի մարմնէն վերջն ամենաազնիւն, ամենամաքուրն, ամենատուրն եւ երկնային պարգեւներով ամենազարդարունն է:

Սակայն որչափ աւելի պատուաւոր է այս սուրբ մարմինն Աստուծային Մայրութեան տեսակէտով: «Ատեն մ'անտարակոյս մեծ պատիւ եղաւ Արրահամու Հրեշտակի կերպարանքով զԱստուծո ընդունիլն եւ Անոր հետ ընտանեբար տեսակցիլը², բայց Աստուծո գոյացապէս չմիացաւ այն Սուրբ Կահապետին հետ: Կամնապէս եւ Մովսիսի ալ մեծ պատիւ եղաւ Սինա լեռը պատող զարհուրելի ամպին մէջ թափանցելն եւ կայծակներու շագնան եւ փայլատակմանց մէջ

¹ Ծննդ. Ա. 27: — ² Անդ, յԼ. 1—2:

երես առ երես Բարձրելոյն հետ խօսակցիլը¹, բայց Աստուծո գոյացապէս չմիացաւ այն անմահ օրէնսդրին հետ: Այնպէս եւ մեծ պատիւ մ'եղաւ Էդիայի, Գերագոյն Իսկին անսահման մեծութեան հրաշալի նշանները լսելն ու տեսնելը², բայց Աստուծո Իւր երկրպագելի Անձն անոր ցոյց տալով գոյացապէս չմիացաւ Իւր հաւատարիմ մարգարէին հետ: Մեծ պատիւ մ'եղաւ նաեւ Չարէսի Յիսուսի Քրիստոսի իրեն սեղանակից ըլլալը³: Վարդու եւ անոր քերց զինք հիւր ընդունելինն եւ Անոր Աստուծային բարեկամութեան նշանաւոր պատիւը վայելելինն⁴: Բայց այս ամէն յարգելի եւ պատուաւոր յարաբերութիւնները որչափ հեռու են Մարդ-Աստուծոյ Իւր Մօրը հետ ունեցած ներքին եւ անհամեմատ յարաբերութենէն:

Ո՛հ, չղարմանանք երբ Սուրբ Վարդապետներն այս Աստուծային Մօր առջեւը սքանչացած ողջունած ըլլան ի Նման ամենազգու խօսքերով այն մեծաշուք արգանդը, յորում Բանը մարդկային բնութիւն առաւ: «Մարեմայ մարմինը, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, է նոյն Ինքն Յիսուսի մար-

¹ Եւք, յԹ. 20: — ² Գ. Թագ. յԹ: — ³ Դուկ. յԹ. — ⁴ Անդ, յ. 40: Յովհ. յԱ:

մինը¹։ Ինք կենդանի երկինք մ'է, կ'ըսէ Սուրբն Պետրոս Գամփանոս, Աստուածային լուսթեան մարմնաւոր տաճարն է²։ Աստուած՝ կ'ըսէ Վիլլամսոնը Սուրբն Թովմաս, Ազամայ մէկ դուստրն Իրեն Մայր ընելով այնպիսի մեծութեան մը բարձրացուց զայն, ուր ոչ մարդու եւ ոչ ալ Հրեշտակի նայուածք մը կրնայ հասնիլ³։

Մենք իրաւամբ կը յարգենք սրբազան անօթները, յորս Եկեղեցին կը պահէ ամենասուրբ եւ երկրպագելի Գոհութեան խորհուրդը, բայց միթէ համեմատութիւն կայ այն պաճուճանօք զարգարուած արծաթին եւ ոսկւոյն, եւ այն Օգոստոսփառ եւ միշտ մեծարելի մարմնոյն մէջ, որ Աստուածային Փրկչին մեր փրկութեան զինքը լլայլէք արիւնը մատակարարեց...։ Այո, այս է սքանչելապէս «Աստուծոյ ընտրած անօթը⁴», անսահմանաբար աւելի մեծագին քան թէ տեսակ տեսակ պատուական քարերով ընդլուզեալ ոսկեղէն անօթ մը⁵։ Այս է այն անանկ մարուր եւ այնպէս սուրբ մարմինը, որ արժանաւորապէս «յԱստուած յինքեան կրելէն վերջը⁶» չեն-

թարկուեցաւ գերեզմանին ապականութեան, այլ ընդհակառակն, ըստ բարեպաշտ աւանդութեան Եկեղեցւոյ, Աստուածային Փրկչին մարմնոյն պէս յարութեամբ փառաւորուեցաւ։

Հոս հաւատքնիս կենդանացընենք, յիշենք որ անձուելի Հաղորդութեան խորհրդով, մարմննիս թէեւ ապականացու, սակայն վերացած կը գտնուի զսեմ միութեան, որ զինքը պատուական անօթ կ'ընէ, եւ որուն նկատմամբ պարտաւոր ենք շարունակ զգոյշ կենայու, որպէս զի ամենափոքր աղտոյութեամբ ալ չպղծուի...։ Ո՛հ, ստուգիւ պիտի չկարենանք ըստ բաւականի խորհիլ, եւ ըստ բաւականի իմանալ այս ճշմարտութիւնն իւր ամէն պարագաներովն։ Հաղորդութեամբ մենք Յիսուսի տաճար կը դառնանք։ Ասիկայ քիչ է, Յիսուսի սրբալայր եւ խորան։ Աս ալ քիչ է։ Սրբազան, ճշմարիտ եւ կենդանի անօթներ, յորս կը գոցուի Յիսուս...։ Ի՞նչ ըսի։ Աս ալ դեռ քիչ է։ Կենդանի անօթներ, որոնց հետ Ինքն այնպիսի անձուկ կերպով կը միանայ որ «միատեղ մի եւ նոյն բանը կը կազմեն», ըստ բանից Սրբոյն Կիւրղի¹։ Մենք ուրեմն, որ այսպիսի մեծ պատիւ մ'ընդունեցանք, աշխատինք այն աստիճան ողորմելի

¹ Ճառ՝ Ի Փոթի. Ս. Կ. ԳԼ. Ե. — 2 Ճառ՝ Ի Ծն. Ս. Կ. — 3 Ճառ Գ. Ի Ծն. Ս. Կ. — 4 Գործ. Թ. 15. — 5 Սերբաբ. Ծ. 10. — 6 Ա. Կորնթ. 2. 20.

չբլլալու մեր ապերախտութեամբը, նախորդաբար մինչև անբաններսն մեզմէն, որոնց հանձար չէ տրուած 1: Մենք որ մեր խորաններուն սուրբ անօթներուն նկատմամբ օրինաւոր յարգութիւն ունինք, ս՛հ, հոգ տանինք նոյնպէս մեր անձն յարգելու ամէն տեղ եւ ամէն ժամանակ, ջանանք մտածմունքնիս ցանկութիւննիս, բազմանքնիս, նայուածքնիս, եւ բոլոր զգացմունքնիս ազնուութեան, մեծութեան եւ փառաց բարձրութեան վրայ սեւեռելու, առ որ կը վերացընէ զմեզ միայն մէկ հատիկ Հաղորդութիւնը:

Ո՛վ Մարիամ, Գուռն որ Աստուծո՛վ ետքն ամէն մեծարնաց արժանի ես, Գուռն ինն ամիս մաքուր արգանդիդ մէջ փակուած կրեցիր այն Աստուածը, որուն լուսաճաճանչ պայծառութեամբ պատած մեծ վայելչութիւնը կը պաշտեն Հրեշտակք՝ իրենք զիրենք իրենց թեւերովը ծածկելով 2: Ի՞նչ ուրեմն կրնանք Քեզ նուիրել այն պատուոյն համար, որով Ի՛նք մեծարեց զՔեզ՝ Քու սեպհական գոյութենէդ առնելով Իւր զգեցած մարմինը, եւ ասանկով Քեզ տարով՝ ըստ իմք Իրեն հետ անպատում նոյնութիւն մը 3: Հիմակուհի մայրնդ ունէ այն ամէն

1 Սղմ. ԽԸ. 13: — 2 Եսայի, Զ. 2: — 3 Ս: Պետրոս Գամբանոս, Իճնուհդ Ս. Կ.:

զգացմանց իսնարհ յայտարարութիւնը, զըր այսպիսի բարձրութիւն եւ մեծութիւն մը պէտք են ազդել ճշմարիտ հաւատացելոց սրտին: Խեղամուտ ըրէ զմեզ թէ բոլոր արարածոց մէջ որչափ բարձր կը հանէ զմեզ Աստուածային Հաղորդութիւնը, որպէս զի անով դինքը պարունակող սրբական անօթներէն աւելի վեեմացած մեզ հետ յամենայնի՛ միշտ իբրեւ երկնային փառաց պատրաստուած պատուաւոր անօթներու հետ՝ վարուինք:

Պատուելի անօթ, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԳ.

Անօթ ընտիր Աստուածպաշտու-
Սնսն, աղօթես դասն մեր:

Աստուած պաշտութիւն, բարեպաշտութիւն, եռանդ, անբաւական խօսքեր են յայտնելու Իւր Աստուծոյն ծառայութեան համար միշտ ի Մարիամ եղած եռանդնայից նախանձալուրդութիւնը: Ո՛վ կրնայ նկարագրել Անոր աղօթքին կենդանի եռանդը, Աստուծոյ հետ սերտ միութիւնը, Անոր հիացեալ եւ յափշտակուած լուս-

1 Հռոմ. Թ. 21:

Թիւնը, խաղաղութիւնը, հոգեւոր եւ այնպիսի քաղցր ու զուարճալի ցնծութիւնը, առ իւր սիրելին անընդհատ հառաչանքները, Անոր խորհրդոց սրբութիւնը, ցանկութեանց եւ բաղձանաց մաքրութիւնը, Անոր յօժարակամ խիստ մեծանձն եւ բացարձակ անձնանուիրութիւնը:

Ո՛հ, Երուսաղէմի տաճար, ուր Ինք այնպիսի ջերմեռանդութեամբ անցուց իւր կենաց առաջին տարիները, մեր հիացման արժանի որպիսի՞ գաղտնիքներ կը փակես դուն քու սուրբ պարիսպներուդ մէջ: Կազարէթի արքունի տուն, ուր այնչափ ժամանակ ապրեցաւ ի ներկայութեան եւ յարատեւ խոկման իւր Որդին եղած Աստուծոյն, քու յարգելի պատերդ ճարտասանօրէն կը խօսին տակաւնի Լաւրետոն գացող ուխտաւորաց սրտին, ըսէ՛ մեզ քանի մը բան այն երկրպագութեան, օրհնութեանց, սիրոյն վրայօք, եւ այն Մարեմայ հոգւոյն զերմարդկային հեղման ի սիրտ իւր Աստուածային Յիսուսին: Եւ դուն սուրբ բնակարան, ուր Ինք բնակակից եղաւ սիրելի Առաքելոյն հետ Փրկչին մահուանէն վերջը¹: Ո՛հ, ինչ անհամեմատ ջերմեռանդութեան սլացքներ ծածկեցիր տուն մարդկան գիտութեան: Ինչպիսի՞

1 Յովհ. ԺԹ. 27:

Թռիչներ եւ անպատում հառաչանքներ Յիսուսի յերկինս համբառնալու ասենք: «Ինչպիսի՞ սիրոյ ուժ դնութիւն, որուն գործակից էր բնութեան ամէն խանդաղատանք, եւ ամէն Աստուածային շնորհաց գործօնէութիւն¹»:

Թէ որ Եսթէր թագուհին կը համարձակէր Աստուծոյ բսելութե «Գուն գիտես որ քու աղախինդ ոչ ուրեք դրած է իւր խնդութիւնն ու երջանկութիւնը, եթէ ոչ ի քեզ միայն²», եթէ սուրբ Մարգարէն Դաւիթ կրնար իւր անձին համար հաւաստել թէ՛ «իւր շրթունքն անդադար զԱստուած կ'օրհնէին³, եթէ իւր հոգւոյն եռանդեամբը կը կրէր «ո՛հ, երբ պիտի կարող ըլլամ զքեզ անընդհատ եւ յաւերժաբար տեսնել, ով Աստուած իմ⁴», եթէ Սուրբ Պօղոս Առաքեալը կրցաւ ըսել թէ «կենդանի եմ, չէ թէ ես՝ այլ յիս կենդանի է Յիսուս քրիստոս: Ես մարմնոյս կապերը խորտակած տեսնելու բաղձանքով կ'այրիմ⁵ ի յաւիտեան Անոր հետ միանալու համար⁵», եթէ վերջապէս Հնդկաստանի հռչակաւոր Առաքեալն իւր գորովալից բարեպաշ-

1 Պօսիւ է, Ճառ Ա. ի Փոթ. Ս. Կ.: —

2 Եսթ. ԺԳ. 18: — 3 Սղմ. ԼԳ. 2: —

4 Անդ. ԽԱ. 3: — 5 Գաղ. Բ. 20: Փիլիպ. Ա. 23:

տու թեան զուարթագին քաղցրու-
թեանց մէջ սիրով թախացած կա-
ղաչէր Աստուծոյ չափ գնելու Իւր
պարգեւաց, ըսելով թէ՛ «շատ է,
ս'ի՛ Տէր, ս'ի՛, շատ շատ է...», Բնչ
մտածելու է Հոպոպ Փրկչին Օգոստա-
փառ Մօր վրայ, զոր Սուրբերը կա-
նուանէին «հնոց մը, Աստուածային
սիրոյն հրդեհ մը»²։ Եւ զոր Երգոց
Փետայն կը նմանցընէ «հրոյ ու բու-
ցերու լապտերի մը»³։ Արգեւք օր մը,
ժամ մը, վայրկեան մը եղաւ, յորում
Անոր մտածմունքը, խօսակցութիւնը,
կամքն եւ Իւր էութեան բովանդակ
գործօնէութիւնը մի միայն զԱստուած
Իրեն առարկայ չունենար։ Վայրկեան
մը, յորում Ինք «երկնաւոր Հօր ա-
մենահաճելիէն զատ ուրիշ բան ընէր»⁴,
խելքէ մտքէ վեր փոյթեաւնդու-
թեամբ, դիտաւորութեան մաքրու-
թեամբ եւ յարգայից մեծարանօք։
Հարցընենք, կ'ըսէ Սուրբն Բեռնար-
դոս, Հրեշտակաց եւ Սերովբէից, ու-
րոնք սքանչացած են Անոր Աստուած-
պաշտութեան եռանդեան եւ սուրբ
բոցոյն լուսոյն վրայ»⁵...։ Եւ ո՞վ

1 Վարք Ս. Փրանկ. Բսավ.։ — 2 Ս.
Յովհ. Դամասկ. Ի Ննջումն Ս. Կ.։ Ս.
Բեռնարդիոնոս Սիենացի, Ճառ Թ. Ի վերայ
պղեւ. Ս. Կ.։ — 3 Երգ. Բ. 6։ — 4 Յովհ.
Բ. 29. — 5 Ճառ. Ի Փոթ. Ս. Կ.։

կրնայ պատմել այն ցնծութիւններն,
այն քաղցրութիւններն, այն զարմա-
նալի հրճուանքն, որով այսպիսի Աս-
տուածպաշտութեամբ Անոր սիրտը կը
լեցուէր։ Եղոյն Ինքն Գուռն ս'ի՛ Մա-
րիամ, ըստ բաւականի կը հասկըցնես
Քու սուրբ երգիչ բացայայտ հառաչ-
մամբը. «հոգիս ցնծաց յԱստուած եւ
ի Փրկիչ իմ»¹։

Ո՞վ Աստուածպաշտութիւն, ո՞վ
քաղցր եւ գորովագին քրիստոնէական
Աստուածպաշտութիւն, ո՞վ դուռն որ
սիրոյն հոսակաւոր գործողութեանց
սկիզբն ու նեցուկն ես, դուռն, որ ցաւէն
յօշտած սրտին յԱստուած ապաւի-
նութիւն կ'ազդես, յուսահատութենէ
պաշարուած հոգւոյն ոյժ կու տաս,
դուռն որ զղջացած մեղաւորին աչքերէն
անուշիկ մոխթարութեամբ խառն ար-
ցունքներ թափել կու տաս, եւ
զրեթէ երկնային արցունքներ Աս-
տուածային սիրով արեցած անմե-
ղութեամբ ապրողներու աչքերէն կը
հոսեցընես, եկուր, ս'ի՛ եկուր, եւ քու
գերագոյն օծութեամբ թափանցե-
սրտերնիս, եկուր եւ զմեզ Աստուած-
ային Տիրոջ «ծառայութեան օգտակար,
եւ ամէն բարի գործոց տեսակով պա-
տրաստուած պատուոյ եւ սրբութեան
անօթներու փոխարկէ»²։ Քու եր-

1 Գուկ. Ա. 47։ — 2 Բ. Տիմ. Բ. 21։

կնային ազդեցութեամբդ բոլոր մեր անդամներն Աստուծոյ ձեռքը Բարոյ դեմ իստեղծու էր յարմար արդարութեան դէնք բլանն¹։ Մարմիննիս կենդանի, սուրբ եւ Ասոր աչացն հաճնայական պատարագ դառնան²։

Հաճէ, ոյլ Մարիամ, «հիանալի անօթ, յորում Բարձրեայը յարմար էր հարստութեանը³», հաճէ մեզի համար ընդունիլ ջերմեանդութեան եւ Աստուածպաշտութեան մէջ քաղցր եւ զօրեղ բլայու շնորհքը։ Օր մ'Եղիսէ մարգարէին խօսքովը դժբախտ եւ ձանձրանալի պարտատիրոջմէ չափէն աւելի հարածուած այրի կին մ'իւր որդւոց շատ մը դատարկ ամաններ բերել տալով եւ հետզհետէ լեցրնելով իւր ունեցած քիչ մ'իւզէն՝ հրաշքով բոլոր ամանները լեցուեցան, որով թէ պարտքը վճարեց եւ թէ բնտանեաց պէտք եղած պարէնը ծաւրէց⁴։ Կամանապէս եւ Քեզ, ոյլ Սրբուհի Աղյս, Հրեշտակին խօսքովը, որ զՔեզ «շնորհքով լեցունէ» ողջունեց, եւ Եղեղեցւոյ խօսքովը, որ զՔեզ Աստուածպաշտութեան ընդդէմն կանուանէ, կը ներկայացընենք, ո՛հ, քրիստոնէական Աստուածպաշտութենէ եւ

1 Հռովմ. Զ. 13: — 2 Անդ, ժԲ. 1:
— 3 Սիրաք, 10Գ. 2: — 4 Դ. Թադ. Դ. 1: — 5 Գ. Կ. Ա. 28:

անկից յառաջ եկած բարի գործքերէ բոլորովն զուրկ ու դատարկ սրտերնիս, մի անարժան սեպեր անդադար անոնց մէջ Քեզ աւելցածէն լեցունելու, այնպէս որ ոչ միայն կարող բլանք մեր եռանդեամբն Աստուածային արդարութեան հատուցում ընել, այլ նաեւ երկնից համար ալ թանկագին արդիւնք շահիլ: Գրուած է թէ «Աստուածպաշտութիւնը ներկայ եւ հանդերձեալ կենաց խոստմունքներն ունի»։ Եւ որպէս զի այդպիսի խոստմունքներ յօգուտ մեր ճշգրտին՝

Աստուածպաշտութեան ընտիր անօթ, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԵՒ

Ասոր յորմորդական, աղօթեալ մասն մեր:

Սուրբ Գիւրքն ականջներնուս կը հնչեցընէ երկնային Փեսային ձայնը, որ իւր հարսը հոտաւէտ բուրաստանի մը կը նմանընէ «ուսկից կը բուրէ ամենազնիւ անուշահոտութիւնը²»։ «Ելէք, կը կոչէ, ելէք հիւսիսաշունչ հողմունք, եկէք հարաւային քամիներ իմ պարտիզիս մէջ շնչելու, եւ անու-

1 Ա. Տիմ. Դ. 8: — 2 երդ. Դ. 10:
13*

չարոյր հոտն ամէն կողմ՝ տարածելու¹ : Աօրկայ Աստուածային Այոյն է, զոր քրիստոնէական Աստուածագաշտութիւնը կը ճանչնայ բոլոր անկող եւ բովանդակ անուշահոտ ծաղկանց նմանութեամբ, որ կը գտնուին Լիբիոյ փետային պարտիզին մէջ : Մարիամ է, զոր Սրբոյն Սոփրոնիոսի հետ կ'անուանէ «հրճուանաց ճշմարիտ պարտէզը, ուր առատօրէն կը գտնուին բոլոր ծաղկունք, ամէն առաքինութեանց երկնային բուրմամբ² : Իւրոյր այս ծաղկանց մէջ Եկեղեցին զվարդը կ'ընտրէ Աստուծոյ սիրելոյն անունը յօրինելու համար, տալով Անոր ամենաազնիւ, ամենաշնորհալի եւ մոռերն ու սրտերն գրաւող ամենաշարմար գովասանքը :

Ո՛վ վարդ, զոր Արարիչն ասանկ սիրուն, այսպէս զեղեցիկ եւ ասանկ հաճելի շքեղութեամբ եւ անուշահոտութեամբ հարուստ ստեղծեց : Ո՛վ թագուհի երկրաւոր ծաղկանց, որոնք իրենց աննմանելի յօրինուածութեամբն ասանկ շնորհագեղ են, եւ մէկըմէկէ տարբեր իրենց գոյներուն բաժանմամբը, անուշահոտ բուրմամբը : Ո՛հ, ինչպիսի հաճութեամբ ես զքեզ կ'ողջունեմ իրրեւ Մարեմայ իմ Աստուածային Մօրս խորհրդաւոր նշանը, այն ամէն

¹ Երդ. Գ. 16 : — ² Ճառ. Ի Փոխուսի Ս. Կ. :

նաեւ շնորհքով զեղեցկացած հանձարներու թագուհւոյն, այն բովանդակ հոգեւոր ծաղկանց թագուհւոյն, որոնք կը կաղմնն եւ պիտի կաղմնն թէ յերկինս եւ թէ յերկրի Եկեղեցւոյ զարդարանքը, եւ վերջապէս բոլոր արարածոց թագուհւոյն, քեզ նման, բայց իմաստով եւ կերպով մը, որ յանսահմանս աւելի կը գերազանցէ քու բերկրական հիացումդ : Ո՛հ, Մօրիւմ որչափ աւելի շնորհագեղ վայելչութեամբ լուսաւոր է, որչափ հիանալի է իւր անզուգական անուշութեամբն եւ իւր առաքինութեանց անուշահոտութեամբը . . . :

Ամենասուրբ Առսին հոգին ո՛չ երբեք ամենաթեթեւ փոփոխութեան ստուերին ենթարկուեցաւ, ո՛չ երբեք չարին ամենափոքր շունչը կրցաւ թարշամեցնել այս Խորհրդաւոր Արարիչ թարմութիւնն ու պայծառութիւնը, ո՛չ երբեք այս զարմանալի եւ ճշմարտապէս Աստուծոյ սիրելի ծաղկին մաքուր բաժակը դադարեցաւ դէպ առ Ինքն իւր սիրոյն եւ օրհնութեան, ամենաբոբեղեղ սիրոյն, եւ ամենաեռանդուն օրհնութեան ակործական անուշահոտութիւնը բուրելէ : Որչափ ալ որ իւր քեզք պէս հողի մը մէջ անկուած, յորում փոթորիկներ կը ծռեն եւ կը հարուածեն անոնց ցօղունները, եւ տերեւաթափ կ'ընեն ա-

նոնց կայտառ պատկները, սակայն այսու ամենայնիւ Ինք ոչ Իւր բնական գեղեցկութենէն եւ ոչ ալ ակործելի հոտոյն քաղցրութենէն ու աղնուութենէն բան մը կորսնցուց :

Բայց Գուեն փուշ ունեցար, ո՞վ Խորհրդաւոր Վարդ : Բարէ, եւ Ընչ խոցոտիչ փշեր. սակայն մինակ Բեզի համար : Միթէ կրնայիր, ո՞վ Մարիամ, չնմանիլ ընտրելոց Աստուածային Գլխոյն, այն պաշտելի Փրկին, որ « պէտք էր Իւր փառքը մտնել չարչարանաց միջոցաւ »¹ : Ասկից զատ միթէ չէր պատշաճեր որ Գուեն ալ Քու Աստուածային Որդւոյդ պէս ինքիրմէդ սորվէիր « կարեկից ըլլալ մեր հիւանդութեանց »², մեղի համար զգալ այն սաստիկ վշտակցութիւնը, որ մի եւ նոյն ցաւոց փորձն առնուլ կու տայ³ : Իսկ մեզ նկատմամբ, որոնք ըստ մարմնոյ Քու եղբայրներդ ենք, եւ ըստ շնորհաց Քու սիրեցեալ որդիքդ Գուեն առանց փուշի ես : « Գուեն բան մը չունիս, կ'ըսէ Սուրբն Ամբրոսիոս, որ կարող ըլլայ մեզ փնտսել, ոչինչ որ ընդհանուր բարեսիրութեան ցոյց չըլլայ »⁴ : Ի Բեզ, կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, Ընչ կայ որ մեզ երկիւղ

¹ Ղուկ. ԻԳ. 26 : — ² Երբ. Գ. 15 : —
³ Անդ. Բ. 18 : — ⁴ Գրեք Բ. Ի վերայ կուտութեան :

կամ անվտանգութիւն ազդէ, Գուեն ոչ զարհուրելի ես, եւ ոչ ալ խիստ. Գուեն ամենուն նկատմամբ ալ ամենաքաղցր ես... : Ուշադրութեամբ կարգացէք աւետարանական պատմութիւնը, կը յաւելու այս Սուրբ Վարդապետը խնամքով հետադոտեցէք բովանդակ սրբադան էջերը, եթէ կարող էք գտնել ի Մարիամ ամենափոքր կէտ մը, որ ցուցնէ յանդիմանութիւն կամ խտութիւն մը, եթէ գտնէք ամենաթեթեւ նշան մը, որ սուտ հանէ ի Նմա ամենաընտիր քաղցրութիւնը, ձեզ կը շնորհեմ ալ այս Աստուածային Մօր վրայ չխօսիլ »¹ :

Ո՛հ, թող « յինքն գրաւէ զմեզ այս անմահ վարդին երկնային անուշահոտութիւնը », որ անմեղ սրտերը կ'օժէ, եւ անոնց ցնծութիւնն ու հրճուանքը կը կազմէ : « Անոր ետեւէն վազենք »² : Հոգ տանինք աս աշխարհիս վաղանցուկ հոտերովն կամ անոր շղջըրթութեան սնտախ ծուխովը չարբանայու, եւ կամ արարածոց պատրիշ պայծառութեանէն շլլանալու, որ « դաշտի խոտի նման աւաւտուուն կը ծաղկի եւ երեկոյին կը թռուի ու կը շորնայ »³ : Յիշէ՛ք որ այս աշխարհիս մէջ ամէն բան հոգինիս առ Աստուած

¹ Ճառ Ա. Ի Փոփումն Ս. Կ. : —
² Երգ. Ա. 3 : — ³ Սղմ. 2Թ. 6 :

բարձրացնելու համար միայն մեզ տրուեցաւ, եւ թէ սրտերնիս այս աշխարհիս չփակցընելով՝ իբրեւ թէ հոս ըլլար վերջն վախճաննիս, պէտք է որ զանոնք գործածենք բաղձանքներ գրգռելու ի փութածան ինդիր այն ճշմարիտ հայրենեաց, ուր միայն կը զանուէին անմահ ծաղկունք, եւ ուր Խորհրդաւոր Վարդը՝ Հրեշտակաց եւ Սրբոց զարմանքը կը կազմէ:

Ո՛վ Մարիամ, Գրուն՝ որ Էրեբոյի վարդենեաց պէս հռչակուեցար¹: «Գուն ջրոց եղբերքը զանուած վարդենեաց պէս ծաղկեցար²»: Քու յտակուծիւնդ շուշանին պէս մաքուր է³, եւ զարնան Խփփփփփփ պէս առնոյդ⁴: Բայց ո՞վ պիտի կարենայ ճիշդ դաղափար մը տալ մեզ ի քեզ բուրոյ Յիսուսի քրիստոսի անուշահոտուծեան⁵: Ո՛վ պիտի ըսէ մեզ թէ Քու առաքիլնուծեանցդ անուշահոտուծիւնը կը գերազանցէ «ազնիւ զման եւ ամենաբնտիր կնդրկին անուշահոտուծիւնը⁶»: Այո, Գրուն ես այն ընտրեալ ծաղիկը, որ մինակ այս աշխարհիս ցամաք հոլտին մէջ քեզի բաշեցիր «Աստուածային ցօղը սքան-

1 Սիրար, ԻԿ. 18: — 2 Անդ, ԼԲ. 17:
— 3 Եսայի, ԼԵ. 1: — 4 Սիրար, Ծ. 8:
— 5 Բ. Կորնթ. Բ. 15: — 6 Սիրար, ԻԿ. 20—21:

չելագէս արգարք¹»: Ծաղիկ օրհնեալ, ծաղիկ հրաշագեղ, ծաղիկ երկնային, միայն երկինքը պիտի կարենանք զքեզ լաւ մը ճանչնալ եւ արժանապէս գու վել: Ըբէ՛ որ «Քու անուշահոտուծեանդ ետեւէն ընթանանք²»: Աստուծոյ ճշմարիտ որդւոց մաքուր եւ անբիծ ճամբօնը³ որ մը զքեզ տեսնելու, եւ Քու Որդիդ քեզ տուած ամէն պարգեւեաց համար փառաւորելու բախտաւորուծիւնն ունենալու համար:

Խորհրդաւոր Վարդ, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԶ.

Աշտարակ Դաս. Թեան, սոցո՞՞՞նս
Պասն մեր:

Ի՞թէ «Դաւթի շինած ատամնաւոր աշտարակը, որուն պարիսպներէն կախուած կը տեսնուին հազարաւոր վահաններ եւ Խորայէլի զորաւորաց միւս ամէն ղէնքերը⁴ Երուսաղէմի զարդարանքն ու ամրոցը կը կաղմէր, Մարիամ չէ՞ Եկեղեցւոյ փառքն ու անւրաղթելի զօրուծիւնը: Բաց աստի,

1 Եսայի, ԽԵ. 8: — 2 Երդ. Ա. 3: —
3 Սղմ. Ը. 2: — 4 Երդ. Գ. 4:

միթէ Անոր երակներուն մէջ Գաւթի արիւնը չի վազեր, այն թագաւորին արիւնը որ տակաւին գահը չելած հովուի պարկեշտ հանգամանաց հետ կը միացընէր հսկայ Փղշտացւոյն յաղթողին նշանաւոր պարծանքը: Որչափ աւելի իրաւամբ ուրեմն Մարիամ կրնայ անուանուիլ Գոմի աշուրուհի, մինչդեռ ի Վամ կը սքանչանանք այսչափ մեծութեան ու փառաց այնպիսի խնարհութեան մը հետ միացած ըլլալուն վրայ...:

Բայց ինչ կերպով մենք պէտք ենք մասնաւորապէս յարմարցընել Աուսին «մեծ եւ բարձր աշտարակի մը¹» պատկերը, որուն անմատչելի ճակատն ամուր քաղաք մը կը պահպանէ: Մանաւանդ իւր պաշտպանութեան տեսակետով այն յարձակմանց դէմ, զոր սատանան միշտ տուած է Եկեղեցւոյ, որ աւանդապահ է Յիսուսի Քրիստոսի երկիրէն բերած ճշմարտութեան: «Ո՛հ, որչափ զօրաւոր է դժոխոց դէմ այս Օգոստոսփառ թագուհին, կը կոչէ Սուրբն Բոնալենտուրա: Գժուխոց համար պատերազմի կանգնած ստուարագունդ բանակէ մ'աւելի զօրաւոր է²»...: Ուստի չարանենդ հագին Եկեղեցւոյ դէմ՝ բուն յարձակումը բաժնի երբեք չդադարեա-

¹ Բ. Եղբ. Գ. 27: — ² Երդ. Է. 1:

ցաւ մի եւ նոյն ատեն Ամենասուրբ Աուսին դէմ ալ յարձակելու, որ Եկեղեցւոյ անառիկ բերդն է:

Երկրորդ գարէն ի վեր յորում ամբարիշտն Աերինթոս յանդգնեցաւ ուրանալ կաթողիկէ Եկեղեցւոյ ի Մարիամ հաւատած առանձնաշնորհութեանց մը՝ Երթեթէ հրեւեհովտապետ մը մէջ տեղ չէ ելած, որ կամ լեզուաւ եւ կամ գրչով, ուղղակի կամ անուղղակի ուղած ըլլայ իւր տխուր վարդապետութեան թոյնը թափել Անոր դէմ: Եւ ոչ մէկը կայ, որուն յիմար յանդգնութիւնը Մարիամ խաղք ու խայտառակ բրած ըլլայ, Եկեղեցւոյ շանթաճար իշխանութեան միջոցաւ, որ միշտ պատրաստ է պաշտպանելու զՅիսուս Քրիստոս, հալածուած յԱնձին իւր Օգոստոսփառ Մօր: Ահաւասիկ ինչու համար այս երկնային վարդապետութեան հաւատարիմ պաշտպանը կը հաճի ցուցընել մեզ «գհին օձը¹», որ միշտ պարապ տեղ կ'աշխատի զլուսին ազատելու այս Աստուածային Աուսին յաղթական ոտից տակէն, եւ որուն զարմանալի զօրութիւնը կարծես թէ Աստուած ուղած ըլլայ այս յետին ժամանակներս ալ՝ աւելի պայծառացընել մուրթութեան դէմ:

¹ Յայտն. Ժ. Բ. 9:

Աշանաւ որ բան: Մարեմայ ջերմե-
ռանդն ժողովուրդներն հղան որ վեշ-
տասաներորդ դարուն հերետիկոսու-
թեան աւերներէն կամ պահպանուե-
ցան եւ կամ շատ քիչ վնասուեցան:
Գիտեցէք Խաչիկան, Սպանիան, Բեղ-
զիան, Գաղղիան: Գաղղիան, յորում
երկնից պագուհւոյն պաշտպանու-
թիւնը նորէն եւ հիանալի կերպով
յայտնուեցաւ ութեւտասներորդ դա-
րուն վերջերս: Այն օրերը բան մը կար,
որ հերետիկոսութենէ աւելի էր, քա-
ղաքական իշխանութեամբ զինուած,
եւ միահեծան գերագահութեամբ թա-
գաւորող ամպարշտութիւնը: Ալ ոչ
եկեղեցիներ, ոչ խորաններ եւ ոչ ալ
քահանաներ, սոսկ հաւատքն անգամ
մահուան արժանի յանցանք մ'էր...:
Ո՛վ Մարիամ պիտի մոռնաս ուրեմն
որ Գաղղիան քեզ միշտ ամենասիրելի
երկիր մ'է, որ իրեն բարեկիշտակ
թագաւորներէն մէկը¹, զանիկայ քեզ
նուիրեց: Չէն լսեր այսչափ թախծա-
գին ուրացութեանց մէջ տակաւին
բազմաթիւ մնացած քու ծառանե-
րուդ սրտաբորբոք հաւաչները: Եւ մեր
աքսորուած հաւատոյ խոստովանող-
ները միթէ չէն միացնէր իրենց եռան-
դուն աղաչանքները հաւատարիմ ոչ-
խարաց աղօթքին, յորոց այլեկո՞ծ ու-

¹ Լուրդովիկոս ԺԳ.:

թեան կատաղութիւնը ստիպած է զե-
րենք հեռանալու...: Ո՛հ, այս բարի
եւ գորովագութ Մայրը պիտի չթողու-
Խւր սիրեցեալ ժողովուրդը: Վերջա-
պէս յաղթական ամբարշտութեան բո-
վանդակ ջանքը պիտի ջանջանի Գաւթի
այս նոր աշտարակին դէմ: Եւ իրօք
Եկեղեցիք իսկոյն կը բացուին, խորան-
ները կը կանգնուին, հովիւներն իրենց
հօտին կը դառնան, եւ ճիշդ Ամենա-
սուրբ Աուսին վերափոխման օրը Սրբա-
ղան Քահանայապետը կը ստորագրէ այն
երեւելի դաշնագրոյն, որ Գաղղիոյ եկե-
ղեցւոյ վերանորոգման զրաւականն ե-
ղաւ:

Չմոռնանք որ ատեն մ'Առաքեալք
թեւեւ ապահով՝ երկնաւոր Վարդա-
պետին խօսքին վրայ, թէ ժողովրդա-
նոցին հայածանքն անկարող պիտի
մնար Եկեղեցւոյ դէմ իւր ծննդեան
առաջին օրերը, «կը բարձրացնէին
իրենց ձայնն առ Աստուած ի մի սիրտ
եւ ի մի հոգի»¹, Անկից յաղթութիւն
խնդրելու համար: Մենք ալ թախան-
ձանօք խնդրենք Աստուծմէ, որ եր-
բեք թոյլ չտայ որ հաւատքը մարի
Մարեմայ սիրեցեալ ժողովրդեան մէջ,
եւ մեր փորձութեանց, մանաւանդ
այն փորձութեանց ատենը, որ հակա-
ռակ են քրիստոնէութեան այս հիմնա-

¹ Գործ. Գ. 24:

կան առաքինութեան, փութով Անոր դիմելով պատասպարուինք Գաւթի այս աշտարակին մէջ, ուր թշնամւոյն նետերը չեն կարող մեզ հասնիլ:

Ով Աստուածային Մայր Անոր, որ «ճամարութիւն»¹, կանուանի, կերեւայ թէ երկրպագելի Որդիդ Բեզ յանձնած ըլլայ Եկեղեցւոյ պահպանութիւնն, վասն զի նոյն այս Եկեղեցին² Բեզ կը վերադրէ իւր յաղթութեան փառքն այն ամէն մտրտութեանց վրայ, որոնք աշխատեցան «Աստուծոյ քաղաքին»³ ամենասուրբ հաւատքն ի հիմանց խախտելու: Գունն անոր համար ապատան մը բերդ մ'ես իւր թշնամեաց դէմ⁴: Գունն էս այն անառիկ աշտարակը⁵, որ կը փրկէ իւր որդիքը անեղութեան օրը⁶: Ո՛հ, պաշտպանէ զմեզ Սրբուհի Վոյս դժուխոց յարձակմանց դէմ, եւ մտոնաւորապէս հաւատոց հակառակ ամէն վտանգներու դէմ, պաշտպանէ զմեզ մանաւանդ ի ժամու մահուան, եւ զմեզ վերջին պատերազմին պատրաստելու համար, որ պիտի սրոյշէ մեր յաւիտենական յաղթութիւնը՝ բնդունէ մեզի համար Աստուծմէ կենդանի եւ յարատեւ հաւատք մը:

1 Յովհ. Ժ. Գ. 6: — 2 Ժամակարգ. Հռոմ. 1. ի Տօնս Ս. Կ. 4: — 3 Սղմ. ԽԵ. 5: — 4 Սղմ. Կ. 4: — 5 Առակ. ԺԼ. 11: — 6 Սղմ. ԺԹ. 2:

Աշտարակ Գաւթի, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԷ.

Աշտարակ վոյսուրեայ, սոյոյժես վխան մեր:

Փղոսկրը փայլուն սպիտակութիւն եւ եղական կազմուածք ունի, ապց հաճելի եւ մի եւ նոյն ատենն անանկ կարծր եւ ամուր է, որ կը համապատասխանէ զանիկայ մարդկան մատակարարող հսկայ կենդանւոյն: Արկին պատիկը հաւասարապէս յարմարելի Ամենասուրբ Վուսին: Ուրիշ ո՞ր աւրարածի վրայ կրնանք դտնել ինչպէս ի Մարիամ այն ամուղութիւնը, այն հոգւոյ մաքրութիւնը, որոնց վրայ նոյն իսկ Հրեշտակները կը զարմանան, այն կուսութեան պայծառութիւնը, որ իւր երկրաւոր պանդխտութեան ժամանակ բոլոր իւր Անձին վրայ կ'արտափայլէր, եւ ր անձառելի յարգութեան զգացման մը սրտերու մէջ թափանցել կու տայ¹:

Բայց առանց շատ անգամ մտածականներնուս նիւթ եղած իւր հրա-

1 Ս. Գրինեոսոս Արիսպ. Թուղթ առ Պոզոս:

շալի մարքութեան վրայ կանկ առնելու խորհրդաւոր «փորոկրեայ աշտարակին վրայ»¹ խոկայու զբաղինք իրրեւ օրինակ եւ նեցուկ մեր Աստուծոյ ճառայութեան մէջ յարատեւութեան: Ինչպէս հաստատուն էր Մարեմայ մեծարանքն առ Իւր Աստուածը այն ամէն զոհողութեանց մէջ, որոնցմով լեցուն եղաւ Իւր սուրբ կեանքն այս աշխարհիս մէջ: Իւր գերդաստանէն բաժնուելէն ի վեր, ինչպէս որ Աստուած Իրմէն Իւր մատղաշ հասակին մէջ պահանջեց, որչափ վշտեր, որչափ տառապանք, քանի ստոյգ եւ աղէկտուր կանխատեսութիւններ, որպիսի մահուանէ պատճառած ցաւեր վսեմացուցին պարտականութեան ճամբուն մէջ Իւր յարատեւութիւնը: Սրբոյն Յովսեփայ վարմունքն այն խորհրդոյն առթիւ, զոր խոհեմութիւնը չէր թողուր որ ինքն անձամբ յայտնէր Իւր ամենամաքուր Փեսային: Ի Բեթղեհէմ տեսակ տեսակ մտածմունքներով տաժանելի ճանապարհորդութիւնը: Մանկայեալ Աստուծոյ մի միայն ապաստանարան մնացած գոմին մեկուսութիւնն ու մերկութիւնը: Սուրբ եւ ծերունի Սիմեոնի կրկին դուշակութիւնները, թէ այն ծայրայեղ ատելութեան վրայ, որուն

¹ Եբր. Է. 4:

նշաւակ պիտի բլար Փրկիչը, եւ թէ այն «օրոյն նկատմամբ որ պիտի թափանցէր Անոր Մօրը սիրտը»¹: Յեզիպոսս փախուսար, արսորանաց բովանդակ նեցութիւններն ու ամէն բանէ զրկուիլինք, զատկական տունէ վերջը Յիսուսի երեքօրեայ թեւալից բացակայութիւնը, նուաստացուցիչ աշխատանքները, որոնց զինքն ենթարկուած կը տեսնէր Նազարէթի խեղճուկ դործատան մէջ, Անոր հրապարակական կենաց բոլոր քրտինքներն ու տառապանքները, Անոր թշնամաց դաւաճանութիւնները, հալածանքները, Իւր սիրտը կակծեցընող անագորոյն զբարտութիւնները, Անոր չարարանաց բոլոր նախատինքները, եւ բոլոր չսուած տանջանքները, եւ վերջապէս խաչն Իւր մայրենի աչաց առջեւն եւ Իւր այն նոյն խաչին ստորոտը գտնուիլը: Ո՛հ, ինչպիսի շղթայ անգութ փորձերու, որոնք կարող էին ամօթակոր ընել եւ ընկճել Եւայի դասեր մը քաջութիւնը...: Բայց բոլոր այս փորձերուն մէջ Մարիամ միշտ խաղաղ ու զուարթ, Մարիամ միշտ հլու, միշտ անբաժանելի կերպով համակերպած Իւր Աստուծոյն կամաց, Մարիամ միշտ զօրեղ եւ յարգալից, Մարիամ միշտ մի եւ նոյն է: Ինչպիսի օրի-

¹ Ըուկ. Բ. 35:

նակ, որպիսի՝ ճարտարախօս դաս մեզի
համար, որ բարեոյն մէջ այսչափ ան-
հաստատ եւ յեղձեղուկ ենք: 11

Բանի որ վտանգաւոր առիթը մեզմէ
հեռու է, կամ փորձութիւնը զմեզ
չի տաքնապեր, եւ կամ աշխարհ մեր
առ Աստուած պարտաւորութեանց
կատարումը չի մերժեր: «մեր ոտքերը
ոչ միայն ուղիղ ճամբէն չեն շեղիր¹,
այլ նաեւ անաշխատ կերպով կ'ըն-
թեանան փրկութեան ճանապարհին
վրայ²»: Բայց երբ խոչ ու խուժ կ'ելլեն
քայլերնուս առջեւը, երբ բռնութիւն
ընել պէտք ըլլայ սրտի եւ զգայա-
րանաց վրայ, հրապուրման խարէու-
թեանց յաղթելու, կամ «աշխարհի
որդւոց³», յիմար, ծաղրածու եւ կծու
խօսքերէն գեր ի վերոյ գտնուելու հա-
մար, այն ատեն մենք կը լքանինք:
Ո՛հ, եթէ մենք Մարեմայ նմանելու
հոգ տանէինք, փոխանակ ահաբեկելու
այն վտանգներուն մէջ, որոնց նախա-
խնամութիւնը թոյլ կու տայ որ
բռնութիւնը կրենք անգին միջոց
պիտի համարէինք զանոնք անցեալը
քաւելու, անձերնուս վրայ սուրբ ան-
վրստահութիւն եւ միայն Աստուծոյ
վրայ կատարեալ վստահութիւն մը
ստանալու, բարւոյն մէջ հաստա-

1 Սղմ. 1. Ե. 12: — 2 Անդ, ճԻԱ. 2:
— 3 Ղուկ. ԺԶ. 8:

տուելու, չարին դէմ կուռի միջոցաւ
յաւիտենականութեան անգին ար-
դիւնքներ շահելու համար: Եւ դուք
այլ բարեպաշտ հոգիներ, եթէ Անոր
հետոց վրայէն քայլէք, զոր ձեր բարի
Մայրը կը բաղձաք անուանել, միթէ
աւելի քաջութեամբ ու վստահու-
թեամբ պիտի չտանէիք Յիսուսի ներ-
քին վշտաց ծանրութիւնը, որոնք
կրնան վրանիք յարձակիլ: Ո՛հ, չմո-
նանք երբեք որ ցամաքութեան, հո-
գւոյ խաւարի, տաղտկութեան եւ
սժգոհութեան մէջ առ Աստուած մէկ
աւուր հաւատարմութիւննիդ ձեզ
չատ աւելի օգտակար կ'ըլլայ քան թէ
բարեպաշտութեան եւ սուրբ ցնծու-
թեանց մէջ անցուցած հազար օրեր-
նիդ: Ըստ մտաց Աբբոյն Օգոստինոսի,
երկու կենք կան, որոնց մէկը միւսէն
կախում ունի. «փորձերու, որոնց
պէտք է որ ենթարկուինք եւ երա-
նութեան, զոր պէտք ենք յուսալ¹»:
Այս երկորդ կենաց մէջ ձեր ամեն
հեծութիւնն ու բովանդակ առ Աս-
տուած ապաւինութեան ներգործու-
թիւններն Աստուծոյ քով նշանա-
կուած պիտի ըլլան, եւ դուք «արդար
դատաւորին²» ոտիցը չքով զանոնք
նոյնչափ անգին մարդարիտներու փո-

1 Գիրք Բ. Ի վերայ Գործ. ԳԼ. Ժ: —
2 Բ. Տիմ. Գ. 8:

խարհուած պիտի գտնէք, որոնց ա-
նանց պայծառութիւնը պիտի շքեղա-
ցընէ երկնային պսակնիդ:

Ո՛վ Մարիամ առաքինութեանցդ
եւ արդեանցդ պատճառաւ յայս Աս-
տուծոյ անհամեմատաբար շատ աւելի
պայծառ քան թէ մարդկան աչաց
երեմն իւրայեի եօթներորդ լեռնային
Յեռո՛վ փղտկրով զարդարուած պա-
լատը¹ եւ Սողոմոնի փղտկրեայ ա-
թոսը²: Մէնք կ'ուզենք անայուածք-
նիս ի Քեզ դարձընել էբբէ- գրի-
նէն ոչորո՞ւմ, ուսկից որ մեզ օգնու-
թիւն պիտի գայ³, աշխարհի եւ դժու-
խոց դէմ, բնութեան յանցաւոր միա-
մանց դէմ, մտաց խաւարման եւ
կամաց վէճատութեան դէմ: Ի բարին
յարատեւութիւնն ամէն տեսակ փոր-
ձութեանց մէջ, որոնցմով սր կեանքեր-
նիս հիւսուած է՝ մեծագին շնորհք
մ'է, զոր պէտք եղած թախանձանօք
պիտի չկարենայինք խնդրել: Բայց կը
յուսանք բնդուներէ Քու սիրալի բա-
րեխօսութեամբդ, եւ մեր տկար ա-
ռաքինութիւնն ապահովելու համար
կ'ուզենք ապագային մէջ Քու անարատ
սրտիդ մէջ պատասպարուիլ իբրեւ ան-
յաղթելի ապաստան մը: Ո՛վ Մարիամ,
զոր հոս վստահալից սրտով կը կոչենք՝

1 Գ. Թագ. Ի. Բ. 39: — 2 Անդ, Ժ. 18:

— 3 Սղմ. ճի 1: — 4 Յովբ. Ի. 1:

Փղտկրէ աշտարակ, աղօթէ մեզի
համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԸ.

Տոնն ոսկեղեն, աղօթես Վասն մեր:

Սողոմոն թագաւորին շինած Լըրու-
սաղէմի տաճարին հաւասար հրաշա-
լէք մը կայ: Մէկ կողմը դնենք այն
փառաւոր քարերը, որոնցմով հիմերն
ու պատերը շինուած էին, ո՞վ կրնար
չհիանալ այնչափ արուեստով դրոշ-
մուած եղեւնափայտեայ առաստաղին
վրայ քանդակուած Քերօլքէից եւ
արմաւենեաց քանդակներուն վրայ,
ոսկեղ պայծառութեան փայլման ներ-
քեւ դեռափթիթ ծաղկանց, եւ նոյն
խիւ այս մեծագին մետաղին թիթղամբ
պատած յատակին, որ այնչափ առա-
տօրէն սփռուած էր որ «բան մը չկար
այն տաճարին մէջ, որ անով պատած
չըլլար¹»: Եւ այն տունը գրեթէ գլխէ
գլուխ, ըստ բառին ճիշդ իմաստին,
կրնար «կոչուիլ» ուսն կոչուիլ:

Բայց որչափ աւելի իրաւամբ սյու-
պիսի անուն մը կը պատկանի Ամե-
նասուրբ Մուսին, կենդանի տաճար,
զոր Աստուած Իրեն համար յօրինեց,

1 Գ. Թագ. Զ. 22:

“սուրբ եւ հոյակապ բնակութիւն, զոր Ինք բնորոշի”, եւ ճիշդն բսկուհամար, որուն հետ Ինքը սրբարար շնորհաց միջոցաւ շատ աւելի սերտիւ միացաւ, քան թէ ուրիշ ո՛ր եւ իցէ արարածի հետ, եւ Աստուածային Մայրութեան միջոցաւ ո՛ր նմանազոյն կերպով երկրպագելի հանգոյցին, որ զԲանն յաւիտեանական եւ Մարեմայ Որդին մի միայն Անձ մը կաղմեց. . . : Մարդեղութենէն յառաջ, Գուռն արդէն, Աոյս անհասմամտ, հիանալի իմաստով “Աստուծոյ տունը”² զբանչելապէս Անոր “Ինչէն”¹ Գուռն էիր, զոր Ինք զարդարած էր այնչափ առանձնաշնորհութիւններով, բոլոր աշխարհի ոսկիէն անասհամարար շատ աւելի թանկագին, մինչդեռ ամէն մտածմունքներդ, բովանդակ բաղձանքներդ, բոլոր խօսքերդ եւ համայն գործքերդ Անոր շաց առջեւն աւելի գեւրագոյն յարգ մ’ունէին քան թէ մարդկան աչքին իրենց անյագութեամբ փնտռած փայլուն մետաղը, այն հրապուրմամբ ին մետաղը, որ շարժիչ է, աւաղ, եւ շատ ստէպ ալ իրենց ամբողջ կենաց կուռքը: Բայց Աւետման յաւերժական յիշատակաց արժանի օրը, Գուռն, ո՞վ Սրբուհի Աոյս, աւելի մեծահարաշ իմաստով, Անոր “Ինչէն”

1 Սղժ. ՃԼԱ. 13: — 2 Գ. Թագ. Զ. 37:

Գուռն եղար, որովհետեւ Քու ամենամաքուր գոյութենէն Բանն այն ատեն եւ ցմիշտ Իւր գոյութիւնը կաղմեց, ի Քեզ բնակեցաւ Իւր երկրիս վրայ քաւութեան տարիներուն առաջին ինն ամիսները, Քու սեպհական կենօրդ պարելով, եւ այս վսեմ կապը, այս անձաւելի միաւսրութիւնն “արժանացուց զՔեզ երջանիկ հուշակուելու ամէն քաղերէ, բոլոր Մարգարէներէ, եւ բովանդակ երկնային իշխանութիւններէ, այս, երջանիկ մտքերնուս, սրտերնուս եւ մեր օրհնութեանց բոլոր ներդաշնակութեան մէջ”¹:

Բաց աստի, զՅափ իրաւացի տիւտղոսով չ’անուանիր “Ինչէն” Գուռն այս կատարեալ մաքրութեամբ օժտած Աոյսը, որուն երբեք այլայլութեան ենթակայ չեղող ոսկին գեղեցկաբար մարնամութիւն մ’է: Այս Աստուածային սիրով բորբոքուած Աոյսը, որուն ոսկին իւր հրեղէն գունովը նմանութիւն մ’է միայն: Իրօք Անոր մշանջնաւոր կուսութիւնը միթէ Աստուծոյ սրանչելեաց մէջ ամենաբանչելին չէ: “Իւր մաքրութեան ազնուութիւնը, կ’ըսէ Սուրբն Անտեմոս, միթէ բովանդակ արարածոց մաքրութիւնն ան-

Ս. Իդելիոսոս, Գիրք ի վերայ կուսութ. Ս. Կ.:

Համեմատարար աւելի չի՞ գերազանցեր: Եւ միթէ ասիկայ չէ՞ որ զինքն արժանի ըրաւ գրեթէ վերանորոգիչ ըլլալու աշխարհի, որ կորստեան ամենախոր անդունդին մէջ ընկղմած էր¹։ Իւր առ Աստուած սէրը նուազ հիւնայի չէ։ «Ո՞վ կրնայ երկմտիլ, կը կոչէ Ս. Օգոստինոս, որ Մարեմայ արգանդը, յորում Աստուած՝ նոյնինքն սէրը ինն ամիս հանգչեցաւ մարմնաւորապէս, բոյորովին ի սէր փոխուած չլլայ»²։ Ահաւասիկ պատճառը, որով Սուրբն Բեռնարդինոս կրցաւ ըսել Օրհնարանեալ Կուսին նկատմամբ թէ. «այնչափ սիրով լեցուն էր որ յօժարութեամբ իւր Որդւոյն տեղ ինքը զինքը մահուան նուիրած կ'ըլլար, չէ թէ մէկ, կամ հազար, այլ անթիւ անգամ, եթէ կարելի ըլլար»³։

Ո՛հ, մենք այսպէս չենք, գոնէ որչափ որ կրնայ ներուիլ մեր տկար բնութեան: Ինչու համար մենք որ մկրտութեամբ, զրոյշմով, եւ ամենասուրբ Հաղորդութեամբ Աստուծոյ նուիրուած ենք սիրելի Անոր տաճարները⁴։ այսպէս քիչ արժանի կը յուցընենք զմեզ «Սրբոց Սուրբին»⁵։

1 Ի վերայ ասն. Կ. ԳԼ. Թ. — 2 Ի Ս. Բոնավենտուրա, ԳԼ. Ժ. Գ. — 3 Ճառ. Ի Ծնունդ Ս. Կ. — 4 Բ. Կորնթ. Զ. 16: — 5 ԳանիէԼ, Թ. 24:

որ հաճեցաւ զմեզ իրեն «կենդանի բնակարան ընել»¹։ Ինչու համար մենք այնչափ հոգ կը տանինք բնակարանինս զարգարելու երեւելի հիւր մ'ընդունելու պատիւն ունեցած ատեննիս, եւ ընդհակառակն ասանկ անհոգ կը զանուինք հոգինիս եւ մարմիննիս Աստուծոյ հաճելու սպէղն րոն մը շինելու: Գարձեալ ինչու համար փոխանակ գերագոյն Բարւոյն սիրովը սբրտերնիս արծարծելու, «սոսկ պատրիշ սնտեաց համար»² ընդունայն ցանկութիւն կը զգանք եւ պարտութիւն առ Աստուած, որ լի է սիրելութեամբ եւ լեցուն սիրով...: Ածթ մեղի եւ պատկառանք, ըայց մի եւ նոյն ատենն եւ զեղջ. եւ ապագային համար կարելի եղածէն աւելի Աստուածպաշտութեան, քերմեանպտութեան, եւ արծարծուն սիրոյ յաճախ ներգործութիւններ գէպ առ ՚իս, որուն անգուզական պարգեւովը տաճարն ըլլալու շնորհքը կը արուի մեզ:

Քու միջոցաւ, ո՞վ Մարիամ, Քու անդառնակ բարեսօսութեամբ կը յուսանք արժանի ըլլալ որ ի մեզ կատարուի Քու Աստուածային Որդւոյդ այն խօսքը թէ, «Չիս սիրողն Իմ խօսքերս ալ կը պահէ, եւ Իմ Հայրս զինքը պիտի սիրէ, եւ պիտի գանք ի

1 Ա. Պետր. Բ. 5: — 2 Իմաստ. Գ. 12:

նմա բնակինք¹։ Աստուած հաճեցաւ
 զարմանալի երպսի ի Բեզ բնակիլ², եւ
 զԲեզ իւր փառօքը լեցուց³ շատ
 աւելի գերահարաշ կերպով քան թէ՛ ի
 հնումն Սողոմոնի տաճարը։ Ո՛հ, եթէ
 կարող ըլլայինք խելամուտ ըլլալ թէ
 ինչ աստիճան պատուոյ կը բարձրա-
 ցինէ զմեզ Իրեն կենդանի տաճար ընե-
 լովը, սրջափ աւելի հաւատարիմ պիտի
 ըլլայինք զմեզ մաքուր, սուրբ պահե-
 լու, յարատեւարար սրտերնուս սե-
 ղանին վրայ բնութիւնը՝ պարտուց,
 ներկայ եւ վաղանցուկ զուարճութիւն-
 ները՝ յաւիտեանականութեան ապագայ
 եւ տեւական հրճուանաց զո՛հելու, եւ
 հաւատարիմ սուրբ սիրոյն կրակը
 մշտապէս վառ ու արձարձուն պա-
 հելու։ Աղօթէ մեզի համար, որպէս
 զի այս անգին բախտաւորութեան
 հանգիստինք, որուն համար սրտանց
 կ'աղերսենք Բեզի։

Ոսկեղէն տուն, աղօթէ մեզի համար։

1 Յովհ. Ժ. Գ. 23։ — 2 Սղմ. ՃԼԱ. 14։
 — 3 Գ. Թադ. Ը. 10։

ՄՏԱԾԱԿԱՆ ԼԹ.

Տապանակ ուխտի, աղօթեալ զտուն
 մեր։

Եթէ Սողոմոնի հոյակապ տաճարը,
 յորում, այսպէս ըսելու համար, ամէն
 բան ոսկեղէն էր, եւ ինչ սր աւելի
 մեծաշուք էր՝ Տիրոջ այս տանը մէջ¹,
 մեզ Մարեմայ խորհրդաւոր նշանը կը
 ներկայացընէ՝ Ուխտի տապանակը շատ
 աւելի բացայայտ նմանութիւն մ'է
 այս Աստուածային Կուսին։

Տապանականփուտ փայտէ շինուած
 էր² թէեւ անոր բողբոջը փառթեան
 ենթարկուած ըլլար։ Եւ Գունն, ո՛վ
 Մարիամ, թէեւ յանցաւոր տոհմէ
 յառաջ եկած՝ սկզբական արատէն
 պահպանուեցար, եւ բնաւ ապակա-
 նութեան չենթարկուեցար։

Չուտ ոսկեղէն թիթեղներ զտա-
 պանակը զրոնէն եւ ներսէն պատած
 էին, վերին մասը ոսկեղէն պսակ մը
 շրջապատած էր, եւ կը ծածկէր զբաւ-
 ութիւնը, որ նոյնպէս այս թանկագին
 մետաղէն շինուած էր. նմանապէս
 ոսկիէ ձուլուած երկու քերթէներ բաց
 թեւերով հովանի կ'ընէին քառու-
 թեան վրայ, որուն բարձրութենէն

1 Գ. Թադ. Ը. 11։ — 2 ԵԼԲ, ԻԵ. 10։

Ատուծոյ մեծ վայելչութիւնն իւր պատգամները կը հարորդէր Իորայէի որդւոց¹: Էւ Գուռն, ո՞վ Մարիամ, «չորհոք լեցուն?»², որպիսի ընտիր սոկւով առանց խառնուրդի, ինչպիսի անզին սոկւով չլպատեցար: Ինչպիսի ամոռ չնուիրեցիր ի Քեզ նոյն ինքն Ատուծոյ: Մի՞թէ Քեզի նկատմամբ չենք կրնար ըսել կրետացի Անդրէին հետ թէ «Գուռն աշխարհի ընդհանուր քառութիւնն ես³, կենդանի տաճար, ուսկից «մարմնացեալ Բանը⁴» լսել տուաւ բոլոր աշխարհի փրկութեան պատգամը:

Տապանակին մը գրուած էին «մանանայով լեցուն սոկիէ սափոր մը, հրաշիէ Իբրպու՛ ծաղկեալ Ահարոֆնի դաւաղանը, եւ Սինա լեռան գլուխը Մովսէսի տրուած կտակարանաց Երոտախակները⁵»: Էւ Գուռն, ո՞վ Օգոստափառ կոյս, բարեբախտութիւն ունեցար յղանալու եւ ծնանելու զԱյն, որ մեզի համար ճշմարիտ երկնային մանանայ եղաւ, «երկըքն իջած կենդանի հաց⁶»: Գուռն անասման պատիւն ունեցար Մայր ըլլալու այնպիսի Որդւոյ մը, որ ի Քեզ յղացաւ եւ Քեզմէ ծնաւ աւելի մեծահրաշ սքանչ

¹ Եւք, ԻԵ. 8: — ² Ղուկ. Ա. 28: — ³ Ի Ենթոմն Ս. Կ.: — ⁴ Յովհ. Ա. 14: — ⁵ Եբբ. Թ. 4: — ⁶ Յովհ. Զ. 51:

չելեօք քան զայն, որ զարմանքով ապշեցուց ասանուերկու ցեղերը, երբ գերագոյն Քահանայապետին չոր ու ցամաք դաւաղանը աներեւներով, ծաղիկներով եւ պտուղներով ծածկուած տեսան¹: Գուռն անգուգահան պարագեւով մ'արգանդիդ մէջ փակեցիր նոյն իսկ կտակարանաց երկու տախտակներուն Հեղինակը: Գուռն, Հին եւ Նոր կտակարանաց սրբալան տխտոսներուն գրեթէ աւանդապահ² հանդիսացար, բոլոր Ատուածային պատգամներուն համառօտութիւն³, Ատուածային Բանին գիրքը, որուն սրբալան էջերը Հայրն յաւիտենական կը պարզէ տիեզերաց աչաց առջեւ⁴:

Ատուած ատենօք թէ իւր Ժողովրդեան, եւ թէ երբեմն հեթմնոսաց սրտերուն մը խորին յարգութիւն մը պարզօրեց առ Ուխտի Տապանակը՝ շատ մը պատահած հրաշքներով⁵: Անոր առջեւ Իորայէլացիք յերկիր կը խոնարհէին երկինքն իրենց հետ հաշտեցընելու համար⁶: Էւ տապանակին Արեգարայ տունը մնայն իրեն եւ իւր գերբաստանին վրայ Ատուծոյ օրհնու-

1 Թիւք. ԺԵ. 8: — 2 Որբերտոս, ի Դ. ԳԼ. Երբոց: — 3 Անդրեաս կրեաւ ճառ՝ ի Փոյս. Ս. Կ.: — 4 Ս. Եպիփ. ճառ՝ ի ներբող Կուսին: — 5 Եւք, ԻԵ: Յետու, Գ. 5: Ա. Թադ. Ե. 6: — 6 Յետու, Ե. 6:

Թիւնն բերաւ: Քու առջեւդ ո՛վ Մարիամ, հաւատացեալք յերկիր կը խոնարհին Աստուածային Որդիէդ ընդունելու խնդրած շնորհքնին, քաջ գիտնալով որ կը հաճի Քու միջոցաւ դարդկան վրայ սփռել Իւր պարգեւները. եւ թէ՛ «բոլոր շնորհքները Քու ձեռքէդ կ'անցնին»¹: Քեզմով թէ՛ ժամանակաւորի եւ թէ՛ փրկութեան վերաբերեալ հաղորաւոր հրաշքներ կը դործուին ի մեծ հիացումն հաւատքով լեցուն մարդկան, եւ քրիստոնէայ ընտանեաց մէջ Քու ջերմեանդ արար յարդուած պատկերդ միթէ անոնց վրայ չի՛ հրաւիրեր նաեւ անդին օրհնութիւններ:

Ո՞վ կրնայ վերջապէս չտեսնել Գաւթի որոշմամբ տապանակին յետուսողմ՝ հանդիսապէս մտնելուն օրինակաւը Քու փառաւոր եւ յաղթական Արքիպիսմանդ պատկերը, ո՛վ «Տապանակ Սրբութեան, որ յերկր յերկր վերայար, Աստուծոյ հանգիստը մտնելու»³, եւ Անոր աջ կողմի նստելու համար⁴, որուն քովը չես դադարիր գրեթէ մեզ բարի Մայր ցոյց տալէ⁵ ր:

¹ Բ. Թադ. Զ. 12: — ² Ս. Բեռն. Ճառ Գ. յԱնուն Մարեմայ: — ³ Սղմ. ՃԼԱ. 8: — ⁴ Մարկ. Ժ. 2. 19: — ⁵ Ողջ լեր ասաղ ծոփու:

Ո՛հ, կարող ըլլայինք մենք ալ զմեզ Մարեմայ հարազատ որդի ցուցընել. եւ այս նոր ուխտի մեծաշուք տապանակին մէջ մշտատեւ պաշտպանութեան եւ երկնային օրհնութեանց աղբիւր մը գտնել: «Ո՞վ որ զանց կ'ընէ, կ'ընէ Ս. Բոնայինտուրա, Ամենատուրք կուսին ծառայութիւնը, ի մեզս մեռնելու վտանգին մէջ կը գտնուի, բայց զԱնիկայ ըստ արժանւոյն պատուողն ալ կ'արդարանայ, կը փրկուի»¹: Վասն զի ըստ բանից Սրբոյն Պետրոսի Ոսկեխօսի՝ «Մարիամ է մարդկան եւ Մարդ Աստուծոյ մէջ սիրալիր միջնորդը»²: Իւր եթէ աղաչու օրին արդիւնները, կը յաւելու Սուրբն Անսելմոս չեն բաւական իւր աղաչանքը լսելի ընելու, անոր համար միջնորդող Աստուածային Մօր արգիւնքը կ'օգնէ ընդունելու անոր խնդրուածքը³:

Ինչպէս որ Յորդանան անցնելու առտննին, Երբայեցեոց առջեւէն զացող տապանակը զիրենք Աւետեաց երկիրը մտցուց, այսպէս ալ Գունն, ո՛վ Մարիամ, յաջողութեամբ անցնիլ կուտասնելիկայ կենաց հեղեղատին վտանգաւոր ալիքներէն: Գունն եւ մեզի համար «տիեզերաց գերագոյն Տիրոջ Ուխտի կենդանի Տապանակը»⁴: Ո՛հ,

¹ Ի Սաղմոսն: — ² Ճառ՝ յԱւետ.: — ³ Ի վերայ ասլն. կուսութ.: — ⁴ Յետու, Գ. 11:

անտարակոյս այն ուխտը, որով «մեծ-վայելչութեան Աստուածը»¹ հաճեցաւ ի հնու մն պատուել զԱրրաճամ, զԻսահակ, զՅակովբ եւ Իսրայէլի որդիքը շատ յարգի էր: Այսու ամենայնիւ պատկեր ստուեր մ'էր Անոր, որով Յաւիտենականին Որդին մարդասիրաբար մեզի հետ կապուած է, մեզի համար Քու արգանդիդ մէջ մարդ ըլլալով, եւ վերածնելով զմեզ իւր երկրպագելի առեամբը, որուն արգիւնքը մեզ կը մերձեցընէ սրբազան խորհրդոց միջոցաւ, որոնք զմեզ յօրօրոցէ անտի կը սրբացընեն, կ'օգնեն, կը զօրացընեն, եւ կը միխիթարեն քանի որ կ'ապրինք. եւ վերջին ժամուն մէջ ալ կը քաջայերեն յաւիտենականութեան զարհուրելի շեմէն վտահու-թեամբ անցնելու: Ո՞վ Գուն, որուն միջոցաւն այս ամէն բարիք մեզ տրուած են. «Գուն Եդեմ նորն Աբամայ»², եւ կենդանի բնակարան Բարձրելոյն»³, ընդունէ մեզ զանոնք սրբաբար գործածելու, եւ միանգամայն հաւատարիմ սրտի եռանդեամբ միշտ Քեզ ըսել կարենալու շնորհքը թէ՛

Աւխտի տապանակ, աղօթէ մեզի համար:

¹ Սղմ. Իբ. 3: — ² Ս. Յովհ. Գամասկ. Ճառ. ի Կնճու մն Ս. 4: — ³ Ս. Յովհ. Ասկ. Ճառ Բ. ի Տօնն Ս. Յովհ.:

ՄՏԱԾՍԿԱՆ Խ.

Դոռուն երկինց, աղօթեա մասն մեր:

«Իս եմ դուռն¹, ըսաւ Յիսուս, առանց Ինձի ո՞չ որ կրնայ ուրիշ կերպով երթալ Իմ Հօր»²: Ուստի քոռն էրկնց անունը Մարեմայ տալը միթէ Մարդ-Աստուծոյ վերաբերեալ սեպական բան մ'Անոր վերածել չէ՞ արդեօք: Միթէ Որդւոյն անօտարանալի իրաւունքները բռնաբարել չէ՞ ի նպաստ Մօրը:

Ո՛հ, ստուգիւ Եկեղեցին, «որ է սիւն եւ հիմն ճշմարտութեան»³, ընաւ չի մոռնար Սրբոյն Պօղոսի այն պատգամը թէ «ինչպէս որ միայն մէկ Աստուած կայ, այսպէս ալ Աստուծոյ ու մարդկան մէջ մի միայն միջնորդ Յիսուս Գրիստոս, որ զանոնք փրկեց»⁴: Բայց Սրբոյն Յերոնիմոսի հետ Եկեղեցին կը սորվեցընէ թէ՛ «Մարեմայ նուիրուած ամէն պատիւ Յիսուսի՛ իրբեւ Անոր Որդւոյն փառաց կ'ուղղուի»⁵. Եւ Սրբոյն Անտելմոսի հետ թէ՛ «Եթէ Մարիամ այսպիսի իշխանութիւն ունի՛ Անկեց ունի, եւ Անոր հետ կը գործածէ»⁶:

¹ Յովհ. Ժ. 9: — ² Անդ, ԺԳ. 6: — ³ Ա. Տիմ. Գ. 15: — ⁴ Անդ, Բ. 5-6: — ⁵ Առ Եւստաքիոս: — ⁶ Ի վերայ աշն. կուս. ԳԼ. ԺԲ.:

Եթէ այս այսպէս է՝ ի մեծազոյն փառս Մարգ-Աստուծոյ՝ Եկեղեցին հոս առ Ամենասուրբ Առյուծ կը պաշտօնի իբրեւ Երկնց Գոռո, որ զարմանալի կերպով կը յարմարի այս Աստուածային Մօր: Եւ միթէ Մարեմաւ չէր որ երկինքը զրեթէ երկրիս վրայ փոխադրուեցաւ, մարդկան մէջ քաշելով զԱյն, որ «Աստուած մեզի հետ», անունը կը կրէ: Վասն զի «արգանդին մէջ յղանալէն յառաջ, կ'ըսէ Սուրբն Լեւոն, սրտին մէջ յղացաւ»¹: Մարեմաւ չէ՞ որ «Դարդային Էրդարանո՛ւ աշխարհի յայտնուեցաւ Աստուծոյ մեր փրկչին բարութիւնը»², որ է յարութիւն եւ կեանք³. որուն միայն յաղթական Համբարձումը կրցաւ մտցընել՝ ի բնակութիւն յաւիտենական երանութեան նաեւ անոնց ամենասուրբ հոգիներն որ մեռած էին նախ քան «գմուտն իւր ի փառս»⁴: Միթէ Մարեմաւ չէր, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, որ «Աստուած տեսնելի կերպով իջաւ երկրիս վրայ, որպէս զի իրմով մարդիկ յերկինս բարձրանալու արժանի ըլլան»⁵:

Սուրբուհիւ Ինչպիսի՛ հզօր օգնութիւն

1 Մատթ. Ա. 23: — 2 Ճառ Ա. ի Ծնունդ Տեառն: — 3 Տիւր. Գ. 4: — 4 Յովհ. ԺԱ. 25: — 5 Դուկ. Ի. Գ. 26: — 6 Ճառ ԺԲ. ի վերայ ժուժկալ:

մը չէս «ով անուշիկ Արյս Մարիամ», ամէն զՔեզ յօգնութիւն կոչողներու, որոնք խոնարհաբար կ'աղերսեն որ իրենց օգնես, որպէս զի արժանի ըլլան օր մը մտնել յերկնային երանութիւնը: Ո՛հ, սրջափ իրաւամբ կ'ըսէ Սուրբն Անտոնիոս Թէ՛ «աքսորուածները Քեզմով կոչուած են իրենց յաւիտենական հայրենիքը»¹: Գուն զիրենք կը լուսաւորես, Գուն կը քաջալերես, Գուն իրենց կ'օգնես, վասն զի Գուն ես, ըստ Հիպպոնայի անմահ Եպիսկոպոսին, «բոլոր Յիսուսի Քրիստոսի անդամ հաւատացելոց մայրը. Քու եղբայրսիրութեամբք գործակից ըլլալով անոնց հոգեւոր ծննդեան»²: Եւ եթէ անոնք իրենց չարութեամբն ապարդիւն չընեն Քու զԹած պաշտպանութեանդ զօրաւոր աղգեցուցութիւնը, Գուն իրենց յաջողութեամբ կ'առաջնորդես՝ ի փրկութեան նաւահանգիստը: Եւ այս՝ Սրբոյն Անսելմոսէ ետքը³ Սրբոյն Անտոնիոսի ըսել տուաւ այն հռչակաւոր խօսքերը Թէ՛ «Ինչպէս որ անկարելի է որ փրկուի անիկայ, զոր Քու զԹալոց նայուածքէդ կը զրկես, ասանկ ալ ապահովաբար արդարութիւնն ու փառքը կ'ընդ-

1 Ողջ լէր Թաբուհի: — 2 Ի Խոկմ.: — 3 Գերբ՝ ի վերայ Ս. Առսին, ԳԼ. Զ: — 4 Ի վերայ ազն, կուսութ. ԳԼ. Բ: 15*

ունի այն՝ որուն համար որ Գուշ կը բարեխօսես¹ ։

Ուստի եթէ մենք անկեղծ մտօք մինչեւ ցայսօր ջանացեր ենք Ամենասուրբ Կուսին գլխալից նայուածքը վրանիս դարձրնել տալու՝ երջանիկ ենք, եւ օրհնենք զԱստուած, «որ ինչպէս կ'ըսէ Սուրբն Յովաննէս Գրամասկացին, առ Մարիամ որտագին ջերմեռանդութիւն մը կ'ազդէ անոնց, զորոնք ինքը փրկութեան նախասահմանած է² ։ Սրտի լերկութեամբ ուղղենք նայուածքնիս դէպ ի հրճուանաց յաւիտեանական արքայութիւնը ։ Հոն պիտի չտեսնենք, ինչպէս ատեն մ'եղեմայ սեմոց վրայ հրեղէն սրով զինուած եւ մուտքն արգելելու համար հսկող Քերորէ մը, այլ մարց մէջ ամենաքաղցր, ամենագլխած, եւ ամենակաթողիկ Մայր մը տեսնելու բախար պիտի ունենանք, որ յարատեւաբար մեր վրայ սեւեռած է սիրալիւր աչքերը ։ առ մեզ, որ ցաւով կ'առնունք դողդոջուն քայլերնիս նոյն այս երկրիս վրայ, զոր ինք ալ ատեն մը կոխեց իւր օրհնած ոտիւքը ։ Մենք պիտի տեսնենք զինքը դէպ ի այս արքայորանաց եւ փորձոյ վայրը տարածած ձեռքերովն ի նշան իւր պաշտպանութեան վստահելու

¹ Մասն Գ. Տիտղոս ԺԳ. ԳԼ. ԺԴ ։
— ² Ճառ. ի Փոխ. Ս. Կ. ։

հրաւիրանաց, եւ «մենք մեղի բռնութիւն ընելու այն թագաւորութեան հասնելու համար¹ ։ զոր իւր Աստուածային Որդւոյն արիւնք բացաւ մեր բաղձանաց եւ յուսոյն ։

Թէ որ մինչեւ ցարգ դժբախտ դատուեցանք, կամ զՄարիամ մտու նայով, կամ առ Նա տկար եւ ստէպ մեր գործքերովն սուտ հանուած ջերմեռանդութեամբ մը լանք մեր ապերախտ պաղութեան վրայ, խզենք մեր մտացածին պատրանաց կապերը ։ Մեծ է Մօր մը գլխութիւնը, հապա ինչպիսի պիտի ըլլայ Մարեմայ պէս Մօր մը . . . : Սակայն նոյն այս վայրկենէս սկսինք տածել առ Մարիամ ջերմեռանդութիւն մ'արժանի Յիսուսի, զոր պէտք է որ սիրենք եւ փառաւորենք ի Նման, արժանի Անոր, զոր պէտք է որ սորվին մեր եղբարք սիրել եւ փառաւորել ամէն Անոր ծառայ կուչուողներուն բարի օրինակներով ։

Օր մը Յակոբ Նահապետն երազի մէջ տեսնելով խորհրդաւոր սանդուխ մը, որուն զբխէն Աստուած իրեն կը կանխագուշակէր իւր սերնդեան շքեղ ապագան, սուրբ երկիւղով մը պատած գոչեց. «որքափ ահաւոր է այս տեղը, հոս է Աստուծոյ տունը, եւ ասիկայ է երկնից դուռը² ։ Հապա ինչ ըսենք

¹ Մատթ. Ժ. Լ. 12 ։ — ² Ծննդ. Ի. Լ. 17 ։

Քեզ նկատմամբ, ո՛վ Արյս սուրբ, որուն հետ նոյն այս Աստուածը հաճեցաւ արեան եւ բնութեան ամենազօրաւոր եւ ամենաքաղցր կապերը հաստատել: Ո՛հ, Գուռն Բու զարմանալի մեծութեամբդ ցմբշտ արժանի ես մեր յարգալից ակնածութեան: Բայց մի եւ նոյն ատեն մայրենի խանդաղատանքդ, որով «մեզի համար բանալով երկնից դուռները հրաշալի արարութիւնք թափել կու տաս վրանիս ամէն շնորհաց մանանան¹», մեղ որդիական վստահութիւն մը կ'ազդէ: Այս քաղցր զգացմամբ մենք զՔեզ կը ճանչնանք «Աստուծոյ հրաշալի դուռը, ուսկից արդարները կը մտնեն² ի հանգիստն յաւիտենից³»: Եւ ուսկից մենք ալ կը յուսանք մտնել: Աղօթէ ուրեմն մեզ անարժաններուս համար:

Երկնից դուռ, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԱ.

Աստղ ստաւոստեաւ, աղօթես դասն մեր:

Անմահ աստղ արարութեան, ո՛վ Աստուածային Մարիամ, Գուռն մեր ա-

¹ Սղմ. ՀԷ. 23—24. — ² Անդ. ՃԺԷ. 20:
— ³ Երբ. Գ. 10:

չաց թէ՛ անուշ ես, թէ՛ լուսաւոր եւ թէ՛ շողողուն: Եթէ Գուռն բոլոր բնութիւնը լուսաւորող, ջեռուցանող եւ արգասաւորող արեւուն նման լուսոյ յորդառատ հեղեղներ չես թափեր, գէթ կը փայլն այն աստղին նման, որ «երկնից այս հակային¹» ընթացքը կը կանխէ:

Բայց ո՛վ կրնայ պատմել այն նոր աւուր գեղեցկութիւնը, զոր Գուռն աւետեցիր աշխարհին, ո՛վ «բարերաստիկ աստղ Յակորայ, որ երեւցար հասարակ մարդիւնութեան հորիզոնին վրայ²», «մահուան ստուերին մէջ նստողները լուսաւորելու համար³»: Ո՛վ կարող պիտի ըլլայ նկարագրել արեւզբաց ունեցած բախտն ի Քեզ ողջունել կարենալուն համար իւր պատուութեան մտտենալը, այն երկրպագել «արդարութեան արեգական⁴» վեմնափառ եւ սուրբ արշալոյսը, որ Իւր պայծառութիւնը Բու սուրբ արգանդիդ մէջ գրեթէ քօղարկելէն վերջն անսահման լուսով երեւեցաւ մեր աչաց, ամէն կողմ արձակելով Իւր բարերար ճառագայթները, շնորհելով մտրուութենէ խաբուածներուն ճշմարտութեան լոյսը, հաղորդելով «մահուան թշուառ որդւոց⁵» կեանքը, որ մի

¹ Սղմ. ԺԲ. 6: — ² ԹԷ. ԻԿ. 17:
— ³ Ղուկ. Ա. 79: — ⁴ Մաղաբ. Գ. 2:
— ⁵ Ա. Թագ. ԻԶ. 16:

միայն արժանի է այս անուան, յաւիտենական կեանքը: Աստղ փրկութեան, Դուռն պայծառութիւն մը ցուցուցիր արժանի «այն երկնային ջահին, որ խառն էր բարեւէն իւր հաւանքէն!»¹: Դուռն ստուգիւ եղար «աւաւտեան պայծառ աստղ»², այն երջանիկ աւուր, յորում աշխարհ իւր գլխուն վրայ ծագած տեսաւ իւր փրկութեան եւ անձառ վերածնութեան Աստուածային արեգակը: Ո՛հ, օրհնեալ ըլլաս, ցմիշտ օրհնեալ ամէն օրտէ եւ ամէն լեզուէ: Ղ ամն զի Դուռն եղար գրեթէ մեծագին գրաւական «երկրիս երկնից հետ հաշուութեան»³: Զիսուսի Քրիստոսի միջոցաւ մեր սրբութեան⁴, մեր յաւիտենական փրկութեան⁵, եւ մեր կոչման առ թագաւորութիւնն եւ ի փառս Աստուծոյ⁶:

Հիմայ ալ այս խորհրդաւոր «բառ-օրհան» ասրղը միթէ մեզի համար յուսոյ գրաւական, փրկութեան առհաւատչեայ մը չէ՞ արդեօք: «Վերջուցէք մէջ տեղէն զՄարիամ, կ'ըսէ Սուրբն Բոնավենտուրա, ինչ պիտի ըլլանք մենք թշուառներս: Միթէ աշխարհի խաւարին ծոցը պիտի չզրորնք, եթէ Անոր քաղցր պայծառութենէն զըր-

1 Սիրաք, Ծ. 7: — 2 Յայտ. Ի Բ. 16:
— 3 Կորոս, Ա. 20: — 4 Ա. Կորնթ. Ա. 30:
— 5 Եբր. Ե. 9: — 6 Ա. Թեսաղ. Բ. 12:

կուինք!»¹: Աւաղ, ո՞վ չի գիտեր թէ կան այնպիսի վտանգաւոր վայրկեաններ, յորս հաւատոյ լոյսը կարծես թէ կը խաւարի իւր Աստուածային ազդեցութեանց ամէնէն հակառակ խորհրդոց տեղի տարւո համար, վայրկեաններ, յորս բռնի հակում կը զգայուրի առ այն, որ կ'անարգուի եւ սրտի խորէն կը գարշուի. յորս երեւակայութիւնը կը բռնկի, կը յուզուի, այն աստիճան որ, հաճութիւն կը զգայ այնպիսի առարկաներէ, որոնք սոսկում կը պատճառեն, մինչեւ որ դիւթութիւնը փարատի եւ անդորութիւնը դարձեալ հաստատուի: Բայց եթէ մենք այն ատեն աղերսարկու ձայն մը բարձրացընենք դէպ ի այս օրհնութեանց Աստղը, չ'ուշանար ցուցնելու մեզ իւր սփոփիչ ճառագայթներն եւ վերստին շնորհելու զհանդարտութիւնը: Ո՞վ չի գիտեր նաեւ իւր դժբախտ փորձառութեամբն որ դառն տհաճութեանց, ընկճիչ ձանձրութեանց, սեւամաղձութեանց, կաւտարեալ սրտաբեկութեան ժամեր կան, յորս կարծես թէ սիրտը պէտք է նուազի, եթէ գերբնական զօրութիւն մը զանիկայ չըռնէ: Բայց եթէ այս տաղտկութեանց եւ անձկութեանց ժամերուն մէջ եռանդուն հառաչանք-

1 Ի հայեւ ոջ (յերգս) Ս. Կ.:

ներով Մարիամ յօգնութիւն կանչուի, Անոր լուսապայծառ դէմքն անմիջապէս կը փարատէ փոթորիկը, եւ զմեզ կը սթափեցընէ, վասն զի «այն ամէն փոթորիկներու ատեն, կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, որոնք կրնան վրանիս յարձակիլ այս աշխարհիս մէջ, բաւական է որ աչքերնիս դարձընենք դէպ ի այս խնամակալ Աստղն՝ անմիջապէս այէկոծութենէն կ'աղատինք»¹ : Եռանդեամբ ուրեմն խնդրենք Մարեմայ օգնութիւնը, աղաչենք որ՝ ի փախուստ ստիպել «խաւարին իշխանութիւնները»², ինչպէս որ օրուան լուսոյն առաջին ճառագայթները «վայրենի գազաններն իրենց որջերը»³, կը փախցընեն. աղբրսենք որ այս կենաց փտանգաւոր ծովուն վրայ յաջողութեամբ առաջնորդէ մեզ մինչեւ երկնային եղբրքը : Մարիամ գոհ եւ ուրախ է փրկելով Խւր սուրբ պաշտպանութեան վտաճացող նաւապետը ինչպէս որ երախտագէտ նաւապետն ալ ցնծութեամբ սրտի հեռաւոր եզերքներու վրայ կը կրկնէ «ծովու աստեղ»⁴ փառքը, եւ եռանդնայից երգերով կ'օրհնէ Նաւաճանգատին, Պահպանութեան, Բարի օգնութեան

1 Ճառ. ի վերայ Խառախեցում : — 2 Եփես. Զ, 12 : — 3 Սղմ. ԸՊ, 22 : — 4 Ողբ Լեր ասող ծովու :

Կուսին անունը : Ո՛հ, սրչափ աւելի կը բերկրի այս անուշիկ Մայրը պատրուպարելու, կանգուն բռնելու, եւ փրկելու ջերմեռանդն բրիստոնեայն, որ զինքն յօգնութիւն կը կոչէ սրտի, հոգւոյ, եւ զգայարանաց այէկոծութեանց մէջ : Ո՛րչափ աւելի մենք, որ ստէպ եւ բարերախտարար միսիթարուեցանք այս սիրեցեալ Աստեղ քաղցր ճառագայթներէն, երախտագէտ եւ հաւատարիմ ըլլալու ենք մեր երկնային Բարերարին եւ պատուելու ենք զինքը մաքուր կենօք, ինչպէս որ մաքուր են Իւր լուսոյն անայլայլելի ճառագայթները :

Ո՛վ Գուն, որ ապահով պատուպարան եւ վտանգի մէջ գտնուած նաւապետին, միշտ ապահովիչ Կոյս, հեռացուր մեզմէ ամէն այէկոծութիւն եւ նաւարեկութիւն՝ այս ժայռերով լեցուն ովկիանոսին վրայ, յորում թող տրուած է մեր յաւիտեանական երջանիկ կամ ապերջանիկ վիճակը կրող տկար նաւակը : Ծոցերնին ահեղ կործանում կրող զարհուրելի ամպեր կրնան զմեզ պաշարել, վրանիս յարձակիլ, եւ սոսկալի գահապետմանց մատնել, բայց բնաւ չեն կրնար զբեղ մեր աչքէն հեռացընել : «Ո՛վ աստղ մեր լուսաւոր, միշտ սփոփիչ, միշտ պաշտպան, Քու քաղցր լուսոյդ հետեւողն երբեք չի մտրիր. զբեղ յօ-

գնու թիւն կոչողը յուսակտուր չըլ-
 ար, քու ինամակալութեամբդ ոչ որ
 կը սխալի, քու վահանիդ տակը ոչ որ
 կը վահանայ, քու առաջնորդութեանդ
 ներքեւ ոչ որ կը յողնի, քու պաշտ-
 պանութեամբդ ամէն բաղձանք կը
 կատարուի: Եւ ինչպէս որ ծովուն
 ասողը կ'առաջնորդէ նաւապետին դէպ
 ի նաւահանգիստը, այսպէս ալ Գուն
 քրիստոնէից կ'առաջնորդէս ի փառս²դ:
 Հաճէ, ո՛հ հաճէ իրագործել այս առ.
 քեզ ջերմեռանդութեան բոլոր զար-
 մանալի արդիւնքները, ո՛վ Մարիամ,
 յոգուտ անոնց, որոնք թէ խաղաղու-
 թեան եւ թէ այլէկոծութեան ատեն
 կ'ուզեն անդադար կաթողին սիրով
 կրկնել՝

Առաւօտեան աստղ, աղօթէ մեզի
 համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԲ.

Առողջութիւնս հիշատակոյց, ստոյժեալ
 դիտան մեր:

Վշտակրութիւն, ահաւասիկ մարդ-
 կութեան ժառանգութիւնը: Ազամայ
 առոյգ եւ կենաց ընթացքին մէջ ու-
 րախ ու զուարթ յառաջացող որդւոյ

1 Ս. Բեռնարդոս: Ճառ Բ. ի վերայ
 Խառնեցաւ: — 2 Ս. Թովմ. Գործք. 8:

մը քով ուրիշ հազարաւորներ, որոնք
 քիչ շատ անգութ հիւանդութեանց
 ենթարկուած՝ աշխատութեամբ եւ
 արցունքով կ'առնուն իրենց քայլերը,
 եւ հեկեկանաց ձայներ եւ երբեմն ալ
 աղէկտուր աղաղակներ ըլել կու տան:

Բայց մարդկութեան վշտաց մէջ
 տեղը կազմուած այսպիսի տխուր ներ-
 դաշնակութեան մէջ Օգոստոսփառ եւ
 անուշիկ անուն մը, մեծադրանչ անուն
 մը կը հնչէ քրիստոնէայ հիւանդին
 շրթանց վրայ. եւ եռանդնալից սրտով
 կոչուած այս անունը կը մեղմէ անոր
 ցաւերը, կը կազդուէ ուժը, կը սփո-
 փէ, եւ հինցած ցաւերն անգամ կրնայ
 առողջացընել եւ վերջ տալ ամենա-
 անբուժելի հիւանդութեանց: Եւ այս
 է Աստուածայինն Մարեմայ անունը:
 Յիսուսի սրտէն զատ ուրիշ որ սրտի,
 ուրիշ որ խելամուտ սրտի կրնայ դի-
 մել հաւատացեալ վշտակիրը: Ո՛հ,
 միթէ Մարիամ շատ աղէկ չսորվեցաւ
 կարեկից բլբլ Իւր երկրպագելի Ու-
 դւոյն տանջանաց կոճղին վրայ կրած
 երկար եւ անպատում ցաւերը տես-
 նելով: Միթէ ջնդուներեցաւ խաչին
 տակն Անոր Աստուածային շրթունքէն
 իրբեւ անօտարանալի ժառանգու-
 թիւն բոլոր հաւատացեալներն յանձին
 «սիրելի աշակերտին!»: Միթէ այն

1 Յովհ. Ժ. Թ. 26:

ատենէն իսկ անճառելի խանդաղատա-
նօք իւր անհամեմատ սիրոյն անուշ
կապերովը չընդգրկեց զմեզ...: Եւ
հիւանդութեան ատենն այս երկնային
Մայրը ոգնութիւն կոչողը միթէ չի՞
գիտեր որ Անոր կարողութիւնն սիրոյն
ալ հաւասար է...:

Ժողովրդեան բարեպաշտութիւնը
միայն տեղ տեղ ի պատիւ ուրիշ
Սրբոց կանգնած է հաւատոյ եւ երախ-
տագիտութեան յիշատակներ, բայց
Մարեմայ համար քրիստոնեայ տիե-
զերաց ամէն կողմերը կանգնած է դա-
նոնք: Ո՞վ խօսիլ չէ լրած ի պատիւ
այս Աստուածային Մօր կանգնուած
հոյակապ տաճարներու վրայ, եւ ո՞վ
բարեբախտ գտնուեցաւ գէթ ասոնցմէ
մէկուն այցելելու առանց ջերմուռան-
դաբար սիրտը շարժելու, տեսնելով
Անոր միջնորդութեամբ ընդունուած
մարմնաւոր բժշկութեանց, անթիւ-
շնորհաց այնչափ անժխտելի վկայու-
թիւնները, ի նշան երախտագիտու-
թեան քանդակուած արձանագրու-
թիւնները, Անոր խորանին նուիրուած
դանազան ընձաները, Անոր ոտքերուն
տակը գիղուած ոսկիէ եւ արծաթէ շի-
նուած անդամներն՝ իրոնշան իւր մարդ-
կային ամէն արուեստի ըմբոստ հիւան-
դութեանց դէմ ունեցած զօրութեան :
Փայտէ դձուձ գործիքները, որոնք
նեցուկ ելած էին անոր, որ գետնա-

քարը մինչեւ Սրբավայրին շէմն եկաւ
Անոր օգնութիւնն հայցելու, եւ զո-
րոնք Անոր բարեխօսութիւնն անպէտ
ընելով՝ նուիրական պատերէն կա-
խուեցան, իբրեւ անկեղծ եւ սրտաշարժ
մեծարանաց նշան Անոր փառաց : Ո՛հ,
ինչպիսի՞ ճարտարութեամբ կը խօսիք
դուք հաւատոյ, ինչպիսի՞ ուժգնու-
թեամբ առ Մարիամ վստահութիւն
կը ներշնչէք, զոր Եկեղեցին վայելչա-
պէս Առողջութիւն հետադարձ կա-
նուանէ:

Անտարակոյս Մարիամ ամէն անգամ
բաղձանքնիս չի կատարեր, վասն զի
ըղձերնուս կատարումը փոխանակ օգ-
տակար ըլլալու մեր հանդերձեալ կե-
նաց ճշմարիտ երջանկութեան, յաճախ
ալ կրնայ մեզ վնասակար ըլլալ: Բայց
միշտ այս՝ «նորհաց Մայրը», հիւան-
դութիւններնուս մէջ մեզ արողջու-
թիւն կ'ըլլայ, եթէ առ Նա աղօթից
ջերմուռանքն հառաչանքը բարձրացը-
նող սիրտը կամուօր արգելք չզնէ՝
կ'ընդունի հիւանդին, որ կրած ցաւերը
հոգեւորապէս օգտակար ըլլան իրեն:
Հիւանդը զօրութեամբ եւ համբերու-
թեամբ կը զինէ, առ Աստուած ա-
պաւինութեամբ եւ անդորրութեամբ
կը լեցնէ անբուժ եւ երկար գիշերներն
եւ անհանդիստ ու երկարատեւ օրերը,

1 Երբ. ի ժամակարգ. Ս. Կուսին:

միշտ կը կենդանացրնէ այն զգացմամբ, զոր ունէր երանելին Յովբ, երբ կը գոչէր, «Ո՛հ, իմ ծայրայեղ ցաւերուս մէջ, գէթ այս մտիթարութիւնն ունիմ որ Աստուած ինձի չի խնայեր այս փորձոյ վայրին մէջ եւ ես բնաւ չեմ տրտնջեր Անոր երկրպագելի նախախնամութեան դէմ¹»... Իսկ երբ Աստուծոյ որոշուած ժամը կը հնչէ, մահը կը հասնի, Մարեմայ պաշտպանութեան ապաւինեալ ցաւագարին չէ թէ վարչուրելի եւ հաշաւոր իբրեւ մեծ պատուհաս մը՝ պլլ հանդարտ եւ զուարթ իբրեւ քաղցր անցք մը, պատերազմի վախճանէն առ յաղթութեան ցնծութիւնները հրաւրելու, այս «արտասուուց վայրէն²», առ այն փառաւոր թագաւորութիւնը, ուր «նոյն Ինքն Աստուած Իւր սիրելեաց աչքերուն արցունքները կը սրբէ³»:

Վատարեալ վատահոլութեամբ ուրեմն դիմենք առ Ամենասուրբ Կոյսն մարմնայ ամէն հիւանդութեանց ատեն, որոնցմով կը հաճի Աստուած որ մենք վիշտ կրենք, եւ չդադարենք Անոր զօրաւոր պաշտպանութիւնը խնդրելէ, զոր կը վայելէ Իւր երկրպագելի Որդւոյն քովը, յիշելով Սրբոյն Բեռնարդոսի այն խօսքերը թէ՛ «Աստուած

¹ Յովբ, Զ, 9: — ² Ողջ Լէր Թատ. : — ³ Յայտ. Ի, 17:

Անոր բացարձակ իշխանութիւն տուաւ յերկինս եւ յերկրի, մեր կեանքն ու մահը Մարեմայ ձեռքը յանձնեց¹ : Մանաւանդ խնդրենք վերջին վայրկեաններուն համար, եւ որպէս զի ապահով բլլանք Անոր զօրաւոր օգնականութեան այն ժամուն համար, որ պիտի սրուէ ցմիշտ մեզի համար ամենայն ինչ, «այնպէս ապրինք իբրեւ թէ ամէն օր մեռնելու բլլայինք²»:

Ո՛վ Մայր, որուն խանդադորով սիրտը մեծ Աւաքեպէյն աւելի պատշաճաբար կրնայ ըսել՝ «Ո՛վ երբէք կը տառապի, ու ես անոր կարեկից չեմ եղած³»: Փառաւորեաց, ըստ որում այրպէս յաճախ եւ հիանալի կերպով Բու կարողութիւնդ կը հուչակես ի մտիթարութիւն եւ կամ ի բժշկութիւն մեր մարմնաւոր տառապանաց: Ո՛հ, Գուռ մեզ ամենուս, եւ մեր ամէն հիւանդութեանց համար «կենսատու դեղ մ'ես⁴»: Մինչդեռ Երուսաղէմի Պորթատիկէ աւազանն առողջութիւն կու տար միայն ատեն ատեն, եւ միայն անոր որ Հրեշտակին ջրերն յուգած ատենը մէջը նետուելու առաջինն բլլար⁵ մենք հազարեցս կ'օրհնենք Բու Աստուածային Որդիդ, վասն զի

¹ Ճառ. յՈղջ Լէր Թատ. : — ² Ա. Կորնթ. Ժ. Բ, 31: — ³ Բ. Կորնթ. Ժ. Ա, 29: — ⁴ Սղմ. ճԲ. 3: — ⁵ Յովհ. Ե. 4:

ինչպէս ատեն մ'իւր մահականացու կենաց ընթացքին մէջ իւր պաշտելի Անձէն, այսպէս ալ Քեզմէ հանել կու տայ «ամէն ցաւ առողջացրնող Էուրօնի» զօրութիւն մը¹։ Եւ կը թախանձենք որ ասոր փորձն առնուլ տայ մանաւանդ այն որոշիչ ժամանակորում ժողեցած կ'ըլլանք յաւիտենականութեան։ Ո՛վ անուշակ Աղոյս, որ մայրենի բարութեամբ կը զիջանիս ընդունիլ վտահոլութեամբ Քեզ յանձնուողին հաւաչանքը²։ Ըրէ որ վերջին վայրկենին տեսնենք, ըստ կատարեալ իմաստին, Եկեղեցւոյ այս ջերմեռանդն պաղատանաց իրագործուիլը։

Հիւանդաց առողջութիւն, աղօթէ՛ մեզի համար։

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԳ.

Ապրատան մեղսորդաց, աղօթեալս
դասն մեր։

Մարդուս ընութեան յատուկ է իւր վշտացուցած անձին ներկայանալէ սաստկապէս վախնալը, թէ եւ իւր զեղջն յայտնելու եւ թողութիւն խնդրելու համար ըլլայ, մանաւանդ երբ յանցաւորը շատ ստորին ըլլալով՝

1 Դուկ. Չ. 19։ — 2 Ս. Յերոն.
Թուղթ Բ. առ Եւստորիս։

իւր վեհանձն բարերարին ալ չափազանց ապերախտ գտնուած ըլլայ։ Ո՛հ ինչ սփոփանք եւ մխիթարութիւն է այնպիսւոյն համար, երբ փութաջան եւ աղեցեցիկ բարեկամ մը ներկայանայ իւր ազդու միջնորդութիւնը նուիրելու եւ հաջողութեան միջոցները դիւրինացնելու։

Բայց եթէ բարեբախտաբար այս անձը նոյն ինքն մայրն ըլլայ անոր, զոր ի գլխութիւն զիջուցանել կ'ուզէ, որ կը հաճի շնորհալից կերպով իւր զօրաւոր իշխանութիւնը գործածել առ ինքն գորովագուցու սիրով լեցուն որդւոյն քով, ինչ ցնծութիւն, որպիսի բախտ։

Մեղաւորներ, ինչ որ էք, օրհնեցէք Աստուածային Մայրը, որ զարմանալի բարութեամբ կու դայ, միջնորդ կ'ըլլայ ձեր ու իւր պաշտելի Արդւոյն մէջ, որուն անզուգական բարութեան եւ անսահման սիրոյն ապերախտ գտնուեցաք, որուն գերագոյն մեծ վայելչութիւնը լրբաբար վշտացուցիք։ Ո՛հ, տարակոյս չկայ որ դուք Անոր դէմ շատ յանցաւոր էք։ Թէ որ դուք դիտած էք միայն Փրկիչն Աստուած, զոր կրցաք, աւաղ, այնչափ թշնամանել գուցէ փորձութիւն չղղայիք փախչելու «Գառլն ներկայութենէն¹, Յուգայի

1 Յայտ. Լ. 9։

ցեղին վրէժէնդէր առիւծին առջեւէն¹, եւ այնպէս յուսահատութեան անդունդը զահալլիծելու...: Բայց ահաւասիկ Անոր Օգոստափառ Մայրն իւր քաղցրութեան եւ ողորմութեան աչքերը վրանիդ կը դարձընէ, եւ ի նպաստ ձեր՝ Որդւոյն միտքը կը ձգէ այն օրհնեալ օրերուն յիշատակը, յորս Մարգն-Աստուած կը հանդէժ իւր բազկացը մէջ, զանոնք գրեթէ աւանդապահ ընելու իւր շնորհաց անդին զանձին: Թեեւ հազարիցս աւելի յանցաւոր ըլլայիք, սիրտ առէք, Մարիամ շատ զօրաւոր է, ձեզի համար թողութիւն կ'ընդունի, եւ նոյն իսկ իւր բարութիւնը զինքը կը մղէ զայն ինդրելու:

Միթէ կրնայ անգիտանալ այն անձառելի ողորմութիւնը, զոր իւր Աստուածային Որդւոյն սիրտը կը պարունակէ մեղաց գեղի եղող Ագամայ թշուառ որդւոց համար: Ո՛հ, երկրիս վրայ Յիսուսէ զատ ոչ ոք անոնց համար այնչափ փափուկ ինամք տարաւ. այն աստիճան յառաջ տարաւ այս ինամքը որ իւր թշնամիներն երեսը զարնելու եւ զինքն ամբաստանելուն թըրած էին²: Բայց միթէ Անոր անուշակ Մայրը բոլոր արարածներէն

¹ Յայտն. Ե. 5: — ² Մատթ. Թ. 11: Դուկ. Է. 34:

աւելի մտերմաբար մասնակից չէր Անոր զգացմանց: Եւ յերկինս վերափոխուելով չգնաց այն երանութեան, իւր ձոյր կրելով այն բարեգութ. եւ միշտ զգայուն սիրտն այնպիսի արեամբ գնուած հոգւոց կորստեան համար, որուն արժէքն ինքը շատ արեկ գիտեր: «Անոր գթութիւնը, կ'ըսէ Սուրբն Բոնավենտուրա, անեցաւ իւր փառացը հետ, եւ Յիսուսի հետ թագաւորածատենն, այս կարեկցութիւնն այնչափ աւելի մեծ է, որչափ որ Մարիամ աւելի յայտնի կը տեսնէ մարդկան թշուառութիւնը¹, որոնք չեն ծանչնար փրկագործութեան երկրպագելի խորհուրդը:

Աւստի եւ Սուրբ Վարդապետներն Անոր մեղաւորաց նկատմամբ կարեկից բարութեան վրայ խօսելով անպայման կը բարձրացընեն զայն: Սուրբն Եփրեմ կ'անուանէ զինք «ամենազօրաւոր միջոց փրկութեան բոլոր մեղաւորաց համար, եւ ապահով նաւահանգիստ ամենաւարեկեցող²»: «Գրուէն ես ով Մարիամ անոնց միակ յղյճը³ կը կոչէ Սուրբն Օգոստինոս: «Ես կը հաւանիմ որ ալ Բու գթութեանդ վրայ խօսք չըլլայ, կը գրէ Սուրբն Բեռնարդոս, թէ որ մէկը կարող ըլլայ հաս-

¹ Ի հայերէն Ս. Կ. ԳԼ. Է. — ² ՅՐՀ. նութիւնս Ս. Կ. — ³ Ճառ. յԱւետույն:

տատել ի զօր զայն յօգնութիւն կոչած ըլլալը¹»: «Ո՛վ Մարիամ, կը յաւելլու դարձեալ Սուրբն Բոնավենտուրան, եթէ մեղաւորը բոլոր աշխարհի զգուանքը դարձած ըլլայ Քեղ սոսկում չի պատճառեր, այլ Գուռն մայրենի գգուանօք զանիկայ կ'ընդունիս, եւ երբեք չես թողուր, մինչեւ որ զինքն իւր աստուր դատաւորին հետ չհաշտեցրնես²»:

Մշտնջենաւոր հիացում, գովութիւն եւ օրհնութիւն Աստուծոյ, որ մեղաւորին ծայրայեղ թշուառութեան այսպիսի մեծայարգ ապաւէն մը բացած է: Վստահութիւն, կատարեալ վստահութիւն, յարատեւ վստահութիւն ի Մարիամ, երբ մեր եղբարց դարձին համար կ'աղօթենք, երբ մեր հոգեւոր հիւանդութեանց առողջութեան համար կ'աղաչենք: Դարձեալ կատարեալ եւ յարատեւ վստահութիւն երբ լքումը կամ յուսահատութիւնը մեր սուրբ առաջադրութիւններն եւ առաքինի ըլլալու բարի կամքը ոչնչացրնել սպառնայ, ան ատեն Եկեղեցւոյ հետ գոչենք. «ողջ եղի՛ր թաղուհի, մայր ողորմութեան, մեկ կեանքը, մեր քաղցրութիւնն եւ մեր յոյսը³»:

¹ Ճառ՝ յԱլեհտունն: — ² Ի Սաղմոսն:
— ³ Ողջ էր թագ.:

Ինչպէս որ Սուրբն Պետրոս Առաքեալ հոգւով յափշտակուած տեսաւ, ըստ Եբրայական օրինաց պիղծ կենդանեաց խումբ մ'Աստուածային զօրութեամբ մաքրուած եւ երկինք տարուած¹, այսպէս մենք ալ հիացմամբ կը տեսնենք, ո՞վ Մարիամ, յանցանօք աղտոտած հոգւոց բազմութիւն մը՝ քու բարեխօսութեամբդ իրենց սխալմունքներէն ուղղուած, մաքրուած, եւ յաւիտեական փրկութեան նաւահանգիստը տարուած²: Ո՛հ, սուղիւ Գուռն ամենամեծ մեղաւորաց համար ալ ամենէն ապահով պատուարան մ'ես, շատ աւելի քան թէ հին ատեններն Աստուծոյ օրէնքները չպահողներուն համար «Բեթսովրի ամրոցը³»: Շատ աւելի ապահովագոյն քան Սողոմոն թագաւորին բարկութենէն աղատելու համար Ադոնիայի ապաւինած սեղանը⁴: Ո՛րչափ անգամ, ո՛հ, քանի՛ անգամ՝ քու գթածից բարեխօսութեամբդ զինամօտի արգար դատաւորը կրցաւ Քեզ ըսել, ինչպէս որ Գաւիթ ըսաւ Աբիգիայի. «առանց քեզի պոսոր մահուան պիտի մատնելի այս յանցաւորը⁵»: Բանիցս Գուռն ուղեցիր «յիշել յարբոնաց լին հորւմ, շուր Բեռ

¹ Գործ. Ժ. 12: — ² Սղմ. ճԶ. 30: —
³ Ա. Մակար. Ժ. 14: — ⁴ Գ. Թագ. Ա. 50: — ⁵ Ա. Թագ. ԻԵ. 33:

նախքան ինչ որ աստիճանի վրայ, որոնք չափին առաջին արժեքի էին հասնում, որոնք Ռասխար պոռնիկին եւ կամ Բարեկունի որդւոց¹», եւ ազատել զանոնք յաւիտենական անդունդէն: Բայց մնացած է, ո՞վ Մարիամ, բաղձնազատիկ անդադար Բու զարմանալի բարութեանդ արդիւնքն այնչափ կոյրերու եւ անդգայնեւրու համար, որոնք կը վազեն դէպ ի իրենց յաւիտենական թշուառութիւնը: Անոնք քրիստոնեայ եղբայրսիրութեան խիստ կապերովն իրբեւ «մեր անդամներն» են, որոնց համար կ'ըսենք՝

Մեղաւորաց ապաստան, աղթի մեղի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԳ՝

Միջիմարիւց վշտացելոց, աղթես
վասն մեր:

Վը գտնուին արդեօք առանց վշտի հոգիներ, առանց անձկութեան սրտեր եւ առանց արտասուաց աչքեր: Այս աշխարհս մարդու համար միայն դժբախտութեան դպրոց մ'է, ուր պէտք է սորվել առ Աստուած վերանալ,

1 Սղմ. 2 Ձ. 4: — 2 Ա. Կորնթ. Ժ. Բ. 27:

Անոր առջեւը խոնարհիլ, աղթել եւ բարեգոյն աշխարհի մ'երկնային երջանկութեան հառաչել: Անեաց բովանդակ տիրութեանց կը միանայ անխուսափելի մահուան բնական սարսափը, որ գրեթէ ամէն մէկ քայլափոխին զանազան ձեւերով կը ներկայանայ, եւ կարծես թէ կ'ըսէ մեզ — Շուտով կարգը քեզի պիտի գայ —: Ո՛հ եթէ մտածէինք միայն հոգւոյ անձկութեանց, անգութ պատրանաց, խորունկ ցաւոց, անմխիթար վշտաց ու տանջանաց վրայ, զորոնք Աստուած միայն կը ճանչնայ, եւ որոնք զինքը գրեթէ դէպ ի յուսահատութիւն կը մղեն. փորձութիւն պիտի չգրգայինք արդեօք մահուան վրայ Պօսիւէին ըսած խօսքերը կրկնելու թէ. — Պէտք է սպրիլ, բայց որչափ տխուր է —:

Սակայն մեզ քրիստոնէիցս համար Աստուած իւր զարմանալի նախախնամութեամբն հաճեցած այսպիսի պատուհասից հետ պատրաստել նաեւ անձառելի մխիթարութեան անսպառ աղբիւր մը, որ է Մարեմայ սիրտը, անհուն ցաւակցութեամբ լեցուն սիրտ, մայրենի սիրտ, որուն նմանը ոչ երբեք գտնուեցաւ եւ ոչ ալ պիտի գտնուի. մը սիրտ, որ իւր որդւոց հետ կը նոյնանայ, եւ ըստ իմիք ինքը զինքը կը մոռնայ պացողներու հետ

լայու՞ն եւ խանդակաթ զեղմամբ
դանտնք տանջող ցաւերն սփոփելու
համար:

Ո՛հ, Աստուծմէ մեզ արուած ինչ-
պիսի անորժելի շնորհք մ'ես Գուռն,
ո՛վ Մարիամ, մեզ որ «հեծու թեան
ու արտասուաց մէջ ընկղմած ենք²»:
Սիրելի Մայրիկ, որչափ զորաւոր է
Քու յիշատակդ սրտերնիս ճնշող ծանր-
ու թիւնը թե թեւցրնելու, սրտերնուս
զեղուն դառնութիւնը քաղցրացնե-
լու, զինքն սպառուղ անգութ վէրքերը
բուժելու: Գուռն ինքնին չափազանց
վիշտ կրեցիր, Գուռն ասանկ սուրբը,
Գուռն Աստուծոյ Օգոստոսափառ Մայրը,
Գուռն ստիպուեցար խմել բաժակ մը,
որ կրնար տապայել ամէն մարդկային
ուժ: Գուռն Դահաբէր ցաւոց անյատակ
ովկիանոսին մէջ ընկղմեցար³, եւ
այսպիսի ծայրայեղութեան մէջ՝ Գուռն
առանց համեմատութեան չայլայլեցար,
քարմանայի կերպով Աստուծոյ կամաց
համակամ ըլլալով: Ո՛վ է այն մե-
ղաւորը (եւ մեզմէ ո՞վ մեղաւոր չէ):
որ իւր ցաւոց մէջ չսփոփի տեսնելով
որ անմեղութեամբդ ալ նաեւ Քեզ
վիճակեցաւ դառնագին վշտաց, ստու-
գիւ բարդյական, անպատում տառա-
պանաց մեծ բաժին մը: Ա՛լ աւելի:

1 Հովով. ԺԲ. 15: — 2 Ողջ լէր Թագ.:
— 3 Ողբ Երեմ. Ա. 12:

Ո՛վ է այն մարդը որ ջերմագին մտի-
թարութեան զգացմամբ չինցուի՝
մտքին առջեւը բերելով մեզ նկատ-
մամբ մայրենի սրտիդ կաթոզին գո-
րովը, վառվռուն համակրութիւնը,
ինամքն եւ կարեկից ու գթալից եղ-
բայրսիրութիւնը:

Այո՛, Աստուծային Մայրերնիս մեզ
ողորմելի վշտացելոց համար անիմա-
նալի եւ սիրալիբ գծութեան քաղ-
ցրութիւն ընտելի: Երկնային Փեսայն
Անոր բարութիւնն ու քաղցրութիւնը,
որով բոլոր խօսքերը դրոշմուած էին
չախարհիս վրայ ապրած ատենը՝ կը
համեմատե ընութեան մէջ դանտուած
ամենաքաղցր իրաց: «Քու շրթունք-
ներդ, կ'ըսէ, խորիսխ են, ուսկից մեղը
կը կաթի: Կաթ ու մեղը կը վաղէ
Քու լեզուէդ¹»:
Էւ ուրիշ տեղ մը
մեզ հասկըցրնել ուզելով թէ Մարե-
մայ քաղցրութիւնը որչափ ազդու է
սրտերնիս յափշտակելու համար, գրե-
թէ Խնք յափշտակուած կ'երեւայ.
«Ել եկուր, ո՛վ Սիրելիդ իմ, ականջ-
ներս լսեն ձայնդ, վասն զի Քու ձայնդ
է նոյն ինքն քաղցրութիւնը²»:
Հատ
իրաւամբ ուրեմն կ'ըսէ Սուրբն Բեռ-
նարդոս, «ամենայն ինչ ի Մարիամ
մարդատիրութիւն եւ բարերարութիւն
կը շնչէր, որ ամէնուն համար ամէն

1 Երդ. Գ. 11: — 2 Անդ, Բ. 14:

բան կ'ըլլար, եւ առ ամենսին զեղուն,
 թաթաղուն սէր կը ցուցընէր¹»։ Ո՛վ
 Մարիամ, կը յաւելու այս Սուրբ
 Վարդապետը, ո՛վ Մայր անձառ սի-
 րելու թեան, միշտ, այս, միշտ ֆու-
 անունդ միայն սրտեննիս կը լեցընէ այն
 Աստուածային քաղցրութեան սուրբ
 բխմամբ, որով Աստուած ֆու գեղե-
 ցիկ հոգեղ ճոխացուց²։ «Ո՛չ, չկայ եր-
 կինքը բոլոր Սրբոց մէջ, կը յաւելու
 Սուրբն Անտոնինոս, չկայ մէկ հատիկ
 սիրտ մը, որ մեր թշուառութեանց
 վշտակից ըլլայ այնպէս, ինչպէս որ է
 Երանելի Աղյան Մարիամ³»։

Բովանդակ մեր վշտաց ու տառա-
 պանաց մէջ դիմենք ուրեմն այս երկ-
 նային միւթարչին մանաւանդ հո-
 գեւոր վշտաց մէջ. թափենք զանոնք
 Մարեմայ Մայրենի սիրտը։ Ինք մեր
 վստահութիւնը պարապի չի հաներ,
 վասն զի, ինչպէս կ'ըսէ Սուրբն Յով-
 հաննէս Գամասկացին, «տառապանաց
 ամենաքաղցր սփոփանքն եւ բարոյա-
 կան վշտակիրութեանց ամենէն ապահով
 դեղն է⁴»։

Ո՛վ երբեք կրնայ, ո՛վ Ամենօրհնեալ
 Աղյս, չափել ֆու գլխից բարու-

թեանդ «Երկայնութիւնը, լայնու-
 թիւնը, բարձրութիւնն ու խորու-
 թիւնը¹»։ «Կարեկցութիւնը ֆեղ հետ
 ծնաւ եւ յետոյ տարիքիդ հետ աճե-
 ցաւ²»։ Մարիամ Եկեղեցւոյ սկզբնա-
 որութեանն յառաջ ալ մարդկան
 համաց եղաւ «իրբեւ ամպերու մէջ
 շողացած առաւօտեան աստղ, յեղոյ
 իրբեւ լուսին իւր հաճելի պայծառու-
 թեամբ լուման մէջ. եւ յերկնս՝ Գրու-
 փառութեն յերջն արեւու բովանդակ
 լուսաւորութեամբը փայլեցաւ³»։ Ո՛վ
 Աղյս, զոր յօժար սրտով Աստուծ մէ-
 ետքը կը կոչենք «մեր կենաց միւթա-
 րութիւնն⁴ եւ վշտաց մէջ մեր յոյսը⁵»։
 Գունն, զոր Աստուած ձեռք կ'առնու
 մեր վշտաց ու ցաւոց օրերն ուրախու-
 թեան փոխարկելու, ինչպէս ստեն մը
 զբարեպարիշտն շաթեր ձեռք առաւ Խը
 ժողովուրդը միւթարելու եւ անոր
 օգնելու, մեզ ալ միշտ նեցուկ եղիր
 մեր լքմանց ու տառապանացը մէջ։
 Մենք պիտի դիմենք ֆեղ այն կեն-
 դանի հաւատքով, եւ անկեղծ ջերմե-
 ուանդութեամբ, որոնք ֆու ճշմարիտ
 ծառաներուդ նշանը կը կաղմեն։ Ըրէ
 որ արցունքներ, վշտեր, անձկութիւն-
 ներ, եւ ցաւեր միշտ ի մեծագոյն բա-

1 Ճառ. Ի վերայ բանիցն Յայտն. —
 Կշան մեծ։ — 2 Ի Ներբողոյ Ս. Կ.։ —
 3 Մասն Գ. Տիաղոս Իե. ԳԼ. Բ.։ —
 4 Ճառ Բ. Ի Ննջումն Աստուածամօր։

1 Եփես. Գ. 18։ — 2 Յովք, ԼԱ. 16—
 19։ — 3 Սերաք, Ծ. 6—7։ — 4 Տովք,
 Ժ. 5։ — 5 Երեմ. Ժե. 18։

րիս փոխուին անոնց, որ որդիական
սրտի հեղմամբ քեզ կ'ըսեն՝

Աշտացելոց միտիժ արինչ՝ աղօթ է մե-
զի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԵ.

Օգնական քրիստոնէից, աղօթեալ
դասն մեր:

Ամեն ատեն, ով Մարիամ, Դուն
օգնական եւ պաշտպան բազուկ եղար
Քու Որդւոյդ աշակերտացն, եւ ա-
նոնց մեր՝ Եկեղեցւոյ: Բայց որչափ
աւելի զարմանայի կերպով օգնեցիր
ինչ ինչ պարագաներու մէջ, յորս ա-
մենայն ինչ կարճես թէ Աստուած-
ային Յիսուսին սքանչելի գործոյն կործ-
անում կը դաւաճանէր:

Այլագգութիւնը վեշտասաներորդ
դարուն մէջ Էւրոպա խուժելու եւ
քրիստոնէութիւնն ի սպառ բնաջինջ
ընելու կը սպառնար: Ահաւոր նաւա-
տորմիդ մը գուռօղութեամբ կը տա-
րածուէր Այլագգեաց դրօշակին տակը
Լեփանթոյի ծոցին մէջ: Հաւատացեալ
ժողովրդեան նաւերը թէեւ թուով
սակաւագոյն՝ չեն դանդաղիր Քու
պաշտպանութեանդ ներքեւ անոր դի-
մացը ճակատելու ի կարգ պատերազմի,
եւ Յովհաննէս Աստորիացին իրենց

հրամանատարը կ'ուխտէ անձամբ այց-
ելութեան երթալ Քու՝ ի Ղաւրետոն
հոյակապ տաճարիդ: Մի եւ նոյն ա-
տենն Հռովմ քաղաքը կը լսէր իւր
պարսպաց մէջ վարդարանի հանդի-
սաւոր թափօրններով քեզ ուղղուած
ամենաեռանդուն աղերսները՝ կամ ու-
ղիկէ բանակին յաջողութեան համար:
Յանկարծ Սուրբն Պիոս Խ. կը կոչէ՝
ի փառս Քո «Քրիստոնէից նաւատոր-
միդը յաղթեց»...: Իրօք շուտով կը
հասնի Այլագգեաց ի սպառ պարտու-
թեան պաշտօնական լուրը. եւ ի յի-
շատակ Քու պաշտպանութեանդ այս-
պիսի փառաւոր վկայութեան, նոյն
Սուրբ Քահանայապետը կը յաւելու
Լիտանիային վրայ, զոր Քու պատուոյդ
համար ամենայն սիրով կ'երգենք, այս
նոր պաղատանքը. Բրէտորնէից Օթնա-
խն, աղբիէ Գրի համար...: Եւ Դուն,
ով Մարիամ, հաճեցար շատ անգամ
արդարացընել այս զեղեցիկ տիտղոսը
Լեփանթոյի անմահ օրէն վերջն ալ:

Եթե՛ն անտասաներորդ դարուն մէջ
երկու հարիւր երեսուն հազար Այլ-
ագգեաց զինուոր ձիւննայի պարիսպ-
ներուն տակը կը յաղթունին՝ անհամե-
մատաբար նուազագոյն քրիստոնէայ
բանակէ մը. եւ այս դէպքը կը պա-
տահի Քու Ծննդեանդ Տօնին ութ-
օրէից մէջ, նոյն այն օրն՝ յորում
Մոնաքոյ քաղաքին մէջ հանդիսաւոր

աղերսներ կը նուիրուէին առ Օգնականն
 Գրեհորիէն: Եւ այս պայծառ յաղթ-
 ութեան պատիւը Քեղ վերագրեցաւ
 նոյն յաղթողէն, որ նոյն առտուն
 պատարագի ներկայ գտնուելով, եւ
 Աստուածային սուրբ խորհրդոց հա-
 ղորդուելով իրախուսած էր իւր զօ-
 րապետները, խոստանալով անոնց եր-
 կինց օգնականութիւնը Քու միջնորդ-
 ութեամբդ:

Երեսուն տարի վերջը, Կարոյոս Զ,
 Կայսրը քրիստոնէայ անուան նոյն
 թշնամեաց վրայ նշանաւոր յաղթանակ
 մը կանգնեց այն օրը, յորում, ո՞վ
 Աստուածային Կոյս, ի Հռովմ նոյն
 պատճառաւ Քու պաշտպանութիւնդ
 կը խնդրուէր: Եւ քիչ մ'ետքը Քու
 փառաւոր Աերափոխմանդ ութերորդ
 օրը Քորֆու դիեղ կ'օրհնէր զինքը պա-
 շարող Այլազգեաց իւր պարիսպներէն
 հեռու փախչիլը տեսնելով:

Հիանալի շարք մը յաղթութեանց,
 զոր Մարիամ կանգնած է Այլազգեաց
 վրայ: Ասոնք միշտ կենդանի պիտի
 մնան բոյոր ջերմեռանդն հաւատացե-
 լոց երախտագէտ սրտերուն մէջ, ո-
 րոնք այս յաղթանակներուս պարտա-
 կան են բովանդակ կաթողիկէ աշխար-
 հին ընդարձակութեան մէջ ամէն տարի
 կատարուած Սուրբ Արարարանի հան-
 դիսութեանց ատեն զգացած միսիթա-
 րութիւննին: Բայց Ամենասուրբ Կու-

սին փառաց համար բոլորն այս չէ:
 Կախախնամութիւնը կ'ուզէր որ Օգ-
 նականն Գրեհորիէն տիրոջն առանձին
 տօնի մը նուիրագործուէր: Մօտ ժա-
 մանակներուս իշխանին եւ ահաւոր
 սպարապետին դէմ եղած երկար ու
 ցաւալից պատերազմին մէջ Պիոս Ի,
 Սրբազան Քահանայապետը զանց չէր
 ըրած պաղատելու առ այս Օգնականը:
 Իւր վստահութիւնը պարապի չէլաւ:
 Կարողոն՝ այն զօրաւոր վիթխարին
 ինկաւ, պատկառելի ծերունին յաղթ-
 ական մտաւ յաւիտենական քաղաքը,
 եւ ուղեց որ իւր գերութենէ վերա-
 դառնալուն տարեդարձն ամէն տարի
 Քրեհորիէնց Օգնական Մարեմայ յատուկ
 տօնախմբութեամբը հանդիսապէս տօ-
 նուի:

Այս, օգնութիւն յարատեւ, օգնու-
 թիւն զօրաւոր, օգնութիւն ընդհա-
 նուր, օգնութիւն զինուց զօրութեան
 դէմ, օգնութիւն քաղական իշխանու-
 թեան բռնաբարութեան դէմ, օգնու-
 թիւն հալածանաց դէմ, օգնութիւն
 այն ամէն փոթորիկներու դէմ, զոր
 դժոխքը կրնայ յարուցանել ի վնաս
 Աստուծոյ Էկեղեցւոյ երկրիս վրայ եւ
 որոնք կը դիտեն արգէլը ըլլալ անոր
 թանկագին աշխարհակալութեանց,
 հաւատացելոց թիւր պակօնցընել եւ
 շատ մը հոգիներ ի կորուստ մատնել:
 Ամէն օր նորագոյն եռանդեամբ մեղ

յօգնութիւն կոչենք Օգնական կոչոյր, որպէս զի հեռու պահէ այս ամէն վտանգները: Բայց պէտք է որ մեզի համար ալ պաղատինք հաւատոյ եւ առաքինութեանց մէջ զօրանալու համար, բորբոնիս պատող ամէն տեսակ զայլձեզութեանց դէմ՝ յարատեւութիւն ունենալու համար, վասն զի զբուած է. «հաստատուն կեցողն զգուշանայ որ չի յնայ»¹: Ուրեմն Անոր արժանի վստահութեամբ Իրեն դիմենք, «ամենայն ինչ կը հնազանդի Անոր հրամանին»², կ'ըսէ Սուրբն Անտոնինոս: «Բու մինակ անուշագամեակարող է Աստուծոյ ետքը»³, կը կոչէ Սուրբն Բոնավենտուրա:

Ո՛վ Մարիամ՝ «անյաղթ վահան»⁴ քրիստոնէից, որ այնչափ պայծառութեամբ յայտնեցիր անոնց վրայ պաշտպանութիւնը: Շատ աւելի Քեզ քան թէ Յուզթայ կը պատշաճի ըսել թէ, «վայ ան աղգին, որ կը յանդգնի նախատել իմ ժողովուրդս, որովհետեւ ամենակարող Աստուածն անկից վրէժ պիտի խնդրէ»⁵: Փառաւորութեամբ յարան է նոյնս Բե՛ր, զինուց զօրութիւնը⁶ խորտակելու գ եւ Աստուծոյ որդեց ու Իւր սուրբ Եկե-

Ա. կորնթ. Ժ. 12: — 2 ճառ. ԿԱ: —
3 Ի Հոյեւոյ, Գ: — 4 Ի մատ. Ե. 21:
— 5 Յուզթայ, Ժ. 20: — 6 Սղմ. Հե. 4:

զեցւոյ բոլոր թշնամաց դէմ՝ մեզ տուած յուսոյ սփոփիչ պատճառներու գ համար: Անոր հետ յօժարութեամբ սրտի կը կրկնենք. «հաճէ՛ օգնել միշտ անոնց, որոնք իրենց խեղճութեան ծանրութեանը տակ կը հեծեն, հաճէ՛ վատասիրտները խրախուսել, տկարներն սփոփել, եւ լացողները միսիժարել, Հաճէ՛ բովանդակ քրիստոնեայ ժողովուրդեան համար աղջթել, քահանայութեան անդամներուն միջնորդ բլլալ եւ Քեզ մասնաւորապէս ջերմեանդն եղող սեռին համար բարեխօսել: Բոլոր հաւատացեալք Քու փրկարար օգնութեանդ փորձն առնուն, բայց մասնաւորապէս, որոնք որ բերկրալից սրտով զՔեզ կը յիշեն»¹. Եւ զՔեզ անուշ եւ որդիական վստահութեամբ իրենց օգնութեան կը կոչեն:

Քրիստոնէից Օգնական, աղօթի մեզի համար:

1 Աղօթք լատ. = Սրբուհի Մարիամ, օգնեալ նեղելոց:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԶ.

Թուգուհի Հրեշտակաց, աղօթես
 յխան մեր:

Հաւատոյ թեւերով թռչինք վերանանք մինչեւ այն անմահ հայրենիքը, ուր «նոյն Ինքն Աստուած է շնորհեաց անհուն վարձատրութիւնն¹, եւ իւրաքանչիւր զօք կը վարձարէ ըստ արժանեաց²»: Հոն արդեօք ինչ պիտի տեսնենք, Քահանայապետաց, Մարտիրոսաց, Առաքելոց, Մարգարէից, Նահապետաց աթոռները, եւ ապա՛ծ աչքերն իս պիտի զննեն այսչափ մեծութիւն եւ այսչափ փառք: Բայց ի զուր ասոնց մէջ պիտի փնտռենք զՄարիամ: Աւելի բարձրանանք: Ահա առեւիկ Հրեշտակաց, Քերթեւից, Սերորէից դասերը, բոլոր այն «հազարիցս հազարաւոր³, մաքուր հոգիները, որոնք կը շողան «Սրբոց Սուրբին⁴» առջեւն իբր անայլայլելի արեգակունք: Միթէ հոն Իւր երանութիւնը կը վայելէ կոյսը: Ո՛չ ոչ: Գեռշատ բարձրելելու ենք: Հրեշտակներէն, Հրեշտակապետներէն վեր, յարուցեալ Մարդ-Աստուծոյ աթոռոյն քովն ու-

1 Ծննդ. Ժ. Է. 1: — 2 Մատթ. Ժ. 27: —
 3 Գանիէլ, Ի. 10: — 4 Ննդ, Թ. 24:

րիշ աթոռ մը, որ պիտի վերաւորէ մոլորած նայուածքն իս, Յիսուսի աթոռէն նուազ բարձր, եւ երկնից բոլոր բնակչաց աթոռներէն բարձրագոյն աթոռ մը, եւ այս աթոռին վրայ Խւայի դուստր մը Յիսուսի փառքէն նուազ մեծաքանչ փառք զարդարուած՝ բայց աւելի ճոխ քան թէ երկնային Քահանայապետութեան բարձրագոյն աստիճանին մէջ գտնուած բոլոր Հրեշտակները: Ատիկայ է Ամենասուրբ կոյսն Մարիամ, Արարչին հրաշակերտը, Բոլոր Հրեշտակաց Թագուհին:

«Յիրաւի, կ'ըսէ Սուրբն Եպիփան, Աստուծոյ զատ բովանդակ եութիւններէն բարձրագոյնն է Մարիամ»¹ «Իւր արարչին Մայր ըլլալու արժանապատուութիւնը, կ'ըսէ Սուրբն Յովհաննէս Գամակացին, զինքը բոլոր արարածոց Թագուհի կ'ընէ²»: «Այնպիսին որ իրաւունք ունի զԱստուած իւր Որդին կոչելու, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, միթէ չի՛ կրնար Հրեշտակաց բոլոր դասերէն գեր ի վերոյ ըլլալ: Ո՛հ, մեծարեցէք, մեծարեցէք ո՞վ երկնային հոգիներ, ձեր Աստուածային Թագաւորին Մայրը, գուր որ կը պաշտէք մեր սիրեցեալ կուսին օրհնեալ պատուը³»: Յիսուս Անոր գլուխը

1 Ի Ներբողս կուսին: — 2 Գիբք Գ. կաթող. հաւատոյ, ԳԼ. Ժ. Է. — 3 Ճառ Ա. ի վերայ արարեցաւ:

զրաւ, կը յաւելլու Սուրբն Անտոնինոս, շքեղագեղ փառաց թագ մը, Անոր իրբեւ թագուհւոյ հպատակեցընելով բոլոր Հրեշտակները¹:

Եւ միթէ Ամենասուրբ Կուսին այս ապագայ մեծութիւնն ու փառքը չէր, զոր կանխաւ կը պատուէր Գարբրիէլ Հրեշտակագետն՝ երբ այնպիսի յարգանք եւ պերճ ու շքեղ խօսքերով զԱնիկայ կ'ողջունէր: Յարգութիւն ու մեծարանք ուրեմն օրինաւոր պարտք եղած է Անոր, որ Հօր Աստուծոյ սիրեցեալ Իստեր, Որդւոյն սիրեցեալ Մօր եւ Հոգւոյն Սրբոյ սիրեցեալ Հարսի փառաւոր տիաղոսով կը ճոխանար, եւ որ այն վեմադոյն տեղը, ուր պիտի բարձրանար Աստուածային Մայրութեան պատճառաւ, ոտքերուն տակը պիտի թողուր երկնի եւ երկրի բոլոր մեծութիւնները: Ասկից զատ, Բարձրելոյն պատգամաբերն ինչպէս կրնար չճանչնալ «Իւր թագուհին ի Նմա, զոր ինքը կ'ողջունէր իրբեւ իւր թագաւորին Մայրը²: Եւ եթէ Հրեշտակներն յանսահման ստորին են քան զմարմնացեալ Բանին մարդկային բնութիւնը, վասն զի Հրեշտակներէն եւ ոչ մէկուն, կը գրէ Սուրբն Պօղոս Առաքեալ, Աստուած կրցաւ ըսել

¹ Ճառ՝ ի Փոխ. Ս. Կուսին: — ² Ս. Աթանաս, Ճառ՝ ի վերայ Աստուածամօր:

երբեք ինչպէս Յիսուսի. «Գուն իմ Որդիս ես եւ ես այսօր ծնայ զԲեզ¹»: Ինչպէս ուրեմն ստորին չեն ըլլար Անոր, որ նաեւ Ինքն ալ կրցաւ ըսել նոյն իսկ Յիսուսի, «Գուն իմ Որդիս ես²», եւ զԲեզ արգանդիս մէջ կրեցի, եւ իմ գոյութեամբս զԲեզ կերակրեցի³:

Ով է ուրեմն այդ այնչափ մեծաբուժը, որուն առջեւն յարգութեամբ լեցուած, եւ հիացմամբ սքանչացած կը խոնարհին բոլոր Հրեշտակները, այդ արարածը, որուն այնպէս փութաջան են «իրենց յարգութիւնն ու մեծարանքը նուիրելու⁴», սուրբ յուզմամբ մը կրկնելով. «Թագաւորէ, յաւերժաբար թագաւորէ մեր վրայ այնպէս Գուն ալ, ինչպէս որ Քու Աստուածային Որդիդ⁵...»: Ո՛հ, Աննայի եւ Յօվակիմայ խոնարհ դուտարն է, աննշան Այսն է, աղքատիկ արուեստաւորի մը Հարսը, այնպէս կարեւորութեան արժանի երիտասարդ Մայրն է, որ Բեթղէհէմի մէջ ախուէ, մսուրէ եւ քիչ մը խոտէ զատ ուրիշ բան չգտաւ Իւր նորածին տղան հանդիսցնելու, որ ստիպուեցաւ հեռու օտար երկիրներ արտօր երթալու, Իւր պաշ-

¹ Երբ. Ա. 5: — ² Անդ: — ³ Բ. Մալաբ. Ի. 27: — ⁴ Գանիէլ, Լ. 10: — ⁵ Գատ. Ը. 22:

տելի աղուն անդին կեանքն ազատելու
համար, որ միշտ աղքատորէն, միշտ
ծածուկ պարեցաւ Իւր Աստուածային
Որդւոյն Յարութենէն եւ փառաւոր
Համբարձմանէն ետքն ալ:

Փառաց, ճշմարիտ փառաց, այս
անուան միայն արժանի փառաց, յաւի-
տենական փառաց ճանապարհն է ու-
րեմն աշխարհիս մէջ խոնարհութեան
ճանապարհը: Այլոց աչքին պզտիկ
ըլլալ, անձնական աչաց ոչինչ, եւ մեծ
Աստուծոյ առջեւը միայն, առանց
պերճանաց եւ առանց պայծառու-
թեան վեճառաքինութեամբ: Ահաւ-
ասիկ Մարեմայ մեծայարգ գաղտ-
նէքը, զոր բովանդակ Իւր վարութե-
անց կը սորվեցընէ, ինչպէս որ Յիսուս
Քրիստոս Իւր Աստուածային դասե-
րոյն եւ Աստուածային օրինակներովը,
որոնք դեռ եւս աչքերնուս առջեւը
կը շարունակուին Ամենասուրբ Հա-
ղորդութեան խորհրդոյն մէջ: Կմա-
նինք Յիսուսի, նմանինք Անոր Աս-
տուածային Մօրն, ստորնանալ գիտ-
նանք, որպէս զի «յետոյ է յաւերտան
բարձրանաւ¹»:

«Ողջ լե՛ր Թագուհի երկնից, ողջ լե՛ր
Տիրուհի Հրեշտակաց²»: Աստուծմէ
ետքը Քեզմէ մեծ ի՛նչ կայ, որ ար-

¹ Մատթ. Ի. 9. 12: — ² Լատ. ա-
ղօթք մը:

գանդիդ մէջ կրեցիր անասման մեծ-
վայելչութիւնը, եւ որուն նոյն Ինքն
Աստուած հաճեցաւ հպատակիլ: Ի-
րաւամբ կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս
Թէ, «Երկու կողմանէ ալ սքանչելիք.
յՈրդին խոնարհութեան հրաշք՝ է
Մայրն բարձրութեան եւ մեծութեան
սքանչելիք¹»: Ո՛հ, Քու վեճմ աթոռ-
ուոյդ բարձրութեան մի մոռնար եր-
կրիս վրայ գտնուած ճառաներդ, խո-
նարհեցուր մանաւանդ անոնց վրայ
քաղցր հաճութեան եւ գթառատ
սիրոյ նայուածքներդ, իբրեւ դժբախտ
եղբարց թշուառ որդւոց վրայ: Հաճէ՛
օգնել մեզ, եւ փրկութեան ճանա-
պարհին մէջ ամուր բռնել մինչեւ մեր
այս փորձոյ աշխարհէն ելլելին: Հնորհէ
որ եթէ Աստուածային արդարու-
թիւնը զմեզ քառութեան ժամանա-
կաւոր կրակին դատապարտէ, մեր
Հրեշտակները մեզ այցելեն եւ մսի-
թարեն, եւ շուտով երկինք տանին
զմեզ: Արժանի ըլլանք այս անդին
պարզեւաց՝ միշտ անկեղծ եւանդեամբ
բոնեով Քեզ.

Հրեշտակաց Թագուհի, աղօթէ՛ մե-
զի համար:

¹ Ճառ. Ի վերայ արտոգրուած:

ՄՏԱՆԵԱԿԱՆ ԽԻ՛.

Թուգորհի նստապետաց, առօթևա
դասն միր:

Երկրիս վրայ սուրբ Նահապետները կենդանի հաւատով, անուշ ու հաստատ յուսով «հեռուէն ողջունած էին¹», այն հիանալի կինն, որուն համար աշխարհիս սկզբէն ի վեր Աստուած կանխաւ ծանուցած էր թէ պիտի ծնանէր մարդկան Փրկիչը: Իսկ ի յերկիրս անմահն ցնծութեամբ Անոր կը նուիրեն իրենց մեծարանաց եւ կանգազարով սիրոյն հարկն՝ իբրեւ Անոր, որ Յիսուսի միջոցաւ զիրենք ներս մտցուց «յաւիտենական ստղաւարներու մէջ²»:

Ամենէն յառաջ Ագամ է, որ հիւանդով կ'օրհնէ ի Մարիամ զնորն Եւա, «կենդանեաց ճշմարիտ մայրը³», որուն ոտքը ճգմաց զհին Եւան խաբող վիշապին գուրիւր⁴», որուն Աստուածային Որդին եկաւ նախկին սխարմուկները դարձանելու այնպիսի զարմանալի կերպով որ, Եկեղեցին սրայմամբ գիտութեան ջերմուսանդն սրայմամբ կրցաւ գօրել. «սկ երջանիկ յան-

1 Եբբ. ժԱ. 13: — 2 Գուկ. ժՁ. 9:
— 3 Ծննդ. Գ. 20: — 4 Անդ, 15:

ցանք, որ արժանի եղաւ այսպիսի հիանալի եւ մեծ Փրկիչ մ'ունենալու¹»: Ագամէ ետքը Նոյ, զոր Աստուած ընտրած էր գրեթէ երկրորդ հայր ըլլալու ջրհեղեղին ջրերուն մէջ կորսուելու դատապարտուած մարդկային ցեղին, յափշտակուած կը զննէ զՄարիամ զոր Եկեղեցին «մեր կեանքն եւ մեր յոյսը²», կ'անուանէ: Արբաճամ, որ չվարանեցաւ օր մը Աստուծոյ զահելու իւր մէկ հատիկ որդին, որուն կեանքէն ընտանաբար կախում ունէր այն ժողովրդեան գոյութիւնը, որ աշխարհի պիտի տար զՄեսիան, կը պատուէ եւ կը գովաբանէ սուրբ յուրմամբ Միածնին երկրպագելի Մայրն, որուն Մահակ օրինակն էր³, եւ յուրում բովանդատագրէրն օրհնուեցան Աստուծոյ խոստումն համոզուի: Յետոյ կու գայ Յակոբ, որ այս սքանչելի կուսին փառքը կը հռչակէ, յորմէ ծնաւ երկրիս վրայ «Աստուծոյ փրկութիւնը, որ իւր ամենամտադուրս ըստ ծանաց առարկան եղած էր⁵»: Հոն է նաեւ Յովակի՝ «Եգիպտոսի փրկիչը⁶», որ հանդիսական պատիւ կը նուիրէ Մօրն «աշխարհի Փրկիչն⁷», որուն

1 Ժամակարգութիւն Հռովմէական Աւագ շարթի աւուր: — 2 Ողջ. Էբ. Թագ. — 3 Եբբ. ժԱ. 19: — 4 Ծննդ. ԻՒ. 17-18: — 5 Անդ, Խթ. 18: — 6 Անդ, ԽԱ. 45: — 7 Յովհ. Գ. 42:

յօրինակի շատ ազդու կերպով յայտնած էր սրբութիւնը, չարչարանքներն եւ փառքը, իւր անմեղութեամբն, աղէտներովն եւ փառաւորութեամբը: Ի նաեւ Մովսէս, որ կը հիանայ եւ կը մեծարէ զԱնիկայ, որ տիեզերաց տուաւ «իրեն պէս Աստուածային խաւրուածը¹», որէնսկիւր սքանչելագործ եւ իրեն պէս ազատիչ: Մէկ խօսքով հոն են բոլոր «...բէ Նահագեւտները, է-Աստուածի օրհնութիւն մեծաշուք տոհմերու իշխանները, եւ ներկայիս ալ երկնայինն Երուսաղէմի էրմանի՛ բնակիչները²», որոնք կը բերկրին ճանճալով որ Անոր միջոցաւն անթարշաժ պսակը կը պատէ իրենց լուսաւոր ճակատը, եւ միաբերան կ'ըսեն, «Քուարքունի գաւազանդ քաղցրութեան եւ արդարութեան գաւազան է, եւ իրաւունքդ հրաշալիօք լեցուն³»:

Բայց ի՞նչ է որ զիրենք այսպիսի անգին պսակի արժանացուց: Իրենց առ Աստուած հաւատարմութիւնը, առ ապագայ Փրկիչն ունեցած հաւատքնին, եւ «Անոր գայտեան աւուր ծագումը տեսնելու բաղձանքնին⁴»: Հաւատարմութիւն, հաւատք եւ բաղձանք, որ Ամենասուրբ Կուսին սրտին

1 Բ. Օրէնք, ԺԼ. 15-19: — 2 Ա. Մնաց. Բ. 28: — 3 Սղմ. ԽԳ. 5: — 4 Յովհ. Բ. 56:

մէջ ի վերուստ երջանիկ աւետարելութիւն ալ յառաջ կատարելութեան անհատանելի աստիճանի մը հասած էին: Ստուգիւ, եթէ, զոր օրինակ Արքահամու հաւատքն ու հաւատարմութիւնը մինչեւ զարմանալից կէտը հասած էին, որպիսի պիտի ըլլար հապա Մարեմայ հաւատքն ու հաւատարմութիւնը՝ որ յերկինս այս սուրբ Նահագեւտէն զեր ի վերջ կը գտնուէի, ուր իւրաքանչիւր որ իրեն արժանի եղած տեղը կը բռնէ: Թէ որ Յիսուսի աշխարհ դարը տեսնելու փափագն այնչափ կենդանի էր Արքահամու սրտին մէջ՝ որուն համար Յիսուս հրապարակաւ Երուսաղէմ քաղաքին մէջ հանդիսաւոր գովեստ մը տուաւ՝ ինչպիսի պիտի ըլլայ արդեօք նոյն այս բաղձանաց բոցն Անոր հոգւոյն մէջ, որուն համար Սուրբն Պրոկը բտաւ թէ, «եւ ոչ մէկ Նահագեւտ մը կրնայ Անոր հետ համեմատուիլ²»:

Սեղ նկատմամբ, (ո՛ անճառ երջանկութիւն,) ընաւ փափագելու բան մը չունինք, այլ վայելելու, ոչ միայն անուշ յուսոյ մը ճաշակը կ'առնունք, այլ իրականութեան բոլոր քաղցրախորժ պտուղները կը վայելենք: Յիսուս եկաւ «երկնից բարձրութենէն³,

1 Յովհ. Բ. 56: — 2 Ճառ Ե. Ի Ս. Աստուածածին: — 3 Յովհ. Գ. 13:

Երևեա՛ս այցելեց¹», լուսաւորեց, որբեց, փրկեց զանիկայ, հոգւոյ համար ամենափառաւոր պարգեւներով եւ թանկագին ոգնու թիւններով զանիկայ ճոխացուց: Աւաւելի: Իւր բնակու թիւնն՝ «այս արտասուաց վայրին մէջ»² հաստատեց, որ անտարակոյ շատ երջանիկ պիտի ըլլար, եթէ տարի մը, վայրկեան մը միայն զինքը վայելէր...: Եղուկ, եւ մենք Անոր երկրպագելն եւ յարատեւ ներկայութիւնը կը մոռնանք, եւ զանց կ'եննք այցելել այս Ատուածային հիւրին, որ կարծես թէ Ինքը զինքը մոռցած «մարդկան որդւոց մէջ դբտմուէրով կը հրճուի»³: Ո՛հ, չըլլայ թէ մեզնի համար ալ ստուգուի ինչ որ Յովհաննէս Մկրտիչ կ'ըսէր Ատուածային Փրկչին ժամանակակից Հրէից այն նկատմամբ՝ «ձեր մէջն է Անիկայ, ուրուն կօշկնեբուն կապերը քակելու արժանի չեմ, եւ դուք զԱնիկայ չէք ճանչնար»⁴:

Ով Մարիամ, աւահայտեաց անուշիկ յոյբ⁵», որ մտերմագոյն կերպով վայելեցիր զԱնիկայ, որուն անոնք այնչափ փափագեցան, ըրէ որ յարգը ճանչնանք այն անբաւ երջանկութեան, զոր ունինք մենք ալ զինքն ունենա-

լով, եւ վայելել կարենալով այն ամէն շնորհքները, որոնց Ինքն անպառաղրիւն է: Ինչպէս որ գալի Մեսիան Քու ջերմաջերմ՝ բաղձանացդ նպատակեղած էր, եկած Մեսիան ալ Քու բովանդակ սիրոյդ նշանն եղաւ, եւ է նաեւ Քու պաշտպանութեամբդ, միակ առարկայ սիրոյ եւ մեծարանաց այն կրօնական կարգերու երեւելի Հիմնադրաց, զորոնք բարեպաշտութիւնը՝ Արկաղարանի նշանակեցին: Եւ այնպէս ըլլայ նաեւ մեզնի համար, սվ Ատուածային Մայր: Մանաւանդ թէ հաւատքնիս կարող ըլլայ սրտերնուս մէջ աւելի ուժեղնութեամբ կենդանանալ, որպէս զի աղէկ մը տեսնենք եւ լաւ զգանք որ «Յիսուսի մեր մէջ յարատեւ ներկայութեան երկրպագելի խորհրդովն երկիրս արբայութեան կը փոխուի»¹: Եւ թէ առ ամենասուրբ խորհուրդն Հարրոյութեան դառնալու են բոլոր մեր մտածմունքներն եւ բովանդակ մեր բաղձանքները: Եւ որպէս զի կարող ըլլանք այս եռանդագին պարտաւորութիւննիս հաւատարմաբար կատարել ի փառս Քու Ատուածային Որդւոյդ՝

Նահայտեաց թաղուհի աղօթէ մեզնի համար:

1 Գուկ. Ա. 78: — 2 Ողջ լէր թագ.՝
— 3 Առափ. Բ. 31: — 4 Յովհ. Ա. 26:
— 5 Ս. Եփրեմ, ի Գովեստս Ս. Կուսին:

1 Ս. Յովհ. Ոսկեր. Ճառ ԻԳ. առ Ա. Կորնթ.:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԸ.

Թուգոսնի Մարգարէից, առօրէնս
զխան մեր:

Մարգարէները, գերբնական ծանօթու-
թեանց կենդանի սքանչելիք, շատ
դարեր յառաջ նկարագրեցին Մեսի-
այի ամենակատարեալ պատկերը: «Հնա-
գոյնները գրեթէ առաջին ծրագիրն
բրին. անոնց յաջորդները հետզհետե
կատարելագործեցին իրենց նախորդ-
ներուն թերի թողուցած մասերը: Ա-
սոնք մեծ դէպքին աւելի մօտ ըլլալով՝
առաւելագոյն կենդանութիւն մը
տուին գոյներուն: Եւ երբ պատկերը
լմնցաւ, վերջինն ետ քաշուած ատեն
զՍուրբ Կարապետը մասնանիշ ըրաւ,
որ պիտի ըսէր. ահաւասիկ աշ-
խարհի մեղքերով ծանրաբեռնած Աս-
տուծոյ Գաւնը¹»:

Բայց միթէ Փրկչին մահկանացու
կենաց տեսակ տեսակ տեսիլները, Ա-
նոր Անձին եւ պաշտաման գանազան
հանգամանքները, Անոր առաքելու-
թեան զարմանալի պտուղները նկա-
րագրած ատեննին, պէտք չէր որ նոյն-
պէս նշմարէին Մարդ-Աստուծոյ Օ-

1 Նամականի Տրաք նորագարձ բա-
բունւոյն:

գոտափառ Մայրը, Եւայի զարմա-
նալի դուստրը, որուն նկատմամբ գի-
տէին որ Աստուած յառաջագոյն ծա-
նուցած էր աշխարհիս փրկութեան
համար Անոր փառաւոր գործակցու-
թիւնը¹: Ո՛հ, անտարակոյս Մարեմայ
քաղցրագեղ եւ վեմամփառ պատկերը
մէկ անգամէ աւելի զիրենք բերկրեցուց
Անոր Աստուածային Որդւոյն մարգա-
րէական պատմութիւնը գրած ատեն-
նին, եւ մանաւանդ որչափ աւելի յու-
զուած պիտի ըլլաք դուք, ով Գաւնթ²,
Եղեկիէլ³, Եսայի⁴, որոնց մասնաւոր
լուսաւորութիւններ ծանուցին Կոյս-
Մօր մեծութիւնները:

Արդ մինչդեռ յաւիտենական փա-
ռաց բնակութեան մէջ կը զննեն Անոր
համար որոշուած պայծառութիւնն ու
փառաւորութիւնը, Անոր «բոյր ա-
րարածոց վայր ընդհատուր Տիրուհւոյ
լուսաւոր թագը⁵»՝ ինչպիսի՞նք ցնծալից
սրտով յարգութիւն կը նուիրեն ի-
րենց երկնային Թագուհւոյն: Ինչպիսի՞նք
մեծարանօք կը պատուեն այն երկնային
լոյսերու գերազանցութիւնը, որով
Աստուած զԱնիկայ վայելապէս օժտեց:
Ստուգիւ իւրաքանչիւր Մարգարէ

1 Ծննդ. Գ. 15: — 2 Սղմ. ԽԳ. 11,
12: — 3 Եղեկ. ԽԳ. 2: — 4 Եսայի,
Ե. 14: — 5 Ս. Յովհաննէս Դամասկ.
Գեղք Դ. Ի վերայ ուղղ. հաւատոյ:

գերբնականաբար լուսաւորուած էր Փրկչին պատմութեան ինչ ինչ կէտերու վրայ առանձնաբար: Իսկ Գուռն, Թագուհի Մարգարէից, անոնց գուշակութեանց բոլոր ամբողջութիւնը բովանդակեցիր, բոլոր իմաստը թափանցեցիր, ըստ կարծեաց Սրբոյն Լիգուորեայ: «Գուռն Բու աչքերովդ տեսար, եւ ականջներովդ լսեցիր ինչ որ անոնք այնչափ ցանկացած էին տեսնելու եւ լսելու 2»: Մարգարէներն երկնային աղբեցութեան սուրբ կրակով որտապնդած այնպիսի խորհուրդներու եւ բարբառոյ վսեմութեան վերացած էին, որ կը շարժէ, կը մոզէ եւ կը յափշտակէ զմեզ անոնց գրութիւնները կարդացած ատեննիս, իսկ Գուռն «Հողով Սրբով լեցուն 3», եւ ցընծութեամբ յափշտակուած առ Բու Փրկչի Աստուածդ, ի փառս Նորա երգեցիր երախտագիտութեան օրհնութիւն մը, յորում յայտնի կը տեսնուի զպացմանց ճոխութեան հետ առ անցածի գերազանց վսեմութիւն մը, եւ Աստուածային եռանդ մը, որուն չնն կրնար հաւատարիլ Բարձրելոյն հին պատգամները: Գուռն՝ Յուդայի ցեղէ խոնարհ եւ աղքատ օրիորդ մը, Գուռն աննշան հարսն Նազարէթի անծանօթ

1 Ճառ՝ ի վերայ ցաւոց Կուսին: —
2 Ղուկ. Ժ. 24: — 3 Անդ, Ա. 35:

եւ աղքատ արուեստաւորի մը, կանխաւ գուշակեցիր թէ «բովանդակ աղգերը Քեղի երանի պիտի կարդային»¹: Ամենասրանչելի մարգարէութիւն, զոր համայն ժողովուրդք շարունակաբար կատարեցին, ի գործ գրին իննետասն դարերու ընթացքին մէջ: Գուռն նմանապէս գուշակեցիր Եկեղեցւոյ ապագայ վիճակը, Աստուծոյ ճշմարիտ ժողովըրդեան եւ ճշմարիտ «Իսրայէլին բախտը, զոր Աստուած ուզեց Իւր պաշտպանութեան տակն առնուել, յիշելով Իւր սղորմութիւններն եւ Արարհամու եւ անոր սերնդեան ըրած խոտմունքը, թէ պէրէ Ծար յաւիտեանս յաւիտենից»²: Եկեղեցւոյ մշտատեւ պատերազմներն ու մշտատեւ յաղթանակներն անընդհատ մատնանիշ կ'ընեն այն Աստուածային գիտութիւնը որ Քեզ կարդալ տուած էր ապագային մէջ:

«Որչափ երջանիկ ենք, կը կոչէ Մոյի մեծ Եպիսկոպոսը, որ Աստուած զիջած է մեզի հետ պարաւանդուել այսպիսի խոտմունց միջոցաւ: Կրնար ուզածը մեզի տալ. ինչ պէտք էր ուրեմն խոտանալ, եթէ ոչ, ինչպէս ըսաւ Մարիամ, դարէ դար անցընելու համար Իւր սղորմութիւնները»³, հրա-

1 Ղուկ. Ա. 48: — 2 Անդ, 54—55: —

3 Խոխմունք ի վերայ Խորհրդ. Ժ. Դ. շաբաթ Ժ. Գ. Խոխունք:

շալի կերպով յայտնուած փրկչին գալուստեամբը, որ ինքնին մեզ խոստացաւ իւր գործքը շարունակելու «մինչեւ ի կատարած աշխարհի¹»։ Անդրդուելի հաւատքով հանգչինք իւր Աստուածային խօսքին վրայ. «երկինք ու երկիր պիտի անցնին, բայց Անոր խօսքը պիտի շանցնի²»։ Օգուտ քաղենք Մարնմայ մարգարէութենէն եւ Անոր Աստուածային Արդւոյն խոստմանց ճշգրտիւ կատարուելէն, որ ասուգուած է քրիստոնէութեան ծննդեան մինչեւ մեր օրերը, որպէս զի սուրբ Աւետարանին միւս բոլոր խօսքերուն ալ վըստահութիւննիս կենդանացընենք եւ անպահատ յանձնուինք հաւատոյ երանելի յոյսերուն ծոցը, յորում պէտք ենք «ընկղմել աշխարհի զմեզ հրապուրող բոլոր խաբէբայ յոյսերը³»։

Ատեն մը, ով Մարիամ, քու առ Տէր երախտագիտութեանդ յափշտակութեան մէջ ապագան բացուեցաւ աչքերուդ առջեւն եւ Գուռն ծանուցիր այն վերմուռանդն եւ հանդիսաւոր պաշտօնը, որուն առարկայ պիտի ըլլայիր «բովանդակ ազգաց կողմանէ⁴», եւ միանգամայն Եկեղեցւոյ մշանջեւաւորութիւնը, որ պէտք է որ տեսէ, պատերազմի, եւ յաղթէ «մինչեւ ի

¹ Մատթ. ԻԸ. 20: — ² Անդ, ԻԳ. 35: — ³ Պօսիւէ, Խոկմ.: — ⁴ Ղուկ. Ա. 48:

կատարած աշխարհի¹»։ Ո՛հ, ամենաբաղբ միտթարութեամբ մենք կը տեսնենք քու խօսքերուդ զարմանալի կատարումը, դարերու այսչափ երկար շրջանի մէջ: Բերկապարար ցնծուութեամբ ի քեզ կը ճանչնանք ինչպէս որ կը ծանուցանէ Սուրբն Բարսեղ, զԱնիկայ, զոր Եսայի մատնանիշ ըրած էր «Մարգարէ²», տիտղոսով, որուն նաեւ «Իւրայիւթ տեսողները³ վկայութիւն կու տան⁴ իրենց Աստուածային Փրկչին նկատմամբ ըրած գուշակութեանց մէջ: Հաճէ, ով Գուռն, զոր Գաւիթ կ'անուանէ «ոսկէթել հանդերձներով զարդարուած գուսար թագաւորի⁵», հաճէ մեզի համար ընդունիլ, որ կարող ըլլանք մենք ալ տկար ձայներնիս միացընել այն ընդհանուր ներդաշնակութեան հետ, որ զքեզ «երանի կը հուշակէ⁶»։ Աւետարանին անխալ պատգամներուն վրայ հաստատ կենալ, եւ չթողուլ որ ոչ գայթակղութիւն, եւ ոչ ալ հալածանք զմեզ խախտեն, այլ «մինչեւ վերջը հաւատարմաբար յարատեւել⁷» հաւատոյ եւ անոր ազդած գործոց մէջ:

¹ Մատթ. ԻԸ. 20: — ² Յեսայի, ԳԼ. Ը: — ³ Եսայի, Լ. 10: — ⁴ Գործ. Ժ. 43: — ⁵ Սղմ. ԽԳ. 14—15: — ⁶ Ղուկ. Ա. 48: — ⁷ Մատթ. Ժ. 22:

Մարգարէից Թագուհի, աղօթէ մեզի
համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԹ.

Թուգոսիքի Առաքելոց, աղօթես յիսակ
միւր:

Ինչ որ իրենց զիտուծեամբն ամե-
նահոգալեւոր փիլիսոփաներ, ինչ որ
բանիրուն ճարտարախօսներ, ինչ որ
ամենազօրեղ եւ հանճարեղ մարդիկ
ձեռնարկելու եւ ոչ մտածած էին, եւ
բնաւ ալ գործադրուծեան ձեռնհաս
պիտի չըլլային, եթէ յանդգնէին իսկ
ձեռնամուխ ըլլալու գործոյն յանդգնե-
ցան տասնուերկու աղքատ ու տգէտ
Գալիլեացիք, առանց մարդկային մի-
ջոյցի մը, եւ ի գործ գրին անմեկնելի
յաջողութեամբ: Առաքեալք զաշխարհ
մէջէննին կը բաժնեն անոր տիրելու եւ
բովանդակ տիեզերաց մէջ սնոր պաշ-
տօն, նոր պատարագ եւ նոր օրէնք
հաստատելու համար, որուն հեղինակն
է Էրուսաղէմ խաչուած Յիսուսը:¹
Էւ զմարդիկ իրենց գրաւելու համար՝
«եկէք, կ'ըսեն, եկէք Յիսուսի ծա-
ռայելու, ով որ ինքը զինքն Անոր կը
նուիրէ, երջանիկ կ'ըլլայ մահուանէ
վերջը. բայց պէտք է ծայրայեղ վտեր
կրել¹»: Էւ այս վարդապետութիւնը

1 Պօսիէ, Ներբող ի Ս. Անդրէաս:

քարոզելու համար, տանջանաց, նոյն
իսկ մահուան դիմագրաւ կ'երթան.
«ամէնքն իրենց կը քաշեն¹», եւ իսկոյն
կռապաշտ տիեզերքը զՅիսուս կը
պաշտէ, եւ Աւետարանը կ'ընդունի:

Անուշտ Աստուածային եռանդ է
այս, Աստուածային զոհ, եւ Աս-
տուածային յաջողութիւն: Բայց Մա-
րիամ ինչ մաս ունեցաւ այս գործոյս
մէջ Աստուծոյ թափօնի տիտղոսին ար-
ժանանալու համար: Ո՛հ, այս Օգոստա-
փառ կոյսը թէեւ միայն իւր Աս-
տուածային Մայրութեան առաւելու-
ծեամբն իրաւունք ունենալու էր այս
տիտղոսին, այսու հանդերձ զարմանալի
կերպով գործակից եղաւ նորածին Է-
կեղեցւոյ կազմակերպութեան, աճման
եւ հաստատութեան:

Միթէ չէնք տեսներ զինքն ի սկզբ-
բանէ ի վեր այն ջերմեռանդն առանձ-
նութեան մէջ, յորում Առաքեալք
ըստ ծանուցման Փրկչին կը պատրաս-
տուէին ընդունելու «ի բարձանց Հո-
գւոյն Սրբոյ զօրութիւնը²»: Միթէ
չէնք տեսներ անոնց հետ աղօթքի մէջ
յարատեւութիւնը³: «Էւ ո՛վ կրնայ
մտածել, կ'ըսէ Սուրբն Անտոնինոս, որ
Մարիամ ալ Առաքելոց հետ միա-
տեղ Հոգեգալստեան օրն ընդունած

1 Յովհ. ԺԲ. 32: — 2 Ղուկ. ԻԳ. 49:
Գործ. Ա. 8: — 3 Անդ, 14:

չըլլայ այն զարմանալի պարզեւները, որոնցմով որ ամէնքն ալ ճոխացան ի Հոգւոյն Սրբոյ, որպէս զի ամենեւին բան մը չպակտեր ոչ շնորհաց եւ ոչ ալ հոգեւոր օգտի վերաբերեալներէ, զորս կրնար վայելել¹»: «Այո, ստուգիւ, կ'ըսէ Սուրբն Թովմաս Երանելի Կոյսն ընտիր կերպով ընդունեցաւ գիտութեան, հրաշագործութեան, մարգարէութեան պարզեւր²»: Անտարակոյս Ինք Առաքելոց պաշտօնը պիտի չլարէր, այսու ամենայնիւ առատապէս Անոր տրուեցան ամէն շնորհք իրրեւ հարկաւոր զարդ մ'Աստուծոյ Մօր արժանապատուութեան: Էւ միթէ այնպիսի Մայր մը կրնա՞ր իւր սեռին վայելչութեան համաձայն բաներու մէջ ստորին գտնուիլ անոնցմէ, որ «ճառայ Յիսուսի Բրիստոսի³», կ'ըսուէին, որոնց նկատմամբ Սուրբն Անսելմոս եւ Սուրբն Բոնափենատուրա չվարանեցան ըսելու թէ «աշակերտ եղած էին Անոր, որ ի լոյս ընծայած էր զՊրիկիչ⁴»:

Էւ իրօք Մարիամ եղաւ, որ Առաքելոց յայտնեց այն խորհրդոյն բոլոր պարագաները, որուն որ իրենք չէին

1 Մասն Գ. Տիտղ. 15, ԳԼ. ԺԹ: —
2 Գ. Մասն, Խնդ. 27, Յօդ. 5: —
3 Յակ. Ա. 1: Պետր. Ա. 1: Յուդ. 1: —
4 Ս. Անսելմ. ի Յղութիւն Կուսին, ԳԼ. ԻԷ: Ս. Բոնափեն, ի Սղմ.:

կրցած վկայ ըլլալ, եւ իրենց կողմանէ ալ պէտք էին ծանուցանել աշխարհի: Այո, Ինքն եղաւ, որ Յիսուսի ծածուկ կենաց վրայ մեծայարգ եւ սիրովիչ մանրամասնութիւններ հաղորդեց, ըստ որում կ'ըսէ Յարգելին Բեդա. «Մարիամ ամէն բան մտքին եւ սրտին մէջ կը պահէր Աւետարանին ըսածին համաձայն¹, որպէս զի ատենին Առաքելոց եւ Աւետարանչաց հաղորդէր²»: Էւ ինչպէս կասկածիլ որ Ինք Առաքելոց համար լուսաւորութեան աղբիւր մ'եղած չըլլայ, մինչդեռ Սուրբն Ամբրոսիոս ըսած է թէ «Անկեց Սուրբն Յովհաննէս, այն վեհ բարձրութիւն արծիւն առաւ Բանին Աստուածութեան վերաբերեալ վսեմ եւ հիանալի ծանօթութիւնները³»:

Բայց Մարիամ արժանի է նաեւ Առաքելոց Թագաւորի տիտղոսին Աւետարանին տարածուելուն յաջող ազդեցութեան համար: Անոր օրինակներն ամենազոռ քարոզութիւններ էին, եւ միթէ ամէն բանի մէջ Աստուածային Յիսուսին ամենահաւատարիմ պատկերը չէր, «Անոր կենաց լուսաճաճանչ հայելին⁴», կ'ըսէ Սուրբն

1 Ղուկ. Բ. 19: — 2 Ի Ղուկ. ԳԼ. Բ: — 3 Ի վերայ հաստ. կուսութ. ԳԼ. Է. Յառաջ. ի Յովհ. — 4 Ի վերայ յայլ. հոգեվար Բրիստոսի:

Լաւրենտիոս Յուստինեան: Անոր խօսակցութիւնը զարմանալի զօրութիւն մ'ունէր: Գրուած է թէ «բերանը սրտին աւելցուքէն կը խօսի¹»: Եւ Մարեմայ սիրտը, կըսէ Սուրբն Բեռնարդինոս, Աստուածային սիրոյն հնոց մ'էր²: Անոր աղօթքներն ստպէ աւմենամբուր, ամենախոնարհ եւ ամենաեռանդուն սլացքներ էին: Եւ միթէ հնա՞ր է բացատրել թէ ինչպիսի նախանձայուզութեամբ, եւ ինչպիսի եռանդեամբ այս Աստուածային Մայրն երկնքէն կը խնդրէր Իւր պաշտելի Որդւոյն մեծ գործոյն ծաւալումը:

Մարեմայ նմանելու համար, գործակեց ըլլանք ըստ մեր կարողութեան Եկեղեցւոյ բարոյն եւ քարոզչաց աշխատանաց յաջող ելից, որոնք նախկին Աւաքելոյ յաջորդներն են: Մենք իսկ Աւաքեալ ըլլանք մեր օրինակներով, խօսքերով եւ բարի գործոց գործակցութեամբը, որպէս զի «մեզմով Յիսուսի անունը փառաւորուի³»:

Ո՛վ Մարիամ, զոր Յիսուս Իւր փառաւոր Համբարձմանէն ետքը թողուց աշխարհիս վրայ աւաքելական նախանձայուզութիւն մ'ի գործ դնելու համար, Եկեղեցւոյ նեցուկ եւ թիկունք ըլլալու համար⁴: Գրուն, որ

1 Մատթ. Ժ. Բ. 34: — 2 Ճառ Ա. Ի վերայ սյոյեւ.: — 3 Բ. Թեոաղ. Ա. 12: — 4 Պօսի. Է, Ճառ. Ի փոխումն:

ոչ միայն մասնակից գտնուեցար Առաքելոց Ի վերուստ ընդունած բոլոր պարգեւներուն, այլ նաեւ անոնց լոյս եւ օրինակ եղար մհ, ինչպիսի Իրաւամբ անուանեցար Թագուհի այն «տասնուերկու դէպքանց, որոնց անունները գրուած են Աստուծոյ քաղաքին հիմանց վրայ¹»: Յիսուսի փառաց համար այնչափ սիրաբոլոր սիրտը արժանի սեպէ մեր սրտին այլ հաղորդել կայծ մ'այն նուիրական հրոյն, զոր ջերմեռանդն հոգիք իրենց բոլորտեքը տարածելու կը ջանան: Ըրէ գոնէ, ըրէ որ, «բարի եւ սուրբ կենօք², ջահ ըլլանք, որ լոյս տան մեր եղբարց, եւ անոնց փառաւորել տան երկնաւոր Հայրը³»:

Առաքելոց Թագուհի, աղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ Ծ.

*Թագուհի Մարտիրոսաց, սոյո՞՞նս
դրան մեր:*

Ո՛վ պիտի չնորհէ մեզ հոս ողբերը
ցաւոց հաւասարելու կարողութիւնը:
Ո՛վ Մարիամ, որչափ աղէկ եւ ճշմար-

1 Յայտ. Ի. Ա. 14: — 2 Յակ. Գ. 13: — 3 Մատթ. Ե. 16:

տապէս կրցար ըսել մարդկան թէ, «ցաւդ ովկիանոսի պէս խոր էր՝, զննեցէք զիս եւ տեսէք թէ արդեօք է՞ մարդերսս թէ նա կա՞նու ցաւոց պէս ցաւակց սիրտ եղաւ երբեք?»¹

Թափուած արեան տեղեր սրտաշարժ է, ընտելիւննիս չի կրնար պաշարիւնու թեամբ նկատել նմաններնէս մէկուն արեան բռնութեամբ թափուիլը, սաստիկ կը կրէ, եթէ թափուածը բարեկամի արիւն է, աւելի էսս, եթէ եղբոր է, աւելի, ո՛հ շատ աւելի, եթէ որդւոյ մ'արիւնն է թափուածը, եւ արժանաւոր որդւոյ, քորովաբար սիրուած որդւոյ մը: Բայց եթէ դժբախտաբար մարց մէջ ամենագորովակց մօր սիրտն է, որ դատապարտուած է այսպիսի տխուր տեսարան մը զննելու, ո՞րչափ աւելի սաստիկ եւ աւելի տխուր պէտք է որ ըլլայ տպաւորութիւնը: Էւ երբ տեսնէ որ զսհուած որդին միածին որդի մ'է, շնաշխարհիկ հանդամանքներով օժտուած՝ ո՛հ, մարդկային լեզու մը բնաւ պիտի չկարենայ նկարագրել այս բարոյական ցաւին ծայրայեղութիւնը:

Դուռն եղար այսպիսի Մայր մը, ով Մարիամ: Յիսուս Բրիտանո եղաւ այն յիբաւի աննման Միածին Որդին, ուրուն տանջանայ Դուռն հանդիսատես

¹ Երեմ. Ողբք, Բ. 13: — 2 Անդ, Ա. 12:

ըլլալու էիր: Ո՛վ Դուռն, զոր Եկեղեցին իրաւամբ կ'անուանէ «ցաւոց Մայր», ըսէ մեզ (որովհետեւ մենք կարող չենք զգալ կամ բացատրել,) ըսէ մեզ թէ որպիսի՞ «սարսուռ դաշոյն թափանցեց Բու սիրտդ?» ամէն մէկ հարուածին, որոնք Բու Յիսուսիդ ձեռքերն ու ոտքերը կը բեւեռէին: Ըսէ մեզ թէ՛ որոնք եղան Բու ցաւերդ, եւ ո՞րք Բու սոսկալի եւ երկար հոգեվարութիւնդ, երբ երեք ժամու չափ ներկայ գտնուեցար զննելու համար այս ամենասիրելի եւ անգթաբար ամօթալից կախաղանէ մը կատուած Որդիդ. կամ մանաւանդ լռէ. ով Ատուածայինդ Մարիամ, պահէ, ո՛հ, պահէ այս դիւցաղնական, այս ճարտարախօս, այս վսեմ լուսութիւնդ, առ որ Բու անսահման ցաւոցդ մէջ Դուռն զինքդ պարաւանդեցիր Գողգոթայի զլուիք: Այն գերմարդկային լուսութիւնը մեզ աւելի կ'ըսէ. անսահմանաբար աւելի կ'ըսէ, քան թէ թախծալից մօր մը բոլոր աղաղակները, հառաչանքն ու հեծեծանքը...: Ո՛հ, ինչպիսի յօժարութեամբ կենքդ Անոր կենաց փոխարէն կը նուիրէիր. ո՞րչափ միսիթարու թիւն պիտի զգայիր, եթէ կարող ըլլայիր գէթ Բու արիւնդ Անոր արեան հետ խառնել: Բայց ո՛չ.

¹ Կայր առ Խաչին: — 2 Գուկ. Բ. 35:

Հարկ էր որ Գուեն «աւելի քան մարտիրոս մը», ըլլայիր, ըստ կարծեաց Սրբոյն Բեռնարդոսի¹ եւ Սրբոյն Բունավենտուրայի², կրելով այն ամենայն, որ բնականապէս կարող էր զբեղ միացնել, ապահով ըլլալով որ մահը պիտի չգար Բու անբացատրելի ցաւոցդ վերջ տալու: Եւ ասանկով Գուեն փառաւորապէս ստանալու էիր Մարտիրոսայ Թագոսի տիտղոսը Բու կրածներուդ չլսուած սաստկութեան ու չափազանցութեան պատճառաւ, որուն համեմատութեամբ՝ Սուրբն Անսելմոս «թեթեւ կը կարծէ քրիստոնէութեան միւս դիւցազանց բովանդակ կրածները³», որոնք թէեւ «փորձեցին խարազաններ, շլթաներ եւ բանտեր, քարկոծուեցան, սղոցուեցան եւ ամէն տեսակ տանջանքներ կրեցին մարդիկ, որոնց աշխարհ արժանի չէր⁴»:

Բայց սոսկ Գողգոթա չէր Ամենասուրբ Աուսին մարտիրոսութեան հանդիսավայրը, երբ Փրկչին որբաղան մարմինը խաչէն վար առին, աւանդութիւնը կ'ըսէ, որ գերեզման չգրած Ամենասուրբ Աուսին բազկացը մէջ հանգչեցուցին: Ա՛ղէ, ո՞վ կրնայ երեւ-

1 Ճառ՝ ի վերայ առանձնաշն. Ս. Կ.:
 — 2 Ի Գովեստ. Ս. Կ. ընթերց. 4: —
 3 Ի վերայ աջն. կուսութ. ԳԼ. Ե: —
 4 Եբբ. ԺԱ. 36:

ակայել թէ ինչպիսի՞ն խորհուրդներ անցան այսպիսի Մօր մը սրտին մէջէն՝ այն հանդիսաւոր տիրութեան վայրկեանը: Բազկացը մէջ ունենալ Իւր սիրելի Որդւոյն անկենդան մարմինը, այն անգթաբար ձաղկուած եւ պատառ պատառ եղած մարմինը: Իւր սիրալիր աչքերովը զննել այն խոր վէրքերը, որոնցմէ թափուած էր այնպիսի անդին ու սիրական արիւն մ'աշխարհի վերանորոգման համար, եւ չարչարանաց բոլոր սուղկայ տեսարանները կենդանւոյն մտաց առջեւը բերել: Ո՛հ ինչպիսի՞ տանջանք: Սուրբն Օգոստինոս կ'ըսէ որ «Յիսուսի բոլոր ցաւերը Մարեմայ ցաւ դարձած էին, եւ Որդւոյն խաչն ու բեւեռները Մարեմայ խաչն ու բեւեռները էին¹»:

Այն ատենն ուրեմն այն ամէն բան, որ յառաջուց լսած էր, այն ամէն բան, որ Իւր փափուկ սիրտը վիրաւորած ու կոկծեցուցած էր՝ նորոգուեցաւ, բայց անձկութեան ծայրագոյն տառապանաց անմահ եւ անլուր ցաւոց կրկնապատիկ սաստկութեամբ:

Մեղ Աւետարանի որդւոց ամենուս համար մեծ դաս մը: Յիսուս ալ Մարիամ ալ յաւիտենական փառքը մտան վշտաց ու չարչարանաց մէջէն անցնելով: Յիսուս նոյն ինքն Սրբութիւնը,

1 Ճառ՝ ի չարչարանս:

Մարիամ Ամենասուրբն յարարածս: Եւ մենք ի բնէ մեղաւոր, կամօք մեղաւոր, պիտի պահանջենք ուրիշ ճանապարհաւ հասնելու. խաչ — ահաւանիկ Մարդ-Աստուծոյ այս աշխարհիս մէջ մեզ թողուցած ժառանգութիւնը, եւ որ մեզի համար պէտք է ըլլալ ապահով գրաւական «անմահ, անապական ժառանգութեան», զոր կը խոստանայ մեր առ Աստուած ապահնութեան, մեր համբերութեան, փորձերու մէջ մեր հաւատարմութեան, ըստ որում գրուած է՝ «Թէ որ Անոր հետ համբերենք, Անոր հետ ալ պիտի թագաւորենք»¹:

Ո՛վ գորովալից Մարիամ, որ խաչին ոտքին տակը մարմնոյ մարտիրոսութենէն շատ աւելի անագորոյն ցաւեր կրեցիր, որ Քու օրինակովդ ու աղօթիւքդ կը բաջալերես «զանոնք, որ Գառնին արեան արդեամբքը յաղթեցին, եւ իրենց արեամբը կնքեցին Աստուածային խօսքերուն տուած վկայութիւննին»², յորոց անուն փառաւորն Սուրբն Ստեփանոս Քեզ կը նուիրէ իւր արմաւենին եւ պատկը, հաճէ՛ ցաւակից ըլլալ մեր վշտաց եւ նեցուկ մեր տկարութեան: Հեռացուր մեզմէ բաժակը, եթէ մեր սկար առաքինութեան շա-

1 Ա. Պետր. Ա. 4: — 2 Բ. Տիմ. Բ. 12:
— 3 Յայտն. Ժ. 11:

փաղանց դառն ըլլայ, կամ ընդունէ մեզի որ անվէ՛հեր կարող ըլլանք Փրկչին հետ ըսել Աստուծոյ թէ՛ «Քու սուրբ կամօք կատարուի»³: Ըրէ՛ որ խելամուտ ըլլանք Աստուածային Վարդապետին այն հռչակաւոր խօսքին թէ՛ «ով որ իւր խաչը չտանուր իւր հետքերուն վրայ քայլով՝ չի կրնար իրեն աշակերտ ըլլալ»²: Եւ որպէս զի «համբերութեամբ կարող ըլլանք ցմիշտ հոգինիս շահիլ»³:

Մարտիրոսաց Թագաւնէի, արօթէ՛ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԱ.

Թագաւորի Խոստովանողաց, աղօթմանս վասն մեր:

Փառք ձեզ, հաւատոյ ազնիւ խոստովանողներ, որոնք «մեծազին շահ համարեցաք»¹, Յիսուսի աշակերտ ըլլալնիդ բարձրաձայն խոստովանիլ Անոր անուան թշնամեաց առջեւն՝ մինչեւ ձեր կենաց վտանգովն ալ: Փառք ձեզ, որ թէեւ նախախնամութիւնն այնպիսի փորձերու չենթարկեց, այսու հանգերձ դաւանեցաք այս

1 Մատթ. Ի. 2: — 2 Գուկ. Ժ. 27:
— 3 Անդ, Ի. 19: — 4 Փիլիպ. Ա. 21:
19

Աստուածային Արդարագեանն վերաբերենիդ բոլոր Աւետարանական առաքելութեանց գործադրութեամբն եւ կեանքերնուդ բարձր սրբութեամբը: Բայց ձեզմէ աւելի, շատ աւելի եւս փառք Մարեմայ, ձեր Օգոստոսփառ թագուհւոյն՝ շատ մը պատճառաց համար:

Իբրք դուք շարունակ ցուցուցիք Աստուածային Փրկչին ջերմեռանդն ծառայ բլրալինդ, բայց Մարիամ միթէ աւելի մտերմաբար, եւ աւելի քաջութեամբ հաւատարիմ չդռնուեցաւ Իւր Աստուածային Որդւոյն: Չէր սիրալը թափանցեցաւ Անոր մեծանձն եւ արծարծուն սիրովը, բայց Մարիամ միթէ յիրաւի անհամեմատ Աստուածային կրակով չբորբոքեցաւ: Գուք Յիսուսի համար նախատանաց, վտանգներու, եւ ամեն տեսակ վտայց դիմադրաւ դնացիք. բայց Մարիամ միթէ մասնակից չեղաւ Իւր Աստուածային Որդւոյն մահացու կենաց բոլոր վտայցից պարագաներու, եւ կրած բոլոր հարածանաց: Որչափ անգամ որ չարախօսուեցաւ եւ նախատուեցաւ Իւր թշնամիներէն, այնչափ անգամ առ Որդին անիրաւութիւններն ու նախադիմքներն անդժարար Մօր վրայ դարձան: Գիտեցէք թէ ինչպիսի՞ այպանիչ խօսքեր կը գործածէին Յիսուսի հաւատալ չուողները, «միթէ

անոր որդին չէ որ Մարիամ կը կուչուի՞» լսեցէք թէ ինչպէս նաեւ Իւր չարչարանաց վերջին վայրկեաններուն հասած պաշտելի չարչարուողին թշնամիներն երեսն ի վեր կը նետէին արհամարհանք, ծաղր ու ծանակ եւ ամենայանդուն թշնամանք. եւ Մարիամ անարդ կախողանին տակը կանգուն՝ միթէ մասնակից չէր Անոր մի եւ նոյն ատելութեան եւ մի եւ նոյն նախատանաց զգացմանց մէջ:

Բոլոր նախատանաց եւ հայհոյութեանց հետ խառնուած բովանդակ կծու երգիծաբանութեանց մէջ որովք Բու Աստուածային Որդւոյդ թշնամիներն օղբ կը հնչեցընէին, ով Մարիամ, «ով սքանչելի Տիկին, Բուսէրք պարեւս ու փառք, որչափ մեծ է Բու հաւատքդ՞», որչափ հիանալի է Բու սերդ ու զոհոյութիւնդ: Յիսուսի բոլոր Առաքեալները Յովհաննէսէն զատ, զինքը թողուցին, նոյն իսկ անոնց գլուխը Սուրբն Պետրոս, որ բարձրաձայն հաւատած էր մինչեւ ցմահ հաւատարիմ մնալու, երէք անգամ երգմամբ ու բացաւ զԱնիկայ ճանչնալու Իսկ Գուն մնլեզին չըէից դիմաց Բու Որդւոյդ արեամբը սրբուկուած դահիճներուն առջեւ կը ծածանես մեծ հողւոյդ դիւցալնութիւնը,

եւ բոլոր երկրպագու թեամբդ, համայն սիրովդ, եւ բովանդակ յարգութեամբդ աւելի եւս կը միանաս նուիրական Օրհնէն, մինչդեռ նոյն իսկ երկինքը զինքը թողուցած կ'երեսայ: Ո՛վ ուրեմն կրնայ Քեզի հետ համեմատուիլ, ո՛վ Մարիամ: Քեզի հետ, որուն առ Աստուածային Փրկիչն հաւատքդ այս աստիճան կենդանի եղաւ:

Եւ ո՛վ, համառօտիւ բտելու համար, հաւասարեցաւ երեք այս Աստուածային կուսին՝ ի բարձրագոյն գործարքութեան բովանդակ առաքինութեանց, որոնք կրնան սուրբ հոգւոյ մը նշանաբանն ըլլալ, սեպհական վարուք Աւետարանին ճարտարախօս քարոզ մ'ընել, կամ ի ստացման բոլոր անգին՝ պարզեւաց, որոնք ի յերկինս բարձրագոյն տեղ մը կը նշանակեն մաքրութիւն, պարկեշտութիւն, խոնարհութիւն, քաղցրութիւն, առանձնութիւն, աղքատութիւն, հնազանդութիւն, բարեպաշտութիւն, բորբոքուած սէր առ Աստուած, անպայման սէր առ բնկերն, քերմաջերմ՝ նախանձայուրութիւն Բարձրելոյն փառաց, կատարեալ հպատակութիւն Անոր երկրպագելի կամաց, լիութիւն ապաւինութիւն Անոր նախախնամութեան, եւ ծայրայեղապէս փորձուած համբերութիւն. մէկ խօսքով՝ բոլոր առաքինութիւնները բարձրա-

գոյն աստիճանի մէջ կը փայլին ի Մարիամ: Որուն համար Ս. Պետրոս Ոսկեխօս կ'անուանէ զԱնիկայ՝ սրբութեան բովանդակ դանձերուն միաբուրութիւնը¹: Եւ Սուրբն Յովհաննէս Դամասկացին՝ «բոլոր առաքինութեանց սրբավայրը²»:

Սրովունք այս բոլոր խոստովանողաց Թագուհիէն աճարգել մարդկային նկատմունքը, եւ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ աշակերտի պէս ապրել: Աշխարհի ծաղր ու ծանականաց մէջ բարձր կրենք թէ՛ գլուխնիս եւ թէ՛ մկրտութեան ու դրոշմի ատեն ճակատներնուս վրայ յորինուած խաչին ազնիւ նշանը, սուրբ քաջութեամբ դէմ երթանք «աշխարհի որդւոց»³ բարկութեան եւ սպառնայեաց, յիշելով Աստուծոյ անսխալ պատգամն, որ դանոնք ալ մեզի հետ պիտի դատէ: «ո՛վ որ խոստովանած կ'ըլլայ իմ անունս մարդկան առջեւն՝ ես ալ զանիկայ պիտի ճանչնամ՝ երկինքն իմ Հօրս առջեւն, եւ ո՛վ որ ինձի համար անչնայ մարդկան առջեւը, ես ալ զինքն ամօթակոր պիտի բնեմ իմ Հօրս առջեւը⁴»: Բնաւ չմոռնանք Աստուածային Ղարդապետին այս ծանր յանձ-

1 Ճառ ՃԽԶ: — 2 Գիրք Դ. ի վերայ ուղղ. հաստաց: — 3 Ղուկ. Ժ. 9. 8: — 4 Մատթ. Ժ. 32:

նարարութիւնը թէ «ձեր բարի գործքերը մէյակ լուսաւոր ջահ ըլլան» որ զարնեն մարդկան աչքին, եւ ստիպեն զանոնք փառաւորել ձեր երկնաւոր Հայրը¹»:

Օգոստոսիաւ Արշ, որուն աթոռոյն առջեւը Յիսուսի Քրիստոսի հաւատոյ խոստովանողները կը խոնարհին զՔեզ մեծարելով, ոմանք «Թագերով², զր ունեցան Քոստալպանութեանք Աստուծոյ մեծագոյն փառաց հաւատք, այլք երեսն քրոստոյն կամ բարեգործութեան մեջ փայլած երեսնայն քրոսութեանք, զոր ընդունեցան Քոստալպան պաշտպանութեանք³»: Ո՛վ Գուռն, որ յամենայնի եւ Քրիստոս խոստովանեցար Սրբոյն Աստուծոյ անունը, ընդունե՛ մեզի համար «հաւատոյ պատերազմներուն մէջ հաստատուն մնալու⁴» շնորհքը՝ զմեզ պատող այս ամպարիշա եւ ապականած աշխարհին մէջ: Գուռն որ միշտ աւետարանական բոլոր առաքինութեանց ամենակատարեալ օրինակն եղար, ըրէ որ մեր գործքերովը մեր հաւատքը պատուենք: «Որպէս զի մեր պատճառաւ Աստուծոյ անունն ու վարդապետութիւնը մարդկան չաբախսուութեան չեն թարկուին⁵», այլ

1 Մատթ. Ե. 16: — 2 Յայտ. Գ. 10:
— 3 Բ. Օրէնք 1, Գ. 3: — 4 Ա. Տիմ. 2, 12: — 5 Անդ. 2, 1:

ընդհակառակն «մեր բարի եւ ուրիշ վարքն անոնց բերանը խցէ¹», եւ մեր օրինակները ստիպեն զանոնք զԱստուած փառաւորելու² որուն քովը կը թախանձինք Քեզ գորովալից միջնորդութեանդ փորձը մեզ աննէլ տալու:

Խոստովանողաց Թագուհի, աղօթե՛ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԲ.

Թագուհի Կոստանաց, աղօթես զամենի:

Այն, Գուռն Աստուծոյ Թագուհին եւ, հիանալիք Մարիամ, որ Եւայի դատերաց մէջ եւ Քու ազգիդ նախապաշարման հակառակ՝ առաջինն եղար որ «մշտատեւ կուսութեան հանդիսաւոր խոստանունքն ըրիր Աստուծոյ³»: Գուռն ես որ, ըստ բանից Սրբոյն Աբրոսիոսի, «կուսութեան գրօշակը պարզեցիր⁴»: Գուռն ես որ հրեշտա-

1 Ա. Պետր. Բ. 15: — 2 Անդ. Բ. 12:
— 3 Ս. Օգոստ. Ճառ Ի. ԳԼ. Ժ. Ի Յովհ.: Ս. Գրկիդ. Նիւս. Ճառ Ի Ծնունդ Տն: Երանելի բեղա՝ Ի ԳԼ. Ա. Գուհ.: Ս. Անսելմոս՝ Ի վերայ ազն. կուսութ. ԳԼ. Գ: Ս. Բեռնարդ. Ճառ. Բ. Ի վերայ արագեցում: — 4 Գրկք Ի վերայ հաստ. կուսութ.:

կային առաքինութիւնն այնպիսի մէկ կատարելութեան հասուցիր որ Սուրբն Յովհաննէս Գամասկացին զԲեզ «կուսական մաքրութեան զանձարանն», կ'անուանէ:

Եւ իբրք այսպէս ըլլալ պէտք էր Անոր, որ անհասանելի մեծութեան մը որոշուած էր: «Մաքրութիւնը զմեզ Աստուծոյ կը մօտեցընէ, կըսէ նոյն Ինքն Հոգին Սուրբ՝ Իմաստութեան զըբին մէջ»¹: Այդ առաքինութիւնն ուրեմն շատ կատարեալ ըլլալու էր ի Մարիամ, որ որչափ հնար էր զԻնքն «արժանի ընէր սերտագոյն մերձաւորութեան անսահման մեծվայելութեան Անձի մը հետ»³, որ ըստ Մեծին Արեւդոսի, այնպիսի հիանալի մօտաւորութիւն մ'էղաւ, որ Մարիամ չէր կարող աւելի մօտերմարար միանալ Աստուածութեան հետ, եթէ ոչ Անոր հետ նոյնանալով⁴:

Բայց միայն այս զարմանալի տեսակէտով չէ որ բոլոր կուսանք կ'ողջունեն զՄարիամ՝ Թագուհի երկնից տիադոսով: Միթէ Մարիամ անոնց համար երկրիս վրայ ամրոց, իրախոյս էւ օրինակ չեղաւ: Ո՛հ, անոնք ճանչ-

ցան մաքրութեան յարգը, տեսնելով որ կուսի մը վերտպահուած էր Աստուածային Մաքրութեան անձառելի առանձնաշնորհութիւնը. հասկըցան յԱնձին Մարեմայ իրենց սեռին եղած մեծահարաշ պատիւը, եւ քրիստոնեայ կնոջ համար յառաջ եկած բարձրութեան անսահման բարիքը. եւ սրտերնին զգաց իրենց առ Աստուած երախտագիտութեան հարկը հաւաստելու, «Անոր հաճոյանալու եւ զԱնիկայ անպահաս սիրելու» պարտաւորութիւնը՝ աշխարհի կամ առանձնութեան մէջ, Անոր վրայ մտածելով եւ զԱնիկայ օրհնելով, կամ Անոր ծառայելով յանձին աղքատաց եւ թշուառաց: Եւ ո՞վ կրնայ համրել առաքինութեան հազարաւոր գործքերը, որոնք Եկեղեցւոյ սկզբէն ի վեր պայծառացուցին կուսանելու, այն անհասունում սերունդները: Երկիրը քանի՞ անգամ ապշած տեսաւ Մարեմայ այս փափուկ դստերաց՝ առանց նահանջելու, առանց տոգուներու, ամէն վտանգներու, արգելքներու, յլկանաց, սպառնալեաց եւ ամէն տանջանաց զիմաց հաստատ կենալը: Հիմայ ալ որչափ կրօնական Միաբանութիւններ իրենց կենաց վտանգովն իսկ կ'ըսեն բովանդակ մարդկային զժբախտութեանց

¹ Ճառ. Զ. ընդդէմ՝ Նեստորի: —
² Իմաստ. Զ. 20: — ³ Ս. Թովմ. Մասն Ա. Խնդ. Ի. Ա. 6: — ⁴ Ի վերայ աստիցա Գ. Ը. 22:

«ինձ հայր ու եղբայրներ եղէք», ամէն հիւանդութեանց եւ հոգւոյ ու մարմնոյ բոլոր կարօտութեանց՝ «ինձ մայր ու քոյր եղէք», աղնիւ եւ վսեմ հետեւողք Աստուածային Կուսին: Ո՛հ, իսկապէս Ինքն է, որ զձեզ կը պաշտպանէ եւ կը պահպանէ՝ «իրեւ Քրիստոսի սեպհականուած մաքուր հարստունք¹», ձեր սեռին տկարութեան, աշխարհի հրապուրանաց եւ գոխոց յարձակմանց դէմ, եւ հարկ եղած ատենը դահիճներու, եւ անոնց անգլծութեան բոլոր գործիքներուն դէմ: Եկեղեցին Անոր շրթանց վրայ կը դնէ Իմաստնոյն խօսքերը թէ՛ «ես կը սիրեմ՝ զանոնք, որ զիս կը սիրեն²»: Բայց ձեր սիրոյն մեծագոյն հաւատարիքը, զոր կրնաք Անոր տալ, միթէ այն առաքինութեան նմանութիւնը չէ՞, որ ի Նմա աւելի փայլեցաւ, եւ որ մեր խանգարուած բնութեան պատճառաւ, ամենադժուարին է: Միթէ Անոր պէս մահկանացու մարմնոյ մէջ «Հրեշտակաց նման ապրելու³», ըրած ու խտրելիդ չէ՞ արդեօք:

Նոյն այս ուխտին մէջ է որ բարեպաշտութեան ու զոհողութեան հոգին կը գտնէ իւր սկիզբն ու զօրութիւնը. վասն զի սիրտն ընտանեաց

1 Բ. Կորնթ. Ժ. Ա. 2: — 2 Առակ. Ը. 17:
— 3 Մարկ. Ժ. Բ. 25:

կապերէն քակելով՝ թոյլ կու տայ բոլոր մարդկային գործօնութիւնն Աստուծոյ ծառայութեան եւ բարեգործութեանց նուիրելու ազատութիւնը: Յիսուսէ զատ ուրիշ փեսայ չունեցողը՝ «փութաջանութեամբ, կ'ըսէ Սուրբն Պօղոս Առաքեալ, Աստուծոյ վերաբերեալները կը հոգայ, մարմնով եւ հոգով սուրբ ըլլալու համար¹»: Հիանանք այսպիսի ճշմարտիւ երկնային հոգւոյ մը վրայ, որ ճշմարիտ Եկեղեցւոյ մէջ զարմանալի պտուղներ յառաջ կը բերէ, որուն կը նախանձին այնչափ ամուլ աղանդներ, անկից բաժնուած ըլլալուն համար: Խնդրենք Աստուածային Յիսուսէն մասնակից ըլլալ, խաբարնչիւր քիւր մասնաւոր կոչման համաձայն այս ի փառս Իւր՝ կամաւոր անձնանուիրութեան, նախանձայուղութեան եւ միանգամայն վեճակներնուս ներածին համեմատ ի գործ զնել՝ այս վսեմ առաքինութիւնը, որ Սրբոյն Ամբոստիոսի խօսքին համաձայն, «մարտիրոսութեան դիւցաշուններ կը յօրինէ, եւ զմեզ Հրեշտակաց եղբայր կ'ընէ²», եւ մեր արդիւնքն երկնային հոգւոյ արդիւնքներէն աւելի գերազանց կ'ընէ: «Ըստ որում, կ'ըրէ Սուրբն Յերոնիմոս,

1 Ա. Կորնթ. Է. 34: — 2 Գիրք Ա. ի վերայ կուսութիւն:

մահկանացու մարմնոյ մէջ հրեշտակային փառքը ստանալը շատ աւելի է քան թէ բնականապէս զայն ունենալը¹։

Ո՛վ երկնային թագուհի Աուսանաց, որոնք յաղթանակաւ կու գան զՔեզ մեծարեղև իրենց կուսուծեան շուշանովը, իրենց յաղթուծեան արմաւենւովը, Օգոստոսփառ Մայր այն Աստուածային Գառին, որ է «գլուխ եւ առաջնորդ կուսուծեան²»։ Որպիսի ցնծուծեամբ մենք կը փառաւորենք զՔեզ, որ օրինակովդ ու օգնուծեամբդ երկրիս վրայ այնչափ զարմանալի առաքինուծեանց ծաղկիլ ու ածիլ տուիր։ Ո՛հ, հաճէ՛ սիրտ աւելի եւս աճեցընել Քու սիրելի դասերացդ գունդը, որոնք Լիկեղեցին կը զարդարեն իր կենդանի ծաղկունք, եւ իր բաղասան անուշահոտուծեան, որուն քաղցրուծիւնը բնաւ այս աշխարհէս չէ։ Հաճէ՛ աղգել մեզ յարգուծիւն եւ սէր առ այնպիսի առաքինուծիւն մը, որ այնչափ կը պատուէ զմարդուծիւնը, որ «յերկինս սկիզբ առաւ³», ուր ի վարձատրուծիւն կը վայելէ «Աստուծոյ Գառին անբաժանելի հետեւորդներ⁴» կազմե-

¹ Ճառ՝ ի Փոի. Ս. Կ.։ — ² Երեմ. Գ. 4։ — ³ Ս. Ամբր. ի վերայ կուսուծ.։ — ⁴ Յայտ. Ժ. Գ. 4։

լու արտօնուծիւնը։ Ո՛վ Գուն, որուն հետեւորներուն մէջ այնչափ հազարաւոր կուսանք անպատում փառք եւ երջանկուծիւն մը ստացան. ըրէ՛ որ «Քու առաքինութեանցը երկնային անուշահոտութեան քաջուած¹» հասնինք թաշտուսայ թագաւորին, կոխելով այն մարուր ճանապարհը, զոր Քու քայլերդ նշանեցին²։

Աուսանաց թագուհի, աղօթէ՛ մեզի համար։

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԳ.

Թրագոսիի ամենայն Սրբոց, սոցիմեսս վրասն Վեր։

Սուրբերը շքեղ եւ զարմանալի առաքինուծիւններով գեղեղեցին պայծառացուցին։ Ասոնք բոլոր աշխարհ այլշեցուցին իրենց նախանձայուզուծեան, քաջուծեան, անձնանուիրուծեան դիւցազնուծեամբը, իրենց խոնարհուծեան համբերուծեան եւ սիրոյն սքանչելեօրը։ Ասոնք մտան «ի հանգիստս յաւիտեանական³» արդեանց առատ հուճեցով մը, որուն Աստուած «Քնէ՛ առաքինութեան ալ կշռած է ար-

¹ Երմ. Ա. 3։ — ² Սղմ. ԽԳ. 15։ — ³ Ամբր. ճԼԱ. 14։

դարութեան կշիռքովը¹, եւ զորս վարձատրած է անգին փոխարինութեամբ²:

Ո՛վ Մարիամ, Գուռն անոնց թագուհին ես, թէ որ Սուրբերը հաւատացերոց մէջ իբրեւ մէյակէ կ շքեղագեղ ծաղիկ՝ զարդարեցին Յիսուսի Բրիտտոսի զինուորեալ Հարսին պարտէզը. Գուռն այնպիսի խորհրդաւոր պարտէզի մը մէջ իբրեւ ծաղկանց թագուհի փայլեցար: Գուռն Քու անհամեմատ օրինակներովդ արտաքուստ փայլեցուցիր «այն շնորհաց անբաւ հարստութիւնը, որով լեցուն էիր, հարստութիւն անհաս ամէն մարդկային եւ հրեշտակային մտաց³»:

Սուրբերն իրենց անձանց վրայ շատ կամ նուազ զգալի կերպով կրցան ցուցնել իրենց Աստուածային Վարդապետին կենաց ինչ ինչ կէտերը. իւրաքանչիւր մէկուն վրայ մասնաւոր առաքինութիւն մը փայլեցաւ, եւ երկնաւոր Հօր օթեաննին մէջ, յորում «ամթռնեին ու պատկերը տարբեր տեսակ են⁴» ամէն մէկը կընդունի մասնական փառաց մասը, որուն այս փորձոյ ժամանակ արժանացած էր:

1 Յովը, ԼԱ. 6: — 2 Եբր. Ժ. 35: — 3 Ս. Բեռնարդինոս, Ճառ. Ե. Ի Ծնունդ Երանելոյ կուսին: ԳԼ. ԺԲ: — 4 Յովհ. Ժ. Գ. 2:

Ո՛վ Մարիամ, Գուռն անոնց թագուհին ես, անոնց իւրաքանչիւրին ունեցած մասնաւոր արդիւնքը Գուռն փայն ունեցար առանց ուրուք բացառութեան, Յիսուսի մեր պաշտելի օրինակին կենաց բովանդակ մանրամասնութիւնները Գուռն հաւատարմամբար ի Քեղ ընդօրինակելիր, որչափ որ արարածի մը հնարաւոր էր, բոլոր առաքինութիւնները Գուռն ի գործ դրիր, եւ այնպիսի բարձր ու կատարեալ աստիճանաւ, որ Սուրբն Անսերմնո ըսաւ Քեղ նկատմամբ թէ՛ «Սրբոց Սուրբին սրբութեան վերջը ոչ կայ եւ ոչ ալ կրնայ մտածուիլ Քու կինիդ նմանը¹»: Ուստի երկնային Հայրենեաց մէջ Գուռն ամենավեճարդեանցդ համեմատ փառօք կը ծնխանաս: Բովանդակ Սրբոց թագերուն բոլոր փառաւորութիւնը միայն Քու թագդ կը կազմէ. եւ բաւական չէ: Քու փառքդ անոնց բոլորին փառքը կը գերազանցէ, ըստ որում անոնց բոլոր առաքինութիւնները Քու կեններէդ ստորին են, եւ որովհետեւ զանոնք ի գործ դնելու շնորհքն իրենց տրուեցաւ, արդեամբք Յիսուսի, զոր Գուռն սուր աշխարհի:

Սուրբերը մեր օգտին համար Աստուծոյ բով սքանչելի իշխանութիւն

1 Ի վերոյ ազնութեան կուսութեան:

մ'ունին: «Աստուած, կ'ըսէ Սուրբն
Լեւոն, յիբաւի զարմանալի է զանոնք
մեղի ոչ միայն իբրեւ օրինակ այլ
նաեւ իբրեւ լիազօր իշխանութեամբ
ճոխացած պաշտպան տարւաւ ատենը¹»:
Հազարաւոր սքանչելի գործեր կը հաւ-
աստեն տիեզերաց, որ «անոնք յաւի-
տեանս յաւիտենից կը թագաւորեն²
Աստուծոյ քաղաքին մէջ³», եւ թէ
իրենց շքեղ աթոռոց բարձրութենէն
կը թագաւորեն նաեւ երկրիս վրայ
խորհրդաւոր ազդեցութեամբ մը:

Ով Մարիամ, Գուռն բոլոր այս
«անուհի թագաւորաց⁴» ալ թագու-
հին ես, Գուռն անոնց պէս չես աղա-
չէր, այլ ըստ իմիք «կը հրամայես.
վասն զի կարելի է երբեք, սվ երջանիկ
Կոյս» որ Այն, որ Բեղմէ ծնաւ,
թէ եւ ամենակարող դէմ կենայ իւր
վրայ անգամ Բեղ տուած մայրենի
իշխանութեան⁵: Այն, «Բու խնն-
դիբքներդ զրեթէ հրաման են⁶», կը
զրէ Սուրբն Անտոնինոս: Եւ «Քու
ուզածդ, կ'ըսէ Սուրբն Անսելմոս,
անվերջ է գործ կը դրուի⁷»:

Ո՛հ, կարող ըլլայ օր մ'այս հիւ-

1 Ի Ծնունդ Ս. Լաւր: — 2 Յայտ.
Ի. 5: — 3 Անդ, Գ. 12: — 4 Անդ,
Ե. 10: — 5 Ս. Պետր. Գամ. Ճատ. Ի
Ծնունդ Ս. Կ.: — 6 Հատ. Բ. Մասն Գ.
Ընթերց. 2: — 7 Ի վերայ ազն. կուսութ.:

նալի Աշոբ, զոր բովանդակ Սուրբերը
կը յարգեն իրենց պատկերովը, նոյն-
պէս մեր Թաճարահէն ըլլալ: Սոյն նպա-
տակիս համար ի՞նչ բան պէտք է:
Երկրիս վրայ սուրբ ըլլալ: Արդ սուրբ
ըլլալու համար պէտք է «նոյն ինքն
Աստուծոյ կենօք¹» ապրիլ՝ ըստ վեմ
մտաց հետնոնաց Առաքելոյն, Անոր
շնորհքը տաճալ եւ զայն պահելու
եւ աճեցնելու եւ շարունակ աշխա-
տիլ: Անկեղծարար սիրել Արարիչը
«բոլոր մտօք, բոլոր սրտով եւ բոլոր
զօրութեամբ²»: Արովհետեւ այսպէս
սիրոյն անձառելի կերպով Անոր հետ
միացած է, եւ «եթէ յարատեւ է, կը
փրկուի³»: Եւ արքայութեան մէջ
«նոյն իսկ Աստուծոյ բնութեան փո-
րաց է եւնոսութեան հաղորդակից պի-
տի ըլլայ⁴»: «Ո՛հ, ընդարձակենք,
կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, սփոփենք
յոյսերնիս, եւ բոլոր բաղձանքնիս
«դէմ» զԱստուած ի յաւիտեան վայե-
լելու, որ է գերազոյն բարին եւ բոլոր
բարեաց սկիզբ⁵»: Խոյս տանք այն
նրովքէն, որ վերապահուած է անոնց.
«որոնք անփոյթ են ճշմարիտ աւետեաց
երկրին նկատմամբ, որ չափէն աւելի
արժանի է սրտերնուս բովանդակ
եւ անդեան⁶»:

1 Եփես. Գ. 13: — 2 Գուկ. Ժ. 27:
— 3 Մատթ. Ի. Գ. 13: — 4 Բ. Պետր.
Ա. 4: — 5 Ի Սղմ. ճԻ: — 6 Սղմ. ճԵ. 24:

Ո՛վ Մարիամ, որ ի Քեզ միայն
 միացուցիր համօրէն Սրբոց բովանդակ
 արդիւնքներն այնպիսի զարմանալի
 կերպով: Ո՛վ Գուռն որ զամէնք գե-
 ռադանցեցիր այս աշխարհիս մէջ Քու
 առաքինութիւններովդ ո՛չ միայն, այլ
 նաև Քու առանձնաշնորհութիւն-
 ներովդ, եւ որ յերկինս Քու փառօքդ
 եւ իշխանութեամբդ այնչափ զեր ի
 վերոյ եւ քան զանոնք: Անոնց եւ
 յաւիտենական Երուսաղէմի բոլոր եր-
 ջանիկ բնակչաց հետ Քու առջեւդ կը
 խոնարհինք, ո՛վ Փրկչին Օգոստոսփառ
 Մայրը, որ “Անոր աջակողմը կը
 նստիս թագաւորական ոսկէթել եւ
 ճշմարտութեան Աստուծոյն հարստու-
 թեամբ ճոխ զգեստաւորուած”¹: Գուռն
 բոլոր ընտելոց վրայ կը տրեւս, ո՛վ
 Աստուծոյ կենդանի բնակարանը², ինչ-
 պէս որ բարձր լեռան մը գագաթին իւր
 ստորտը կը նշմարէ բոլոր միւս լեռ-
 ները³: Թէ որ մինակ Քու հիանալի
 մեծութիւնդ դիտէինք, պիտի չհա-
 մարձակէինք աչքերնիս դէպ ի Քեզ
 վերջընելու, ո՛վ երկինային Թագուհի,
 բայց կը ճանչնանք Քու բովանդակ
 սէրդ, բոլոր բարութիւնդ, ամբողջ
 զթութիւնդ, որուն համար անչափ է
 ի Քեզ ունեցած վստահութիւննիս:

1 Սղմ. ԽԳ. 10: — 2 Եփես. Բ. 22:
 — 3 Միքիա, Գ. 1:

Քու օգնականութեամբդ կը յուսանք
 սուրբ կեանք մ’անցընել, եւ Աստու-
 ծոյ թագաւորութեան այն մասը շա-
 հիւ, ուր պիտի հրճուինք ցմիշտ, հոս
 Քու քաղցր մեծ վայելչութեանդ ար-
 ժանի ջերմագին եռանդեամբ Քեզի
 ըսած ըլլալնուս համար թէ՛

Բովանդակ Սրբոց Թագուհի, ա-
 ղօթէ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԻ.

*Թագուհի առանց արատոյ Վերաց
 յղացեալ, աղօթես վասն մեր:*

Վերջին ատեններս իրենց աղերս-
 ներն առ Ս. Գահն մատուցանող մեր
 Եպիսկոպոսաց ջերմագին բարեպաշտ-
 ութեան պարտական ենք զՄարիամ
 արանց մեղաց յղացած Թագուհի ողջունել
 կարենալնուս քաղցր մխիթարութիւնը:
 Սուրբ Գիրքը բացարձակ կերպով
 զԱստուած “Թագաւոր”¹ կ’անուանէ,
 Անոր բարձրագոյն մեծ վայելչութեան
 վեհմութիւնը հասկըցընելու համար:
 Ուրեմն պատշաճ չէր պատուել Մա-
 րեմայ թագաւորութիւնը, որ “Աս-
 տուծմէ զատ” գեր ի վերոյ է քան

1 Սղմ. ԽԳ. 1: ՃԽԳ:

զամենայն¹», ճշգորէն Թագուհի ա-
նուանելով զԻնք: Էւ «Բնույն Սրբոց
Թագուհի տխորդուն ետքը, ուրիշ ո՞ր
տխարոս կրնայ յարմարիլ քան զայն,
որ կը պատուէ մի եւ նոյն ստեղծ թէ
Անոր իրական մեծութիւնն եւ թէ
սկզբնական մեղքէ ազատ ըլլալուն ե-
ղական առանձնաշնորհութիւնը: Ա-
ռանձնաշնորհութիւն մը որ մինակ
պիտի բաւէր զԻնքը որոշել բովանդակ
ընտրեալներէն, թէ եւ ուրիշ այնչափ
պատճառներով ալ անոնցմէ զեր ի
վերջ չըլար: Առանձնաշնորհութիւն
բարձրաձայն հռչակուած Եկեղեցւոյ
աւանդութենէն, որ առաքելական
վարդապետութեանց հաւատարիմ ար-
ձազանգն եղած է:

Սուրբ Անդրեաս Առաքեայ առ
Էդէաս Փոսի-Բդեշին ուղղած ճառին
մէջ Մարեմայ «անարատ» տխորդսր կու
տայ, եւ կը համեմատէ «այն հողին,
ուսկից կազմուեցաւ առաջին մարդը,
որ տակաւին առաջին յանցանաց հե-
տեւութիւնն եւ պատիժ՝ Աստուած-
ային անէծքին ենթարկուած չէր²»:
Որոգիներս, որ շատ մօտ էր Առաքելոց
դարուն, կ'անուանէ զՄարեմամ շնոր-
հաց մէջ յօրինուած, սատանային

1 Ս. Բեռն. Ճառ. Զ. ԳԼ. 6: —
2 Վկայար. Ս. Անդր. Ճառ. Կարգ. 1. ամ-
բրտակենեայ՝ ի վերայ Ս. Յշ. Ս. Կ.:

ժանտամահ շնչէն ազատած¹»: Սուրբն
Անփիլոսոս՝ «առանց արատոյ եւ ա-
ռանց մեղաց²»: Սուրբն Եպիփան՝ «ի
րնէ գեղեցկագոյն քան զամենայն դասս
Հրեշտակաց, անարատ ոչխար, զԱս-
տուածային Գառնը տուաւ աշխար-
հի³»: Սուրբն Եփրեմ՝ «Կոյս առանց
արատոյ, առանց պատի, առանց ա-
պականութեան բացարձակապէս զերծ
յամենայն մեղաց, եւ յամենայն թե-
րութեանց⁴»: Սուրբն Կիւրեղ՝ «սկզբ-
նական արատէն պատսպարուած⁵»:
Ինչ հարիւրութիւն կայ այս կէ-
տիս վրայ նախնի հաւատաց աւան-
դութեան ուրիշ փաստերն ի մէջ բե-
րելու: Ո՞վ չի գիտեր որ Ս. Յերոնի-
մոս⁶, Սուրբն Օգոստինոս⁷, Սուրբն
Փռզկէնտինոս⁸, Սուրբն Իլտեփանոս⁹,
Սուրբն Յովհաննէս Գամասկացին¹⁰,
Սուրբն Պետրոս Գամփանոս¹¹, Ս. Ան-
սելմոս¹², Ս. Բոնավլենտուրա¹³ եւ

1 Ճառ. Զ. ի Դուկ.: — 2 Ճառ. Գ. ի
Ս. Աստուածամ.: — 3 Ի Գովեստո. Ե. Կ.: —
4 Ճառ. Ի. Ս. Աստուածամ.: —
5 ՅԱւետ. Յովհ. Գիւր. Զ. ԳԼ. Ե.: —
6 Ի Սղմ. ՀԷ.: — 7 Ի վերայ բնութեան
եւ շնորհաց, ԳԼ. Լ. Զ.: — 8 Ճառ. ի վերայ
գովեստոց Մարեմայ: — 9 Վէճ՝ ի վերայ
Կ. Մար.: — 10 Ճառ. ի Ծնունդ Ս. Կ.: —
11 Ճառ. ժԲ. ի Ծն. Կուսին: — 12 Ի
վերայ Յղութեան Կ. ԳԼ. ժԸ.: — 13 Ճառ.
ժԱ. ի Ս. Կոյսն:

նաեւ Սուրբն Թովմաս¹ այս կէտիս նկատմամբ հաւատարապէս կը հաւատեն Եկեղեցւոյ անընդհատ աւանդութիւնը, եւ կ'երաշխաւորեն որ Սրբոց Վարդապետաց վկայութեանց հետ միացած են արեւելեան եւ լատինածէս Եկեղեցւոյ յիշատակարանները, Եկեղեցական պաշտամանց խօսքերը, Թեմերու կարգադրութիւնները, կրօնական Միարանութեանց սովորութիւնները, եւ վերջապէս հռչակաւոր Պիոս Թ. Ս. Քահանայապետին² հրաւիրանաց աւթիւ՝ կաթողիկէականութեան շատ մ'Եպիսկոպոսունք մօտատեններ լաւերարար հաստատելով վկայեցին բովանդակ հաւատացելոց առ այս հաւատս յարումը, այնպէս որ այսպիսի ճշմարտութիւն մ'ի նպաստիւր ունի զհնութիւնը, զընդհանրութիւնը, զմշտնջենաւորութիւնը, որոնք գլխաւոր հիմն են քրիստոնէական հաւատոյ մասանց:

Ասկից զատ ով չի հասկընար որ եթէ ի Յիսուս Քրիստոս մարդկային բնութեան Աստուածային հետ անձնական միաւորութիւնը բացարձակապէս հարկաւոր ըրաւ Մարգ-Աստուծոյն ի շնորհս յղութիւնը, Աստուած-

1 Ի Գրիս՝ Վճիւ Ա. Ճառ. ԽԳ. Խնդ. Ա. Յօդ. Գ: — 2 Թուղթ ընդհ. 1849. Փետր. 2:

ային Մայրութիւնն որ «այս միութեան ամենաերա կերպով կը մտնայ»¹, երբեք պիտի չհամաձայնէր Մարեմայ ի մեղք յղութեան...: Եւ ինչ. Աստուած՝ ի սկզբանէ աշխարհի ծանուցած էր Թէ, Անիկայ որուն դէմ դժոխային օձին խայթուածքը պարապ եւ ի զուր կը սպառնար, մանաւանդ Թէ որչափ էր «անոր գրուելը ջախջախելու»², միթէ Իւր սկիզբը պիտի առնուր անոր նետէն խոցուելով եւ «անոր իշխանութեան ներքեւ ըլլալով»³: Անիկայ որ գրեթէ վերանորոգիչ պիտի ըլլար Եւային անկման եւ ճշմարիտ «Մայր կենդանեաց»⁴, միթէ շնորհաց մէջ ստերճուած Եւայէն ալ ստորին պիտի ըլլար: Վերջապէս Անիկայ որ ինն ամիս պիտի ապրէր մի եւ նոյն մարմնաւոր կենօք մարմնացեալ Բանին հետ՝ միթէ Իւր գոյութեան առաջին վայրկենին մէջ Աստուածային ահաճութեան հանդիպելով՝ ատելի⁵ պիտի ըլլար Աստուծոյ, եւ «բարկութեան որդի»⁵:

Ո՛հ ո՛չ, հաղարկցս ո՛չ, այսպէս չէր կրնար ըլլալ, ով Աստուծ մէ եւ ի մարդկանէ խանդալատանօք սիրուած

1 Դիոն. կարթ. Գիրք Բ. ի վերայ գովեստից Ս. կ.: — 2 Եւնդ. Գ. 15: — 3 Անդ: — 4 Անդ, 20: — 5 Եփես. Բ. 3:

կայս: Ո՛հ, այն միայն լաւ կ'ըմբռնէ եւ կը զգայ որ քրիստոնէութեան մեղաց, շնորհաց, եւ Աստուծոյ անսահման Սրբութեան նկատմամբ մեղտուած գաղափարն ունի: Ինքն է որ հաճութեամբ սրտի երկնից եւ երկրի առջեւ կը հռչակէ, որ բնա ստոյգ չէ, ամենեւին հնար չէ որ Աստուծոյ Որդին վայրկեան մ'ալ Իւր նայուածքը շեղած ըլլայ Ամենասուրբ Կուսէն, Իբրեւ Իրեն սուրբ աչաց անհանդուրժելի առարկայէ մը, Անկից, որ Իւր Մայրը պիտի ըլլար: Բայց Ինքն է նաեւ որ մեղքէն փախչելու անհամեմատ կարեւորութիւն մը կու տայ: Ինքն է որ Մարեմայ պէս ամէն բանէ աւելի կը յարգէ Աստուծոյ շնորհաց մէջ գտնուելու վիճակը: Ինքն է որ գիշեր եւ ցերեկ «կը հսկէ ու կ'աղօթէ»¹ Աստուծոյ բարեկամութեան գանձը պահելու համար: Ինքն է որ կը ջանայ իւր բարի գործքերովն ամէն որ աւելի եւս ամրապինդ սխմել անոր նուիրական կապերը, եւ ամէն որ առ ճեցրնել թանկագին պտուղները:

Ո՛վ Մարիամ, ո՛վ բարեբախտ թագուհի, ո՛վ սքանչելապէս թագուհի, « առնց մեղաց յղացեալ թառնուհի, ահա աստիկ մեր սրտին առ Քեզ վերջին սոսքը, ահա աստիկ փառաց վերջին ճա-

¹ Մարկ. Ժ. Գ. 33:

ռագայթը, զոր կրնանք երկրիս վրայ աւելցնել Քու պսակիդ: Ինչպիսի բախտաւորութիւն է մերն, որ կրնանք Քեզի ըսել թէ, «Աստուած Քեզ սիրած է Իւր շնորհոք»¹ Ի սկզբանէ անտի»². Գուռն անարատ ես, «բուրովն գեղեցիկ եւ առանց արատի մը»³: Ո՛հ, Գուռն, Գուռն եղիբ միշտ մեր սրտին թագուհին, ո՛վ Գուռն, որ «անդաւաճաւ պտիւն ունեցար զերծ գտնուելու բովանդակ մարդկան վրայ ինկած սխմանքն նոզմբէն»³: Եւ որպէս զի սրտերնուս վրայ իշխելդ Քեզի հաճոյ ըլլայ, ըրէ որ սրտերնիս միշտ աւելի եւս կարող ըլլայ մաքրութեամբ եւ եռանդեամբ Աստուծոյ ծառայութեան զբաղիլ: Եւ այս շնորհքն ընդունելու համար, մենք Քեզ կ'ըսենք խորագոյն խոնարհութեամբ, մեծագոյն վստահութեամբ, եւ կարելի եղած ջերմագոյն սիրով.

Անարատ յղացած թագուհի, աղօթէ՛ մեզի համար:

¹ Առակ. Ը. 22: — ² Երկ. Գ. 7: Ե. 2: — ³ Եսթեր, ԺԶ. 13:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԵ.

Թագաւորի ամենատարր Վարդա-
րաւի, առօրեա զխաւ մեր։*

Ո՛վ մեծապայծառ թագուհի, ո՛վ
չքնաղ եւ գթասիրտ թագուհի, ինչ-
պէս Միածին Յիսուսդ հաւատացե-
լոց արօթք ընելուն կերպը սորվեցուց,
Գուն ալ Բու առատադուժ ողոր-
մութեանցդ շնորհքները մարդկան վրայ
սփռելու համար երեքտասներորդ դա-
րուն սկիզբները Սրբոյն Գովնիկոսի
միջոցաւ Վարդարանին հանապազօրեայ
ասմունքն առաջարկեցիր բոլոր կաթո-
ղիկէ աշխարհի՝ զմարդիկ խորհրդաւոր
վարդերու շարքով մ'երկնից սիրովը
կապելու համար։

Բարձրելոյն Աստուծոյ պատգամա-
բերը Մարմնաւորութեան հրաշալի
օրը՝ զՔեզ «լի շնորհօք Տէր ընդ Քեզ¹»
ողջունեց, եւ Սրբուհի Եղիսաբէթի
այցելութեան դացած օրդ՝ ինքն ալ
Հոգւով Սրբով լեցուած զՔեզ «բու-
լըր կանանց մէջ օրհնեալ²» հռչակեց,
սուբա արգանդիդ մէջ կրած օրհնեալ

¹ Ղուկ. Ա. 28: — ² Անդ, 42:

* Ըստ բաղձանաց Լուսն ԺԳ. Ըս-
նանայապետին: — Յաւելուած Թարգ-
մանչին:

պողոյք համար: Եկեղեցին ալ հիւ-
սյած Բու Աստուածամարութեանդ
վեւժ արժանապատուութեան վրայ,
յօրոյ ի շնորհս Բու անդառնալի բա-
րեխօսութիւնդ հայցելու համար սրտա-
ուռչ պաղատանք մ'աւելցուց, որուն
բովանդակութիւնը Քեզ այնչափ հա-
ճելի եղաւ որ Գուն ինքդ հաւատեցիր
երանելի Աւանին թէ «Պատարագէն
վերջը Վարդարանն էր Քեզի ամենա-
հաճոյ արօթքը¹», երկնային Զուարթ-
նոյն աւետարեր ողջոյնին կրկնումը:

Եւ իրաւամբ, ըստ որում պաղա-
տանքն յօրինելու համար երկինք եւ
երկիր միացան զՄարիամ մեծարելու,
եւ Եկեղեցին Անոր բարձր արժանա-
պատուութեան յիշատակն ամէն օր
եւ ամէն ժամ կը յաւերժացընէ եր-
կրիս վրայ, եւ որուն միջոցաւ ալ
ամէն վարկեան Աստուծոյ օրհնու-
թիւնները կ'անձրեւեն քրիստոնեայ
ժողովրդեան վրայ: Ուստի եւ Վար-
դարանն ուրիշ բան չէ, եթէ ոչ Աս-
տուծոյ կողմանէ աշխարհիս վրայ դալիք
վերահաս չարեաց եւ պատժոց դէմ
յարմարագոյն եւ ազգու դեղ մը,
քրիստոնեաց փրկութեան, կաթողիկէ
Եկեղեցւոյ պայծառութեան, մեղաւ-
որաց դարձի համար մէկ հատիկ զօ-
րաւոր միջոցը: Սուբն Գովնիկոս

1 Ի Վարս երանել. Աւանոսի:

«Վարդարանով արդատեց զՎաղղիան եւ զԻտալիան Աստուծոյ բարկութեան շանթերէն, եւ Վարդարանով ջնջեց Աղբիկեանց ժանտ հերետիկոսութիւնը¹»:

Վարդարանը տասն եւ հինգ խորհուրդներէ կը բաղկանայ: Նախ՝ ի նշան Տաճարին եւ առաքինութեանց տասնեւհինգ աստիճաններուն, որով ջերմեանդն հոգի մ'առ Աստուած կը բարձրանայ: Վարդարանն իրօք խորհրդաւոր աստիճան մ'է, որուն միջոցաւ Ամենասուրբ Աղոյք կը վերացընէ առ Աստուած Իւր ջերմեանդները, եւ կը բորբոքէ անոնց սրտերն երկնային սիրով, որուն աստիճաններն ալ տասնեւհինգ են, ինչպէս որ գեղեցիկ նկարագրու թեամբ կը նշանակէ Պողոս Առաքեալը²: Երկրորդ ի նշան Յակոբ Նաչապետին յերազն տեսած խորհրդաւոր սանդուխին, որուն ալ աստիճանները տասն եւ հինգ էին: Եւ որուն համար կը գրէ Սուրբն Բեռնարդինոս Սիենացին թէ, «այն սանդուխին աստիճանները կը նշանակեն արարածոց Արարչին հետ հաշտութիւնը, եւ անոնց Բարձրելոյն յաւիտենական եւ անանց փառաց մասնակցութիւնը³» ինչպէս որ իրօք պատա-

1 Ի Վարս Ս. Գովմնիկոսի: — 2 Ա. Կորնթ. Ժ. Գ.: — 3 Ի Ճառս:

հեցաւ Սրբոյն Գովմնիկոսի, զոր Երանելի Կուարան տեսաւ թէ ինչպէս Յիսուս եւ Մարիամ ղինքը սանդուխէ մը վեր հանելով երկինք կը տանէին: Երրորդ ի յարատեւ յիշատակ Իւր եւ Աստուածային Որդւոյն կենաց մէջ ունեցած ուրախակի, տրամագին եւ փառաւոր խորհրդոց, որոնց խոյժունքը քրիստոնեայ հոգւոյն սնունդը կազմելով՝ կը զարգացընէ, եւ փրկութեան ճանապարհին մէջ յառաջ երթալու համար շատ աւելի կը զօրացընէ քան թէ «Եղև Մարգարէին արուած մխրոյ տակ եփուած հացը¹»:

Ատեն մ'Աստուած Սուրբերն աշխարհ կը խաւրէր, որպէս ղն Ամենասուրբ Աուսին սիրական աղօթքը ըսելու գրգիռ ըլլալին հաւատացելոց, հիմայ նոյն Ինքն Սուրբերուն Թագուհին է որ, անձամբ կամ անուղղակի կերպով գործած հիանալի հրաշքներովն հաւատացելոց սրտերը կը շարժէ ի սէր Իւր խորհրդաւոր վարդերուն: Եւ ինչ են արդեօք տասնեւեօթը տարիէ ի վեր Նոր Պոմպէյի հովտին մէջ կատարուած զարմանալի դէպքերը՝ կուպաշտ եւ հրաբխային մխրոյ տակ թաղուած քաղաքներու աւերակաց քով կառուցուած եւ Սուրբ Վարդարանի Թագուհւոյն պատուոյն նուիր-

1 Գ. Թագ. Ժ. Թ. 7:

բուած հոյակապ Տաճարն, ուր ամէն օր եւ ամէն վայրկեան արասքոյ կարգի բժշկութիւններ ու գերբնական հրաշքներ կը գործուին. անանկ որ չկայ մէկը որ հաւատքով հոն Ամենաուրբ Կուսին ոտքը դիմած եւ առանց իւր խնդրոյն կատարման վերադարձած ըլլայ: Եւ ուր որ Վարդարանն հանազարօրայ եւ հանդիսաւոր կերպով կը սուրճի ոչ փայն հաւատքը կը կենդանանայ, ըստ որում անկրօններն անդամ չկարենալով ուրանալ Ամենասուրբ Կուսին ճարեխօսութեամբ Աստուծոյ գործուած հրաշքներուն բազմութիւնը, հաւատքի գալով առանց մարդկային նկատման, կը խոստովանին թէ «մասն Աստուծոյ է այդ», այլ նաեւ Քրիստոսի յերկնից բերած սէրը կը յաղթանակէ, որուն տիտղոսով որբանոցներ, աղքատանոցներ, բանտարկուածներու լքուած եւ անտէր տղոց կրթարաններ եւն եւն կառուցուած, խնամուած ու բարգաւաճած՝ յառաջ կ'երթան 1 եւսն Ժ. Գ. Սրբազան Քահանայապետին անմիջական իշխանութեան ներքեւ եւ աշխարհիկ գոյգ մ'ամուսիններու աշխատութեամբ եւ ընդհանուր կաթողիկէ հաւատացեալներէ հաւաքուած լուծայով:

Աստուծոյ յաւիտենական խորհրդոց մէջ վճռուած էր որ իննեւասաններուրդ դարուն վերջերն այդ մահ ու աւերակներ սերմանուած հողին վրայ նոր կենաց յարութեան հրաշք մը տեսնուէր, եւ նոյն այն տեղը, ուր ասեն մը պիղծ Ափրդիսէ չատուածուհին կը պաշտուէր, փրկոնաւոր սրտեր առ Անարատ Կոյսը պաղտէին, յարգէին եւ սիրէին ընական վարդերէն շատ աւելի անուշարոյր հոտ ունեցող երկնային վարդերով հիւսուած Վարդարանով մը, որով Ամենասուրբ Կոյսը կ'ուզէ փրկել զմարդիկ. եւ զայս յայտնապէս ցուցուց ի Լուրս Բեռնարդէտին հետ վարդարանն ըսելով: Այս բարեբախտ երկիրը, յորում իբրեւ շնորհաց գահոյնց ըլլայ բազմած է յաղհաւանց եւ սուրբ Վարդարանի Օգոստոսփառ Թագուհին, իւր հիանալի հրաշքներուն աղաղակաւն հեռաւոր աղօթաց ալ կը հնչեցընէ իւր մայրենի սիրոյն ձայնը՝ յորդորելով որ ջերմեւանդաբար եւ մտադրութեամբ ըսելով Վարդարանը, մեղքերնին բաւեն, Աստուծոյ բարկութիւնն իջեցընեն, եւ Յիսուսի Փրկչին կենաքը, չարչարանքներն եւ փառքը, եւ իւր ալ կրած վշտերն եւ ի յերկինս փառաւորութիւնը մտածելով, մեծամեծ հոգեւոր օգուտ եւ արդիւնք շահին իրենց փրկութեան համար:

Աղէ՛, խոււ չըլլանք մենք ալ մեր երկնային Մօրը ձայնին, ամէն օր մեծարենք ու յարգենք զի՛նքը Վարդարանով, որպէս զի Անոր հօր միջնորդութեամբը թէ՛ յաւիտենական փրկութիւննիս ապահովենք եւ թէ՛ որդիական պարտաւորութիւննիս կատարենք: Մի՛թէ նոյն խկ ընտելիս կտտուէր: Արդ պատուենք զի՛նքն իւր ուղած կերպովն, իւր հաճելի եւ սիրական Վարդարանովը, որպէս զի ի՛նքն ալ մխլթարէ եւ պաշտպանէ զմեզ, եւ կաթողին սիրով սիրելով զմեզ՝ իւր Միածին Որդւոյն հետ հաշտեցնէ, որուն որ անձկանօք կը բաղձայ:

Ո՛վ Թագուհի երկնային վարդերու եւ անթառամ ծաղկանց, Դուն արդէն այս աղցաւոր Էրիբովի հովտին մէջ ծաղկելով հարիւր եւ յիսուն թերթերով բարդուած, այսինքն ամէն առաքինութեանց անուշահոտ բուրմամբ դամէնքը Քեզի գրաւեցիր, եւ հիմայ որ ի յերկինս անթարշաժ եւ անգին պսակով պսակուած ես, Վարդարանի ջերմեռանդութեամբ կ'ուղէս որ զՔեզ մեծարենք: Ահաւասիկ անարժան որդիքդ, եթէ չենք կրնար առաքինի վարուք եւ սուրբ կենօք Քու անմահական թագիդ աւելի փայլմը տալ ամենապայծառ գոհարմաւելցընել, գոնէ կը խոտանանք մայրենի

օգնականութեամբդ յարատեւել Քեզ այս այնչափ սիրական ջերմեռանդութեան մէջ: Աղէ, ընդունէ ո՞վ աննման եւ գորովագութ Թագուհի, մեր այս առաջագրութեանց հետ նաեւ մեր օրհնութեանց խորհրդաւոր վարդերու պսակը, զոր Քու մարտը եւ սրբափայլ ոտքերուդ առջեւը կը խոնարհեցընենք: Ըրէ՛, ո՞վ մեծաշուք Թագուհի, որ մահուան կետին Քու սուրբ ողջոյնդ ըլլայ մեր բերնին կափարիչն. եւ Քու սուրբ Անունդ վերջին շնչերնուս հետ տալով՝ հանդերձեալ կենաց մէջ զՔեզ տեսնելու եւ ի յաւիտեան օրհնելու անգուգական բարեբախտութեան արժանաւորինք, ամէն:

Վմենասուրբ Վարդարանին Թագուհի, աղօթէ՛ մեզի համար:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԶ.

Գառն Աստուծոյ, որ քառանս զՆեղու աշխարհի, յոնայես ի մեզ Տեր:

Եկեղեցին ի պատիւ Վմենասուրբ կուսին յօրինած պաղատանաց վերջ կու տայ քանի մ'ըրձայից խօսքերով, զորս կ'ուղղէ առ Անոր երկրպագելի Որդին՝ սաշխարհի մեղքերը ջնջող Գառնի մը՝, որտաշարժ նմանութեամբ:

Լը ամէն բանէ յառաջ մեզ նշմարել կու տայ՝ ի Նման զգատաւորն կենդանեաց եւ մեռելոց, որուն զթուլթիւնը հայցելու ենք այժմ, «զգառն, որ լուսաճաճանչ աթոռի մը վրայ կանգուն կայ¹», որ պիտի դատէ զմեզ իւր «Աստուծոյ Որդւոյն գրօշակ խաչով²» նշան «մահու կամ կենաց³» մեզ ամեննուս համար, եթէ գործքերնիս հակառակ կամ համաձայն գրտնուած ըլլան այն սուրբ սկզբանց, յորոց յառաջ կու գան:

Աւաղ, դատաւորի այս տեսակ յատկութիւնը պէտք եղած հաւատքով չի նկատուիր յերկրագեղի Անձին մեր Աստուածային Յիսուսին: Սիրով զիները կը նկատենք իբրեւ բարի Հովիւ մը⁴, բարեգութ շայր մը⁵, եւ խանդադատանօք լեցուն Մայր մը⁶, եւ անտարակոյս պէտք է որ այսպէս ընենք, ըստ որում՝ կ'երեւայ թէ, այս օրինակներով կը հաճի սուրբ Աւետարանի մէջ նկարել իւր առ մեզ բարութեան եւ սիրոյն անձառելի հարստութիւնները: Բայց կը մտնանք որ, եթէ ըստ արժանւոյն չհամապատասխանենք այսչափ բարու-

1 Յայտ. Դ. 5: Ե. 6: — 2 Մատթ. Ի. 30: — 3 Գուկ. Ի. 34: — 4 Անդ. Ժ. 4: — 5 Անդ. 20: — 6 Մատթ. Ի. 9: 37:

թեան եւ այսչափ սիրոյ, աւելի յանցաւոր պիտի ըլլանք «նշմարտութիւնը ճանչցած ըլլալով, զայն ուրիշնաւ մէջ գրեթէ խղզած ըլլալնուս համար»: Կը մտնանք թէ որչափ մեծ ըլլայ այսպիսի բարութիւն մը, եւ որչափ եռանդանագոյն, մեծանձնագոյն եւ յարդիւնս իւր հիանալի, այնչափ ալ աւելի պարտական ենք զգայուն ըլլալու: Աերջպէս կը մտնանք որ, եթէ այս Աստուծոյ քաղցրիկ, սիրելի, եւ առ մեզ կաթողին Գառին², ապերախտ գտնուինք՝ մինչեւ ցուրնալ Անոր մեր կամաց, ցանկութեանց եւ բոլոր կարողութեանց գործածութեան վրայ ունեցած բացարձակ իրաւունքներն՝ մենք զմեզ վտանգի մէջ կը դնենք հանդերձեալ կենաց մէջ գտնուող զիները «իբրեւ Յուզայիլ ցեղին ահաւոր առիւծը³», զոր անարգեալք օր մը տեսնելով պիտի աղալակեն. «Լեռներ ու ժայռեր փլէք մեր վրայ եւ ծածկեցէք զմեզ աթոռին վրայ նստողին երեսէն եւ Գառին բարկութենէն⁴»:

Բայց ինչպէս: Միթէ այս Գառնը նոյն ինքն բարութիւն, նոյն ինքն քաղցրութիւն, նոյն ինքն սէրը չէ արդեօք: Ո՛հ, այս, Յիսուս Բրիտանոս

1 Հոովմ. Ա. 18—21: — 2 Յովհ. Ա. 29: — 3 Յայտ. Ե. 5: — 4 Անդ. Զ. 16: 21*

զայս յաւ հաստատեց: Մեզի համար
այնպիսի բաներ բաւ, որ չեն ըներ
նաեւ զմեզ սրտանց սիրող մարդիկ:
Բայց որչափ որ Ինքը բարի է, այն-
չափ ալ արդար է՝ Իւր բոլոր կատա-
րելութեանց հաւասարապէս անաս-
ման ըլլալովը: Իւ եթէ մերթելը
ըլլանք Անոր անհամամատ սիրոյն
քաղցր թագաւորութիւնը՝ չի՞ հար-
կաւորի՞ր արդեօք որ արդարութեան
թագաւորութիւնն իւր մասն ունենայ,
այս կեանքէս վերջը որ մեզ տրուած
է, կամ մէկն եւ կամ միւսն ընտրե-
լու համար: «Արդ ոչիւրեքս դատենք
մենք զմեզ»: Միթէ ստոյգ չէ՞ որ
մենք քիչ երախտագէտ ենք: Ի՞նչ
ըսի: Ստոյգ չէ՞ որ մենք ապերախտ
ենք: Յիսուսի հետ այնպէս կը վա-
րուինք, իբրեւ թէ Անոր բան մը
պարտական չըլլայինք, եւ երբեմն կար-
ծես թէ Անոր արդարութիւնը մեզի
դէմ գրգռելու շահ մ'ունենայինք:
Ստոյգ չէ՞ թէ գով որ Անիկայ դա-
տապարտէ, իւր մշտնջենաւոր թշուառ-
ութեան չափէն աւելի արժանացած
կ'ըլլայ...: Այո՞, եթէ ամենասուրբ
Հաղորդութեան անձաւելի խորհրո-
ղոյն նկատմամբ ճշմարտապէս կրնայ
բուռիլ, խաչին խորհրդեան վրայ մտա-
ծելով՝ սերն զտէրը կը մեկնէ, մի եւ

նոյն կերպով, մէկ կողմանէ տեսնելով
Յիսուսի մարդկան համար ունեցած
բարութեան եւ խանդաղատանոց
սքանչելիքը, միւս կողմանէ ալ այն-
չափ մեղաւորներու անտարբերութիւնն
եւ զզուելի ու յամառ ապերախ-
տութիւնը, կրնայ մէկն աղաղակել
թէ, Մարդեղութիւնը, Փրկագործու-
թիւնն, ամենասուրբ Հաղորդու-
թիւնը, երկինք, ըստ բաւականի կը մեկնեն
զդժոխքը...: Ո՛հ, նոյն ինքն դժոխքը
նախանձութեան երկրպագելի սես-
չութեամբ միթէ ծայրայեղ միջոց մը
չէ՞ անձնական փրկութիւնն հոգալու,
ըստ իմք ստիպելու զանիկայ, որ ազ-
նուագոյն միջոցներու անզգայ կը գրտ-
նուի...:

Իսկ մենք որ գուցէ շատ անգամ
այս դժոխքին արժանի եղած ենք,
մենք որ գուցէ երկար ատեն ժխտած
ենք Աստուծոյ Գառնին մեր վրայ ու-
նեցած իրաւունքները, չարաչար գործ-
ածած ենք Անոր բարեբարութիւն-
ներն եւ թշնամանած ենք Անոր
սէրը՝ ո՛հ, Անկից թողութիւն խն-
դրենք մեր անարժան վարմանցը. ցաւոց
ամենախոր զգացմանց մէջ ընկզմինք,
յիշելով Անոր գէմ գործած այնչափ
ծանրագոյն չարիքները, որոնց համար
մենք զմեզ յանդիմանելու ենք: Իյ-
նանք Անոր ստրբերուն առջեւն «Շէտե-
րապէս» զղջացած, շէտերապէս խոնար-

հած սրտով¹, ըստբով իրեն աւելի սրտով քան թէ բերանով.

«Գառն Աստուծոյ, որ կը ջնջես աշխարհի մեղքերը², ներէ մեզի ո՛վ Տէր, խնայէ մեզի ո՛վ գերագոյն Տէր ամէն բանի, ո՛վ գերագոյն Գառաւոր կենդանեաց եւ մեռելոց³: Ստուգիւ մենք քու առջեւդ յետին աստիճանի ապերախտ ենք: որ չճանչցանք քու անճառելի սէրդ: Յիմարարար մերժեցինք քու վարձատրութիւններդ, իբրեւ թէ երկինքը չարժէր քիչ մ'աշխատութիւն. դէմ կեցանք քու արդարութեանդ, իբրեւ թէ անոր պատժոց սպառնալիքը ծանր չըլլար: Ո՛հ, որչափ յանցաւոր ենք...: Բայց ըստ մեր արժանաւորութեան մի վարուելի հետերնիս, այլ ըստ քու անճուն գթութեանդ, զոր ամենքս ալ կը հայցենք, զղջացած մաքաւորին պէս կուրծքերնիս ձեծելով⁴ և եւ ի խորոց սրտէ կոչելով, խնայէ, խնայէ քու ժողովըրդեանդ⁵, եւ ըրէ որ քու Աստուածային Մօրդ բարեխօսութեամբը «քու դթութիւնդ փառաւորուի՝ ի մեղ⁶» եւ մեր վրայ ճշգրտի Յովէլ Մարգարէին խօսքը թէ. «Աստուած խնայեց իւր ժողովրդեան⁷»

1 Աղմ. Ծ. 6, 19: — 2 Յովհ. Ա. 29:
— 3 Գործ. Ժ. 42: — 4 Գուկ. ԺԼ. 13:
— 5 Յովէլ, Բ. 17: — 6 Եսայի, Լ. 18:
— 7 Յովէլ, Բ. 18:

Գառն Աստուծոյ, որ աշխարհիս մեղքերը կը ջնջես, խնայէ մեզի:

ՄՏԱԾԱԿԱՆ ԾԵՒ

Գառն Աստուծոյ, որ բառնաւ գժնաւ աշխարհի, անստ մեղ Տէր:

Աստուածային Գառնէն մեզի համար թողութիւն խնդրելէն վերջը, կը թախանձենք եւ կ'աղերսենք, որ հաճի լսել մեր հառաչանքները, զորս կ'ուղղենք դէպ ի իւր գթութեան աթոռը: Մեր սրտին առաջին աղաղակը ճշմարիտ զղջման, եւ խորունկ ցաւոց յայտարարութիւն մ'եղաւ: Երկրորդը խոնարհ աղաչանաց ձայն մ'է, որ կը պաղատի առ անասման բարութիւնն ընդունելու ամենամեծ շնորհք մը, ուսկից որ կը կախուի մեր յաւիտենական փրկութիւնը: Անստ Բու, ո՛վ Տէր:

Յետոյ Եկեղեցին մեզ կրկնել կուտայ Տէր բառն առ Գառն, «որ կը ջնջէ աշխարհի մեղքերը¹», որպէս զի մտքով աւելի եւս խորամուտ ըլլանք այն անհամեմատ Բարեբարին անասման մեծութեան եւ մեծփայլելութեան, զոր նախատելու դժբախտու-

1 Յովհ. Ա. 29:

Թիւնն ունեցանք, եւ աւելի եւս
 գղջալ տալու մեր Թշնամանաց վրայ:
 Արկնել կու տայ նաեւ, որպէս զի
 յիշենք Թէ Անիկայ, որուն կ'ուզուի
 մեր աղեհասարկու ձայնը, է անձնիշխան
 Տէր ամենայնի, «որ ունի մահուան ու
 դժոխոց փականքները¹», եւ Թէ հե-
 տեւաբար մեր աղաչանքը չի կրնար
 բոտ բաւականի խոնարհ, եւ եռան-
 բուն ըլլալ: Ո՛հ, ուրեմն կուրծքերնուս
 խորէն Թող բարձրանան այս խօսքերը.
 Լէ՛ք Քեզ, «Լ Տէր: Ըստ որում շատ
 աղէկ գիտենք, աւաղ, յանցաւոր ըլլալ-
 նիս. բայց չենք գիտեր եւ ոչ ալ
 կրնանք երբէք գիտնալ ապահովաբար
 Աստուծոյ մեզ ներած ըլլալը:

Ասոր համար ամէն օր ողբալու ենք
 մեղքերնիս, ամէն օր անոնց վրայ Աստու-
 ծոյ առջեւն ապաշխարել ջանալու, եւ
 ամէն օր նորագոյն եռանդեամբ այս-
 պիտի բարի Աստուծոյ աղաչելու ենք
 որ, բարեհաճի «մոռնալ մեր անորէն-
 ութիւնները²»: Գաւիթ Թէեւ նա-
 թան Մարգարէին՝ «Աստուած քու
 մեղացդ ներեց³», խօսքերէն ապահո-
 վուած էր ԹողուԹիւնն ստացած
 ըլլալու նկատմամբ, այսու ամենայնիւ
 անդադար իւր աչքին առջեւն ունե-
 նալով իւր մեղքը⁴, կը Թախսանէր

¹ Յայտ. Ա. 18: — ² Սղմ. ՀԸ. 8: —
³ Բ. Թադ. ԺԲ. 13: — ⁴ Սղմ. Ծ. 5:

աւ Բարձրեայն որ «միշտ աւելի եւս
 զինքը մարբէ¹, եւ գիշերներն արցուն-
 քով անկողինը կը Թրջէր²»: Ո՛հ,
 ինչէր պիտի շնենք մենք որ աւաղ,
 շատ ստեպ «անօրէնութիւն գործե-
 ցինք³». եւ երբէք մարգարէի մ'ան-
 սխալ բերնէն չառնիր Աստուծոյ հետ
 հաշտուած ըլլալնուս ապահովու-
 Թիւնը...: Սուրբն Պօղոս, այն մեծ
 Առաքեալը, որ մինչեւ երրորդ երկինքը
 յափշտակուելու արժանի եղաւ, միթէ
 ինքն ալ չըսաւ «խիղճս զիս չի յան.
 գիմաներ որ եւ է բանի մը համար,
 այսու ամենայնիւ զիս արդար ալ
 կարծելու չեմ համարձակիր⁴»: Ի՛նչ-
 պէս, ուրեմն այդ Աստուծոյ մեծ ծա-
 ոան եւ պաշտօնեայն, որ բարեացա-
 կամութեան եւ սիրոյ այնչափ ցոյցեր
 տեսած էր, այս համբաւաւոր Սուրբը,
 որ անԹիւ աշխատութիւններ կրած էր
 իւր պաշտելի Ղարդապետին փառացը
 համար⁵, անհամեմատն Ս. Պօղոս
 մէկ խօսքով, արդար սեպուելու չի
 համարձակիր: Իսկ մենք, որոնց կեանքը
 որչափ հեռու է անոր կենաց նմանիլէ,
 մենք որ ծանր եւ բազմապատիկ յան-
 ցանքներէ վերջը, գուցէ բան մ'ալ
 ըրած չենք զանոնք քաւելու համար.

¹ Սղմ. Ծ. 4: — ² Անդ. Չ. 7: —
³ Անդ. ՃԵ. 6: — ⁴ Ա. կորնթ. Գ. 4:
 — ⁵ Բ. կորնթ. Ժ. Ը:

կրնանք ապահով ապրիլ իբրև թէ ուղղակի երկինք երթայինք...: Ո՛հ, մանաւանդ թէ ինչպիսի խորին խոնարհութեան անընդհատ զգացմանց մէջ ինքզինքնիս պահպանելու չենք: «Չոհր, կրէ Պօսիւէ, այնչափ աւելի հաճելի կըլայ, որչափ որ աղին է. ուրեմն կասկածելու տեղի չկայ որ, առանց համեմատութեան այնուազոյն գործ մ'է հոգիինս խոնարհեցընել Աստուծոյ առջեւը, քան թէ Անոր սիրոյն համար մարմինը մահացընել¹»: Բայց Աստուծոյ առջեւը հոգիներնուս խոնարհութեան հետ միացընենք նաեւ սակեպ նորոգուած ցաւը սուրբ միջբտութեան դէմ մեղանչել կրցած է — «Ըստ էֆէ՛ ոտքի տակ կոխկրտած ըլլալնուս համար այն Աստուածային Գառնի երկրպագելի աբիւնը²», որ մեզի համար զոհուեցաւ: «Որչափ որ աւելի ողբանք թշուառութիւննիս, այնչափ աւելի կը մտենանք կորսնցուցած բարիներնուս: Բնաւ ուրեմն չդադարինք այսպիսի պտղաւէտ արցունքներ թափելէ: Մեր յաւիտենական տանջանաց տեղը բռնող ցաւը կերպով մը նմանի նոյնին անտանելի մշտնջենաւորութեան, զգալով զայն դոնէ մինչեւ մեր վերջին հոգեվարը³»:

1 Դերբող՝ ի Ս. Փրանկ. Պառզայեցի, էջ 203: — 2 Եբբ. Ժ. 29: — 3 Պօսիւէ, Ներբ. ի Ս. Փրանկ. Պառզայեցի, էջ 196:

Ո՛վ Գառն Աստուծոյ, պատարագ երկրպագելի «աշխարհիս սկիզբէն ի վեր յօրէն-իկ զոհուած¹» յանձին անոնց ամէնուն, որոնք Մովսիսական օրինաց ներքեւ յողջակէզ նուիրուեցան. իսկ ի Գողգոթա՝ անգորոյն իրականութեամբ պատարագելի, «նոյն այն տեղն՝ ուր ատենօր Ագամ թաղուած էր²», որպէս զի ինչպէս որ ամէնքը Ագամաւ կը մեռնին, այնպէս ալ ամէնքը Քեզմով կենդանանան³: Հետոյ ալ խորհրդաւոր կերպով, բայց ոչ նուազ իրականութեամբ պատարագուած մեր սեղաններուն վրայ, ուր միշտ «կենդանիս մտեւիլ երեւոյթով⁴», Քեզ աղօթելն ու աղաչելը որպէս զի մեզի քաւիչ ըլլաս՝ միթէ համապատասխանել չէ՞ Քու սրտիդ բաղձանցը, որ մեզի համար նոյն իսկ Անձինդ զոհը «մինչեւ ցծայրայեղութիւնը⁵» մղեց: Ո՛չ, ոչ, Քու արդարութեանդ դիմանց նպատակը չէ մեզի հետ անողբմարար վարուիլ. վասն զի Գուռն Ինքք ես մեզի զղջալու եւ բոլոր սրտանց զՔեզ յօգնութիւն կոչելու շնորհքը սուրբ. եւ Գուռն

1 Յայտ. ԺԳ. 8: — 2 Ս. Ամբր. Որդ. Տերտուզ. Ս. Աթան. Ս. Եպիփ. Ս. Կիրեղ. Երոս.: 3 Տես ընտիր ատենագարան շարց, Կիյոն շեղինակին, շար. Թ. էջ 147: — 4 Ա. Կորնթ. Ժ. Ե. 22: — 5 Յայտ. Ե. 6: — 5 Եփես. Բ. 4:

իսկ սրտերնուս մէջ կը հեղուս ան-
ցեալն ապաշխարութեամբ քաւելու
համար անդադար աշխատելու փա-
փազը: Ա՛հ, Գուռ ուրեմն քան զչափն
աւելի կ'ուզես որ միանալով Եկեղե-
ցւոյ քահանայապետաց եւ միւս պաշ-
տօնէից հետ, որոնք անդադար կ'ա-
ղօթեն անոր անդամոցը համար, ինչ-
պէս նաեւ Ամենասուրբ Կուսին, որ
նաեւ անդադար կը միջնորդէ մեզ
ամէնուս համար, խոնարհութեամբ,
սաստիկ ցաւոց զգացմամբ եւ միան-
գամայն «այսպէս աղօթելով լսելի
ըլլալու՝» կատարեալ վստահութեամբ
ըսենք Քեզ, «ով Աստուած Փրկիչ
մեր, հաճութեամբ լսէ մեր խնդիրքը»²:

Գառն Աստուծոյ, որ աշխարհիս
մեղքերը կը ջնջես, լսէ մեզի:

ՄՏԱԵԾԱԿԱՆ ԾԼ.

Գրտն Աստուծոյ, որ շատեալ գտնու
աշխարհի, ողորկաց մեզ:

Հոս դարձեալ խնդիր կը մատու-
ցանենք մեզերնուս թողութիւն բն-
դուները եւ կը թախանձենք Աս-
տուածային Գառնը Բեր Իւր: Գրտն:

1 Սիրոք, ԼԳ. 4: — 2 Սղմ. ԿԳ. 4:

Այս անգամ չենք յաւելուր Տեր
տիտղոսը: Մենք կ'ուզենք, պիտէս
հասկըցընելու համար, որ Յիսուս
մտնայ Իւր մեղմէ այնչափ նախա-
տուած մեծութիւնն ու մեծվայելու-
թիւնը, որպէս զի միայն Իւր ան-
հուն ողորմութիւնը յիշէ, եւ այն
երկրպագելի ցաւակցութիւնը, զոր ա-
նանկ սաստիկ եւ փափուկ ստացաւ
«ամէն տեսակ փորձերէ անցնիլ հա-
ճելով»¹, Ուստի եւ մենք մեր Աս-
տուածային Փրկիչն պաշտելի սրտին
քով վերջին ճիգ մը կը թափենք, «
չի կրնար ապրդիւն մնալ: Իրօք
իրբու թէ Իրեն ըսէինք, ո՞վ Գուռ,
«որ մեզի համար մահուան ենթար-
կուեցար»², որ բոլոր մարդկան մեղ-
քերովը բեռնաւորուեցար»³, ո՛հ, ան-
տարակոյս մենք արժանի չենք լսելի
ըլլալու, երբ գժբախտաբար գործած
յանցանքներնուս ներումը կը հայ-
ցենք: Սակայն մենք այն անձառելի
գթութեան կը բողոքենք, զոր ունիս
առ մեզ, փրկէ զմեզ, ազատէ զմեզ
Գառն Աստուածային, ազատէ գոնէ
միայն առ կարեկցութեան, առ լսկ
ողորմութեան...:

Թիւ որ ստեն մը Գաւիթ կ'ըսեր
Աստուծոյ, Անոր անհուն ողորմու-

1 Եբբ. Դ. 15: — 2 Եփես. Ե. 2: —

3 Լ. Յովհ. Բ. 2:

թեան բարձր զգացմանց վրայ հիմնուած գերազանց վստահութեամբ. «Գուն իմ մեղքերս քաւէ, վասն զի չափազանց եղան»¹. Եթէ Մարդեղութենէ եւ Փրկագործութենէ յառաջ. (խորհուրդներ, յորս այնչափ փայլեցաւ նոյն այս գթութիւնը) այնպիսի վսեմ եւ ընդարձակ գաղափար մ'ունէր այդ բարութեան անդունդին վրայ, որ կը սիրէ տեղալ զզջացած մեղաւորին վրայ զցօղ շնորհաց եւ թողութեան հապա ինչպիսի գաղափար եւ ինչպիսի զգացմունք ունենալու շէնք մեր զոհն եղած Աստուծոյ մը մարդկային բնութեամբ մեզ յայտնուած անհուն բարութեան դիմած ատեննիս...: Ո՛հ, կ'ուզե՞նք խելամուտ ըլլալ թէ ինչպիսի զօրութիւն ունի այս Աստուծային Գառին գորովայից եւ սիրայից սրտին վրայ Անոր երկրպագելի կարեկցութեան ըրած ամէն բողոքնիս՝ բանանք Աւետարանը: Ո՞վ եղաւ Անոր մահացու կենաց ատենը, ո՞վ եղաւ երբեք որ Անոր ըսած ըլլար «ուրիշ էն, առանց ընդունած ըլլալու իւր խնդրոյն արդիւնքը: Երկու աղքատ կոյրեր ետեւէն կ'երթան պողալով՝ «Գաւթի Որդի ողորմէ մեզը»²: Յիսուս կը դպչի անոնց աչքերուն եւ կը բացուին: Գանանացի կին մը, որուն աղջիկը սա-

¹ Սղմ. Ի. Գ. 11: — ² Մատթ. Թ. 27:

տանայէն չարաչար կը լկուէր, կաղաղակէ, «Գաւթի Որդի, ողորմէ ինձի. ուզածիդ պէս ըլլայ քեզի, կը պատասխանէ Յիսուս»³: Եւ աղջիկը նոյն վայրկենին կը բժշկուի: «Գթա որդւոյս վրայ, կը կոչէ տրտմագին հայր մը, վասն զի շատ կը տառապի»⁴. Եւ Յիսուս նոյն վայրկենին կը բժշկէ զանիկայ: Երկրօվի մտերը Բարսիմէոս անունով կոյր մը նմանապէս Անոր կարեկցութիւնը կը հայցէ: «Գաւթի Որդի, ողորմէ ինձի»⁵. Յիսուս համան կ'ընէ, եւ կոյրն իւր անտութիւնը կը ստանայ: Տասը բորոտ հեռուէն բարձրաձայն կը պուռան. «Յիսուս մեր Վարդապետը, ողորմէ մեզի»⁶. Եւ իսկոյն կը բժշկուին: Այս առ մարդկային բոլոր թշուառութիւններն ունեցած համակրութիւնը, այս գթայից կարեկցութիւնը, որ Պետրոսի ըսել տուաւ թէ, «Իւր քալած տեղերը բարիք սերմանեց»⁷, միթէ հիմայ ալ չի՞ զգար նաեւ Իւր փառացը մէջ: Ո՛հ, դիտեցէք մանաւանդ թէ ինչպէս Իրեն հաճելի է աւելի եւս մեզ հաւատունը, երկրպագելի Հաղորդութեան շարունակուած սքանչելիօքը: Այս խորհրդոյս մէջ միթէ Իւր արիւնն ու բոլոր ար-

¹ Մատթ. Ժ. 22—28: — ² Անդ, Ժ. 14: — ³ Մարկ. Ժ. 47: — ⁴ Գուկ. Ժ. 13: — ⁵ Գործ. Ժ. 38:

դիւնքը մեր տրամադրութեան ներքեւ չի՞ դներ: Ամէն օր եւ ամէն ժամ ինքը զինքը չի՞ նուիրեր ի պատարագ քաւութեան մեր մեղքերուն եւ կարօտ եղած ամէն շնորհքներնուս ընդունելութեան: Մեղի համար անդադար իւր փառքը չի՞ գոհեր, որ գրեթէ կ'ոչնչանայ անարդ տեսակը ներքեւը: Չի՞ զոհէր իւր աղատութիւնը, որ ըստ իմիք իւր պաշտօնէից կամքին կը կապուի, չի՞ զոհէր իւր արդարութեան գործածութիւնն այնչափ ստեպ գրգռուած մեղաւորաց ապերախտութեամբը, եւ առ կախ ձգուած իւր ողորմութեան հիանալի երկայնամտութենէն: Ահաւասիկ իննեւտասն դարէ ի վեր այս Աստուծոյ Պառնն այնպէս կ'երկարէ առանց միջոցի, եւ միշտ հրաշքի վրայ հրաշք բարդելով՝ իւր անդուգական զոհը մեր փրկութեան համար. եւ մենք կրնանք կասկածիլ իւր առ այն սրտերը կարեկցութեան, խանդաղատանաց եւ մեծանձնութեան սաստկութեան վրայ, որոնք զըջմամբ շարժած են, եւ կը ցանկան Անոր սիրոյն...: Ըսենք ուրեմն ամենաքաղցր վստահութեան զգացմամբ.

«Պառն Աստուծոյ, որ կը բառնաս աշխարհին մեղքերը՝, ողորմէ՛ մեղի, որոնք այնչափ արժանի ենք ցաւա-

կցութեան, եւ այնպէս ալ անարժան Քու բարութեանդ նայուածքին: Ո՛հ, եթէ Պառն միայն Քու անսահման արգարութիւնդ, աչքիդ առջեւն ունենայիր, պէտք էիր պատժել այն ապերախները, որոնք բարւոյ դէմ չար հատուցին Քեզ, սիրոյ գէժ պաղութիւն եւ նախատինք: Բայց մենք այն գթութիւնը կը հայցենք, այն անսպառ ողորմութիւնը, որով Քու սիրտդ զեղուն, թաթաղուն է գեպ ի զղջացած մեղաւորները, այն երկրպագելի արիւնը կը հայցենք, «որուն մօջ կը մարին բոլոր Աստուծային բարկութեան բոցերը՝, եւ որով «մեղաց թողութիւնն» ի դործ կը դրուի: Իւր սրպէս զի ձայներնիս աւելի ապահովաբար Քովդ մուտ գտնէ, կը մխայրենէք զայն Ամենասուրբ կուսին, մեր այնպիսի բարի եւ անուշակ Մօրը ձայնին, եւ Անոր սուրբ շրթունքներովը Քեզ կը նուիրենք այն լալազին հեծեծանքը, զոր Էջկեղեցին իւր ամէն լիճակի պատկանեալ որդւոցը շրթանց վրայ կը դնէ.

Պառն Աստուծոյ, որ աշխարհիս մեղքերը կը ջնջես, ողորմէ՛ մեղի:

Լաւ մտածեցէք եւ շուտով սուրբ
 եղէք,
 Վասն զի ժամանակը կարճ է եւ ան-
 ցաւոր:

Յ Ա Ն Կ

էջ

Յառաջարան	ԺԳ .
Նախերգանք	ԻԷ .
Տէր ողորմեաց	1
Քրիստոս ողորմեաց	7
Տէր ողորմեաց	13
Քրիստոս յուր մեղ	19
Քրիստոս անսա մեղ	24
Հայր երկնաւոր Աստուած	30
Որդեղ Փրկիչ աշխարհի Աստուած	36
Հոգեղ Սուրբ Աստուած	42
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած	47
Սրբուհի Մարիամ	53
Սուրբ Աստուածածին	59
Սուրբ Կղյս Կուսանաց	64
Մայր Քրիստոսի	70
Մայր Աստուածային շնորհաց	75
Մայր մաքուր	81
Մայր սուրբ	87
Մայր անարատ	93
Մայր անբիծ	98
Մայր սիրելի	104
Մայր սքանչելի	110
Մայր Ըրարչին	115
Մայր Փրկչին	121

	էջ
Կոյս իմաստուն	126
Կոյս յարգոյ	132
Կոյս քարոզելի	138
Կոյս հզոր	143
Կոյս գթած	149
Կոյս հաւատարիմ	154
Հայելի արդարութեան	160
Աթոռ իմաստութեան	166
Պատճառ մերոյ խնդութեան	172
Անօթ հոգեւորական	178
Անօթ պատուելի	183
Անօթ ընտիր Աստուած պաշտու թեան	189
Ղարգ խորհրդական	195
Աշտարակ Գաւթեան	201
Աշտարակ փղոսկրեայ	207
Տուն ոսկեղէն	213
Տապանակ ուխտի	219
Գուռն երկնից	225
Աստղ առաւօտեան	230
Առողջութիւն հիւանդաց	236
Ապաստան մեղաւորաց	242
Մխիթարիչ վշտացելոց	248
Օղնական քրիստոնէից	254
Թագուհի Հրեշտակաց	260
Թագուհի Կահապետաց	266
Թագուհի Մարգարէից	272
Թագուհի Առաքելոց	278
Թագուհի Մարտիրոսաց	283
Թագուհի Խոստովանողաց	289
Թագուհի Կրօնանաց	295

	էջ
Թագուհի ամենայն Սրբոց	301
Թագուհի առանց արատոյ մեղաց յղացեալ	307
Թագուհի ամենասուրբ Ղարգա րանի	314
Գառն Աստուծոյ որբառնաս զմեզ աշխարհի	321
Գառն Աստուծոյ որբառնաս զմեզ աշխարհի	327
Գառն Աստուծոյ որբառնաս զմեզ աշխարհի	332





2441



<< Ազգային գրադարան



NL0029464

0000

A white rectangular label with rounded corners, tilted slightly. It contains the text "<< Ազգային գրադարան" at the top, a barcode in the middle, and the number "NL0029464" at the bottom. There is a small blue scribble or mark at the bottom left of the label.

